

## Բանդերի մոնիթորինգ. գործնական ուղեցույց


Պարբերական և չհայտարարված այցերի միջոցով բանդային հասպատությունների մոնիթորինգը ազատազրկված անձանց հանդեպ կիրառվող խոշփանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման առավել արդյունավետ միջոցն է: Բանդային հասպատությունները մոնիթորինգի ենթարկելու գործընթացում ներգրավված են մի քանի փեսակ մեխանիզմներ, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանության ազգային հասպատությունները, մասնագիտացված փորձագիրական մարմինները, ոչ մասնագետ դիրքորդները, դատական համակարգի, խորհրդարանի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Խոշփանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված մոնիթորինգի գործընթացը կարևորագույն աջակցություն սրացավ Խոշփանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընդիր արձանագրության (UNCAT) ընդունմամբ: Վյու միջազգային համաձայնագիրն առաջարկում է սրեղծել կանխարգելիչ այցերի գլոբալ համակարգ թե՛ միջազգային, և թե՛ ազգային մակարդակներում: Նման գործիք ունենալով՝ Արձանագրության մասնակից երկրները կհամարդակցեն միջազգային ենթակոմիտեի հետ, ինչպես նաև ձեռնամուխ կյանքի սրեղծելու, առաջարկելու և պահպանելու սեփական ազգային կանխարգելիչ մեխանիզմները:

Խոշփանգումների Կանխարգելման Միությունը (ԽԿՄ)-ն, որը վերջին 27 տարիների ընթացքում հանդիսանում էր բանդարկության և դրա պայմանների կանխարգելիչ մոնիթորինգի շարժիչ ուժը, զգում է գործնական այնպիսի միջոցների ահազնացող կարիք, որոնք այցելություն կարարող մարմիններին կօգնեն իիմնել և կափարել մոնիթորինգային ծրագրեր, ինչպես նաև՝ ուսուցանել իրենց անդամներին:

ԽԿՄ-ի այս գործնական ձեռնարկն առնչվում է հետքյալ հարցերին.

- ո՞վ է մոնիթորինգի ենթարկում բանդային հասպատությունները,
- մոնիթորինգի սկզբունքները,
- ինչպե՞ս է պետք նախապարագրագել այցելությունը,
- բուն այցելությունը,
- ինչպե՞ս է պետք իրագործել այցելության արդյունքների սրուգումը,
- բանդարկության ինչպիսի ասպեկտները պետք է քննության առնել,
- համապատասխան չափանիշներ:



association  
pour la prévention  
de la torture  
association for the prevention of torture  
asociación para la prevención de  
la tortura

ԱԶԱՏԱԶՐԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

գործնական ձեռնարկ

Association for the Prevention of Torture

Route de Ferney 10 P.O. Box 2267,

1211 Geneva 2-Switzerland

Դեռախոս՝ +41 22 919 21 70 - Փաքս. +41 22 919 21 80

[www.apt.ch-apt@apt.ch](mailto:www.apt.ch-apt@apt.ch)

ISBN 2-940337-05-5 CHF 30.-20 EU

Դեռախոս՝ +41 22 9192170.

## Խոշտանգումների կանխարգելման միություն

Խոշտանգումների կանխարգելման միությունը (այսուհետ՝ ԽԿՄ) անկախ հասարակական կազմակերպություն է (այսուհետ՝ ՀԿ), որը հիմնադրվել է 1977 թվականին՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում:

Միության հիմնական նպատակը ողջ աշխարհում խոշտանգումները և վատ վերաբերմունքի այլ դրսերումները կանխարգելելն է: Դրան հասնելու համար ԽԿՄ-ն՝

1. կատարելագործում է ազատազրկման վայրերի մոնիթորինգը և վերահսկման այլ մեխանիզմները, որոնց միջոցով հնարավոր կլինիկանի խոշտանգումները և դաժան վերաբերմունքը.
2. խրախուսում է խոշտանգումները և անպատճելիությունն արգելող օրենքների ընդունումը և պահպանումը.
3. ընդարձակում է խոշտանգումների կանխարգելմանը նպաստող, հատկապես՝ ազգային մակարդակով գործող անձանց հնարավորությունները: Դա կատարվում է ուսուցման միջոցով (օրինակ՝ ոստիկանության, ՀԿ-ների, պետական մարմինների, դատավորների, դատախազների և այլն), ինչպես նաև գործնական ծեռնարկների ապահովմամբ և տվյալ ոլորտին վերաբերող իրավաբանական խորհրդատվությամբ:

ԽԿՄ-ն գաղափարների և փորձառության աղբյուր է հանդիսանում խոշտանգումների կանխարգելման գործում ներգրավված զանազան գործնկերների համար՝ կառավարական մարմիններից մինչև հասարակական կազմակերպություններ, ՍԱԿ-ի մարմիններ, տարածաշրջանային մարմիններ (օրինակ՝ Մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանության աֆրիկյան հանձնաժողովը, Միջամերիկյան հանձնաժողովը, ԵԱՀԿ-ն և Եվրոպայի Խորհրդը), մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները, բանտերի վարչակազմը և ոստիկանական ծառայությունները:

ԽԿՄ-ն շարժիչ ուժ է հանդիսանում ՍԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրության, Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոնվենցիայի, Աֆրիկյան հանձնաժողովի՝ Աֆրիկայում խոշտանգումների կանխարգելման Ռոբբեն կղզու դեկավար սկզբունքների, ինչպես նաև Հարավաֆրիկյան տարածաշրջանային ոստիկանությունների դեկավարների համագործակցության կազմակերպության ոստիկանների վարվեցողության կանոնագրքի մշակման, ընդունման և կիրառման գործում:

ԽԿՄ-ն համդիսանում է Խոշտանգումների դեմ պայքարող միջազգային հասարակական կազմակերպությունների կողմացիայի (CINAT) անդամ: Այն ՍԱԿ-ում, Ամերիկյան պետությունների կազմակերպությունում, Աֆրիկյան հանձնաժողովում և Եվրոպայի խորհրդում ունի խորհրդակցական ձայնի իրավունք: ԽԿՄ-ն Ըկեյցարիայի իշխանությունների կողմից ճանաչված է որպես շահույթ չհետապնդող միություն:

**Հասցեն՝ P.O.Box 2267, CH 1211 Geneva 2, Switzerland**

**Հեռ. + 41 22 919 2170, Ֆաք. + 41 22 919 2180**

**apt@apt.ch [www.apt.ch](http://www.apt.ch)**



Այս իրատարակությունն անհնար կիներ առանց մեր հովանավորների առատաձեռն օժանդակության: Ընորհակալություն ենք հայտնում հատկապես նրանց, ովքեր ֆինանսավես աջակցեցին մեր գործին (Դանիայի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Ըվեդիայի արտգործնախարարություններին և Զարգացման ու համագործակցության շվեյցարական գործակալությանը), ինչպես նաև նրանց, ովքեր իրենց ավանդն են ներդրել այս գործում, մասնավորապես՝ Ժնև քաղաքին, Ֆինլանդիայի արտգործնախարարությանը. Օորդ հիմնադրամին և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակին (այսուհետ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ):



MINISTRY FOR  
FOREIGN AFFAIRS  
OF FINLAND

OAK  
FOUNDATION



Ville de Genève



Foreign &  
Commonwealth  
Office



"ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԱՀԱԿՈՒԹՅՈՒՆ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՇՆԱՐԿ"



Ազատազրկման վայրերի  
վերահսկողություն.  

---

գործնական  
ձեռնարկ

"ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒԹՅՈՒՆ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ"

© Geneva, April 2004

ISBN 2-940337-05-5

Imp. Abrax F-21300 Chenôve

## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Առաջին հերթին ԽԿՄ-ն շնորհակալություն է հայտնում ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ին, որը մեզ թույլ տվեց հրատարակել այս ձեռնարկը՝ որպես մեր նախորդ՝ «Ազատազրկման վայրերի վերահսկողություն» Գործնական ձեռնարկ ՀԿ-ների համար» (Ժնև, 2002թ. դեկտեմբեր) ձեռնարկի արդիական տարրերակ։ Շնորհակալություն ենք հայտնում նախորդ ձեռնարկի հեղինակ տիկին Աննետ Կորբազին։

Նոր Ձեռնարկը քննարկվել է 2003թ. հոկտեմբերի 20-ին՝ Ժնևում տեղի ունեցած փորձագետների հանդիպման ժամանակ, և մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել հանդիպմանը մասնակցող հետևյալ փորձագետներին. պարոն Պոլ Ինգլիշին (Միջազգային բանտարյան բարեփոխումներ), Սիացյալ Թագավորության բանտերի վերահսկողության անկախ խորհրդի անդամ և Միջազգային ներուժ կազմակերպության հետազոտող տիկին Մերի Սըրֆիին, պարոն Անդրե Պիկոյին, որը ներկայացնում էր Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ), պարոն Ժան-Պիեռ Ռեստելին՝ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի անդամ (ԽԿԿ), Ուգանդայի Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ տիկին Մարգարետ Սեկագիային և Մարդու իրավունքների միջազգային ծառայության (ՄԻՄԾ) Մարդու իրավունքների կողմնակիցների գրասենյակը ներկայացնող պարոն Սորրիս Շիդրալ-Բինզին։ Ծրագրի վերաբերյալ նրանց գործնական և արդյունավետ մեկնարանությունները կարենոր ներդրում են այս ձեռնարկի վերջնական տարրերակի ստեղծման գործում։

ԽԿՄ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել նաև հետևյալ անձանց և հաստատությունների՝ "Instituto de estudios comparados en ciencias penal y sociales" de Argentina, ՍԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության գերազույն հանձնակատարի գրասենյակի (ՍԱԿ ՄԻՊԳՀԳ) Կոլումբիայի մասնաճյուղի ներկայացուցիչ տիկին Մարիա Նուել Ռոդրիգեսին և Բանտարյան հետազոտությունների միջազգային կենտրոնի տնօրեն դրկտոր Էնդրյու Ռոյլին։ Տիկին Մերի Սըրֆիին հիանալի կատարեց գրքի վերջնական տարրերակի շտկումը և սրբազրումը։ Շնորհակալության է արժանի նաև խոշտանգումների գծով ՍԱԿ-ի հատուկ գեկուցող պարոն Թեո Վան Բովենը, որ համաձայնեց այս հրատարակության համար նախարար գրել։

Վերջապես այս ձեռնարկը լույս չէր կարող տեսնել առանց մեր հոգանակության առատաձեռն ֆինանսական աջակցության։

## ԽՄԲԱԳՐԻ

### ԿՈՂՄԻՑ

Քսանիինգ տարի շարունակ ԽԿՄ-ն պաշտպանում է մի պարզ, բայց ազնիվ գաղափար, որն առաջադրել է միության հիմնադիր Ժան-Ժակ Դուտյեն, այն է՝ այցելել վայրեր, որտեղ գտնվում են ազատությունից գրկված մարդիկ, քանի որ դա հանդիսանում է խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխման առավել արդյունավետ ուժիներից մեկը: ԽԿՄ-ն շարունակում է առաջ տանել այս գաղափարը միջազգային և ազգային մակարդակներով:

ԽԿՄ-ն ակտիվորեն ներգրավված է միջազգային փաստարդերի մշակմանը՝ ազատազրկման վայրեր կատարած այցելությունների հիման վրա: Կազմակերպության ակունքները գնում են դեպի Խոշտանգումների կանխման եվրոպական կոնվենցիա (1987), ինչպես նաև 2002թ. դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրություն (OPCAT, այսուհետ՝ ԽԴԿՖԱ): ԽԴԿՖԱ-ը նորամուծություն է, քանի որ այն հիմնվում է միջազգային մարմինների լրացուցիչ կանխարգելիչ այցելությունների և «մեկ կամ մի քանի ազգային կանխարգելիչ մեխանիզմների» վրա, որոնք մասնակից պետությունները պետք է հիմնեն արձանագրության վավերացումից հետո:

Այս երկակի մոտեցումն արտացոլում է ԽԿՄ-ի Էռիյունը, որը տարիներ շարունակ խրախուսում է ազատազրկման վայրերի մոնիթորինգն ազգային մակարդակի վրա: Դա հաշվի առնելով՝ ԽԿՄ-ն ԺՀՄԴ-ի հետ համատեղ 2000թ. մշակել էր մի հրապարակում «Տեղական ՀԿ-ների կողմից ազատազրկման վայրերի մոնիթորինգի խրախուսումը» խորագրով: Արդյունքում ծնվեց նախագծի համատեղ հրատարակությանը, որը կոչվում էր «Ազատազրկման վայրերի վերահսկողություն». գործնական ձեռնարկ ՀԿ-ների համար», որը 2002թ. դեկտեմբերին լույս տեսավ անզերեն լեզվով, իսկ 2003 թվականին՝ ռուսերեն: Այս ձեռնարկի հեղինակն էր ԽԿՄ-ի խորհրդատու Աննետ Կորրազը, որը Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի (ICRC, այսուհետ՝ ԿԽՄԿ) հետ ազատազրկման վայրերի այցելության ավելի քանի տասը տարվա փորձ ունի (ԿԽՄԿ / ICRC):

Մեր նոր ձեռնարկը նախորդի համեմատ լրամշակվել է՝ ԽԴԿՖԱ-ի կողմից ընդունված նոր տարրերն ընդգրկելու և տեղական մակարդակով ազատազրկման վայրեր այցելություն կատարող անձանց կամ մարմինների շրջանակն ընդլայնելու նպատակով: Զեղնարկը կտպագրվի անզեն, ֆրանսերեն, պորտուգալերեն, իսպաներեն և, հավանաբար, ռուսե-

րեմ: Հույս ունենք, որ ձեռնարկը կօգնի ազատազրկման վայրերի մոնիթորինգ իրականացնողներին թե՛ այցելության նախապատրաստման ու իրականացման և թե՛ հետագա մոնիթորինգի ընթացքում, ինչը կնպաստի ողջ աշխարհում ազատազրկման վայրերում ազատազրկվածներին պահելու պայմանների բարելավմանը և խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի կանխարգելմանը:

2004թ. Փետրվար, Ժնև

Էսթեր Շաուֆելբերգեր  
ԽԿՄ-ի Այցելությունների  
ծրագրի ղեկավար

Բարբարա Բերնեթ  
ԽԿՄ-ի Եվրոպական  
ծրագրի ղեկավար

## ՆԱԽԱԲԱՆ

---

Ազատագրկված անձանց խոշտանգումը կամ նրանց հանդեպ դաժան վերաբերմունքը սովորաբար տեղի է ունենում այն ազատագրկման վայրերում, որոնք անհասանելի են հասարակական մոնիթորինգի համար: Հասարակության անմատչելիությունն իդեալական պայման է խոշտանգումների կիրառելու և անպատճելի մնալու համար: Որպես ՍՍԿ-ի խոշտանգումների հարցերով հասողական գեկուցող, ես, ինչպես իմ նախորդ երկու գեկուցողները, պնդում եմ, որ մասնագիտական անկախ մարմնի մոնիթորինգը հանդիսանում է խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեմ պայքարելու առավել արդյունավետ ձևերից մեկը: Սակայն վերահկողություն իրականացնող մարմնները պետք է լինեն բավականաշափ հմտու և պատրաստված՝ շատ բարդ խնդիրների հետ հաճախ ծանր պայմաններում գործ ունենալու համար: Ավելին, նրանք պետք է ունենան հանձնարարություններ տալու լիազորություն, որոնք լուրջ կրնդունվեն և որոնցով կառաջնորդվեն ազատագրկվածների հանդեպ վերաբերմունքի բնագավառում դրական փոփոխություններ կատարելու ընթացքում:

Ես ողջունում եմ ԽԿՄ ստեղծած ձեռնարկը, քանի որ այն գործիք է հանդիսանում նրանց համար, ովքեր որոշել են այցելել ազատագրկման վայրեր՝ խոշտանգումները և դաժան վերաբերմունքը կանխելու նպատակով: Ձեռնարկը խորհրդատվություն է տրամադրում այն մասին, թե ինչպես է պետք վերահսկել գործողությունները, որոնք բարձրացնում են արդյունավետությունը և ուշադրություն հրավիրում հասողական մոտեցում պահանջող այնպիսի խնդիրների վրա՝ ինչպիսիք են բժշկական ծառայությունը կամ պաշտպանության միջոցները: Բացի այդ, ձեռնարկը մատչելի պարզաբանումներ է տալիս մոնիթորինգի մեխանիզմների տարրեր ձևերի և դրանց համալիր բնույթի վերաբերյալ:

Ձեռնարկը նաև արդիական է, քանի որ այն նախորդել է վերջերս ընդունված ՍՍԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրության վավերացմանը: Արձանագրությամբ նախատեսված կանխարգելիչ, հատկապես՝ տեղական մարմիններն այս ձեռնարկը շատ կարևոր տեղեկագիրը կամաց են: Ես անկեղծորեն հուսով եմ, որ այս ձեռնարկը կնպաստի շատ պետությունների՝ ստորագրելու և վավերացնելու արձանագրությունը: Այս կարևոր, նոր միջազգային նախաձեռնությունը խոստանում է գործնական ազդեցություն ունենալ կալանավորված անձանց խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից գերծ պահելու գործում:

2004թ. մարտի 8

Պրոֆեսոր Թեոն Վան Բովեն

*Խոշտանգումների գծով ՍՍԿ-ի հասողական գեկուցող*

## ԳՈՐԾԱԾՎԱԾ

### ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

<b>ՄԺԻՊԱԽ</b>	Մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանության աֆրիկյան խարտիս
<b>ԽԿՄ</b>	Խոշտանգումների կանխարգելման միություն
<b>ԶԿԱՊՍՃ</b>	Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու
<b>ԿՎՀՄ</b>	Կալանավորվածների հանդեպ վերաբերմունքի հիմնական սկզբունքներ
<b>ԿԽԴ</b>	Կոմիտե խոշտանգումների դեմ
<b>ԽԿԵԿ</b>	Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտե
<b>ԽԿԵԿ</b>	Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոնվենցիա
<b>ԵԲԿ</b>	Եվրոպական բանտային կանոններ
<b>ՔՔԻԴ</b>	ՍՍԿ-ի միջազգային պայմանագիր Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՍՍԿ-ի դաշնագիր
<b>ԽԿՊՄԿ</b>	Խոշտանգումների կանխման և պատժման միջամերիկյան կոնվենցիա
<b>ԿԽՄԿ</b>	Կարմիր խաչի միջազգային կոմիտե
<b>ՀԿ</b>	Հասարակական կազմակերպություն
<b>ԺՀՄԻԳ</b>	ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
<b>ՄԻԳՀԳ</b>	ՍՍԿ-ի Մարդու իրավունքների գերազույն հանձնակատարի գրասենյակ
<b>ԽԴԿՖԱ</b>	ՍՍԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի ֆակուտատիվ արձանագրություն
<b>ԵԱՀԿ</b>	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
<b>ՄԱԿ</b>	Միացյալ ազգերի կազմակերպություն
<b>ՍՍԿԽԴԿ</b>	ՍՍԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիա

Միայն չորրորդ գլխի ստանդարտներին վերաբերող բաժնում գործած վող հապավումները ներկայացված են այդ գլխի սկզբում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Երախտագիտություն</b> .....	5
<b>Խմբագրի կողմից</b> .....	6
<b>Նախարան</b> .....	8
<b>Գործածված հապավումներ</b> .....	9
<b>Բովանդակություն</b> .....	10
<b>Ներածություն</b> .....	14
<b>Մաս առաջին: Ազատազրկման վայրերի մոնիթորինգի համատեքստ</b> .....	19
1. Ազատությունից զրկված անձանց պաշտպանություն.....	20
1.1. Բանտարկություն.....	20
1.2. Ազատազրկված անձանց պաշտպանություն.....	21
2. Ազատազրկման վայրերի մոնիթորինգ այցելությունների միջոցով .....	22
2.1. Է՞նչ է ենթադրվում ազատազրկման վայրեր ասելով.....	22
2.2. Մոնիթորինգի կարևորությունը.....	23
2.3. Ազատազրկման վայրեր այցելությունը՝ մոնիթորինգի իրականացման հիմնական գործիք.....	24
3. Ազատազրկման վայրերի մոնիթորինգի հիմնական սկզբունքները.....	25
<b>Մաս երկրորդ: Ազատազրկման պայմանների մոնիթորինգ իրականացնող մարմինները</b> .....	30
1. Այցելություն ազգային մակարդակի վրա.....	31
1.1. Ներքին տեսչական ստուգումներ .....	32
1.2. Դատական տեսչական ստուգումներ .....	32
1.3. Անկախ արտաքին մոնիթորինգ .....	32
2. Այցելության մեխանիզմների միջազգային և տարածաշրջանային մակարդակներում .....	34
3. Խոշտանգումների դեմ կոնվենցիայի ոչ պարտադիր արձանագրություն .....	39
3.1. ԽԴԿ-ի ենթակոմիտե .....	39
3.2. ԽԴԿՈԱ-ի ներքո գործող ազգային կանխարգելիչ մեխանիզմներ .....	40
3.2.1. Ազգային կանխարգելիչ մեխանիզմների հիմնում կամ նշանակում.....	41

3.2.2. Ազգային կանխարգելիչ մեխանիզմների ձևերը.....	42
3.2.3. Ազգային կանխարգելիչ մեխանիզմների մանդատը.....	42
3.2.4. Ազգային կանխարգելիչ մեխանիզմներին տրամադրվող երաշխիքները .....	43
3.2.5. Մուտքն ազատազրկման վայրեր .....	46
3.3. Լրացուցիչ արձանագրության ներքո կատարվող այցերի կատարման ստուգում .....	47
3.3.1. Ձեկուցում և հանձնարարություն.....	47
3.3.2. Լրացուցիչ կանխարգելիչ գործունեություն .....	47
3.3.3. Ուղղակի շփում ենթակոմիտեի հետ .....	48
4. Այցելություն կատարող տարբեր մեխանիզմների միջև համագործակցությունը .....	48
4.1. Այցելություն կատարող տեղական մարմինների գործունեությունների համակարգումը .....	49
4.2. Այցելություն կատարող ազգային և միջազգային մարմինների գործունեությունների համակարգումը.....	49
4.3 Այցելություն կատարող միջազգային մարմինների միջև համագործակցություն .....	51

### **Մաս երրորդ: Խճչակեան նոմիքորինզի ենթարկել**

կալանավայրերը.....	54
1. Մոնիքորինզի կառուցվածքը.....	55
2. Մոնիքորինզի ծրագրի ձեռնարկումը .....	59
2.1. Այցելությունների ձեռնարկումը .....	59
2.2. Այցելության վայրի ընտրություն .....	59
2.3. Այցերի տևողությունը .....	60
2.4. Այցերի հաճախականությունը .....	61
2.5. Այցելություն կատարող թիմը .....	62
2.5.1. Կազմը .....	62
2.5.2. Անդամների թիվը .....	63
2.5.3. Ուսուցումը .....	63
3. Այցելության նախապատրաստություն .....	64
3.1. Նախապատրաստական աշխատանք .....	64
3.2. Այցելության նպատակների որոշում.....	65
4. Քուն այցը .....	66
4.1. Նախնական գրույց կալանավայրի դեկավարի հետ .....	66
4.2. Մատյանների և այլ փաստաթղթերի ուսումնասիրություն ....	67
4.3. Այցելություններ բանտարկյալների համար նախատեսված շինություններ .....	69

<b>4.4. Ազատազրկված անձանց հետ անհատական հարցազրույցներ</b>	70
4.4.1. Ընդհանուր քննարկում	70
4.4.2. Խմբային զրույց	71
4.4.3. Անհատական զրույցներ	72
4.4.4. Զրույցներ ազատազրկված անձանց համար պատասխանատու անձնակազմի հետ	74
4.5. Բանտի տնօրենի հետ ամպովիչ զրույց	74
5. Այցելության արդյունքների ստուգում	75
5.1. Այցելության արդյունքների մշջազգային ստուգում	75
5.2. Բանտարկության պայմանների մոնիթորինագի վերաբերյալ գեկույցի կազմում	76
5.2.1. Այցելության վերաբերյալ գեկույցների կազմում	77
5.2.2. Համընդիանուր գեկույցի կազմում	79
5.2.3. Համընդիանուր գեկույցի տարածում	80
5.3. Համընդիանուր գեկույցի կատարման ստուգում	80
5.4. Հետազա գործողություններ մոնիթորինագի գործընթացից դուրս	81
<b>Սաս չորրորդ: Ստուգման ենթակա բանտարկության պայմաններ</b>	84
Բանտարկության հանդեպ վերաբերմունք	88
Խոշտանգումներ և դաժան վերաբերմունք	88
Սեկուսացում	95
Սեկուսացման միջոցներ	97
Ուժի գործադրում	100
Պաշտպանության միջոցառումներ	104
Պաշտպանության մջոցներ	104
Տեսչական ստուգում	108
Կարգապահական ընթացակարգեր	109
Բողոքներ ներկայացնելու ընթացակարգը	112
Բանտարկության դասակարգում ըստ խմբերի	115
Նյութական պայմաններ	120
Սնունդ	121
Լուսավորություն և օդափոխություն	123
Սանիտարական հնարավորություններ	125
Անձնական հիգիենա	126
Հագուստ և անկողնային պարագաներ	128
Գերբնակեցում և շեմքային պայմաններ	130
Ոեժիմ և միջոցառումներ	136

Ծփումներ արտաքիմ աշխարհի հետ.....	140
Կրթություն .....	144
Մարմնամարզություն մարուր օդում .....	148
Հանգիստ և մշակութային մջջոցառումներ.....	150
Կրոն .....	152
Աշխատանք.....	154
Բժշկական ծառայություն .....	159
Բժշկական խնամքի մատչելիություն .....	160
Բժշկական անձնակազմ .....	163
Հատուկ բուժօգնություն կանանց և երեխաների համար... ..	166
Հատուկ բուժօգնություն հոգեկան հիվանդ	
բանտարկյալների համար .....	168
Անձնակազմ.....	171
Ընդհանուր հարցեր .....	172
Անձնակազմի ուսուցում .....	176
Ոստիկանական ծերբակալություն .....	179
Հիմնական երաշխիքներ.....	180
Գրանցում .....	183
Հարցաքննություն .....	184
Տեղեկատվություն .....	187
Նյութական դրություն.....	188
<b>Հավելվածներ .....</b>	<b>191</b>
Հավելված 1. Վերահսկիչ ցուցակ .....	192
Հավելված 2. Ներքին այցելության գրանցման օրինակ .....	197
Հավելված 3. Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային	
կամ արժանապատվությունը նվաստացնող	
վերաբերմունքի կամ պատժի տեսակների դեր	
կոնվերնցիայի կամընտիր արձանագրություն .....	199
Հավելված 4. Համապատասխան չափանիշների ցանկ.....	218
Հավելված 5. Լրացուցիչ գրականություն .....	224
Հավելված 6. Օգտակար հասցեներ .....	226

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հատուկ զեկուցողը պնդում է, որ ազատազրկման բնույթի վերաբերյալ միջազգային հանրության մոտեցումները անհրաժեշտ է կարուկ փոխել: Առնվազն մեկ դար շարունակ ձևավորված է ասպացույցներ չափանշող այն հիմնական համոզունքը, որ բանտերը, ուստիկանատները և նման այլ հաստատությունները փակ և զաղտնի վայրեր են, որտեղ գործողությունները կատարվում են հասարակության աջից հեռու: Այն, ինչի կարիքը ներկայում կա, անրափանցությունը բափանցիկությամբ փոխարինելու է:

Ենթադրությունները սոուզելու համար անհրաժեշտ է մուտք գործել ազատազրկման վայրեր:

### **Սը Նայջը Ռողի**

Խոշտանգումների գծով ՍԱԿ-ի հատուկ  
գեկուցող, 2001թ. հունիսի 3, A/56/156, §35

### **Ինչի՞ համար է անհրաժեշտ ազատազրկման վայրերի մոնիթորինգը**

Թափանցիկությունը և հանրային կառավարման մարմինների կողմից անկախ վերահսկողությունը հանդիսանում են ժողովրդավարության և օրենքի գերակայության սկզբունքների վրա հիմնված ցանկացած համակարգի բաղկացուցիչ տարր: Սա հատկապես ճշմարիտ է այն ժամանակ, երբ վերահսկողության է ենթարկվում իշխանությունների՝ մարդկանց ազատությունից զրկելու իրավասությունը: Ազատազրկման վայրերում գտնվող մարդկանց հանդեպ կիրառվող վերաբերմունքի և պայմանների մոնիթորինգն անսպասելի և ծրագրավորված այցերի միջոցով՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման առավել արդյունավետ միջոցներից մեկն է:

Վերջին մի քանի տարվա ընթացքում ազատազրկման վայրերի արտաքին ու ներքին մոնիթորինգի զաղափարը ակնհայտորեն առաջադիմել է: Լայնորեն ընդունված է, որ ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ պայքարելու լավագույն պայմաններն են՝ ազատազրկման վայրի առավելագույն թափանցիկությունը և հասարակությունում հեղինակություն վայելող անձանց կանոնավոր նույթը ազատազրկման վայրերով: Այս դրական փոփոխությունն անրագրվել է 2002թ. դեկտեմբերի 18-ի ՍԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայի ֆա-

կուլտատիվ արձանագրությունում, որի նպատակն է «միջազգային և ազգային անկախ մարմինների կողմից կանոնավոր ստուգումների համակարգի ձևավորումն ազատազրկման վայրերում, որտեղ մարդիկ զրկված են իրենց ազատությունից»՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի տեսակները կամ սլատիֆները կանխելու նպատակով»:

Ըստ ԽԴԿՖԱ-ի, խոշտանգումների կանխման հիմնական պարտավորության կրողը տեղական մարմիններն են, քանի որ մասնակից պետությունները պետք է «հիմնադրեն, նշանակեն կամ պահպանեն մեկ կամ մի քանի ազգային կանխարգելիչ մեխանիզմներ»: Պետք է հիմնադրել նոր մեխանիզմներ, կամ հին մեխանիզմները պետք է համապատասխանեցվեն ԽԴԿՖԱ-ի չափորոշիչներին: Մրանից չի բխում, որ տեղական մակարդակով մոնիթորինգի այլ ձևերը բացառվում են: Այս ենթատեքստում ներկայիս կիրառական ձեռնարկը նպատակ ունի ծառայել որպես օգտակար գործիք ազգային մակարդակով գործող մոնիթորինգի խմբերի կամ մարմինների կողմից կատարվող կանխարգելիչ արդյունավետ այցերը խթանելու համար:

#### **Գիրքը կիրառողները**

Սույն ձեռնարկը նախատեսված է ցանկացած անձի կամ մարմնի համար, ով կորոշի տեղական մակարդակով այցելություններ կատարել ազատազրկման վայրեր: Ինչպես նշվել էր վերը, գրքի առաջնային կիրառողները կլիմեն ԽԴԿՖԱ-ի ներքո որպես «ազգային կանխարգելիչ գործող մեխանիզմներ» հիմնադրված կամ նշանակված մեխանիզմների ներկայացուցիչները:

Ինչկեցե, այս ձեռնարկի կիրառումը չի սահմանափակվում այդ մարմիններով, այլ ունի ավելի լայն կիրառություն որպես մի միջոց այլ մարդկանց կամ հաստատությունների համար, որոնք ձեռնամուխ են եղել իրենց երկրում մարդու իրավունքները մոնիթորինգի ենթարկելու գործին: Ձեռնարկը հասցեագրվում է այն մարմիններին, որոնք իրենց կարգավիճակով կամ հատուկ համաձայնության շնորհիվ արդեն իսկ նույտը ունեն դեպի ազատազրկման վայրեր: Առավել ևս, որ ազատազրկման վայրեր նույտը ստանալու հարցն այստեղ շոշափված չէ<sup>1</sup>:

Տեղական մեխանիզմներից բացի այս ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև այն մարմինների համար, որոնք հետաքրքրված են ազա-

<sup>1</sup> Այդ հարցը շոշափված է ԽԿՄ-ի/ՍԻԲԿԳ-ի «Ազատազրկման վայրերի մոնիթորինգի գործնական ձեռնարկ ՀԿ-ների համար» գրքի երկրորդ մասում, Ժնև, 2002թ. դեկտեմբեր, էջ 36-39:

տազրկման վայրերի խնդիրներով: Այդ կազմակերպություններն են՝ հասարակական կազմակերպությունները, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները և դրանց տարածքային գրասենյակները:

Վերջապես, մեր նպատակն այն է, որ մեր ձեռնարկում զետեղված տեղեկատվությունն օգտակար կլինի նաև ազատազրկման վայրերի վարչակազմի համար, քանի որ հենց նրանք են համագործակցում մոնիթորինգ իրականացնող մարմինների հետ:

### **Զեռնարկի նպատակները**

Այս ձեռնարկի ընդհանուր նպատակը տեղական մակարդակով արդյունավետ այցելություններ կատարող նորաստեղծ կամ գոյություն ունեցող մարմիններին աջակցելն է՝ նրանց արհեստավարժությանը և խոշտանգումների կանխման ու կալանավորման պայմանների բարելավմանը նպաստելու ճանապարհով:

### **Զեռնարկի հասուկ նպատակները**

- Տարրեր ուղիներով հստակ խորհրդատվություն և հանձնարարականներ տրամադրել այցերի մեթոդաբանության վերաբերյալ (նախապատրաստում, իրականացում և հետագա քայլեր),
- Կատարելագործել համագործակցությունը այցելությունների կատարող տարրեր տեղական, ինչպես նաև ազգային և միջազգային մարմինների միջև,
- Գործնական, թեմատիկ տեղեկատվություն տրամադրել ազատազրկման վայրի մոնիթորինգի տարրեր միջազգային ստանդարտների մասին,
- Տեղեկատվություն տրամադրել ԽԴԿՖԱ-ի բովանդակության վերաբերյալ, որն առաջին անգամ միջազգային պայմանագրի մակարդակով հստակ սահմանում է «ազգային կանխարգելիչ մեխանիզմների» անկախության և արդյունավետ գործունեության չափանիշները և երաշխիքները,
- Վերը նշված կանոնները կատարելու ընթացքում աջակցել ԽԴԿՖԱ-ի սկզբունքներին հակասող մեխանիզմների վերացմանը:

Այս ձեռնարկը ստեղծված չէ այս կամ այն մեխանիզմի, այս կամ այն տարածաշրջանի կամ երկրի համար: Այն նախատեսված է լայն միջազգային հանրության համար:

### **Զեռնարկի շրջանակները**

Այս ձեռնարկը կարող է կիրառվել ցանկացած ազատազրկման վայրի մոնիթորինգի ժամանակ: Գործնականում այն կենտրոնացվում է բանտերի, և ավելի նվազ չափով՝ ոստիկանատների վրա: Չնայած որոշ վայրեր,

ինչպիսիք են հոգեբուժական հաստատությունները, անշափահասների կամ օտարերկրացիների համար նախատեսված կալանավայրերը, առանձնակի մոտեցում են պահանջում, գրքում արտացոլված ընդհանուր դրույթները կիրառելի են և այդ դեպքերի համար:

Բանտարկյալների խոցելի խմբերին, ինչպիսիք են՝ կանայք, երեխաները, փոքրածանությունները և օտարերկրացիները, գրքում առանձին գլուխ չի տրամադրվել, սակայն ձեռնարկի տարբեր գլուխներ մասամբ անդրադառնում են նրանց խնդիրներին:

Ձեռնարկի կառուցվածքը հետևյան է: Առաջին մասը պարունակում է ազատազրկման վայրերի մոնիթորինգի կարևորության մասին ընդհանուր ներածություն: Երկրորդ մասը համառոտ նկարագրում է գոյություն ունեցող միջազգային և տեղական մեխանիզմները, ինչպես նաև հատուկ նշում է կատարում ԽԴԿՖԱ-ով սահմանված տեղական կանխարգելիչ մեխանիզմների մասին: Երրորդ մասն ունի առավել կիրառական բնույթ և բացատրություն է, թե ինչպես պետք է իրականացնել այցը՝ նախապատրաստությունից մինչև այցի կատարման ստուգում: Վերջին մասը կետ առ կետ շարադրում է ազատազրկման այն ասպեկտները, որոնց պետք է ուշադրություն դարձվի այցի ընթացքում, և մեկնարաբանում է միջազգային չափանիշների համապատասխան դրույթները:

### **Կարևոր տերմինների բացատրություն**

#### **Ազատազրկման վայրերի մոնիթորինգ**

Ազատազրկման վայրերի մոնիթորինգ՝ նշանակում է ազատազրկման բոլոր ասպեկտների արտահերթ կամ կանոնավոր քննության գործընթաց: Քննությունը կարող է ներառել կալանավորվածների բոլոր կամ որոշ կատեգորիաները (տես՝ ստորև), որոնք պահպում են մեկ կամ մի քանի ազատազրկման վայրերում (տես՝ ստորև):

Սոնիթորինգը ներառում է քննության արդյունքների մասին տեղական մակարդակով ազատազրկված անձանց պաշտպանությամբ զբաղվող մարմիններին և այլոց բանավոր կամ գրավոր տեղեկություններ և հանձնարարականներ տալով: Այն ներառում է նաև իշխանություններին տրված հանձնարարականների կատարման ընթացքի ստուգումը:

#### **Բանտարկյալ**

«Բանտարկյալ» տերմինը տարբեր երկրներում և նոյնիսկ տարբեր միջազգային փաստաթղթերում օգտագործվում է տարբեր իմաստներով: Այս տերմինը երեմն վերաբերում է միայն մինչդատական փուլում կամ վարչական կալանքի տակ գտնվող անձանց՝ չընդգրկելով դատապարտյալներին: Սույն ձեռնարկում «բանտարկյալ» տերմինն օգտագործվում է առավելագույնս լայն իմաստով, որպեսզի վերաբերվի անձնական ազա-

տուրքյունից զրկված ցանկացած անձի՝ ձերբակալման, վարչական կալանքի, մինչդատական կալանքի կամ դատապարտված և ազատազրկման վայրում պատիճ կրող անձանց (տես՝ ստորև):

### **Ազատազրկման վայր**

Այստեղ «ազատազրկման վայր» տերմինը ևս գործածվում է բառի լայն իմաստով: Այն ներառում է ցանկացած վայր, որտեղ անձը զրկված է իր ազատությունից. բանտերը, ոստիկանատմները, օտարերկրացիների համար նախատեսված մեկուսարանները, անօրեևաններին պահելու կենտրոնները, անշափահասների կալանքի կենտրոնները, սոցիալական խնամքի կենտրոնները, հոգեբուժական հաստատությունները, զինվորական կալանատմները կամ այլ վայրեր, որտեղ մարդիկ կարող են զրկված լինել իրենց ազատությունից:

### **Այցելություն կատարող տեղական մարմիններ**

Այս տերմինը վերաբերում է տեղական մակարդակով (ազգային, տեղական, համայնքային) գործող բոլոր կազմակերպություններին, որոնց միջոցով տարբեր անկախ մարմիններ (մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատություններ, մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակներ, այցելություն կատարող հատուկ մարմիններ, տեղական ՀԿ-ները, քաղաքացիական կոմիտեներ կամ այլ հասարակական խմբեր) մոնիթորինգի են ենթարկում ազատազրկման վայրերը:

### **Ազգային կանխարգելիչ մեխանիզմ**

Այս տերմինը հատկանի վերաբերում է մասնակից պետությունների կողմից ստեղծված մեխանիզմներին՝ որպես ԽԴԿՖԱ-ի ներքո գործող «ազգային կանխարգելիչ մեխանիզմ»:

### **Այցելություն**

«Այցելություն» տերմինն օգտագործվում է բառի լայն իմաստով և դրա տակ հասկացվում է ոչ միայն բուն այցելությունն ազատազրկման վայր, այլև այցի նախապատրաստումը և դրա անցկացման ընթացքի ստուգումը: Այն ներառում է ընդհանուր բնույթի այցելություններն ազատազրկման վայր, ինչպես նաև նպատակային այցելությունը որոշակի կալանավորներին կամ որոշակի խնդրի, թեմայի կամ միջադեպի կապակցությամբ:

## ՍԱՍ ԱՌԱՋԻՆ

Ազատազրկման

վայրերի

մոնիթորինգի

համատեքստը

## 1. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1.1. Բանտարկություն

Ազատության և ազատ տեղաշարժվելու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այդուհանդերձ, այն բացարձակ չէ: Պետությունները հնարավորություն ունեն ձերբակալության կամ կալանքի միջոցով մարդկանց գրկել ազատությունից, եթե պահպանվել են ազատությունից գրկելու պահանջմերը և օրենքով սահմանված բոլոր ընթացակարգերը: Կամայական ձերբակալումներն արգելվում են միջազգային օրենքով:

Բանտարկություն՝ նշանակում է դատական, վարչական կամ այլ մարմնի որոշմամբ անձի տեղափորումը ընդիանուր կամ առանձին շինությունում, որն անձը չի կարող լրել իր ցանկությամբ:

#### Բանտարկության օրինակներ՝

- Ձերբակալություն,
- Կալանք նախքան մեղադրանքի առաջադրումը (ոստիկանական կալանք),
- Մեղադրանքի առաջադրումից հետո և դատական որոշման ընդունումից առաջ կիրառվող կալանավորում (մինչդատական կալանք),
- Ազատազրկում (ազատազրկման ձևով նշանակված պատժի կրում՝ դատավճռի կայացումից հետո),
- Վարչական կալանք,
- Անշափահասների կալանք,
- Հոգեբուժական ներկալում,
- Զինվորական կալանք՝ որպես կարգապահական պատիժ:

Միջազգային չափանիշները պետություններին կոչ են անում սահմանափակել ազատազրկման կիրառումը: Մինչդատական կալանքը չպետք է կիրառվի պարբերաբար, այլ պետք է հանդիսանա «վատարված իրավախսում» քննության շահերից բխող ծայրահեղ միջոց՝ հասարակությանը և տուժողին պաշտպանելու նպատակով»<sup>2</sup>:

<sup>2</sup> 6-րդ հոդված: Գլխավոր Ասամբլեայի բանաձևով ընդունված Միացյալ Ազգերի Կազմակերպության ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների մասին նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ) 14.10/110 Դեկտեմբեր 1990.

Չափանիշները խրախուսում են ազատազրկման հետ կապ չունեցող այլընտրանքային միջոցների կիրառումը, ինչպիսին, օրինակ, հանրային աշխատանքներն են:

Միջազգային չափանիշները պետություններին հորդորում են ձեռնպահ մնալ անչափահասների բանտարկությունից, ներառյալ՝ մինչդատական կալանքը: Ազատազրկման պատճառով անհատները կորցնում են իրենց տեղաշարժվելու ազատությունը: Նրանք պետք է շարունակեն օգտվել մարդու այլ իրավունքներից: Մասնավորապես, նրանց հետ պետք է վարվել այնպես, որ չնվաստացվի նրանց մարդկային արժանապատվությունը:

## 1.2. Ազատազրկված անձանց պաշտպանություն

Ազատազրկված մարդիկ կանգնած են իրենց՝ մարդու իրավունքները խախտելու վտանգի առաջ: Նրանց անվտանգությունը և բարեկեցությունը կախված է ազատազրկման վայրի վարչակազմից, որոնք պետք է երաշխավորեն ազատազրկման այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն մարդու իրավունքները և արժանապատվությունը: Ազատազրկման վայրերի պայմանների մոնիթորինգը կազմում է **ազատազրկված անձանց պաշտպանության համակարգի** անքակտելի մասը:

Մոնիթորինգի համակարգի կարևոր տարրը անկախ մարմինների կողմից ազատազրկման վայրեր կանոնավոր և արտահերթ այցեր կատարելն է, որոնց կիազորդեն ազատազրկման վայրի վարչակազմին ուղղված զեկույցները և հրահանգները և դրանց կատարման նկատմամբ համակարգված վերահսկողությունը: Ցուրաքանչյուր երկիր, որը ձեռնամուխ է եղել ապահովելու մարդու այդ իրավունքները՝ պարտավոր է ունենալ կամ ստեղծել այդպիսի մի համակարգ:

Փորձը ցույց է տալիս, որ ազատազրկված անձանց պաշտպանությունը ազգային արդյունավետ համակարգը պետք է ներառի հետևյալը՝

- 
1. **ազգային իրավաբանական համակարգ**, որը կներառի միջազգային օրենքով նախատեսված չափանիշները, այսինքն՝ համապատասխան օրենքների և կանոնների ընդունում, որոնք կհանդիսանան պետական քաղաքականության և ուղենիշների մի համակարգ.
  2. այդ իրավական համակարգի արդյունավետ իրականացումն իրավաբանական պրակտիկայում և ազատազրկված անձանց պահելու պայմանների կազմակերպման գործում: Այն ներառում է՝
-

- իրավաբանական համակարգի կիրառման հարցում առկա հստակ արտահայտված և լայնորեն տարածված քաղաքական կամք.
- արհեստավարժ էրիկայի նորմերին համապատասխան պատրաստված մարդկային ռեսուրսներ.
- ֆինանսական և նյութական ռեսուրսներ:

### **3. ՄՆԻՔՈՐԻՆԳԻ արդյունավետ կիրառում իրավաբանական համակարգի ներքո.**

- ներքին տեսչական ծառայություններ,
- դատավորների ու դատախազների կողմից իրականացվող դատական վերահսկողություն,
- փաստաբաններ և փաստաբանական միություններ,
- մարդու իրավունքների պաշտպանության և օմբուդսմենի ազգային հաստատություն,
- այցելություններ կատարող անկախ մարմիններ,
- հասարակական կազմակերպություններ,
- միջազգային մեխանիզմներ (ԿԽՄԿ, ԽԿԵԿ, ԿԽԴ-ի ՍԱԿ-ի ապագա և նրակոնմիտե):

Ընդհանրապես մոնիթորինգի այս խմբերը բռուցիկ դիտարկում են պետական մարմինների կողմից կատարված աշխատանքը: Սիզոցները կարող են կիրառել ինչպես գործնական, այնպես էլ՝ իրավական մակարդակներում: Հաջողված պրակտիկայի մասին կարելի է տեղեկացնել ուրիշներին:

## **2. ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՍՊՆԻԹՈՐԻՆԳՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

### **2.1. Ի՞նչ է նրադրվում ազատազրկման վայրեր ասելով**

Մոնիթորինգը նկարագրում է կալանքի բոլոր ասպեկտների կանոնավոր քննության կանոնավոր գործընթաց: Քննությունը կարող է ներառել բանտարկության որոշակի կատեգորիաներ կամ բոլոր բանտարկյալներին՝ մեկ կամ մի քանի ազատազրկման վայրում: Ազատազրկման բոլոր ասպեկտները փոխկապակցված են և պետք է դիտարկեն համատեղ (տես՝ մաս չորրորդ).

- Իրավաբանական և վարչական միջոցները հիմնված են և գործում են ազատազրկման վայրերի ներսում՝ պաշտպանելով անձին և ապահովելով նրա կյանքի, ֆիզիկական և հոգեբանական ամրողությունը,
- ազատազրկման ժամանակ կենցաղային պայմանները,
- ազատազրկման կարգը (գործունեություն, դրսի աշխարհի հետ շփում),
- բուժօգնության մատչելիություն,
- կալանավորվածների ղեկավարում ազատազրկման վայրերի անձնակազմի կողմից, ինչպես նաև կալանավորվածների և անձնակազմի միջև հարաբերությունները:

Վերահսկողությունը ներառում է քննության արդյունքների մասին գրավոր կամ բանափոր ձևով ազատազրկման վայրերի վարչակազմին, ինչպես նաև ազգային և միջազգային մակարդակով ազատազրկված մարդկանց իրավունքները պաշտպանող անձանց և մամուլին իրազեկելը: Այն ներառում է նաև իշխանություններին ներկայացված հանձնարարականների կատարման ստուգումը:

## 2.2. Մոնիթորինգի կարևորությունը

Ազատազրկման վայրերի պայմանների մոնիթորինգը անհրաժեշտ է տարրեր նկատառումներից ելնելով՝

- Անձի ազատազրկումը պետության կողմից կատարվող լուրջ հարկադիր գործողություն է, որի ժամանակ առկա է մարդու իրավունքների խախտման ռիսկ,
- Չնայած ազատության կորստին, ազատազրկված անձը լիովին կախման մեջ է գտնվում կալանավայրի վարչակազմից և հանրային ծառայություններից, որոնք ապահովում են նրա պաշտպանությունը, իրավունքները և գոյության միջոցները,
- Ազատազրկված մարդկանց կողմից իրենց ճակատագրերը տնօրինելու հնարավորությունները սահմանափակ են, եթե ոչ բացակա,
- Ազատազրկման վայրերը փակ հաստատություններ են, և ազատազրկված անձինք հեռու են հասարակության աշքից:

Բոլոր ժամանակներում և ամենուրեք ազատազրկված մարդիկ խոցելի են և կանգնած են դաժան վերաբերմունքի արժանանալու կամ նոյնականացնելու հոգածանգումների ենթարկվելու վտանգին: Սա նշանակում է, որ պետք է բույսարեկ ավելացնել նրանց պաշտպանության միջոցները՝ ազատազրկման պայմանների մոնիթորինգի միջոցով:

Պետք է նշել, որ վերահսկողության մեխանիզմները կազմում են ազատազրկված անձանց պաշտպանության հիմնական մասը, սակայն դա

բնավ չի նշանակում, որ ազատազրկման վայրերում առկա են լուրջ խնդիրներ կամ բացակայում է լայնատարած վստահությունը դեպի պաշտոնատար անձինք:

**Ծիշտ կլիներ կալանավորվածի և կալանավորողի միջև գոյություն ունեցող էական բացի ուսումնասիրությունը բողնել արտաքին որևէ մարմնի, որն օժտված կլիներ այդ իրավունքի խախտման դեպքում միջամտելու իրավունքով:**

Մարդու այս իրավունքները պաշտպանելու համար մոնիթորինգի մեխանիզմներն օգնում են նվազագույնի հասցել դաժան վերաբերնունքի վտանգը և **կանոնակարգել ազատազրկված անձանց դեմ կիրառվող արտակարգ միջոցները:** Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները ևս իրենց ավանդն ունեն ազատազրկման վայրերի բափանցիկության ավելացման և նրանց այստախսանատվության բարձրացման մեջ, այդպիսով աճում է ազատազրկման վայրերի դեկավարման օրինականությունը և այդ **հաստատությունների հանդեպ հանրային վստահությունը:**

### 2.3. Ազատազրկման վայրեր այցելությունը՝ մոնիթորինգի իրականացման հիմնական գործիք

Ազատազրկման վայրերը մոնիթորինգի են ենթարկվում այցելությունների միջոցով<sup>3</sup>: Այդ այցելություններն ունեն գործառույթների լայն բազմազանություն՝

- **կանխարգելիչ գործառույթ:** Թեկուզ միայն պարզ փաստը, որ դրսից ինչ-որ մեկը կանոնավոր այցելում է ազատազրկման վայրեր, արդեն իսկ նպաստում է ազատազրկվածների պաշտպանությանը:
- **ուղղակի կանխարգելում:** Կատարված այցերը հնարավոր են դարձնում անհապաղ արձագանքել կալանավորվածների այն խնդիրներին, որոնց լուծումները չեն տրվել պատախսանատու աշխատողների կողմից,
- **Փաստաթորթեր:** Այցերի ժամանակ կարող են քննվել և գնահատվել կալանավորման ամենատարբեր խնդիրները. հավաքված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում եզրակացություններ ներկա-

<sup>3</sup> Ազատազրկման վայրերից դուրս հավաքվող տեղեկատվությունը այնտեղ տիրող պայմանների մասին կարող է հանդիսանալ միջամտման հիմք այն դեպքերում՝ եթե այդ վայրերը հասանելի չեն: Ինչկեցե, այս միջամտությունների օրինականությունը և հիմնավորվածությունը կարող է ավելի հեշտ վիճարկվել քան տեղում կատարված այցը:

- յացնելու, տեղեկատվությունը փաստաթղավորելու, ինչպես նաև կիրառված ուղղիչ միջոցների արդարացման համար: Այցերը ևս հնարավորություն են տալիս փաստաթղթավորել կալանավորման որոշակի ասպեկտները, որոնք առանձին ուսումնասիրության թեմա են,
- կալանավորման վայրերի իշխանությունների հետ երկխոսության հիմք. այցերը հնարավորություն են տալիս ուղղակի երկխոսություն ապահովել ազատազրկման վայրերի վարչակազմերի և պատասխանատու ծառայողների հետ: Այդ երկխոսությունը, եթե այն, իհարկե, իհմնված է փոխադարձ վստահության վրա, հանգեցնում է կառուցողական աշխատանքային հարաբերությունների զարգացման, որոնց ընթացքում կարող են առանձնացվել ծառայողների տեսակետներն իրենց աշխատանքային պայմանների և խնդիրների վերաբերյալ:

### 3. ԱԶԱՏԱՁՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՉՔՆԵՐԸ

Ազատազրկման վայրերի այցելությունների միջոցով մոնիթորինգը դժվար և նորը խնդիր է: Էթիկական և արիեստավարժության նկատառումներից ելնելով՝ այցը կատարողներին անհրաժեշտ է մտապահել և հարգել հետևյալ խնդիրները:

Հետևյալ սկզբունքները վերցված են Միացյալ Ազգերի Կազմակերպության Մարդու իրավունքների պաշտպանության մոնիթորինգի ուսուցանող ծրագրի 18 հիմնական սկզբունքներից<sup>4</sup>: Դրանք ընդունվել են ազատազրկման վայրերի մոնիթորինգի յուրահատկությունը նկատի ունենալու անհրաժեշտությունից ելնելով:

Անհրաժեշտ է զարգացնել կամավորների հավաքագրման ռազմավարությունը, աշխատանքային պրակտիկան և ուսուցումը, ինչն էլ կպաշտպանի այս հիմնարար հատկանիշները: Մանրազնին ուսումնասիրություններն ապացուցել են, որ այդ սկզբունքներն ամփոփված են մոնիթորինգի գործունեության մեջ:

<sup>4</sup> Մաս չորրորդ (էջ 87-93) Մարդու իրավունքների պաշտպանության մոնիթորինգի արիեստավարժ ուսուցման ամսագիր N7, Մարդու իրավունքների պաշտպանության բարձրագույն հանձնակատարի գրասենյակ, Միացյալ Ազգերի Կազմակերպություն, Նյու-Յորք, Ժնև, 2001.

## 1. Վճառ չտալ

Կալանավորները հատկապես խոցելի են, և այցելուները միշտ պետք է նկատի ունենան դա և չկիրառեն այնպիսի գործողություններ կամ միջոցներ, որոնք կվտանգեն կալանավորված անձին կամ խմբին: Մասնավորապես, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբերյալ հայտարարություններ անելու ժամանակ միշտ պետք է նկատի ունենալ զադանիության սկզբունքը:

## 2. Կատարել ճիշտ դատողություն

Մոնիթորինգ իրականացնողները պետք է քաջատեղյակ լինեն այն չափանիշներին ու կանոններին, ինչի վերաբերյալ մոնիթորինգ են կատարում: Անկախ կանոնների քանակից, կիրառելիությունից ու ճշգրտությունից, կանոններն անկարող են փոխարինել ճիշտ դատողություն անելու մարդկային կարողությանը և առողջ քանականությանը: Մոնիթորինգ իրականացնողներն ամեն պարզապես պետք է ունենան և մարգեն ճիշտ դատողություն անելու ունակություն:

## 3. Հարգել կալանավայրի վարչակազմին և ծառայող անձնակազմին

Ծառայող անձնակազմի և ազատազրկման վայրեր այցելություն կատարող խմբի միջև գոնք նվազագույն փոխադարձ հարգանք չձևավորելու դեպքում կարող է վտանգվել ազատազրկման վայրերի գործունեությունը: Այցելություն կատարողները միշտ պետք է հարգեն վարչակազմի գործունեությանը և աշխատեն պարզել նրանց պաշտոնների դասակարգումը և նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվության աստիճանը, որպեսզի հնարավոր լինի ճիշտ մակարդակի վրա հասցեազրել առաջացած խնդիրը: Միշտ հնարավոր է հայտնաբերել անպատշաճ վարքագիծ դրսնորած որևէ ծառայող, սակայն հիմնական խնդիրներն առաջանում են ոչ թե անհատական մակարդակի վրա, այլ ազատազրկման համակարգի անխարժեքության արդյունքում ընդհանրապես, ինչն էլ նպաստում է անընդունելի վարքագծին: Այցելություն կատարողները պետք է նաև հաշվի առնեն, որ ազատազրկման վայրում աշխատողներն իրականացնում են խիստ կարևոր աշխատանք, որը հաճախ սոցիալապես թերագնահատվում է, իսկ որոշ երկրներում՝ վատ է վարձատրվում:

## 4. Ազատազրկված անձանց նկատմամբ հարգանք

Ինչ էլ լինի ազատազրկման պատճառը՝ բանտարկյալներին պետք է վերաբերվել հարգանքով և բարեկիրք: Այցելություն կատարողը պետք է ներկայանա բանտարկյալին:

## 5. Լինել վատահելի

Այցելություն կատարողները կալանավորներին և անձնակազմին պետք է հատուկ պարզաբնեն նոնիթորինգի նպատակները և սահմանափակումները և գործեն համապատասխանաբար: Նրանք չախոք է խոստանան կատարել մի բան, որն ի վիճակի շեն կատարել կամ կատարել մինչև վերջ:

## 6. Հարգել գաղտնիությունը

Անձնական հարցազրույցի ընթացքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը պահպանելը կարևոր է: Հայտարարություններ անելիս դիտորդները չախոք է հայտնեն կալանավորի անունն առանց նրա համաձայնության: Այցելություն կատարողները պետք է համոզված լինեն, որ կալանավորը լիովին հասկանում է իր կողմից կատարված քայլի դրական և հնարավոր բացասական կողմերը կամ հետևանքները: Այցելողները, բժիշկները թարգմանիչները պարտավոր են հարգել գաղտնիությունը:

## 7. Հարգել անվտանգությունը

Անվտանգությունը վերաբերում է այցելություն կատարողների անձնական պաշտպանությանը, կալանավորներին և նրանց հետ շփվողների, ինչպես նաև ազատազրկման վայրի անվտանգությանը:

Կարևոր է հարգել տվյալ վայրի ներքին կանոնները և վարչակազմից խնդրել համապատասխան թույլտվություն: Ազատազրկման վայրի վարչակազմերը հաճախ առաջ են քաշում անվտանգության նկատառումներ՝ խոչննդութելու համար մուտքը դեպի որոշակի վայրեր կամ տեսակցությունը որոշակի բանստարկյալի հետ: Միանշանակ է, որ այցելողների պատասխանատվությանն է բողնված, թե որքանով են նրանք ցանկանում հետևել այդ խորհրդին:

Այցելողները պետք է ձեռնապահ մնան առանց իշխանությունների պատշաճ թույլտվության կալանավայրի տարածք թերել կամ դուրս բերել ցանկացած առարկա: Նրանք պետք է ներկայանան և կրեն հատուկ նշան կամ անձը հաստատող այլ միջոցներ:

Հաշվի առնելով կալանավորվածների անվտանգությունը, այցելություն կատարողները պետք է նկատի ունենան, թե ինչպես է պետք օգտագործել տեղեկատվությունը, որպեսզի վտանգի չենթարկեն կալանավորված անձանց: Այցելություն չկատարողները պետք է կրկնեն իրենց այցերը և նորից հանդիպեն իրենց հանդիպած կալանավորների մեծ մասին, որպեսզի համոզվեն, որ նրանք չեն տուժել իրենց գործունեության արդյունքում:

### **8. Լինել հետևողական, համառ և համբերատար**

Այցելության մեխանիզմի օրինականությունը ստեղծվել է սպասավածից շուտ, հիմնականում՝ այցելություն կատարողների գործնականության, համառության և հետևողականության արդյունքում: Ազատազրկման վայրերի մոնիթորինգը պահանջում է արիեստավարժություն, կանոնակարգվածություն և հետևողականություն, այսինքն՝ նույն վայրեր և կառույցներ կանոնավոր այցելել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է որոշակի տեղեկատվություն ստանալու, հանձնարարականներ ներկայացնելու և հիմնավոր եզրակացություններ տալու համար: Անհրաժեշտ է նաև համառություն դրսերել այցի կատարում ստուգելու ընթացքում:

### **9. Լինել ճշգրիտ և հստակ**

Ազատազրկման վայրերում կատարված այցի ժամանակ կարևոր է հավաքել հստակ ու ճշգրիտ տեղեկատվություն, որպեսզի հնարավոր լինի մշակել փաստարդերի հիման վրա կազմված զեկույցներ և դրանից բխող հանձնարարականներ:

### **10. Լինել զգայուն**

Կալանավորների հետ հարցազրույցի ժամանակ այցելողները պետք է զգան անհատի վիճակը, տրամադրությունը և կարիքները, ինչպես նաև նրան պաշտպանելու համար անհրաժեշտ քայլերը: Տեղ գտած դաժան վերաբերմունքի և խոշտանգումների դեպքերի մասին իրազեկվելու դեպքում, այցելողները պետք է տեղյակ լինեն վերականգնման խնդիրներին (տես. Մաս չորրորդ. Խոշտանգում և դաժան վերաբերմունք):

### **11. Լինել օբյեկտիվ**

Այցելողները պետք է աշխատեն գրառել հրատապ խնդիրները և գործ ունենան թե՛ անձնակազմի և թե՛ բանտարկյալների հետ, զեկույցն ավելորդ զգացմունքայնությունից և կանխակալ կարծիքից գերծ պահելու համար:

## 12. Աշխատել ազնվորեն

Այցելողները բոլոր բանտարկյալներին, բանտի վարչակազմին, անձնակազմին և այլ այցելություն կատարող իրենց գործընկերներին վերաբերվեն զսպվածությամբ և հարգանքով: Նրան չպետք է ունենան անձնական շահագրգռություն: Բոլոր իրենց գործերում նրանք պետք է գործեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան, որոնց պաշտպանության համար էլ նրանց մանդատ է շնորհված:

## 13. Լիճել տեսաճեիլ

Ազատազրկման վայրերի ներսում այցելողները պետք է համոզված լինեն, որ տեղի անձնակազմը և բանտարկյալները տեղյակ են այցը կատարող մարմնի մեթոդաբանության և մանդատի մասին և գիտեն՝ ինչպես մոտենալ նրանց: Այցելություն կատարողները պետք է կրեն հատուկ նշան կամ իրենց ով լինելը հավաստող այլ միջոցներ: Այցելություն կատարող մեխանիզմների աշխատանքները ազատազրկման վայրից դուրս պետք է լուսաբանվեն գրավոր գեկույցներով և լրատվամիջոցների օգույշ կիրառմամբ (Տես՝ մաս երրորդ, 5-րդ պարբերություն, այցերի ընթացքի հսկողություն):

## Հետազա ընթերցումներ

Սիացյալ ազգերի կազմակերպության մարդու իրավունքների պաշտպանության բաժրագույն հանձնակատարի գրասենյակ, *արհեստավարժության ուսուցման ամսագիր N 7, Մարդու իրավունքների պաշտպանության մոնիթորինգ*, Նյու-Յորք, Ժնև, 2001.

Մարդու իրավունքների պաշտպանության հելփինկյան հիմնադրամ, *Մարդու իրավունքների պաշտպանության մոնիթորինգ*, Վարշավա, 2001.

## ՍԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ  
ՄՈԽՈԹՈՐԻՆԳ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

Տեղական մակարդակով իրականացվող մոնիթորինգը երկար ժամանակ հիմնված էր միայն ներքին վարչական մարմինների կողմից իրականացվող տեսչական ստուգումների վրա: Սակայն ազատազրկման վայրերի առավել լայն հանրային վերահսկողության անհրաժեշտությունն ավելի ու ավելի էր գիտակցվում, և ասպարեզում հայտնվեցին տեղական մոնիթորինգի այլ տեսակներ՝ որոնք աճբողջությամբ անկախ էին ազատազրկման վայրի իշխանություններից: Դրան զուգահեռ զարգացավ նաև միջազգային մարմինների կողմից իրականացվող միջազգային մոնիթորինգի գաղափարը, որը դանդաղ, բայց, այնուամենայնիվ, դարձավ իրականություն:

ԽԴԿՈՍ նորերս ընդունումը, որը հիմնված էր ազատազրկման վայրեր և միջազգային և տեղական մակարդակներով այցելություն իրականացնող մեխանիզմների կանխարգելիչ այցերի վրա, հավելյալ քայլ հանդիսացավ երկկողմանի ուժեղացված միջազգային և ազգային մեխանիզմների համբողականուր համակարգի հիմնադրման ճանապարհին:

Կարևոր է նշել նաև, որ ԽԴԿՈՍ ընդունմամբ առաջին անգամ շարադրվեցին այցելություն կատարող ազգային մեխանիզմների արդյունավետ գործունեության միջազգային փաստաթղթային չափանիշները և երաշխիքները:

Սույն մասի առաջին և երկրորդ գլուխմերը թռուցիկ դիտարկումներ են պարունակում տեղական և միջազգային մակարդակներով գործող մեխանիզմների մասին: Երրորդ գլուխը շարադրում է ԽԴԿՈՍ-ով նախատեսված այցելություն կատարող մեխանիզմները՝ հատուկ նշում կատարելով ազգային կանխարգելիչ մեխանիզմների վրա: Եվ, վերջապես, չորրորդ գլուխն արձարծում է միջազգային և ազգային մարմինների միջև անհրաժեշտ համագործակցության հարցը:

## 1. Այցելություն ազգային մակարդակի վրա

Բանտարկության պայմանների ստուգումն ազատությունից գրկված մարդկանց համար ամենից առաջ պատասխանատու տեղական իշխանությունների գործն է:

«Համապատասխան օրենսդրության և իրահանգների պահպանումը վերահսկելու համար ազատազրկման վայրեր այցելությունները պետք է կատարվեն պարբերաբար՝ համապատասխան որակավորում ունեցող և փորձառու անձանց կողմից, ովքեր նշանակվել են իրավասու մարմնի կողմից և հաշվետու են դրան, որը, սակայն, տարբերվում է այն իշխանություններից, որոնք ուղղակիորեն պատասխանատու են ազատազրկման կամ կալանավորման վայրերի դեկավարման համար»: Սկզբունք 29, §1, ՈՉԿԱՊՈՃ:

Չատ պետություններ հիմնել են իրենց սեփական տեսչական մարմինները, որոնք երեմն հանդես են զայխ որպես իրավական հսկողության լրացում: Սակայն դրանք ավելի դանդաղ են զարգացրել անկախ արտաքին մոնիթորինգի մեխանիզմները:

### **1.1. Ներքին տեսչական ստուգումներ**

Չատ պետություններ պետական հիմնարկների կառուցվածքում հիմնել են ներքին վարչական տեսչություններ՝ որպես մշտապես գործող վարչարարական համակարգի մաս, և որը պատասխանատու է ազատազրկման վայրեր կատարվող այցերի համար: Այդպիսի վարչական մարմինների դերը սովորաբար սահմանափակվում է անձնակազմի և ընթացակարգերի վերահսկողությամբ, ինչպես նաև ազգային չափանիշներին համապատասխան վարչական հրահանգներ և կանոններ սահմանելով: Դա է պատճառը, որ ներքին մոնիթորինգը, որպես այսպիսին, այնքան էլ արդյունավետ չէ և պետք է լրացվի արտաքին անկախ մոնիթորինգով:

### **1.2. Դատական տեսչական ստուգումներ**

Որպես իրենց լիազորությունների մաս, դատավորները և դատախազները հաճախ պատասխանատու են ազատազրկման վայրեր այցելությունների և բանտարկության պայմանների վիճակի վերաբերյալ տեսչական ստուգումների համար: Որոշ երկրներում այսպես կոչված «դիտորդ դատավորը» կարող է այցելել դատապարտյալներին և որոշումներ կայացնել պատիժը կրելու հետ կապված հարցերի վերաբերյալ: Դատական տեսչական ստուգումները տարբերվում են իրենց հաճախականությամբ և որակով: Դրանք արդյունավետ են այն դեպքերում, երբ դատավորը կայացնում է պարտավորեցնող որոշումներ բանտարկության պայմանների վերաբերյալ:

### **1.3. Անկախ արտաքին մոնիթորինգ**

Այն փաստի ընդունումը, որ ազատազրկման վայրերը պետք է լինեն թափանցիկ և պատասխանատու, վերջին տարիներին հանգեցրեց մոնիթորինգ իրականացնող անկախ տեղական մեխանիզմների հիմնադրման: Դրանք դարձան առավել արհեստավարժ և ազդեցիկ: Այդպիսի արտաքին մեխանիզմները կարող են լինել շատ տարբեր՝ Խորհրդարանի կողմից հիմնված պաշտոնական հաստատություններից մինչև համապատասխան նախարարությանն առընթեր մարմիններ կամ քաղաքացիական հասարակության խմբեր կամ այդ երկու խմբերը միասին:

### **Օմքուղամենի գրասենյակը և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները**

Մարդու իրավունքները վերահսկելու և դրանք զարգացնելու՝ նրանց, որպես կանոն, ընդորվուն մանդատը, անհատական բողոքները քննելու նրանց լիազորության հետ միասին հաճախ ենթադրում է ազատազրկման վայրեր այցելություն կատարելու հետաքրություն: Այցելությունների հաճախականությունը և ծավալը կարող է տարրերվել: Ի լրումն դրա պետք է ասել, որ ազատազրկման վայրեր այցելությունները հաճախ կատարվում են խախտումների վերաբերյալ ենթադրությունները ճշգրտելու և անհատական բողոքները քննելու նպատակով, քան կանխարգելիչ քննություն անցկացնելու, ապագա խնդիրները կանխարգելելու և կալանքի պայմանները գնահատելու: Օմքուղամենի և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների առավելությունը կայանում է նրանում, որ դրանք հրապարակային գեկույց են ներկայացնում Խորհրդարանում, և դրանց հրահանգները, այդ մարմինների պաշտոնական կարգավիճակի շնորհիվ վստահություն են վայելում:

Որոշ երկրներում **մոնիթորինգ իրականացնող հասունի մարմինները** հիմնադրվում են հաճախատասխան նախարարությանն առընթեր: Այդ մարմինները հաճախ ունեն երկակի մանդատ՝ այդ նախարարության ներքո գտնվող ազատազրկման վայրերում պայմանների հսկողության և այդ նախարարությանը անհրաժեշտ բարեկալվումների վերաբերյալ խորհրդատվության: Այդ մարմինները կարող են բաղկացած լինել ծառայողներից, ՀԿ-ների ներկայացոցիշներից և քաղաքացիական հասարակության անկախ անդամներից կամ այդ բոլորի համակցությունից: Այս մարմինները սովորաբար տախիս են ոչ պարտադիր հանձնարարականներ: Երբեմն դրանք հրատարակվում են գեկույցի տեսքով:

Վերջապես, որոշ երկրներում մարդու իրավունքների պաշտպանությանը գրաղվող **ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին** հաջողվում է ազատազրկման վայրերի պարբերական մոնիթորինգի լիազորություններ և համաձայնություն ստանալ: Քաղաքացիական հասարակության կողմից կատարվող մոնիթորինգը սովորաբար բնութագրվում է իշխանություններից անկախության բարձր աստիճանով, ինչպես նաև գեկույցների և ստացված տվյալների հրապարակայնությանը և հաճախ բարձր ճշգրտությանը, ինչն, անշուշտ, անկախության արդյունք է, ինչպես նաև այն համոզվածության հետևանք, որ անկախության պայմաններում ապահովվում է տրամադրվող տեղեկատվության առավել հավաստիություն: Այդուհանդերձ, մոնիթորինգի իրավական հիմքը կարող է հաճախ բույլ լինել՝ հիմնված տարբեր նախարարների կամ նոյնիսկ մեկ նախարարի հետ կայացած գրավոր համաձայնության վրա, ինչը մոնիթորինգ իրականացնողներին դնում է իշխանությունների քաղա-

քական կամքից կախյալ վիճակում: Որոշ երկրներում անգամ ճանապարհածախսի գումարների անբավարարություն նման խմբերի համար մոնիթորինգի խնդրի լուծումը կարող է դարձնել զրեթե անհնար:

## **2. Այցելության մեխանիզմները միջազգային և տարածաշրջանային մակարդակներում**

Միջազգային մարմինների կողմից ազատազրկման վայրեր կատարված այցերի պրակտիկան ունի համեմատաբար ոչ բազմամյա պատմություն: ԿԽՄԿ-ն առաջինն է, որ ստացավ այդ մանդատը, և այն հետապնդում էր ռազմական բախտումների ժամանակ ռազմագերիներին այցելելու նպատակ: Ավելի ուշ այս մանդատի գործողության ոլորտն ընդլայնվեց նախաձեռնության իրավունք ստանալու արդյունքում և բույլ էր տալիս ներքին խնդիրների և խոռվությունների ընթացքում կառավարության համաձայնությամբ այցելել ազատազրկվածներին: ԿԽՄԿ հանձնարարականները կարող են տարածվել նաև սովորությային իրավունքի հիման վրա ազատազրկված անձանց վրա:

Գոյություն ունեցող միջազգային մեխանիզմների մեծամասնությունը, որոնք կոչված են այցելություններ կատարել ազատազրկման վայրեր, գործում են արձագանքման սկզբունքով և տեղում իրազործում են այցեր, որոնց հաջորդում է խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը (օրինակ՝ ԱՄԿ-ի հատուկ գեկուցողներ, ԽԴԿ): Որոշ մեխանիզմների կարգավիճակը բույլ է տալիս կատարել պարբերական և ակտիվ այցելություններ (օրինակ՝ Աֆրիկայում բանտերի և բանտարկության պայմանների հարցերով հատուկ գեկուցող): Այդ մեխանիզմները կարող են ընդամենը տեղերում այցեր կատարել՝ համապատասխան պետության բույլտվությամբ:

Կա երկու միջազգային մարմին, որոնց գործունեության հիմքը լիովին տարբեր է: Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն 1987թ. հատուկ հիմնադրվել էր կալանավայրերի կանխարգելիչ այցեր իրականացնելու նպատակով: Կոնվենցիայի վավերացումից հետո մասնակից երկրները ճանաչում են ԽԿԵԿ իրավունքը՝ ցանկացած ժամանակ այցելություն կատարել ազատազրկված անձանց պահելու ցանկացած վայր: Խոշտանգումների դեմ կոմիտեի ենթակոմիտեն հիմնադրվել է ԽԴԿՈԱ-ի ներքո և նույնպես իրավասու է պարբերական այցեր կատարել ազատազրկման վայրեր՝ անկախ համապատասխան մասնակից պետության պատշաճ բույլատվության առկայությունից:

**Սյունակ 1: Միջազգային կամ տարածաշրջանային այցելություններ ի-  
րականացնող մեխանիզմներ**

Տեսակը	Օրինական հիմքը	Բնութագրեր
Միջազգային մեխանիզմներ		
ՄԱԿ-ի բեմատիկ ընթացակարգեր	<p>Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերության վերաբերյալ հաստուկ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Խոշտանգումների և այլ դաժան, անձարդիկային և նվաստացուցիչ վերաբերությին կամ պատճի վերաբերյալ հաստուկ</li> <li>• գեկուցող:</li> <li>• Առանց դաշտական</li> <li>• քննության կամ կամայական մահապատիժների վերաբերյալ հաստուկ գեկուցող:</li> <li>• Բռնի կամ ոչ բռնի անհայտացումների գծով աշխատող խումբ;</li> <li>• Կամայական կալանավորման գծով հաստուկ</li> <li>• խոսք</li> </ul>	<p>Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՍԱԿ-ի հանձնաժողովի բանաձևերը</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նախնական պայմանավորվածություն համապատասխան պետության հետ;</li> <li>• Սահմանափակ և միանգամյա այցեր;</li> <li>• Հանձնարարականներ, որոնք տրվել են գեկուցողին փոխանցված</li> <li>• տեղեկատվության հիման վրա կամ համապատասխան երկիր այցելություն կատարելու հետո;</li> <li>• Պետությունների</li> <li>• համար ոչ պարտադիր հանձնարարականներ;</li> <li>• Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի ներկայացրած հանրային - գեկույցներ:</li> </ul>
Խոշտանգումների դեմ կոմիտե	ՄԱԿ-ի Կոնվենցիայի 20-րդ հոդված (1984)	<ul style="list-style-type: none"> <li>• Այցելություննոր է ի-րականացնում միայն - Կոնվենցիայի մասնակից երկրների</li> <li>• տարածքում:<sup>5</sup></li> <li>• Այցելություններ միայն «պարբերական խոշտանգումների» դեպքերում;</li> <li>• Համապատասխան պետության բույլություն;</li> <li>• Գործունեության գաղտնի բնույթ:</li> </ul>

<sup>5</sup> Վերաբերվում է միայն այն Պետություններին, որոնք չեն վավերացրել հոչակագիրը 20-րդ հոդվածի ներքո:

<b>Խոշտանգումների դեմ կոմիտեի Ենթակոմիտե<sup>6</sup></b>	Խոշտանգումների դեմ կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրություն (2002)	<ul style="list-style-type: none"> <li>• Այցեր արձանագրությունը - ստորագրած երկրներ;</li> <li>• Ենթակոմիտեն կիմնադրվել է կանխարգելիչ այցեր կատարելու համար;</li> <li>• Այցերի բույատրում առանց ԽԴԿՈՍ վավերացնան կամ վավերացման վերաբերյալ պատշաճ համաձայնության;</li> <li>• Կանխարգելիչ պարբերական այցեր; այցի կատարման ստուգման մեջ հնարավորություն;</li> <li>• Ազատագրկման ցանկացած վայր անսահմանափակ մուտք;</li> <li>• Գաղտնի գեկույցներ; Ենթակոմիտեի հետ համագործակցության ձախողման դեպքում պետության համար գեկույցի հրապարակման բույսվություն կամ կոմիտեի կողմից գեկույցի սպազրում;</li> <li>• ԽԴԿ-ում տարեկան գեկույց;</li> <li>• Ազգային կանխարգելիչ մեխանիզմների հետ անմիջական շփում:</li> </ul>
--	---	--

## Աղյուսակ 2. Այցելություններ կատարող միջազգային և տարածաշրջանային մեխանիզմներ (հավաքածու)

Տեսակը	Իրավական իիմքը	Քննությունը
Միջազգային մեխանիզմներ		
<b>Կարմիր խաչի միջազգային կոմիտե</b>	Հիմնված է ռազմական բախումների մասին Ժնևան կոնվենցիայի վրա (1949); Հիմնվում է այլ հանգամանքներում պետության հետ	<ul style="list-style-type: none"> <li>• Ռազմական բախում այստանով ձերբակալված կամ կալանավորված անձանց պահման պայմանների մոնիթորինգ: Հատուկ դեպքե-</li> </ul>

<sup>6</sup> Ենթակոմիտեն կիմնադրվի ֆակուլտատիվ արձանագրության ուժի մեջ մտնելուց 6 ամիս անց, 20-րդ վավերացման հետ միաժամանակ:

	<p>Կնքված պայմանագրի հիման վրա:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սիցազգային ռազմական դեպքում Կոնվենցիային մասնակից Երկրների միջև համաձայնություն է կնքվում այցելել ռազմագերիների և քաղաքացիական կալանավորների պահման վայրեր;</li> <li>• Այլ դեպքերում այցելությունները կատարվում են իշխանությունների նախնական համաձայնությամբ;</li> <li>• Ռազմական բախմանների կամ դրանց անմիջական հետևանքների ժամանակական այցելություններ;</li> <li>• Օգնություն ընտանեկան խզված կապերը վերականգնելու գործում;</li> <li>• Զեկույցների և ընթացակարգերի գաղտնի բնույր:</li> </ul>	<p>բում մոնիթորինգը տարածվում է այլ ազատազրկված անձանց վրա;</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սիցազգային ռազմական դեպքում Կոնվենցիային մասնակից Երկրների միջև համաձայնություն է կնքվում այցելությունների կատարում;</li> <li>• Զանկացած այցելության հարց համաձայնեցվում է համապա-</li> </ul>
	<b>Տարածաշրջանային մեխանիզմներ</b>	
<b>Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանձնաժողով</b>	<p>Հիմնված է Մարդու իրավունքների պաշտպանության ամերիկյան կոնվենցիայի (1978) և Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հոչակագրի (1948)<sup>7</sup> վրա:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կոնվենցիայի կամ հոչակագրի մասնակից, ինչպես նաև այլ երկրներում այցելությունների կատարում;</li> <li>• Ցանկացած այցելության հարց համաձայնեցվում է համապա-</li> </ul>

<sup>7</sup> ՍԱՄԻՊՀ-ը կիրառում է Հոչակագրի այն մասնակից Երկրների հանդեպ, որոնք Կոնվենցիայի մասնակից չեն:

		<p>տասխան երկրի հետ;</p> <ul style="list-style-type: none"> <li>• Երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ հանրային գեկույցներ:</li> </ul>
<b>Աֆրիկայում քանտերի և կալանավորման պայմանների հարցերով Հատուկ Ձեկուցող</b>	Հաջորդում է Կամպալս-յի հոչակագրիմ՝ հիմնադրված Մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանության աֆրիկյան քանաձևով (1996):	<ul style="list-style-type: none"> <li>• Այցելություններ Բանաձեր ստորագրած Երկրներում;</li> <li>• Այցելություն միայն համապատասխան երկրի համաձայնությամբ;</li> <li>• Կալանքի պայմանների և քանտարկյալների հանդեպ արտօհայտված իրավունքի ընդհանուր գնահատում;</li> <li>• Ձեկույցները հրապարակվում են համապատասխան պետությունների մեկնարանություններով հանդերձ:</li> </ul>
<b>Խոշտանգումների Կանխարգելման Եվրոպական Կոմիտե (ԽԿԿ)</b>	Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոնվենցիա (1987)	<ul style="list-style-type: none"> <li>• Այցելություններ է կատարում միայն Կոնվենցիայի մասնակից երկրների տարածքում;</li> <li>• Հիմնված է կանխարգելիչ այցելություններ կատարելու նպատակով;</li> <li>• Ցանկացած ժամանակ և ազատագրկման ցանկացած վայր մուտք գործելու անսահմանափակ իրավունք;</li> <li>• Պարբերական և ad hoc (ըստ անհրաժեշտության) այցելություններ;</li> <li>• Ձեկույցները տեսականրեն կրում են գաղտնի բնույթ, դրանց հրապարակումը դարձել է կանոն:</li> </ul>

### 3. Խոշտանգումների դեմ կոնվենցիայի ոչ պարտադիր արձանագրություն

Խոշտանգումների դեմ կոնվենցիայի ոչ պարտադիր արձանագրությունը հիմնված է այն սկզբունքի վրա, որ միջազգային և ազգային մեխանիզմների կողմից կատարվող այցերը լրացնում են միմյանց: «Այս արձանագրության նպատակն անկախ միջազգային և տեղական մարմինների կողմից նախաձեռնած ազատությունից զրկված մարդկանց պահելու վայրեր այցելությունների համակարգի հիմնումն է՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը կանխելու նպատակով» (Հոդված 1, ԽԴԿՈԱ):

#### 3.1. ԽԴԿ-ի Ենթակոմիտե

Արձանագրությունը պահանջում է Խոշտանգումների դեմ կոմիտեի ենթակայությամբ Ենթակոմիտեի ստեղծում: Այդ մարմինը բաղկացած կլինի տասն անկախ անդամներից, ովքեր կնշանակվեն կամ կընտրվեն Արձանագրությունը ստորագրած երկրների կողմից<sup>8</sup> և կունենան այդ ոլորտի համար անհրաժեշտ մասնագիտական փորձ և կներկայացնեն աշխարհի տարբեր իրավաբանական համակարգեր և տարածաշրջաններ: Իր աշխատանքներում Ենթակոմիտեն պետք է առաջնորդվի «գաղտնիության, անկողմնակալության, և օբյեկտիվության» սկզբունքներով (Հոդված 2):

Կալանավայրեր այցելելու Ենթակոմիտեի մանդատը վերջինիս թույլ է տալիս մուտք գործել միայն բանտեր և ոստիկանատներ, բայց կարող է նաև այցելել անապատան անձանց համար նախատեսված ցանկացած վայր, ուազմական ճամբար, անչափահասներին պահելու կենտրոններ, հոգեբուժական հիվանդանոց և միջազգային օդանավակայանների տրանզիտ գոտի:<sup>9</sup>

Ենթակոմիտեն կարող է իրականացնել միայն «պարբերական այցեր և արձանագրությունը ստորագրած երկրների համար պետք է մշակի ծրագրեր և վերջիններիս տեղեկացնի այդ մասին»:

Ի հավելումն դրա, այն կարող է պարբերական այցերին հաջորդող կարճատև այցելություններ կատարել:

<sup>8</sup> 50-րդ վավերացումից հետո այս թիվը կամ միջն 25-ը

<sup>9</sup> Վայրերի տեսակները նույնն են այցելության ազգային ծրագրերի համար (Տես՝ ստորև):

<sup>9</sup> Այցելության վայրի տեսակը նույնն է, ինչ տեղական մակարդակով իրականացվող այցելության դեպքում:

### **Այցելության հետ կապված կարգավիճակ և լիազորություններ**

- Ազատազրկված մարդկանց թվի, նրանց հանդեպ վերաբերմունքի և բանտարկության պայմանների վերաբերյալ ցանկացած տեղեկատվության մատչելիություն:
- Բանտարկության վայրեր և դրանց կից կառույցներ մուսք գործելու հնարավորություն: Բացառիկ հանգամանքներում պետությունը կարող է արտակարգ պատճառներով ժամանակավոր հետաձգել այցելությունն ազատազրկման վայրեր, ինչպես, օրինակ՝ ազգային անվտանգության պահպանություն, հասարակական անվտանգություն, այցելության վայրում պատահած աղետի կամ կարգուկանոնի լուրջ խախտումներ:
- Անհատական հարցագրույցներ վերցնելու հնարավորություն:
- Ի հավելումն դրա գոյություն ունի ենթակոմիտեի կամ ազգային կանխարգելի մարմնի հետ շփող մարդկանց ցանկացած տեսակի ճնշումներից/պատիժներից պաշտպանելու (Հոդված 15):

Այցից հետո ենթակոմիտեն հրապարակում է գաղտնի գեկույց, որը պարունակում է արձանագրությունը ստորագրած երկրներին ուղղված հանձնարարականներ, իսկ գործի համար կարևոր հանդիսացող հանձնարարություններն ուղարկվում են ազգային կանխարգելի մեխանիզմներին:

Չեկույցը գաղտնի է, սակայն Արձանագրությունը ստորագրած երկրները կարող են հրապարակել գեկույցը: Հանձնարարականները պարտադրող բնույթ չունեն, սակայն Արձանագրությունը ստորագրած երկրները պարտավոր են քննության առնել դրանք և երկխոսության մեջ մտնել դրանց կիրառման միջոցների վերաբերյալ: ԽԴԿՈՍ-ն ևս նախատեսում է հատուկ կամավոր հիմնադրամի հիմնում՝ հանձնարարականների կատարմանն օժանդակելու նպատակով:

Եթե արձանագրությունը ստորագրած երկիրը հրաժարվում է համագործակցելուց, ենթակոմիտեն կարող է ՍԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեին առաջարկել հրապարակային հայտարարություն անել գեկույցի հրապարակման վերաբերյալ:

### **3.2. ԽԴԿՈՍ-ի ներքո գործող ազգային կանխարգելի մեխանիզմներ**

ԽԴԿՈՍ-ի կողմից սահմանված ստանդարտները և չափանիշները հատկապես վերաբերում են այցելություններ կատարող տեղական մեխանիզմներին, որոնք կարող են քննության վերաբերյան կանխարգելի մեխանիզմ: Դրանք նույնպես հետաքրքրություն են ներկայացնեմ այցելություն կատարող տեղական այլ մարմնների համար, քա-

նի որ դրանք երաշխավորում են այցելության միջազգային մեխանիզմների արդյունավետությունը:

### **3.2.1. Ազգային կանխարգելիչ մեխանիզմների հիմնում կամ նշանակում**

Արձանագրությունը ստորագրած երկրները պարտավորվում են «պահպանել, նշանակել կամ հիմնել... մեկ կամ մի քանի անկախ կանխարգելիչ մեխանիզմ՝ տեղական մակարդակով խոշտանգումները կանխելու համար (հոդված 17) <sup>10</sup>:

Հետևաբար որոշ երկրները պետք է ստեղծեն նոր մարմիններ, մինչդեռ այլ երկրները որոնք արդեն ունեն նմանատիպ մեխանիզմներ, պետք է քննության առնեն՝ եղածները լիարժեք համապատասխանո՞ւմ են արդյոք ոչ պարտադիր արձանագրությամբ ստանձնած պարտավորություններին:

Արձանագրությունը վավերացրած երկրներին օգնելու նպատակով ենթակոմիտեն կարող է նրանց օժանդակություն և խորհրդատվություն տրամադրել: Դրա հետ մեկտեղ ենթակոմիտեի մանդատը քույլ է տալիս խորհրդատվություն տրամադրել Արձանագրությանը միացած երկրների ազգային մեխանիզմների անձնակազմերին: Ենթակոմիտեն կարող է ազգային կանխարգելիչ մեխանիզմներին առաջարկել աջակցություն և ուսուցում:

Եթե Արձանագրությունը ստորագրած երկրները գոյություն ունեցող մարմինը կոչում են «ԽԴԿՈՍ ներքո գործող ազգային կանխարգելիչ մեխանիզմ», պետք է ենթարքել, որ դրանք իրականացնում են Ոչ պարտադիր արձանագրության չափանիշները՝ հաշվի առնելով գործնական անկախությունը: Ենթակոմիտեն հնարավորություն ունի հսկելու ազգային կանխարգելիչ մեխանիզմի արդյունավետությունը: Ենթակոմիտեն կարող է հաճանարարականներ ներկայացնել Արձանագրությունը ստորագրած երկրներին՝ խոշտանգումները և դաժան վերաբերմունքը կանխելու նրանց մանդատն ամրապնդելու վերաբերյալ:

Պետք է նշել նաև, որ ազգային կանխարգելիչ մեխանիզմի նշանակումը կամ հիմնումը չափետք է պետության կողմից օգտագործվի որպես այցելություն կատարող այլ մեխանիզմների (հատկապես ՀԿ-ների) գործունեությունը սահմանափակող գործիք: Այլ կազմակերպությունների կող-

<sup>10</sup> Արձանագրությունը ստորագրած երկրները պարտավոր են ԽԴԿՈՍ-ի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում ստեղծել ազգային կանխարգելիչ մեխանիզմներ կամ եթե դրանք արդեն իսկ գործում են՝ դրանք համապատասխանեցնել ԽԴԿՈՍ-ին: Սակայն Արձանագրությունը ստորագրած երկրներն ըստ հոդված 24-ի կարող են ժամանակավորապես հետաձգել ազգային մեխանիզմների վերաբերյալ իրենց պարտավորությունների կատարումը՝ իննու տարի առավելագույն ժամկետով:

մից կատարվող մոնիթորինգը պետք է դիտվի որպես կանխման լրացուցիչ գործոն:

### **3.2.2. Ազգային կանխարգելիչ մեխանիզմների ձևերը**

ԽԴԿՈԱ-ն չի սահմանում, թե ինչ կառուցվածք պետք է ունենան ազգային կանխարգելիչ մեխանիզմները: Արձանագրությունը ստորագրած երկրները հնարավորություն ունեն ընտրելու նարմնի այն տեսակը, որն առավելագույնս համապատասխանում է երկրի համատեքստին: Որպես ազգային կանխարգելիչ մեխանիզմ կարող է գործել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունը, Օմբուդսմենը, Խորհրդարանական հանձնաժողովը, ՀԿ-ն, աշխարհիկ մարդկանց համակարգը կամ ցանկացած այլ մասնագիտական մարմին, որը հատուկ ստեղծվել է ազատագրկման վայրերը վերահսկելու համար:

Արձանագրությունը ստորագրած Երկրները կարող են որոշել ունենալ մի քանի ազգային կանխարգելիչ մեխանիզմներ՝ կախված պետության կառուցվածքից (օրինակ դաշնությունը), կամ կատարել դրանց թեմատիկ բաժանում: Եթե Պետությունը որոշում է ունենալ մի քանի կանխարգելիչ մեխանիզմ, լինեն դրանք տարածաշրջանային կամ թեմատիկ, ցանկալի կլինի գտնել դրանց համագործակցության ուղիները՝ տեղական մակարդակով ստեղծելով համակարգող մարմին, որը կփորձի ներդաշնակեցնել այցելություններ կատարող յուրաքանչյուր մարմնի կատարած աշխատանքը:

### **3.2.3. Ազգային կանխարգելիչ մեխանիզմների մանդատը**

Կալանավայրեր կատարվող այցերի կանխարգելիչ ազդեցությունը կախված է դրանց պարբերականության և կատարման հսկողության վրա: Առավել ևս, որ ազգային կանխարգելիչ մեխանիզմներին իրավունք է շնորհված պարբերական այցելություններ կատարել և հանձնարարականներ տալ բոլոր այն վայրերում, որտեղ կան ազատագրկված մարդիկ:

---

#### **Մանդատի հնարավորությունները (հոդված 19)**

Ազգային կանխարգելիչ մեխանիզմները պետք է օժտված լինեն առնվազն հետևյալ լիազորություններով՝

- Կալանավայրերում կանոնավոր հսկողություն կատարել ազատագրկված մարդկանց հանդեպ առկա վերաբերմունքի նկատմամբ;
  - Համապատասխան իշխանություններին հանձնարարական տալ
-

- 
- դրությունը շտկելու կապակցությամբ;
  - Գոյություն ունեցող օրենսդրության վերաբերյալ առաջարկել նախագծեր և դիտողություններ:
- 

#### **Կալանավայրերի դասակարգում**

ԽԴԿՈԱ-ում ընդարձակ ցանկով սահմանված են բոլոր վայրերը, որտեղ մարդիկ զրկված են ազատությունից: Դրանք են՝

- Ոստիկանատներ,
  - Անվտանգության ուժերի կենտրոններ,
  - Մինչդատական կալանքի վայրեր,
  - Դատապարտված անձանց պահելու բանտեր,
  - Անշափահասներին պահելու կենտրոններ,
  - Փախստականների կենտրոններ,
  - Միջազգային օդանավակայաններում տրանզիտ գոտիներ,
  - Ավաստարաններ անօրեանների համար,
  - Հոգեբուժական հաստատություններ
  - Վարչական կալանքի կենտրոններ
  - Ցանկացած այլ վայր, որտեղ մարդիկ զրկված են ազատությունից:
- 

#### **3.2.4. Ազգային կանխարգելիչ մեխանիզմներին տրամադրվող երաշխիքները**

ԽԴԿՈԱ-ն հասուն երաշխիքներ և չափանիշներ է սահմանում ազգային կանխարգելիչ մեխանիզմների համար՝ երաշխավորելու, որպեսզի դրանք գերծ լինեն պետության միջամտությունից: Այս դրույցներն անկախ են և պետք է դիտվեն միասնության մեջ՝ պետությունից անկախությունն ապահովելու նպատակով:

Որպես դեկավար փաստաթուղթ՝ ԽԴԿՈԱ-ն Արձանագրությունը ստորագրած երկրներից պահանջում է պատշաճ ուշադրություն դարձնել «Մարդու իրավունքների բարեկավման և պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակի և գործունեության սկզբունքները» (Փարիզյան սկզբունքներ) <sup>11</sup>:

---

<sup>11</sup> Այս սկզբունքներն ընդունվել են 1991թ. Խոկտեմբերին՝ Փարիզի միջազգային խորհրդաժողովում, որի նախաձեռնողը Միացյալ Ազգերի Կազմակերպության Մարդու իրավունքների Պաշտպանության Հանձնաժողովն էր: Մարդու իրավունքների Պաշտպանության Հանձնաժողովը հաստատեց այս հանձնարարականները 1992թ. մարտին:

### **Ազգային կանխարգելիչ մեխանիզմների երաշխիքներ և չափանիշներ (Հորված 18)**

ԽԴԿՈՍ 18-րդ հոդվածի համաձայն ազգային կանխարգելիչ մեխանիզմներին պետք է տրամադրվեն հետևյալ երաշխիքները՝

- գործունեության անկախություն,
- պահանջվող հնտուրյունների և մասնագիտական գիտելիքների ստացում,
- համապատասխան միջոցներ:

#### **Գործունեության անկախություն**

Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման արդյունավետությունը երաշխավորելու համար առաջնային է ազգային կանխարգելիչ մարմինների անկախությունը։ Գործնականում դա նշանակում է, որ ազգային կանխարգելիչ մեխանիզմը պետք է կարողանա գործել պետական իշխանություններից անկախ։ Կարևոր է նաև, որպեսզի ազգային կանխարգելիչ մեխանիզմները համարվեն պետական իշխանություններից անկախ։

**Ազգային մեխանիզմների անկախության կարելի է հասնել՝ ունենալով հետևյալը.**

- **Հիմնադրման անկախ հիմք**

Ամուր, շարունակականություն ապահովող օրինական հիմք ունենալու լավագույն տարրերակն այն է, որ ազգային կանխարգելիչ մեխանիզմները ստեղծվեն Սահմանադրությամբ կամ օրենսդիր մարմնի ակտով։

- **Սեփական կանոնները և արարողակարգերը մշակելու հնարավորություն**

Արարողակարգերի կանոններն իշխանությունների կողմից պետք է չենթարկվեն փոփոխություններից։

- **Գործադիր և դատական իշխանություններից առանձնացում**

Արդյունավետություն և իրական անկախություն երաշխավորելու համար ազգային կանխարգելիչ մեխանիզմները պետք է պաշտոնապես կցված չլինեն նախարարության կամ իրավաբանական այլ մարմնի։

- **Նշանակման անկախ և քափանցիկ լնիքացակարգեր**

Նշանակման լնիքացակարգերով պետք է սահմանվեն նշան-

ակման մեթոդը և շափանիշները, ինչպես նաև նշանակման ժամկետը, որա հետ կապված արտոնությունները և անձեռնմխելիությունը, ինչպես նաև լիազորությունները դադարեցնելու և բողոքարկման ընթացակարգերը: Փարիզյան սկզբունքները սահմանում են. «Հաստատության անդամների կայուն մանդատ ապահովելու համար, առանց որի իրական անկախությունն անհնար է, նշանակումը պետք է կատարվի պաշտոնական ակտի միջոցով, որով պետք է սահմանվի մանդատի տևողությունը... «Սկզբունք 3»: Նշանակման ընթացակարգը պետք է ներառի նաև խորհրդակցությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

- **Ֆինանսական անկախություն**  
Ֆինանսական անկախությունը հիմնարար շափանիշ է և ներառում է համարժեք ֆինանսավորումը (տես՝ ստորև), ինչպես նաև բյուջեն անկախութեն սահմանելը և առաջարկելը:
- **Աշխատանքային պրակտիկաների և հանրային գեկույցների բափանցիկություն**  
Իր աշխատանքի և գործունեության վերաբերյալ գեկույցների միջոցով ազգային մեխանիզմը կուժեղացնի իր անկախությունը և, բացի այդ, կամարվի անկախ:

### Համապատասխան փորձ և գիտելիքներ

Արձանագրությունը ստորագրած երկրները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ որպեսզի մասնագետ անդամներն ունենան համապատասխան փորձ և գիտելիքներ մարդու իրավունքների պաշտպանության և ազատազրկման հարցերի վերաբերյալ: ԽԴԿՈՍ-ն նաև խորհրդուի է տայիս ճգտել ազգային կանխարգելիչ մեխանիզմների կազմը ձևավորելիս<sup>12</sup> հաշվի առնել գենդերային հավասարությունը և փոքրամասնությունների պատշաճ ներկայացումը:

### Համապատասխան կազմ

Ազատազրկման վայրեր այցելություններ կատարող մեխանիզմների կազմի բազմազանությունն ապահովելու համար առավելապես նպատա-

<sup>12</sup> Այս դրույթը, լինելով Փարիզյան Սկզբունքների հետ մեկ շարքում, շեշտում է, որ ազգային հաստատությունները պետք է հիմնադրվեն բազմապիսի կազմ երաշխավորելու համար:

կահարձար է ներգրավել՝

- փաստաբանների,
- բուժաշխատողների,
- բժիշկների՝ ներառյալ դատաքչկական փորձագետների,
- հոգեբույժների և հոգեբանների,
- քաղաքացիական հասարակության և ՀԿ-ների ներկայացուցիչների,
- մարդու իրավունքների պաշտպանության, մարդասիրական իրավունքի, բրեակատարողական համակարգերի և ոստիկանության հարցերով զբաղվող մասնագետների:

### **Համարժեք ռեսուրսներ**

Ֆինանսական անկախությունը հիմնարար չափանիշ է, առանց որի ազգային կանխարգելիչ մեխանիզմներն անկարող են ապահովել անկախությունը որոշում ընդունելիս: Ազգային կանխարգելիչ մեխանիզմը պետք է ֆինանսավես և ինքնուրույն կարողանա իրազործել իր հիմնական գործառույթը: Փարիզյան սկզբունքները շեշտում են համարժեք ֆինանսավորման անհրաժեշտությունը, ինչը «քույլ կտա ազգային մեխանիզմներին ունենալ իրենց անձնակազմը և տարածքը, որպեսզի մեխանիզմը լինի կառավարությունից անկախ և չհանդիսանա ֆինանսական վերահսկողության առարկա» (Ակզրունք 2):

#### **3.2.5. Մուտքն ազատազրկման վայրեր**

Ըստ ԽԴԿՈՍ-ի ազգային կանխարգելիչ մեխանիզմները պետք է մուտք ունենան ազատազրկման վայրեր: Որպեսզի ազգային կանխարգելիչ մեխանիզմները գործեն արդյունավետ, նրանց պետք է տրամադրվեն որոշակի երաշխիքներ:

---

**Ազգային մեխանիզմներին պետք է տրամադրվի (Հոդված 20)**

- Մուտքի իրավունք բոլոր ազատազրկման վայրեր, ներառյալ՝ դրանց պատկանող կառույցներ և կից շինություններ՝ իրենց ընտրությամբ:
  - Ազատազրկված անձանց թվին վերաբերող տեղեկատվության մատչելիություն:
  - Ազատազրկված անձանց հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի, ինչպես նաև նրանց բանտարկության պայմանների վերաբերյալ ցանկացած տեղեկատվության մատչելիություն:
  - Ցանկացած ազատազրկված անձի կամ իրենց ընտրությանը այլ անձանց հետ առանձնազրույց ունենալու իրավունք:
-

Իշխանությունները պետք է երաշխավորեն նաև, որ այցելող բիմի հետ շփման մեջ եղած անձինք այցի արդյունքում չենթարկվեն ճնշման, ահարեկման, կամ դաժան վերաբերմունքի:

### **Յանկալի է, որպեսզի ազգային կանխարգելիչ մեխանիզմին բույլատրվի հետևյալը.**

Յանկացած ժամանակ, առանց կալանավայրի իշխանությունների պատշաճ տեղեկացման, այցելություն: Յանկացած դեպքում և ցանկացած հանգամանքներում նուտքը դեպի կալանավայր պետք է բույլատրվի հնարավորին շուտ:

### **3.3. Լրացուցիչ արձանագրության ներքո կատարվող այցերի կատարման ստուգում**

#### **3.3.1. Չեկուցում և հանձնարարություն**

Ազգային կանխարգելիչ մեխանիզմները պետք է կազմեն տեղական գեկույց, որը ԽԴԿՈԱ-ի մասնակից երկրները պարտավոր են հրապարակել: Յուրաքանչյուր տարի կատարվող գեկույցի բովանդակությունը որոշում է ազգային կանխարգելիչ մեխանիզմն, սակայն ոչինչ չի կարող խոչընդոտել գեկույցի մեջ այցելության հետ կապված տեղեկատվության մեծ մասը ներառելուն: Ամեն դեպքում տարեկան գեկույցը պետք է պարունակի կալանավայրի իշխանություններին ներկայացված հանձնարարականները: Արձանագրությունը ստորագրած երկրները պարտավոր չեն, սակայն կարող են իրենց համաձայնությունը տալ ազգային կանխարգելիչ մեխանիզմների կողմից կատարված բոլոր այցերի վերաբերյալ գեկույցները հրապարակելու առնչությամբ:

Ազգային կանխարգելիչ մեխանիզմները ևս կարող են գեկույցն ուղարկել ՍԱԿ-ի ենթակոմիտեին, անհրաժեշտության դեպքում՝ գաղտնի կերպով:

Ազգային կանխարգելիչ մեխանիզմները գաղտնի տեղեկատվությունը պետք է առաջնային համարեն և չեն կարող հրապարակել որևէ անձնական տեղեկություն՝ առանց շահագործիության:

#### **3.3.2. Լրացուցիչ կանխարգելիչ գործունեություն**

Ազգային կանխարգելիչ մեխանիզմները կարող են իրենց կողմից կատարված այցերը և հանձնարարությունները համարել այլ գործողություններով, որոնք նպատակ ունեն կանխարգելի դաժան վերաբերմունքը և բարեկավել ազատազրկված անձանց պայմանները: Այդ գործողություններն են՝

- համապատասխան շահագրգիռ կամ ազատազրկված անձանց համար պատասխանատու անձնակազմերի համար ուսումնական սեմինարների կազմակերպում;
- գործողություններ՝ ուղղված հասարակության զգոնության բարձրացմանը;
- գոյություն ունեցող կամ նախազգվող օրենսդրության վերաբերյալ առաջարկների և դիտողությունների ներկայացում (19-րդ հոդվածի համաձայն):

### **3.3.3. Ուղղակի շփում Ենթակոմիտեի հետ**

Ինչպես նշվել է վերը՝ ԽԴԿՈԱ-ն արտահայտում է նորարարական մոտեցում՝ հիմնված կանխարգելմանն ուղղված միջազգային և ազգային մակարդակով գործադրվող ջանքերի փոխվրացման վրա: ԽԴԿՈԱ-ն ազգային - կանխարգելիչ մեխանիզմներից պահանջում է շփումներ պահպանել Ենթակոմիտեի հետ: Ավելին, Արձանագրությունը ստորագրած երկրները պարտավոր են խրախսութել և բարեկավել շփումները:

Ազգային և միջազգային մարմնները կարող են կարևոր փոփոխություններ կատարել խոշտանգումների կանխարգելման մեթոդների և ուսումնակարգության մեջ: Այդ իսկ պատճառով Ենթակոմիտեն և ազգային կանխարգելիչ մեխանիզմները կարող են փոխանակել տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ գաղտնի հիմունքներով: Ազգային կանխարգելիչ մեխանիզմները կարող են իրենց գեկույցները և ցանկացած այլ տեղեկատվություն փոխանակել և ուղարկել միջազգային մեխանիզմներին:

Ենթակոմիտեն, նպատակ ունենալով ընդլայնել ազգային կանխարգելիչ մարմնի հնարավորությունները, կարող է առաջարկել ուսուցում և տեխնիկական օժանդակություն: Ի հավելումն դրա Ենթակոմիտեն կարող է ազգային կանխարգելիչ մեխանիզմներին աջակցել ազատազրկված անձանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների գնահատման գործում:

## **4. Այցելություն կատարող տարբեր մեխանիզմների միջև համագործակցությունը**

Ազգային, ինչպես նաև միջազգային մակարդակներով գործող այցելություն կատարող մեխանիզմների բազմազանությունը հուշում է, որ խառնաշփորթից խուսափելու և օպտիմալ արդյունք ստանալու համար անհրաժեշտ է այդ մարմնների միջև ուժեղ համագործակցություն կայացնել:

#### **4.1. Այցելություն կատարող տեղական մարմինների գործունեությունների համակարգում**

Եթե մեկ երկրում գործում է այցելություն կատարող մի քանի մեխանիզմ (օրինակ՝ ՀԿ-ներ կամ Օմբուդսմենը), հատկապես կարևոր է, որպեսզի դրանք ուղիներ գտնեն մոնիթորինգի իրականացմանն ուղղված իրենց գործողությունները համակարգելու համար։ Համակարգման մակարդակները կարող են տարբեր լինել՝ մոնիթորինգի արդյունքում ստացված տեղեկատվության փոխանակում, փոխացնող գործողություններ, հատուկ հարցերի շուրջ համագործակցություն կամ, նույնիսկ, գործընկերություն։

Այս համակարգումն էական է, նույնիսկ եթե այս կամ այն կամ մի քանի տեղական մարմիններ ճանաչվում են որպես ԽԴԿՈՍ-ի ներքո գործող «ազգային կանխարգելիչ մեխանիզմ»։ ԽԴԿՈՍ-ի նպատակը մոնիթորինգ կատարող մարմինների արդյունավետության ավելացումն է, այլ ոչ թե դրանց թվի փոքրացումը։

Համակարգումը կրաքարացնի մոնիթորինգի ծրագրի արդյունավետությունը և կանոնադրառանա նաև դրա արդյունավետության վերաբերյալ իշխանությունների կարծիքն։

Պետք է ձգտել համակարգման՝ նաև միջազգային կազմակերպությունների տարածաշրջանային ծառայողների հետ (Միավորված ազգերի կազմակերպության, Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային գրասենյակներ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն)։ Համակարգման պետք է ձգտել նաև ԿԽՄԿ հետ։ Միջազգային կազմակերպությունն աշխատանքային մեթոդները պետք է տեխնիկապես նմանեցնի այն երկրի այցելություն կատարող ներակտական մարմինների մեթոդներին, որտեղ ծավալում է իր գործունեությունը, և հակառակը։

#### **4.2. Այցելություն կատարող ազգային և միջազգային մարմինների համակարգումը**

Ինչպես նշվեց վերը՝ ԽԴԿՈՍ-ն շեշտում է «ազգային կանխարգելիչ մարմնի» և Ենթակոմիտեի միջև ուղղակի շփման անհրաժեշտությունը։ Այս երկու մարմինների փոխացնող ջանքերը կարևոր են։ Չնայած, որ ԽԴԿՈՍ-ն ապահովում է ուղղակի շփումները նշանակված կանխարգելիչ մեխանիզմ(ներ)ի և Ենթակոմիտեի հետ, դժվար է այլ տեղական մարմինների գործողություններն ավելի արդյունավետ դարձնելը, եթե այդ մարմինները Ենթակոմիտեին առաջարկություններ և զեկույցներ չուղարկեն։ Այցելություն կատարող տեղական մարմինների կողմից ստացված տեղեկատվությունը կամ գեկույցները նույնպես կարող են ուղարկվել

**ՍԱԿ-ի համանման գործառույթներով զբաղվող մարմիններին, ինչպես նաև՝ մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային մեխանիզմներին:**

### **ՍԱԿ-Ի ՍԱՐՄԻՆԵՐԸ**

**ՍԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի հատուկ ընթացակարգեր**

- Խոշտանգումների վերաբերյալ հատուկ գեկուցող,
- Դատավարության անկախության վերաբերյալ հատուկ գեկուցող,
- Ոչ դատական մահապատիճների վերաբերյալ հատուկ գեկուցող,
- Մարդու իրավունքների պաշտպանների հատուկ ներկայացուցիչ,
- Կամայական կալանքի գծով աշխատանքային խումբ:

### **ՍԱԿ-Ի ՀԱՍՏԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾՈՂ ՍԱՐՄԻՆԵՐ**

- Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտե,
- Խոշտանգումների դեմ կոմիտե,
- Երեխաների իրավունքների պաշտպանության կոմիտե,
- Կանանց անտեսման և խորականության դեմ կոմիտե,
- Մասնագիտացած այլ մարմիններ (օրինակ՝ Ռասայական խորականության ցանկացած տեսակի սահմանափակման կոմիտե):

### **ՍԱԿ-Ի ՄԱՍՆԱԳԻՄԱՑՎԱԾ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Փախստականների գործերով ՍԱԿ-ի բարձրագույն հանձնակատար (մասնավորապես՝ փախստականների և աշխարհով մեկ սփոված մարդկանց պաշտպանության ծրագրեր),
- Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (մասնավորապես՝ դատական բարեփոխումների վերաբերյալ ծրագրեր),
- ՅՈՒՆԻՄԵՖ (մասնավորապես՝ կանանց և երեխաների կալանավորման խնդիրներով զբաղվող ծրագիր)

### **Տարածաշրջանային կազմակերպություններ**

#### **Հյուսախային և Հարավային Ամերիկաներում՝**

- Մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան հանձնաժողով,

#### **Աֆրիկայում՝**

- Ժողովրդների և մարդկանց իրավունքների պաշտպանության աֆրիկյան հանձնաժողով (մասնավորապես՝ Աֆրիկայում բանտերի և բանտարկության պայմանների վերաբերյալ հատուկ գեկուցող)

#### **Եվրոպայում՝**

- Եվրոպայի Խորհուրդ (մասնավորապես՝ Խոշտանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտե (ԽԿԿ))
- ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԴԳ):

### **4.3. Այցելություն կատարող միջազգային մարմինների միջև համագործակցություն**

Այցելություն կատարող միջազգային մարմինները երբեմն սահմանափակված են գաղտնիության խիստ կանոններով, ինչը կարող է սահմանափակել համագործակցության շրջանակները: Այդուհանդեռձ, դրանք պետք է խորհրդակցեն միմյանց հետ:

Ենթակոմիտեի և գոյություն ունեցող այցելություններ կազմակերպող տարածաշրջանային մեխանիզմների միջև ԽԴԿՈՍ-ի ներքո համագործակցությունը նախատեսված է հոդված 31-ով, որը խրախուսում է նրանց «կրկնություններից խուսափելու համար խորհրդակցել և համագործակցել միմյանց հետ»:

ԽԿԿ-ն ԽԴԿՈՍ-ի և ԽԿԵԿ-ի մասնակից երկրներին առաջարկում է համաձայնել, որ «ԽԿԿ-ի կողմից կազմակերպվող գեկույցները պետք է համակարգվեն ըստ երկրների և այդ երկրներից ստացված արձագանքների, և գաղտնիության հիմունքներով փոխանցվեն Ենթակոմիտեին: Այդպիսով՝ խորհրդակցությունները կարող են անցկացվել գործին վերաբերվող բոլոր փաստերի լույսի ներքո».<sup>13</sup>

Այն վայրերում, որտեղ գեկույցները կատարվում են հրապարակայնորեն, ինչպես, օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջամբերիկյան հանձնաժողովում կամ Աֆրիկայում քանտերի և բանտարկության պայմանների վերաբերյալ հասուկ գեկուցողի դեպքում, Ենթակոմիտեի հետ խորհրդակցությունը և համագործակցությունն առավել դյուրին կլինի:

ԽԴԿՈՍ-ն նաև նշում է, որ «Արձանագրության դրույթները չպետք է ազդեն մասնակից երկրների պարտավորությունների վրա՝ կապված ժննի չորս կրնակնեցիաների հետ, և ոչ էլ միջազգային մարդասիրական իրավունքով չկարգավորվող դեպքերում ԿԽՄԿ-ին կալանավայրեր այցելություններ կատարելու բույստվություն տրամադրելու իրավունքի վրա»: Ապագայում Ենթակոմիտեն և ԿԽՄԿ-ն ուղիներ կգտնեն շփոմներ ստեղծելու համար, ինչպես արդեն արվել էր ԽԿՄ ԿԽՄԿ դեպքերում:

<sup>13</sup> 2002 թ. Հուլիսի 1-ից մինչև 2003 փ Հուլիսի 31-ը ներառող ԽԿՄ-ի գործողությունների վերաբերյալ 13-րդ գլխավոր գեկույց, CPT/Inf (2003) 35,82

**Հետազա լնիրեցումներ**

Խոշտանգումների կանխարգելման միություն, *Visiting Places of Detention: Practices and Lessons Learned by Selected Domestic Institutions, seminar report*, Geneva 2004.

Խոշտանգումների կանխարգելման միություն, *The Impact of External Visits of Police Stations on Prevention of Torture and Ill-Treatment, Stwdy* Geneva, 1999.

Խոշտանգումների կանխարգելման միություն, *Standard Operating Procedures of International Mechanisms Carrying Out Visits to Places of Detention, seminar report*, Geneva, 1997.

**ԽԴԿՈՍ գծով**

Խոշտանգումների կանխարգելման միություն, *The Optional Protocol to the UN Convention Against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment: A Manual for Prevention*, Geneva, 2004.

Խոշտանգումների կանխարգելման Սիություն, *Implementation of The Optional Protocol to the UN against Torture, the Establishment and Designation of National Preventive Mechanisms*, Geneva, April 2003.

**ԽԿՄ գծով**

Malcolm D.Evans, Rod Morgan, *Preventing Torture – A Study of the European Convention for Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment*, Calerdon Press, Oxford, 1998.

Malcolm D.Evans, Rod Morgan, *Combating Torture in Europe*, Council of Europe Publishing, 2001.

APT Series on Prevention of Torture in Europe (in French and English), in particular Brochure N 3 - Barbara Bernath, *CPT history, Mandate Composition*, Geneva, December 1999.

Brochure N 4- Ursula Kriebaum, *CPT Modus Operandi*, Geneva, May 2002.

APT/Council of Europe, *A visit by the CPT- What's it all about? 15 questions and answers for the police*, May 1999

**ԿԽՄԿ գծով**

International Committee of Red Cross, *Deprived of Freedom*, Geneva, 2002.

## ԱՅՑԻ ՓՈԽԵՐ

Ե՞րբ	Ի՞նչ
<p><b>Այցի նախապա- տրաստում</b> (մաս 2և3)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Հասանելի տեղեկատվություն</li> <li>▪ Այցելության նպատակների որոշում</li> <li>▪ Այցելություն կատարող թիմի կազմավորում</li> </ul>
<p><b>Այցելություն</b> (մաս4)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Ազատազրկման վայրի տնօրենի հետ նախնական գրույց</li> <li>▪ Այցելություն ազատազրկման վայրի շինություններ</li> <li>▪ Մատյանների ուսումնասիրում</li> <li>▪ Կալանավորների հետ անհատական հարցազրույցներ</li> <li>▪ Զրույց բանտի այլ ծառայողների հետ</li> <li>▪ Կալանավայրի տնօրենի հետ ավարտական գրույց</li> </ul>
<p><b>Այցելու- թյունների կատարման ստուգում</b> (մաս 5)</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Այցելության վերաբերյալ ներքին նշումներ</li> <li>▪ Այցելության վերաբերյալ գեկույց</li> <li>▪ Այցելության կատարման ստուգում</li> <li>▪ Գլոբալ գեկույց</li> <li>▪ Այցելության կատարման ստուգմանն ուղղված գործողություններ</li> <li>▪ Տարեկան գեկույց:</li> </ul>

## ԱԱՍ ԵՐՐՈՐԴ

ԻՆՉՊԵ՞Ս  
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ  
ԵՆԹԱՐԿԵԼ  
ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԸ

## 1. Մոնիթորինգի կառուցվածքը

Բանտարկության պայմանների մոնիթորինգը ներառում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային չափանիշներին այդ պայմանների համապատասխանության ստուգումը, ինչպես նաև բույլ է տալիս հավաստիանալ, որ ազատազրկված անձանց հանդեպ վերաբերմունքը չի նվաստացնում նրանց արժանապատվությունը և մարդ արարածի արժեքը: Բանտարկության պայմաններին վերաբերող ընդհանուր չափանիշները հիմնականում ընդգրկված են համապատասխան միջազգային ինստիտուտներում (տես՝ չորրորդ գլուխ) և ազգային օրենսդրություններում:

ՄԱԿ-ի՝ բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի հիմնարար սկզբունքները բանտարկության պայմանների վերաբերյալ չափանիշներ ստեղծող առավել ընդհանրական փաստաթղթերից է: Դրանք կիրառելի են ազատությունից զրկված բոլոր անձանց համար՝ անկախ այն բանից, թե որտեղ են պահպում նրանք, և այցելություն կատարող մարմիններին ընձեռում են էական լիազորություններ:

**Քանտարկյալների հանդեպ վերաբերմունքի հիմնարար սկզբունքներ**  
**Հնդունակել է Միավորված ազգերի կազմակերպության զիսավոր վեհաժողովի 1990թ.դեկտեմբերի 14-ի 45/111 քանածուու:**

1. Ազատությունից գրկած բոլոր անձանց պես է վերաբերվել մարդասիրար՝ հարգելով նարդուն բնորոշ արժանապատվությունը և մարդկային անհատի արժեքը:
2. Արգելվում է խորականությունը՝ կապված ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, դաշտանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակի հետ:
3. Ցանկալի է, որպեսզի այն դեպքերում, եթե տեղական պայմանները բույլ են տալիս, հարգել այն խմբի կրոնական համոզմունքները և մշակութային սովորությունները, որին պատկանում են կալանավորները:
4. Քանտերը պատասխանատվություն են կրում քանտարկյալներին պահելու և հասարակությանն իրավախսատումներից պաշտպանելու համար՝ պետության մյուս սոցիալական նպատակներին և հասարակության բոլոր անդամների բարեկեցության ու զարգացման վերաբերյալ պետության պարտավորություններին համապատասխան:
5. Քացառությամբ քանտարկության փաստով պայմանավորված սահմանափակումների՝ բոլոր քանտարկյալներն օգտվում են Մարդու իրավունքների պաշտպանության համընդիանուր հոչակարում, իսկ այն դեպքերում, եթե տվյալ պետությունը հանդիսանում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի կամ Հաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի և դրան կից լրացուցիչ արձանագրության կողմ՝ դրանցում ամրագրված մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից:
6. Բոլոր քանտարկյալներն իրավունք ունեն մասնակցելու մարդկային անհատի բազմակողմանի զարգացմանն ուղղված մշակութային և կրթական գործունեությանը:
7. Հարկավոր է ջանք գործադրել միայնակ քանտարկությունը որպես տույժ կիրառելը վերացնելու կամ դրա կիրառումը սահմանափակելու համար և խրախուսել այդ ջանքերը:
8. Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ, որոնք քանտարկյալին հնարավորություն կրնանեն գրադարձություն և օգտակար, վարձատրվող աշխատանքով, ինչը կիեշտացնի նրանց ինտեգրումն իրենց երկրի աշխատութիւն շուկայում և նրանց կարտուսավորեցնի ֆինանսական աջակցություն ցուցաբերել իրենց ընտանիքին և ազգականներին:
9. Քանտարկյալներն օգտվում են տվյալ երկրում առկա բուժսպա-

- 
- սարկումից՝ առանց իրենց իրավական դրույթյան հետ կապված խտրականությունների:
10. Հասարակության և սոցիալական հաստատությունների մասնակցությամբ և օժանդակությամբ, տուժողների շահերը հարկ եղածին պես հաշվի առնելով՝ բարենպաստ պայմաններ են ատեղծվում նախկին բանտարկյալներին հասարակություն վերադարձնելու համար:
11. Վերը նշված սկզբունքները պետք է կիրառվեն անկողմնակալորեն:
- 

Մոնիթորինգը, որպես այդպիսին, հիմնված է քառափուլ գործընթացի վրա.

- ա) բանտարկության պայմանների նպատակը և դրանց պրոֆեսիոնալ փաստաթղթավորումը,
- բ) ներպետական և միջազգային չափանիշներին բանտարկության պայմանների համապատասխանության վերլուծությունը,
- գ) հանձնարարականների ձևակերպումը,
- դ) հանձնարարականների կատարման ստուգումը:

Այցելություն կատարող մարմինները պետք է հնարավորինս սպառիչ կերպով պարզի կալանավորման պայմանները, այսինքն՝ պրակտիկան, ամփոփելով հետևյալը.

- բանտարկյալների խնդիրներով գրադիվող իշխանությունների, անձնակազմի և արհեստավարժ այլ մասնակետների մոտեցումները;
  - բանտարկյալների տեսակետները;
  - այլ մասնակիցների (փաստաբանների, բանտարկյալների ընտանիքների, միությունների, ՀԿ-ների) տեսակետները;
  - այցելություն կատարած թիմի՝ ազատազրկման վայրի հետ կապված դիտարկումները:
- Ա) Կարևոր է, որպեսզի նախքան բողոքներն ավելի բարձր ատյաններին փոխանցելը և եզրակացություններ կատարելը այցելություն կատարած թիմի անդամները հաշվի առնեն տեղեկատվության բոլոր այս աղբյուրները: Սա էական է այն դեպքերում, եթե այցելություն կատարող մարմինը ցանկանում է կատարել բանտարկության պայմանների սպառիչ վերլուծություն և ներկայացնել օգտակար հանձնարարականներ: Դաժան վերաբերմունքի և խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունները պետք է անմիջապես փոխանցվեն իշխանություններին, բայց այնպես, որ հայտարարությանն առնչվող բանտարկյան կամ բանտարկյալներին վճար չպատճառվի (տես՝ մաս չորրորդ, Խոշտանգումներ և դաժան վերաբերմունք):

Բ) Համապատասխան ազգային և միջազգային չափանիշների հետ համապատասխանություն:

Երկրորդ հերթին այցելություն կատարող մեխանիզմները պետք է վերլուծության միջոցով պարզեն՝ բանտարկության պայմանները համապատասխանո՞ւմ են արդյոք համապատասխան ազգային և միջազգային չափանիշներին:

Այցելություն կատարող մեխանիզմը պետք է չափանակակից միայն բանտարկության պայմանների վերլուծություն կատարելով, անգամ եթե այդ պայմանների քննարկվող ասպեկտները համապատասխանում են այդ չափանիշներին (այսինքն՝ **եղածը** համեմատելով **լինելիքի** հետ), այլ պետք է փորձեն գննե մասամբ գտնել չափանիշներից շեղվելու պատճառները:

Ծեղումների պատճառները կարող են լինել տարբեր գործոնների համակցության հետևանք, օրինակ, եթե՝

- ներպետական օրենսդրությունը չի համապատասխանում միջազգային չափանիշներին,
- չափանիշները չեն կիրառվում կամ կիրառվում են մասամբ՝ հետևյալ պատճառներով.
- ըստ էության, չափանիշների համապատասխանությունը ստուգված է ոչ պատշաճ կերպով և դրամբ չեն կարող որպես համապատասխան հիմք ծառայել ազատազրկման վայրի անձնակազմի համար,
- աշխատանքի որոշակի ասպեկտների վերաբերյալ անձնակազմի ուսուցումը բավարար չէ, ինչի արդյունքում նրանց մասնագիտական վարքագիծը չի համապատասխանում չափանիշներին,
- մարդկային կամ նյութական ոեսուրսները թույլ չեն տալիս կիրառել չափանիշները:

Վերը նշված վերլուծությունը կարող է օգտագործվել առավել մանրամասն և իրատեսական հանձնարարականներ մշակելու համար, ինչը թույլ կտա խուսափել չափանիշների կրկնօրինակումից:

Գ) Հանձնարարականների ձևակերպում,

---

Ավելին, խնդիրների և դրանց առաջացման պատճառներն ընթացնելով՝ հնարավոր կլինի:

- որոշել ցավոտ կամ հիմնական խնդիրները,
  - հանձնարարականներում ներառել ժամանակային գործոնը (այսինքն՝ այն, թե ինչ կարելի է անել կարճ, միջին և երկար ժամանակամիջոցներում),
  - առաջարկել որոշակի խնդիրների յուրատեսակ լուծումներ,
  - նպաստել չափանիշների զարգացմանը:
-

Դ)Հանձնարարությունների կատարման ստուգում.

Ազատազրկման վայրերի մոնիթորինգի կարևորագույն նպատակն է՝ իշխանություններին խրախուսել՝ բարելավել բանտարկյալների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը և բանտարկության պայմանները։ Ազատազրկման վայրեր այցելությունները և դրանց վերաբերյալ գեկույցներն այդ նպատակին հասնելու միջոցներ են։ Հետևաբար, մոնիթորինգի գործընթացում առավել կարևոր քայլերից մեկը ներկայացված հանձնարարականների իրազործման ստուգումն է։ Բարեփիփումների իրականացումը հարկավոր է ողջունել։ Եթե ոչ մի քայլ չի ձեռնարկվել, այցելություն կատարող մեխանիզմը պետք է այլ ուղիներ գտնի հանձնարարականների կատարման նպատակով ճնշում գործադրելու համար։

## 2. Մոնիթորինգի ծրագրի ձեռնարկումը

### 2.1. Այցելությունների ձեռնարկումը

- Այցերի ծրագիրը պետք է ներառի հետևյալը.
- այցելություն կատարող տեղական մարմնի ուշադրությունը գրաված կարանավայրերի և այնտեղ պահվող բանտարկյալների ցանկ,
- այցերի հայտարարված կամ համկարծակի լինելու հանգամանքը,
- այցերի հաճախականությունը։

### 2.2. Այցելության վայրի ընտրություն

Կախված իրադրությունից՝ այցելություն կատարող մարմինները կարող են որոշել պարբերական կամ պատահական այցեր կատարել ազատազրկման վայրեր։

Այցելության վայրի ընտրությունը կատարելիս և կատարվելիք այցերի հերթականությունը որոշելիս կարող են կիրառվել տարբեր չափանիշներ՝ առանձին կամ ամբողջությամբ։

---

**Ազատությունից գրկված մարդկանց սպառնացող հավանական կամ իրական վտանգներ.**

- հարցաքննությունները կատարելու վայրեր,
  - առանձնապես խոցելի բանտարկյալներ, ինչպիսիք են՝ կանայք, անչափահասները, օտարերկրացիները, փոքրամասնություններ,
  - վտանգավոր տարածքներում, քաղաքներում կամ քաղամասերում գտնվող բանտեր։
-

**Հասանելի տեղեկատվություն.** բողոքների քանակը (դրանց բացակայությունը կամ մեծ թիվը կարող է դիտվել որպես խնդիր), բանտարկյալների թիվը, բանտի հնարավորությունները և գերբնակեցման մակարդակը, այլ աղբյուրներից, ինչպես, օրինակ՝ այցելություն կատարող ներպետական կամ միջազգային մարմիններից ստացված տեղեկատվությունը:

#### Օրինակներ.

- Երկրում տիրող իրավիճակին համապատասխանող կալանավայրեր,
- Կալանավայրեր, որտեղ կատարվող այցելությունները հազվադեպ չեն (դրանք հաճախ շատ հեռու են գտնվում քաղաքային կենտրոններից),
- մարդկանց և կալանավայրերի տարբեր կատեգորիաների լայն ընտրություն:

### 2.3 Այցերի տևողությունը

Այցերի տևողությունը պետք է լինի այնքան, որքան պահանջում է պրոֆեսիոնալ գործունեությունը, բավականաչափ, որպեսզի այցելող թիվը հնարավորություն ունենա զրուցելու պատասխանատու անձանց, նրանց ենթականների, այդ վայրում պահվող այս կամ այն անձի հետ և քննարկել կալանավայրի հնարավորությունները և կենցաղային պայմանները:

Այցերի տևողությունը որոշելիս հարկավոր է հաշվի առնել, որ այցերը կարող են խափանել կամ խանգարել բանտարկյալների հետ պատասխանատու անձնակազմի աշխատանքը: Հարկավոր է հավասարակշռել արդյունավետ մոնիթորինգ կատարելու անհրաժեշտությունը և այդ վայրերի գործունեությունն ապահովելու նպատակով սահմանված ռեժիմը:

**Այցի տևողությունը կարող է գնահատվել հետևյալ գործուների հիման վրա.**

- այցելություն կատարող թիմի անդամների թիվը;
- այցելվող վայրի վերաբերյալ հայտնի տեղեկությունների քանակը.
- արդյո՞ք այցելություն կատարող մեխանիզմը նախկինում այցելել է այդ վայրը,
- արդյո՞ք մեխանիզմը տեղեկատվություն է ստացել երրորդ կողմից, որի շնորհիվ հնարավոր է եղել գնահատել այցելության համար անհրաժեշտ ժամանակը,

- 
- կալանավայրի շափերը և այնտեղ պահվող անձանց թիվը,
  - կալանավայրի տեսակը,
  - անվտանգության կիրառվող ռեժիմները (որքան բարձր է անվտանգության ռեժիմի մակարդակը, այնքան ավելի երկար ժամանակ է պահանջվում կալանավայրի ներսում տեղաշարժվելու համար),
  - արդյո՞ք կալանավորված անձանց տարբեր կատեգորիաներ նույն վայրում պահվում են բանտարկության տարբեր ռեժիմներով: Դա կարող է նշանակել, որ բանտարկության տարբեր պայմանների ուսումնափրության համար ավելի շատ ժամանակ կպահանջվի,
  - կալանավայրի անձնակազմի համարվածությունը և կազմակերպական պայմանները,
  - բանտարկյալների կողմից օգտագործվող լեզուներից և հակառակը համաժամանակյա թարգմանության հնարավոր անհրաժեշտությունը,
  - այցելության վերջում կատարվելիք տվյալների ամփոփման աշխատանք, որը պետք է կատարվի հնարավորինս արագ,
  - բանտից բանտ տեղաշարժվելու համար անհրաժեշտ ժամանակ:
- 

#### **2.4. Այցերի հաճախականությունը**

Փորձը ցույց է տալիս, որ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի կանխարգելումն անընդհատ բարեկավելու առումով այցելությունները շատ ավելի արդյունավետ կլինեն, եթե դրանք տեղի ունենան պարբերաբար: Այցելությունների հաճախականությունը կախված է մի շարք գործոններից:

---

#### **Այցելությունների հաճախականությունը կարող է որոշվել ըստ՝**

- կալանավայրի տեսակի,
  - մինչդատական կալանքի շենքային հնարավորությունների, օրինակ՝ ոստիկանատներ, որպես կանոն, պետք է այցելել ավելի հաճախ, քան այլ պատժիչ հաստատություններ, քանի որ՝
    - այդ վայրերում են կատարվում հարցաքննությունները,
    - արտաքին աշխարհի հետ բանտարկյալների շփումները սահմանափակ են,
    - այդ վայրերում տեղի է ունենում բանտարկյալների կազմի անընդհատ փոփոխություն,
-

- բանտարկյալներին սպառնացող հայտնի կամ հավանական վտանգները կամ անվտանգությանը վերաբերող այլ հարցեր,
- հավասարակշռությունը այցելություն կատարող մարմնի և պատասխանառու ծառայողների կատարելիք աշխատանքի պահանջմանը միջև։ Հաճախակի կրկնվող պարբերական այցերն ի վերջո կարող են ոչ արդյունավետ դառնալ, եթե անտեղի խափանում են անձնակազմի աշխատանքը։

Այցերի հաճախականությունը մեծապես կախված է բանտարկյալների պաշտպանության կապակցությամբ հանկարծակի ծագած լուրջ խնդիրներից։ Այս դեպքերում, եթե այցելություն իրականացնող մեխանիզմը մտահոգված է, որ իրենց հետ գրուցող բանտարկյալների հանդեպ կարող են ճնշումներ գործադրվել, ապա հարկավոր է անհապաղ կատարել կատարված այցելության արդյունքների ստուգում և հանդիպել այդ բանտարկյալներին։

## 2.5. Այցելություն կատարող թիմը

### 2.5.1. Կազմը

Բանտարկության պայմանները մոնիթորինգի ենթարկելու համար պահանջվում են որոշակի արհեստավարժ **հմտություններ**, հատկապես՝ օրենսդրության և առողջապահության բնագավառներում։ Խիստ ցանկալի է, որպեսզի այցելություն կատարող թիմի կազմում լինի իրավաբանական և բժշկական կրթությամբ առնվազն մեկական անձ։ Թիմի կազմում բժշկի առկայությունը հատկապես կարևոր է այն դեպքերում, եթե խոշտանգումների և դաժան վերաբերմունքի հետ կապված խնդիրներ են առաջանում։ Դա կիշտացնի նաև շփումները ազատազրկման վայրերի բժշկական անձնակազմների հետ, որոնք կարող են բժշկական փորձի փոխանակում կատարել՝ պահպանելով բժշկական գաղտնիությունը։

Այլ մասնագետները ևս կարող են շատ օգտակար լինել, ասենք՝ մանկավարժ-տեսաբանները, հոգեբանները, ճարտարագետները։

Արհեստավարժ հմտություններից բացի կարևոր է ունենալ նաև անձնական հմտություն, հատկապես՝ մարդկանց հետ առանց նրանց արժանապատվությանը դիպչելու փոխազդակցելու կարողություն։

Փորձը ցույց է տալիս, որ այցելություն կատարող թիմի կազմում **արական և իգական սեռերի** հավասարակշռությունը մեծ առավելություն է։ Ըստ հասարակություններում տղամարդիկ և կանայք տարբեր հնարավորություններ ունեն բանտարկյալների և անձնակազմի հետ հուսալի կապեր ստեղծելու համար։ Լինում են դեպքեր, եթե բանտարկյալները և անձ-

նակազմը նախընտրում են խոսել կամ տղամարդու, կամ կնոջ հետ: Համաձայն արական մշակույթում գերիշխող կարծիքի, կին այցելուի հետ տեսակցելու ժամանակ ավելի քիչ հավանական է, որ բանտարկյալի պատիվը կնվաստացվի: Գենդերային տեսանկյունից հավասարակշռված քիմը կրաքարտացնի բանտարկության պայմանների ամբողջական պատկերը ստանալու հավանականությունը:

Ազատազրկման այն վայրերում, որտեղ պահպում են այլ երանիկ ծագմանը կամ ոչ տեղաբնակ անձինք, այցելություն կատարող մարմնի համար առավելություն կհանարվի, եթե այդ երնիկ կամ կրոնական խմբերի ներկայացուցիչներ ևս ներգրավված լինեն թիմում: Լեզվական կարողությունների կարևորությանը կանդրադառնանք ստորև:

### 2.5.2. Անդամների թիվը

Այցելություն կատարող թիմի անդամների թիվը կախված է մի քանի գործոններից, օրինակ՝

- այցելության նպատակները,
- կալանավայրի և դրա խնդիրների մասին իրազեկության նակարդակը,
- այնտեղ աշխատող անձնակազմի և պահպող անձանց թիվը,
- կալանավայրի վարչակազմի կողմից սահմանված սահմանափակումների աստիճանը:

Այցելություն կատարող թիմի անդամների թիվը լավագույն դեպքում պետք է տատանվի 2-ից 8 մարդու միջին:

### 2.5.3 Ուսուցումը

Ազատազրկման վայրի մոնիթորինգը դժվարին և նուրբ խնդիր է: Այդ խնդիրներու այցելություն կատարող մեխանիզմի անդամների համար հատկապես կարևոր է համապատասխան տեսական և գործնական ուսուցում ստանալը: Ուսուցումը պետք է շարունակվի գրասենյակի հնարավորությունների սահմաններում:

#### **Տեսական ուսուցումը պետք է ներառի առնվազն հետևյալը**

- մոնիթորինգի հիմնական սկզբունքները, մասնավորապես՝ զաղտնիությունը և բանտարկյալների անվտանգությունը մշտապես հաշվի առնելու անհրաժեշտությունը,
- օրենսդրական համակարգը, մասնավորապես՝ համապատասխան միջազգային չափանիշները, ներպետական օրենսդրությունը և կանոնները,
- բանտարկությանը վերաբերող հիմնական այլ հարցեր և խնդիրներ:

**Գործնական ուսուցումը պետք է ներառի առնվազն հետևյալը.**

- այցերի մեթոդաբանությունը,
- այն, թե ինչպես պետք է անհատական հարցազրույց վարել ազատազրկված անձի հետ,
- իշխանությունների, անձնակազմի, բանտարկյալների հետ վարչվելակերպի ձևավորումը,
- այցելություն կատարելու ժամանակ անվտանգության կանոնների պահպանումը,
- գեկույց գրելու ձևերը,
- մեխանիզմի ներսում համագործակցության և հաղորդակցության ձևերը:

### **3. Այցելության նախապատրաստություն**

#### **3.1. Նախապատրաստական աշխատանք**

Որպեսզի այցելությունը հնարավորինս հաջող անցնի, դրան պետք է նախապատրաստվել նախօրոք:

Այցելություն կատարող մեխանիզմը պետք է բավարար ժամանակ հատկացնի հետևյալին.

Այցելության վայրի մասին տեղեկատվության համառոտ շարադրում.

- նախորդ այցելություններից կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության անփոփոմ (այցելություններ կատարող այլ մարմիններ, ՀԿ-ներ, զանգվածային լրատվության միջոցներ, ազատ արձակված բանտարկյալներ, բանտարկյալների ընտանիքներ, փաստաբաններ, բարեգործական միություններ, ազատազրկման վայրերում աշխատող կամավորներ և այլն),
- անմիջական դեկավարությունը կամ վերադաս իշխանությունները,
- կալանավայրի շենքային հնարավորությունները և բանտարկյալների թիվն ու կարգավիճակը, գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրները:

#### **Այցելության հասուն նպատակների որոշում**

- բանտարկության պայմանների ընդհանուր գնահատում,
- այցելության արդյունքների ստուգում՝ բանտարկության այս կամ այն խնդիրների լուծումը, ինչպես նաև նախկինում ներկայացված հանձնարարականների կատարումը և անհատական դեպերի քննության լնթացքը ստուգելու նպատակով,

- 
- և այլն:

#### **Այցելություն կատարող խմբի աշխատանքի կազմակերպումը**

- Ձևարդերի, հարցարդերի կամ բանտարկության պայմանների անվանացանկի<sup>14</sup> պատրաստում, որոնց միջոցով հնարավոր կլինի հսկաքել անհրաժեշտ տեղեկատվությունը,
- թիմի կազմից մեկին որպես թիմի ղեկավար և այցելության կատարման պատասխանատու նշանակելը,
- թիմի բոլոր անդամներին այցելության վայրի, նպատակների և ձևաչափի մասին միևնույն տեղեկատվության տրամադրում,
- թիմի անդամների միջև որոշակի խնդիրների բաշխում՝ ելնելով թիմի անդամների հմտություններից, այցելության վայրի բնույթից և այցելության ենթադրվող տևողությունից:

#### **Բանտարկյալների հետ ցանկացած տեսակի կարևոր շփումների նախատեսում**

- այցելության վերաբերյալ հայտարարություն, այցելություն կատարող թիմը պետք է ի վիճակի լինի պատահական այցելություններ կատարել, սակայն, ելնելով գործնական նկատառումներից (կալանավայրի հեռավորություն, տարածքի մեծություն)՝ կարող է հայտարարել այս կամ այն այցելություն մասին,
- սովորաբար արգելված առարկաների (ֆոտոխցիկ, ձայնագրիչ) ներս թերելու անհրաժեշտության հիմնավորում և բույլատրում:

#### **Կալանավայրից դուրս շփումների նախատեսում**

- ոստիկանական և վարչական իշխանություններ,
- դատական իշխանություններ,
- կալանավայրի հետ աշխատող պետական ծառայություններ, օրինակ՝ բժշկական, սոցիալական ծառայություններ, կրթական համակարգ,
- ցանկացած այլ մարմիններ, որոնք աշխատում են կալանավայրերի հետ;
- այլ բաներ:

---

### **3.2. Այցելության նպատակների որոշում**

Այցելություն կատարող թիմի համար անհմաստ և անհարմար է յուրաքանչյուր այցի ընթացքում բանտարկության հետ կապված բոլոր խնդիրների համակարգված քննություն կատարելը (այդպես էր մի քանի տարի առաջ): Վերլուծությունը պետք է կատարվի այցելության նախապ-

---

<sup>14</sup> Բանտարկության պայմանների անվանացանկի նմուշը տես Հավելված 1-ում:

ատրաստման ժամանակ հավաքված տեղեկատվության հիման վրա, նախապատվությունը հատկապես պետք է տրվի բանտարկյալներին, նախկին բանտարկյալներին և այլ հավաստի աղբյուրներին, որոնք օգնում են ավելի ճշգրիտ որոշել այցելության նպատակները և գերակայությունները:

Եթե նախատեսված է մի քանի այց ազատազրկման տվյալ վայր, այցելության ծրագրով յուրաքանչյուր այցի համար կարող են տարբեր նպատակներ դրվել օրինակ՝ առաջին այցելության ժամանակ կարելի է կենտրոնանալ նյութական ենթակառուցվածքների, այսինքն՝ շինությունների, խցերի, ընդհանուր շենքային պայմանների վրա: Այդ պրակտիկան ընդունելու դեպքում այցելություն կատարողները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն հետևյալ խնդիրներին:

- կալանավայրերում բողոքների ընդունման համակարգ,
- կարգապահական պատիժների կառավարում,
- արտաքին աշխարհի հետ շփումներ,
- բուժօգնություն,
- անձնակազմի/վարչակազմի և բանտարկյալների միջև փոխհարաբերություններ:

Սույն ուղեցույցի չորրորդ մասը տեղեկատվություն է տրամադրում բանտարկության տարրերի հարցերի վերաբերյալ, որը կարևոր է այցելություն կատարող մեխանիզմների համար, ինչպես նաև մատնացույց է անում այն ուղղությունները, որոնց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել: Համապատասխան հարցերի բռուցիկ մեկնաբանությունը շարադրված է Հավելված 1-ում ներկայացված բանտարկության պայմանների անվանացանկում:

## 4. ԲՈՒՆ ԱՅՑԸ

### 4.1. Նախնական գրույց կալանավայրի դեկավարի հետ

Կալանավայրի առաջին այցելությունը պետք է սկսել կալանավայրի դեկավարի կամ նրան փոխարինող անձի հետ գրույցից: Այդ գրույցը, որը վարչակազմի հետ երկխոսության սկիզբը կհանդիսանա, կծառայի՝

- 
- այցի նշանակությունը և նպատակները պարզաբանելուն;
  - օգտագործվող աշխատանքային մեթոդները, մասնավորապես՝ բանտարկյալների (հնարավորության դեպքում՝ նաև նրանց հսկող անձնակազմի) հետ անհատական գրույց վարելու անհրաժեշտությունը պարզաբանելուն,
  - հավաքված տեղեկատվությունն օգտագործելու ուղիները պարզաբանելուն,
-

- ազատազրկման վայրի դեկավարներին հավաստիացնելուն առ այն, որ այցելող թիվի անդամներն այցելություն կատարելու ժամանակ կիարգեն անվտանգության պայմանները (օրենքներ և անվտանգության կանոններ),
- այցի ծավալի և տևողության վերաբերյալ բացատրություններ տալուն,
- կալանավայրերի, ներառյալ հատուկ կարիքներով բանտարկյալների առկայության (օրինակ՝ խոլ բանտարկյալներ, այլ շեղումներ ունեցող բանտարկյալներ) և նախորդ այցերից ուշադրության արժանացած դեպքերի առկայության մասին (հատկապես դաժան պատահարների, մահվան դեպքեր կամ այլ արտակարգ պատահարներ) տեղեկատվություն հայցելուն,
- ազատազրկման վայրի վարչակազմից որոշ հարցերի վերաբերյալ կարծիքի հարցմանը, մասնավորապես՝
- բանտարկության պայմանների և ազատազրկման վայրի դեկավարի ենթակայության տակ գտնվող անձանց վերաբերյալ,
- այդ պայմանների խնդրահարույց կողմերի և դրանց պատճառների վերաբերյալ,
- կալանավայրի դեկավարի կողմից պայմանների բարելավման վերաբերյալ կատարված առաջարկությունների վերաբերյալ,
- այցի արդյունքների վերաբերյալ գրույցի համար պայմանավորվածություն ձեռք բերելուն:

Եթե նոյն վայրում մի քանի այցելություն կատարելուց հետո այցելություն կատարող մեխանիզմը լուրջ խախտումների չի առնչվել կամ բանտարկության պայմանների հետ կապված քիչ թե շատ լուրջ խնդիրներ չի արձանագրել, ապա այցելության սկզբում կատարվող գրույցը կարող է ծավալվել միայն ֆորմալ կամ կողմնակի այլ հարցերի շուրջ:

#### **4.2. Մատյանների և այլ փաստաքրերի ուսումնասիրություն**

Այս գիտում «մատյաններ» բառն օգտագործվում է միայն բանտարկյալների և նրանց կենցաղային պայմանների մասին տեղեկատվության աղբյուրի իմաստով: Մատյանների ուսումնասիրությունն այցելության սկզբում կարող է շատ նպատակահարմար լինել, հատկապես, եթե այն տևում է մի քանի օր: Մատյաններից ստացված տեղեկատվությունն անհրաժեշտության դեպքում կարող է ստուգվել այցելության ընթացքում:

Կախված այցելության վայրի տեսակից՝ մատյանների տեսակները կարող են տարբերվել: Առավել մեծ հետաքրքրություն ներկայացնողները կարող ենք բաժանել երեք խմբի:

### **Բանտարկյալների վերաբերյալ մատյաններ**

- ըստ բանտարկյալների կատեգորիաների,
- ազատազրկման վայր ընդունելու կամ այնտեղից ազատելու վերաբերյալ մատյաններ,
- կարգապահական միջոցների կիրառման մատյան,
- բժշկական գրանցման մատյաններ<sup>15</sup>,
- այլ մատյաններ:

### **Բանտարկյալների նյութական մատակարարման վերաբերյալ մատյաններ**

- սնունդ, հիգիենա, հագուստ, անկողնային պարագաներ և այլն,
- ղեղորայք և բժշկական նյութեր,
- կրթական ձեռնարկներ, սպորտի և հանգստի համար անհրաժեշտ պարագաներ և այլն,
- այլ մատյաններ:

### **Ազատազրկման ընթացքում տեղի ունեցած միջադեպերի գրանցման մատյաններ**

- Ֆիզիկական ուժի կամ հրագենի կիրառման դեպերի գրանցման մատյան,
- բանտարկության ռեժիմի վերաբերյալ մատյաններ. սննդի ընդունում, աշխատանք, մարմնամարզություն, կրթություն,
- միջադեպերի գրանցման մատյան:

Վերջին երեք տեսակի մատյանները հատկապես կարևոր են բանտարկյալների հանդեպ դաժան վերաբերմունքի կիրառման հանգամանքները պարզելու և լիազորությունների չարաշահման համար պատասխանատվության տեսակ որոշելու հարցերում: Ազատազրկման վայրի իշխանությունները հաճախ հրաժարվում են այցելություն կատարողներին ծանրացնել հենց այդ մատյաններին:

Այցելություն կատարողները պետք է պահանջեն, որպեսզի իրենց թույլ տրվի ծանրանալ այլ փաստարդերի հետ ևս, որոնք կարևոր են կալանավայրի գործունեությունը լավագույնս պատկերացնելու համար.

- ներքին կանոններ,
- անձնակազմի անվանացանկ,
- անձնակազմի աշխատանքային առյուսակ:

<sup>15</sup> Բժշկական գաղտնիքի մասին օրենքի համաձայն անձնական բժշկական գործերի ստուգումը կարող է իրականացվել այցելություն կատարող բիժի միայն այն անդամի կողմից, ով տվյալ պահին հանդիսանում է աշխատող բժիշկ:

### **4.3. Այցելություններ բանտարկյալների համար նախատեսված շինություններ**

Առաջին այցելության ժամանակ անհրաժեշտ է տեսնել բոլոր շենքերը, որոնք նախատեսված և օգտագործվում են բանտարկյալների համար: Այցելություն կատարող խմբի բոլոր անդամները, ազատազրկման վայրի դեկավարի կամ շինությունների տեղակայման և տարրեր ծառայությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տալու լիազորություն ունեցող ծառայողի հետ պետք է կարճատև ընդհանուր այց կատարեն համապատասխան շինություններ: Ընդհանուր այցից կամ հետագա այցերից հետո թիմը կարող է բաժանվել փոքր խմբերի, որոնցից յուրաքանչյուրը կունենա իրեն «ամրագրված» տարածքը:

---

#### **Շինություններ կատարված այցելությունները քույլ են տալիս՝**

- դիտարկել շինությունները և դրանց տեղակայքը: Այս կետի կարևորությունը պետք է չըերազնահատվի: Ազատազրկման վայրի ճարտարապետությունը և անվտանգության համակարգերը (պատճեններ, բանտի պատեր և այլն) շատ որոշակի ազդեցություն ունեն բանտարկյալների առօրյա կյանքի վրա,
  - ծանրության բանտարկյալների համար նախատեսված բնակելի շինությունների (խցերի, ընդհանուր նույարանների, ներքին բակերի, ճաշարանների, հանգստի և ուսման վայրերի, մարզասրահների և մարզպահատերի, արհեստանոցների, տեսակցության սենյակների և այլն), ինչպես նաև տարրեր ծառայողական շենքերի և կից կառույցների (խոհանոցների, հիվանդանոցների, սանհիտարական կառույցների, լվացքատների և այլն) գտնվելու վայրերին,
  - պատկերացում կազմել կալանավայրում տիրող մթնոլորտի մասին:
- 

Բոլոր շինությունները դիտելիս անհրաժեշտ է որոշ շինությունների առանձնակի ուշադրություն դարձնել, քանի որ դրանք հատկապես ծառայում են որպես բանտարկյալների հանդիպ դրսնորվող հարգանքի չափանիշ: Այդ շինություններն են՝

- բանտարկյալներին ընդունելու և հարցարնելու շինությունները,
- մեկուսարանների և կարգապահական խցերը
- սանհիտարական շինությունները,
- խցերը և հանրակացարանները:

Այցելություն կատարող թիմը կարող է բանտարկյալներին հարցնել, թե ո՞ր շինությունն է նրանց կարծիքով վտանգավոր, և այցելություն կատարի այնտեղ:

Այցելություն կատարող թիմի անդամները պետք է տեղյակ լինեն, որ որոշ խցեր կարող են բարցվել իրենցից: Թիմը պետք է իր ունեցած տեղեկատվությունը վերստուգի անհատական գրույցների միջոցով: Հարկավոր է խորհրդակցել նախկին բանտարկյալների կամ նախկինում այցելություն կատարած մարդկանց հետ:

Անձնակազմի համար նախատեսված շինուայինները պետք է ևս այցելել, եթե դա ներառված է այցելության նպատակում:

#### **4.4. Ազատազրկված անձանց հետ անհատական հարցազրույցներ**

##### **4.4.1. Ընդհանուր քննարկում**

Ազատազրկված անձանց հետ գրույցը հիմք է հանդիսանում բանտարկության պայմանների փաստաթղթավորման գործընթացի համար: Դա դժվարին և նուրբ խնդիր է:

Խմբային կամ անհատական յուրաքանչյուր գրույցի սկզբում այցելություն կատարող խմբի անդամները պետք է փորձեն շահել կալանավորների վատահությունը, ներկայանան և տեղեկատվություն ներկայացնեն այցելություն կատարող իրենց մեխանիզմի մասին:

Նրանք պետք է հստակ բացատրեն, թե ինչու են այդտեղ, ինչ կարող են և ինչ չեն կարող անել և ապահովեն քննարկումների զաղտնիությունը:

Խմբային և անհատական գրույցի համար նախատեսված հարցաքերն անշափի օգտակար գործիք է բոլոր այս կարևոր տարրերին ուշադրություն դարձնելու համար (տես Հավելված 1-ում գետեղված Բանտարկության պայմանների անվանացանկի նմուշը): Բացի այդ, այցելություն կատարողները հարցազրույցի ժամանակ պետք է այնպես անեն, որ բանտարկյալներն իրենց վստահ զգան և արտահայտեն իրենց մտքերը: Հարցաքերքում զետեղված հարցերի շրջանակին խստիվ հետևելու դեպքում հնարավոր է, որ հարցազրույցի որոշ մասեր կննանվեն հարցաքննության: Դրանից ամեն կերպ պետք է խուսափել:

Այցելություն կատարողները պետք է արտահայտվեն հստակ, պարզ և հասկանալի լեզվով: Մեկնաբանությունները և հարցերը չպետք է կարծրացած լինեն այն աստիճան, որ կարողանան սահմանափակել պատասխանները կամ ազդել դրանց վրա: Այցելություն կատարողներն ավելի հաճախ պետք է տան անավարտ, քան ուրբարբող հարցեր:

Կախված բանտարկյալի կողմից օգտագործվող լեզվից՝ այցելություն կատարող թիմին կարող է անհրաժեշտ լինել իրենց այցերին բանավոր խոսքի բարգմանչի ներգրավել: Այցելություն կատարող խմբերը պետք է խուսափեն գրույցին ներկա եղած բարգմանչի ծառայություններից, ձեռնպահ մնան տեղաբնակների, նույն ազատազրկման վայրում պահվող բանտարկյալների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև՝ արհե-

ստավարժ մասնագետների թարգմանչական ծառայություններից, եթե դա ծայրահեղ անհրաժեշտ չէ: Թարգմանիչներին հարկավոր է հիշեցնել գաղտնիություն պահպանելու պարտավորության մասին: Թարգմանչի աշխատանքը կշահի, եթե նա նախօրոք ձեռքի տակ ունենա հատուկ բառարաններ:

Անհատական հարցագրույցների կատարման համար հատկապես կարևոր է այցելություն կատարող խմբի գեներալային կազմը: Բռնաբարությունների, սեռական ուսնագործությունների և այլ բռնությունների վերաբերյալ հայտարարությունների հետ գործ ուսենալիս տուժողները՝ տղամարդ, բնե՝ կին, կարող են ընտրել իրենցից հարցագրույց վերցնողի սեռը (տես՝ մաս չորրորդ, Խոշտանգում և դաժան վերաբերմունք):

Դեպքերի մեծ մասում այցելություն կատարողները գրույցի համար ստիճանական պահանջական քվով անձանց: Ընտրությունը պետք է կատարվի՝ բանտարկյալների տարրեր կատեզորիաների ներկայացվածության անհրաժշտությունը հնարավորինս հաշվի առնելով:

**Այցելություն կատարողները պետք է աշխատեն գրույցել ոչ միայն անձանց հետ, ովքեր ճգոտում են իրենց հետ շփումներ հաստատել, կամ նրանց հետ, ում առաջարկում է անձնակազմը:**

Բանտարկյալների և անձնակազմի հետ պատահական գրույցները պետք է դիտվեն որպես վատահություն ձևավորելու և տեղեկատվություն ձեռք բերելու կարևոր գործոն:

#### 4.4.2. Խմբային գրույց

Խմբային գրույցների կազմակերպումը այցելություն կատարող խմբին թույլ է տալիս շիման մեջ լինել ավելի մեծ քվով բանտարկյալների հետ, սակայն այդպիսի գրույցների կազմակերպման ընթացքում հնարավոր է, որ առավել նույր հարցերի քննարկմանն անդրադարձ չարփի:

Խմբային գրույցներն օգտակար են ընդիանուր խնդիրներն ի հայտ բերելու, օրենքի խախտումներ թույլ տվող դեկավարներին ուշադրության կենտրոնում պահելու, բանտարկյալների տրամադրությունը և բարքերը հասկանալու և այն մարդկանց ցանկը որոշելու համար, ում հետ պետք է կատարել անհատական հարցագրույց:

Խմբային գրույցների տևողությունը պետք է որոշված լինի նախապես: Բանավեճը բաց հարցից սկսելը համարվում է դրական պրակտիկա: Բանավեճին մասնակիցներից ստացված պատասխանները կարող են ի դերև հանել այն ամենը, ինչ նրանք համարում են հիմնախնդիր (կամ այն, ինչը նրանք համարձակվում են նշել):

Հետագա այցերի ժամանակ գրույցները պետք է ավելի լավ կազմակերպված լինեն՝ հետաքրքրություն ներկայացնող առանձին կարևոր հարցերի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու նպատակով: Հակա-

սական կամ խնդրահարույց տեղեկատվություն ստանալու դեպքում դրանք կարող են վերատոգվել անհատական գրույցների միջոցով՝ էմպի-րիկ եղանակով կամ այլ աղբյուրներ ուսումնասիրելով:

#### **4.4.3. Անհատական գրույցներ**

Անհատական գրույցն ամենից առաջ իրենից ներկայացնում է հանդիպում մի մարդու հետ, ով ապրում է ոչ սովորական (արտաքին աշխարհի չափանիշներին չհամապատասխանող պայմաններում), այսինքն՝ ազատազրկման պայմաններում: Անձն ունի իր կյանքի պատմությունը, որը չի կարող սահմանափակվել բանտարկության արդյունքում: Այս կարևոր հանգամանքը հաճախ անտեսվում է բանտարկյան ծառայողների ու երեխն այլ անձանց կողմից, ինչի արդյունքում բանտարկյաների հանդեպ ցուցաբերվում է ընդհանրացված և, հետևաբար, պարզեցված մոտեցումներ:

**Օրույցի վայրի ընտրությունը** վճռորոշ հանգամանք է, քանի որ այն ազդում է օրույցի հանդեպ բանտարկյալի վերաբերմունքի վրա: Հարկավոր է խուսափել ցանկացած վայրից, որը այցելություն կատարողների պահանջներին չի համապատասխանում, քանի որ բանտարյան ծառայողները գտնվում են բանտարկյալի տեսադաշտում (օրինակ՝ վարչական գրասենյակներից): Այցելություն կատարող թիմը պետք է իրեն պարտավորված զգաց հարցազրույցներն ազատազրկման վայրի վարչակազմի կողմից պատրաստված վայրերում անցկացնելու հարցում: Հարցազրույցները կարելի է անցկացնել բանտարկյաների համար նախատեսված բնակելի շինություններում խցում, ընդհանուր ննջարանում, այցելության սենյակում, բակում, գրադարանում:

Այցելություն կատարողները պետք է փորձեն գտնել մի վայր, որը լավագույնս պաշտպանված կլինի գաղտնապումից: Պետք է հաշվի առնել այն անձի կարծիքը, ում հետ գրույցը պետք է կատարվի:

Ոստիկանատներում գրույցի վայրի ընտրությունը կարող է ավելի սահմանափակ լինել:

Անհատական գրույցը պետք է անցկացվի այնպես, որ բանտարյան ծառայողները չունենդրեն այն, թեև ոչ միշտ է հնարավոր անել այնպես, որ այցելությունն իրականացվի բանտարյան ծառայողների տեսողությունից հեռու: Այդ հարցերում այցելություն կատարողները պետք է գործի դնեն իրենց ողջ կարողությունները:

#### **Անվտանգության նկատառումներ**

Այցելություն կատարողների անձնական անվտանգության նկատառումներից ելնելով՝ բանտարյան ծառայողների ներկայացրած սահմանափակումները պետք է հաշվի առնվեն, սակայն այցելություն կատարող թիմն

ինքնուրույն պետք է որոշի՝ հետևի՝ դրամց, թե՝ ոչ: Այցելություն կատարող մեխանիզմը պետք է նախօրոք համաձայնեցնի այդ պայմանները:

### **Զրոյցի անցկացումը**

Զրոյցին կարող է մասնակցել մեկ կամ երկու այցելու. առաջինը կարող է վարել գրույցը, իսկ երկրորդը՝ գրի առնել այն: Չնայած, որ գրույցի այդ տեսակն ազատազրկված անձի համար կարող է ընդունելի չլինել, սակայն գրույցի նման ձևը վարողին բույլ է տալիս ավելի լավ կենտրոնանալ: Այդուհանդերձ, այդպիսի մոտեցման ընդունելիությունը պետք է համաձայնեցվի բանտարկյամերի հետ:

Բանտարկյալի վստահությունը շահելը կարևոր է: Սկզբում այցելություն կատարողները պետք է ներկայանան, հստակ բացատրեն այցելության պատճառը, պարզաբանեն, թե իրենք ինչ կարող են, և ինչ չեն կարող անել, և բացատրեն, որ հարցազրոյցը գաղտնի է:

Այցելություն կատարողները պետք է զինվեն համբերությամբ: Բանտարկյալները հաճախ կցկուր են արտահայտվում մի շարք պատճառներով, ինչպես, օրինակ՝ կենսափորձի պակաս կամ հուզական վիճակ, երկարատև ազատազրկման պատճառով ժամանակի զգացողության կորուստ, սևոռուն գաղափարներ և այլն:

Անհատական գրույցները պետք է կատարվեն այնպես, որ հնարավոր լինի ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը, հարգել բանտարկյալի կարիքները, և տրամադրված ժամանակից առավելագույն օգուտ քաղել:

### **Հարկավոր է հավասարակշռել**

- այցելություն կատարողի կողմից բանտարկության պայմանների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու և բանտարկյալների կողմից իրենց մտահոգություններն արտահայտելու պահանջի անհրաժեշտությունները: Հարկավոր է ամեն զնով խոսափել այն ամենից, ինչը կարող է նմանություն ունենալ հարցաքննության հետ,
- ազատազրկված անձի հանդեպ կարեկցանքի աստիճանի և գրույցը վարելու համար անհրաժեշտ հուզական հեռափորության միջև: Հավասարակշռության պահպանումը կարող է կախված լինել բանտարկյալի հուզական վիճակից,
- ազատազրկված անձի շփումներին և այցելություն կատարողի կողմից տեղեկատվություն ստանալուն տրամադրվելիք ժամանակների միջև՝ կախված յուրաքանչյուր գրույցի՝ նախապես հաշվարկված տևողությունից:

**Խոշտանգումների ենթարկված անձանցից հարցազրոյց վերցնելն անշափ նուրբ գործընթաց է և պահանջում է որոշակի զգուշություն:**

Ստորև ներկայացվում է հիանալի մասնագիտական գրականություն այդ թեմայի վերաբերյալ, որոնց վրա կարող են հիմնվել այցելություն կատարող մեխանիզմի անդամները, և որոնք կարող են օգտագործվել ուսուցման ընթացքում:

- Gifford, Camille, *The Torture Reporting Handbook - How to document and respond to allegations of torture within the international system for the protection of human rights*, Human Rights Centre, University of Essex, United Kingdom, 2000, Part II – Documenting allegations, pp. 29-51;
- United Nations Office of the High Commissioner for Human Rights, Professional Training Series no. 8, *The Istanbul Protocol, Manual on the Effective investigation and Documentation of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment*, New York, Geneva, 2001, Chapter IV- General considerations for interviews.

**Տես՝ Հավելված թիվ 5. «Խնչվեն ձեռք բերել այս իրատարակությունները և այն լեզուները, որոնցով դրանք մատչելի են»:**

#### **4.4.4 Ջրույցներ պատարկված անձանց համար պատասխանատու անձնակազմի հետ**

Անձնակազմը սովորաբար կարելի է բաժանել երկու մասի՝ անձինք, ովքեր պատասխանատու են գույն բանտարկյալների հսկողության համար, և սպասարկող անձինք, ովքեր գրավվում են բանտարկյալների սննողի, բուժական կամ սոցիալական օգնության, կրթության, աշխատանքի և այլ հարցերով:

Վերջիններիս հետ գրույցը կատարվում է բանտարկության պայմանների բննության շրջանակներում:

**Հսկիչ անձնակազմի հետ գրույցները հաճախ դժվար է իրականացնել նրանց աշխատանքի կազմակերպման համակարգի և բնույթի հետ կապված պատճառներով:**

Հսկիչ անձնակազմը բանտարկյալների ամենօրյա կյանքի կարևոր մասն է: Այդ իսկ պատճառով հարկավոր է բանտարկյալների հետ անցկացնել գրույցներ, որոնց ընթացքում այցելություն կատարող թիմը պետք է նրանց ծանոթացնի իր կարգավիճակի և գործունեության պատճառների հետ, պատասխանի նրանց հարցերին և լին բանտարկյալների կարծիքները: Այդպիսի նոտեցումը լավ հիմք կստեղծի մեխանիզմի հետագա աշխատանքի համար:

Այցելություն իրականացնողները անձնակազմի խնդրանքով նրանց հետ և կարող են անցկացնել անհատական առանձնազրույցներ:

#### **4.5. Բանտի տնօրենի հետ ամփոփիչ գրույց**

Այցը պաշտոնապես պետք է ավարտվի հաստատության տնօրենի հետ

գրույցով: Այդ ամփոփիչ գրույցը նախապատրաստելուց առաջ այցելություն կատարող թիմի անդամները պետք է նախօրոք հանդիպեն միմյանց՝ տեղեկատվություն փոխանակելու և քննարկելիք կարևոր հարցերը նախապատրաստելու համար:

Արդեն այցելած վայրի անձնակազմի հետ կառուցողական երկխոսությունը ևս կարևոր է, այդ իսկ պատճառով՝ նրանց հարկավոր է արագ տեղեկացնել այցելության արդյունքների մասին:

Ամփոփիչ գրույցի նպատակը հայտնաբերված փաստերի ամփոփագիրը և վերհանված որոշ հարցերի փոխանցումն է: Խոշտանգումների կանխարգելման կամ դաժան վերաբերմունքի որևէ այլ տեսակի հետ կապված անհապաղ դեպքերի առնչությամբ հարկավոր է անհապաղ ահազանգել: Լուրջ չարաշահումների դեպքեր նկատելու դեպքում այցելություն կատարող մեխանիզմը պետք է ուղղակիորեն դիմի իշխանությունների՝ ընդուած մինչև ամենավերին ատյանը, որպեսզի մոնիթորինգի մեխանիզմի հետ առնչություն ունեցած և վերջինիս տեղեկություններ տրամադրած անձինք ճնշումների չենթարկվեն: Այդ ռազմավարությունը պետք է կիրառվի միայն լուրջ դեպքերում՝ ծառայողի հետ գործնական հարաբերություններն անտեղի փշացնելուց խուսափելու համար:

Եթե որևէ առանձնակի խնդիր ի հայտ չի բերվել, ապա ազատազրկման վայրի տնօրենի հետ ամփոփիչ գրույցը կարող է կրել ավելի ֆորմալ կամ բանավեճային բնույթ:

## 5. Այցելության արդյունքների ստուգում

Այցի ավարտմամբ աշխատանքը չի ավարտվում: Դա բանտարկյալների հանդեպ դրսեորվող վերաբերմունքի և բանտարկության պայմանների բարելավման գործընթացի սուկ սկիզբն է: Այցելության հաջորդ փուլը նույնչափ կարևոր է, որքան բուն այցը, եթե ոչ ավելի: Այցերին պետք է հաջորդեն վարչակազմին հղված գեկույցները, որոնք հանձնարարականներ կներառեն իրավիճակի բարելավման վերաբերյալ: Այդ հանձնարարականների կիրառումը պետք է լրջագույն մոնիթորինգի ենթարկվի:

### 5.1. Այցելության արդյունքների միջազգային ստուգում

Այցելություն կատարող մեխանիզմը պետք է կարողանա կողմնորոշիչներ կամ ցուցիչներ սահմանել, որոնք քոյլ կտան հետևել նախկինում կատարված կանոնավոր այցելությունների արդյունքում տեղ գտած զարգացումներին: Դա նշանակում է, որ այցելություն կատարող թիմի հավաքած տեղեկատվությունը պետք է վերլուծվի, ամփոփվի և փաստաթրավորվի այնպես, որ անհրաժեշտության դեպքում դրանք հնարավոր լինի հնարավորինս արդյունավետ գործածել: Չվերլուծված և տրամարա-

նորեն չիմնավորված տեղեկատվությունը պիտանի չէ:

Ցանկալի է, որ այցելություն կատարող թիմն այցելության վերաբերյալ սահմանի սահմանված ձևի **ներքին նշումներ**, (տես Հավելված 2): Այդ նշումներն այցելության գրավոր արտացոլումն են և օժանդակում են այցելություն կատարող մարմնի ինստիտուցիոնալ արխիվը: Դրանք շատ կարևոր են հաջորդ այցելությանը նախապատրաստվելու համար:

### **Այս կարևոր նշումները կարող են ներառել՝**

- այցելության վայրի և բնույթի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն,
- իշխանությունների վերաբերյալ տվյալներ,
- այցելության ժամանակ հավաքված կարևոր տեղեկատվություն, ի հայտ բերված իհմնախնդիրներ, դրանց լուծման համար կիրառվող գործողություններ, հաջորդ այցելության հետ կապված որոշ հարցերի ճշգրտում:

Այցելություն կատարող մարմինը կարող է այցելությունների ժամանակ ստացված տեղեկատվությունը ստուգել և համարել՝ խորհրդակցելով՝

- ավելի բարձր ատյանի իշխանությունների,
- կալանավայրերի համար պատասխանատու պետական ծառայությունների հետ կապված այլ ծառայությունների հետ (օրինակ՝ Առողջապահության նախարարություն),
- կալանավայրում կամ դրա հետ գործակցող այլ անձանց հետ, ինչպիսիք են՝ փաստաբանները կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները,
- համեմատություն կատարելով այցելություն կատարող այլ մեխանիզմների գեկույցների հետ,
- ազատազրկվածների կամ պատիժը կրած բանտարկյալների ընտանիքների անդամների հետ:

### **5.2. Բանտարկության պայմանների մոնիթորինգի վերաբերյալ գեկույցի կազմում**

Բանտարկյալների պաշտպանության և նրանց վիճակի բարելավման վերաբերյալ գեկույցներ ներկայացնելը այցելություն կատարող մեխանիզմի առավել կարևոր լիազորությունն է: Այցելություն կատարող մեխանիզմի գործունեության օրենսդրական հիմքերը սահմանող օրենսդրական ակտերում կամ հանձնարարականներում հստակ սահմանված է այցելություն կատարող մարմնի՝ այդպիսի գեկույցներ և հանձնարարականներ ներկայացնելու իրավունքը, և ամրագրված է այն փաստը, որ կալանավայրի վարչակազմը պարտավոր է ընդունել այցելություն կատարող մեխա-

նիզմին և երկխոսություն սկսել նրանց հետ:

Չեկույցները կարող են լինել տարրեր տեսակի և հետապնդել տարրեր նպատակներ, վերաբերել տարրեր մարդկանց: Այցելություն կատարող մեխանիզմն ինքը պետք է ընտրի գեկույցներ կազմելու և այցելության կատարման արդյունքները ստուգելու սեփական ռազմավարությունը: Այցելություն կատարող մարմինը կարող է որոշել գեկույցը կազմել յուրաքանչյուր այցելության վերաբերյալ առանձին կամ մի շարք այցելությունների համար՝ ընդհանուր: Կարող է որոշվել նաև, որ տարեկան կազմվելու է մեկ համընդհանուր գեկույց:

### **5.2.1. Այցելության վերաբերյալ գեկույցների կազմում**

Այցելություն կատարող մեխանիզմը պետք է բանտի վարչակազմին պարբերաբար տեղեկացնի այցելած կալանավայրի պայմանների գնահատման արդյունքներին: Խփառ հանձնարարելի է, որ տեղեկատվությունը գետեղվի գրավոր գեկույցներում: Տեղեկատվության բանավոր փոխանցումը պետք է սահմանափակվի համապատասխան իշխանությունների հետ պարբերական շփումներով, որոնք այցելություն կատարող մեխանիզմը պետք է միշտ աշխատի պահպանել:

Մեկ վայրում կատարված այցելության վերաբերյալ գեկույցները պետք է ներառեն հիմնական փաստերը և այցելության ժամանակ ի հայտ եկած խնդիրները, ինչպես նաև՝ կալանավայրի տնօրենի հետ կատարված ամփոփիչ գրույցի ժամանակ առաջացած ցանկացած կարևոր հարց: Այցելության վերաբերյալ այդպիսի գեկույցները կարող են համեմատարար կարճ լինել, և պետք է ուղարկվեն այցելությունից կարճ ժամանակ անց: Այդ գեկույցները պետք է հասցեազրվեն տվյալ կալանավայրի վարչակազմին, քանի որ նա է պատասխանատու լուծումներ գտնելու և հանձնարարականների իրականացման համար: Դրանով կուժեղացվի իշխանությունների հետ երկխոսությունը՝ պաշտոնական, գրավոր, փոխադրած կապ ապահովելու միջոցով:

Այցելություն կատարող մեխանիզմը կարող է ունենալ այնպիսի տեսակետ, որ յուրաքանչյուր անհատական այցելություն չէ, որ պետք է դառնա գրավոր գեկույցի առարկա և ուղարկվի վարչակազմին:

Չեկույցները վարչակազմին պետք է ներկայացվեն յուրաքանչյուր դեպքի համար առանձին՝ հաշվի առնելով խնդիրների լրջության վերաբերյալ այցելություն կատարող մեխանիզմի գնահատականը:

---

**Այցելության վերաբերյալ գեկույցը պետք է որոշակի ընդհանուր տեղեկատվություն պարունակի**

---

- այցելություն կատարող թիմի կազմը և այցելության ամսաթիվը, ժամը,
-

- կատարված այցելության նպատակները,
- տեղեկատվությունը հսկաքելու և ստուգելու եղանակները:

#### **Քանտարկության պայմանների ներկայացումը**

Չեկույցը պետք է հստակ ներկայացնի հիմնախնդիրները՝ հիմնվելով ուղեցույցի շղրծողի մասի վրա.

- վերաբերմունք,
- անվտանգության միջոցներ,
- նյութական պայմաններ,
- ռեժիմ և գործունեություն,
- բժշկական ծառայություն,
- անձնակազմ:

Հարկավոր չէ շատ մանրամասն անդրադառնալ բանտարկության այն հարցերին, որոնք համապատասխանում են չափանիշներին, չնայած ցանկալի է, որ զեկույցում անդրադարձ արվի նաև դրական ասպեկտներին:

Խնդրահարույց ոլորտների ուսումնասիրնան համար հարկավոր է դրանք դասակարգել ըստ առաջնահերթության:

- հասուն ուշադրություն առավել լուրջ խնդիրներին
- ուշադրություն հիմնական խնդիրներին, որոնք, իրենց հերթին, այլ խնդիրների աղբյուր են հանդիսանում:

Խոշտանգումների, դաժան վերաբերմունքի կամ ցանկացած այլ իրավիճակի մասին, որին դիսորդն անձանք ականատես չի եղել, տեղեկատվություն ստանալու դեպքում անհրաժեշտ է մեծ զգուշավորությամբ մոտենալ տեղեկատվությունն արտահայտելու եղանակին: Ընդունված տերմինոլոգիան պետք է հստակ տարբերակի այն, ինչ իրականում «կա», և այն, ինչի մասին «հայտնվում» կամ «զեկույցվում է»: Չեկույցի նպատակն է՝ իշխանություններին ստիպել կատարել հետաքննություն և արձագանքել խնդիրներին:

Այցելություն կատարող մարմինը պետք է երաշխավորի, որ բանտարկյաների հայտնած անձնական տեղեկությունները զեկույցով կզետեղվեն միայն նրանց համաձայնությամբ, և համոզված լինի, որ այդ համաձայնության արդյունքում այդ անձինք հետապնդումների չեն ենթարկվի:

#### **Հանձնարարականներ**

Կարևոր է, որ հանձնարարականներ հասցեազրվեն իշխանության ճիշտ օղակին: Այցելության վերաբերյալ զեկույցներում հանձնարարականները պետք է հասցեազրվեն անմիջապես կալանավայրի համապատասխան լիազորություններ ունեցող պատասխանատու ծառայողներին:

Եթե խնդիրներն իրենց բնույթով տվյալ հաստատության ղեկավար ծառայողի լիազորություններից դուրս են, ապա այն պետք է հասցեազրվի այլ օղակի և այլ գեկույցի տեսքով:

Հանձնարարականներ ներկայացնելիս կամ ուղղիչ միջոցներ նշանակելիս հարկավոր է հաշվի առնել ժամանակի գործոնը. նշել, որ դրանք պետք է իրականացվեն կարճ, միջին կամ երկար ժամկետներում:

Ժամկետները պետք է լինեն իրատեսական և սկսվեն հաշվարկվել խնդրի ներկայացման պահից:

### 5.2.2. Համբողիանոր գեկույցի կազմում

Ի հավելումն այցելության վերաբերյալ գեկույցների կամ դրանց փոխարեն՝ այցելություն կատարող մարմինը կարող է որոշել կազմել վերլուծական կամ տարեկան գեկույցներ կամ երկուսը միասին:

#### Վերլուծական գեկույց

Այցելություն կատարող մեխանիզմը կարող է որոշել որոշակի ժամանակամիջոցում կատարված մի շարք այցելությունների ամփոփման նպատակով գեկույց մշակել: Այդպիսի ուսումնակարությունն այցելություն կատարող մեխանիզմին հնարավորություն կտա առավել համապարփակ և վերլուծական հայացք նետել մոնիթորինգի ընթացքում առաջացած հարցերի ուղղությամբ: Թեմատիկ մոտեցում կարող է ցուցաբերվել նաև առանձնակի ուշադրություն պահանջող խնդիրների շրջանակի վրա կենտրոնացնալու համար:

Տարբեր վայրեր մի քանի անգամ կատարված այցելությունների վերլուծությունները թույլ են տալիս ի հայտ բերել խնդիրները կամ խախտումներն իրենց ամբողջության մեջ: Դա կարող է նաև առաջին պլան մղել կալանավայրերում առլաւ արմատական խնդիրների մի ամբողջ համալիր: Հանձնարարականները կարող են հասցեազրվել անձանց ու մարմինների՝ այդ խնդիրների պատճառներն ի հայտ բերելու նպատակով (այդ պատճառները կարող են բանտի կամ նախարարության իրավասությունից դուրս լինել, օրինակ՝ օրենսդրություն, քրեական քաղաքականության, անձնակազմի ուսուցում):

Վերլուծական գեկույցները կարող են կցվել այն այցելության վերաբերյալ գեկույցներին, որոնց վրա դրանք հիմնված են:

#### Տարեկան գեկույց

Այցելություն կատարող մեխանիզմը կարող է նաև որոշել կազմել տարեկան գեկույց իր մոնիթորինգային գործունեության վերաբերյալ:

Տարեկան գեկույցների բովանդակությունը կարող է տարբերվել՝

կախված նրանից, թե որ տեղական մարմինն է այն կազմել: Տարեկան գեկույցները կարող են կազմվել կատարված այցերի վերաբերյալ ներկայացված գեկույցների ամփոփման տեսքով և մանրամասն ներկայացնել տեղեկություններ՝ այցելած բանտերում հայտնաբերված փաստերի ու կատարված հանձնարարականների մասին: Զեկույցները կարող են լինել առավել վերլուծական և ընդգծել տարվա ընթացքում աշքի ընկած հիմնական խնդիրները: Տարեկան գեկույցները կարող են նաև կենտրոնանալ մեկ կամ մի շարք թեմատիկ հարցերի շորջ և համապատասխան հանձնարարականներ ներկայացնել:

ԽԴԿՈՍ-ի ենթակայությամբ գործող կանխարգելիչ մեխանիզմներից պահանջվում է ներկայացնել տարեկան գեկույց, իսկ ԽԴԿՈՍ-ի մասնակից երկրներից պահանջվում է հրապարակել և տարածել այն: Ազգային մեխանիզմն ինքը կարող է որոշել՝ տարեկան գեկույցը պետք է պարունակի միայն մոնիթորինգային գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունն, թե՝ պետք է ներառի նաև այցելության վերաբերյալ գեկույցները և հանձնարարականները:

### **5.2.3. Համընդհանուր գեկույցների տարածում**

Համընդհանուր գեկույցները պետք է հասցեագրված լինեն ոչ միայն իշխանություններին: Թե՛ տարեկան և թե՛ վերլուծական գեկույցների պարագայում կարենը է դրանք մատչելի դարձնել հանրության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, ովքեր կարող են օգտագործել իրենց ազդեցությունը՝ հանձնարարություններին օժանդակելու և դրանք մոնիթորինգի ենթարկելու գործում:

Կախված մոնիթորինգի իրականացնող մարմնի տեղեկատվական ռազմավարությունից՝ գեկույցները կամ դրանց սեղմագրերը կարող են տարածվել նաև զանգվածային լրատվության միջոցներով:

Պետք է նշել, որ այսպիսի գեկույցները ապագայում կարող են գաղտնի կամ ոչ գաղտնի ուղարկվել ԽԴԿՈՍ-ի ներքո հիմնադրված Ենթակոմիտեին: Զեկույցները կարող են նաև ծառայել որպես օգտակար տեղեկատվության աղյուր՝ միջազգային մարմինների և հատկապես՝ տարածաշրջանային մարմինների համար: Այդ մարմիններն են՝ ԽԿԿ-ն, Մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան հանձնաժողովը և Աֆրիկայում բանտերի և բանտարկության պայմանների հարցերով հատուկ գեկուցողը, իսկ եթե քննության է առնված երկրի պետական գեկույցը, ապա նաև ԵԽԴԿ, Խոշտանգումների հարցերով հատուկ գեկուցողը և այլն (տես՝ մաս երկրորդ, զետի 4. «Համակարգում»):

### **5.3. Հանձնարարականների կատարման ստուգում**

Եթե այցելության վերաբերյալ գեկույցները կամ համընդհանուր գեկո-

լյցները ներկայացված են այլ անձանց քննարկմանը ևս, հարկավոր է ուշադրություն դարձնել նրանց արձագանքներին: Իշխանությունները պարտավոր են արձագանքել զեկույցին, հետևաբար նրանց պետք է ժամանակ տրամադրվի ներկայացված քննադատության և հանձնարարականների վերաբերյալ դիրքորոշում մշակելու համար: Իշխանությունները պետք է հանձնարարությունների կատարման վերաբերյալ երկխոսություններ սկսեն այցելություն կատարող մեխանիզմի հետ:

Իշխանությունների պատասխանները և ընդհանուր արձագանքները այցելություն կատարող տեղական մարմիններին կօգնեն կատարելագործել իրենց այցելության ծրագրերը:

Հետագա այցելությունների ժամանակ այցելություն կատարողները կարող են ստուգել՝ արդյո՞ք պաշտոնական պատասխանները համապատասխանում են իրականում տիրող վիճակին, և որևէ միջոցառման կամ գործողության անհրաժեշտություն կա՞ թե՝ ոչ:

Այն դեպքերում, եթե իշխանությունները գեկույցը ստանալուց հետո դժկամություն են ցուցաբերում այն ընդունելու և ներկայացված հանձնարարականների կատարման հարցում, ապա այցելություն կատարող մարմինը պետք է շարունակի կատարել իր մոնիթորինգային գործունեությունը: Այն պետք է մշակի իշխանությունների նկատմամբ ճնշում գործադրելու այլ ուսումնակարություններ, ինչպես, օրինակ՝ պատգամավորների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, զանգվածային լրատվյան միջոցների և միջազգային կազմակերպությունների ներգրավում:

#### **5.4. Հետագա գործողություններ՝ մոնիթորինգի գործընթացից դուրս**

Կալանավայրում կատարվող այցելության ժամանակ թիմը բախվում է բազմաթիվ խնդիրների ու կարիքների: Այցելություն կատարողները, որպես կանոն, մեծ բվով խնդրանքներ են ստանում իրավաբանական կամ մարդասիրական օգնության ստանալու կամ իրենց ընտանիքների անդամների հետ շփումներ հաստատելու վերաբերյալ: Կարևոր է, որ այցելություն կատարող մարմինն այդ խնդրանքներին արձագանքելու քաղաքականություն մշակի ու հաստատի՝ մարդկանց մոտ անօգուտ ակնկալիքներ շառաջացնելու նպատակով: Բանտարկյալների կարիքների բավարարումը կալանավայրերի իշխանությունների պարտականությունն է:

Այցելություն կատարող մեխանիզմի առաջնային խնդիրը՝ սովորաբար, իրավիճակի բարեկավման նպատակով խնդիրների բարձրացման և հանձնարարականների կատարման աստիճանի ստուգումն է: Այդուհետեւ, այցելություն կատարող որոշ մեխանիզմներ, իրենց երկրներում բախվելով հատուկ պահանջների և սահմանափակումների, դուրս են գալիս մոնիթորինգի և զեկույցման խիստ կանոնների սահմաններից:

Որոշ մեխանիզմներ իրենց գործողությունները շարունակում են՝ իրա-

վարանական օգնություն ցուցաբերելով, մինչ որոշ մեխանիզմներ մարդասիրական օգնություն են տրամադրում, կալանավայրի անձնակազմի, ինչպես նաև բանտարկյալների համար ուսուցում են կազմակերպում:

Որոշ երկրներում մոնիթորինգից հետո գործողությունների կատարման մեջ այցելություն կատարող մարմինների ներգրավվածությունը դրսուրփում է ազգային օրենսդրության լրացշակման գործընթացին մասնակցությամբ: ԽԴԿՈՍ-ն հատուկ նշում է, որ ազգային կանխարգելիչ մեխանիզմները պետք է իրավունք ունենան «գործող օրենքների կամ դրանք նախագծերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ ներկայացնել» (Խոդված 19):

Այցելություններ կատարող որոշ տեղական մարմիններ, հատկապես՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները, ունեն, այսպես կոչված, «կիսադատական» լիազորություններ: Նրանք ոչ միայն բողոքներ են ստուգում, այլև դրանց կապակցությամբ քննություն են վարում և այդ գործերը ներկայացնում դատարան:

Այցելություններ կատարող որոշ մարմիններ կարող են կարգադրել ազատ արձակել բանտարկյալներին և/կամ փոխհատուցում վճարել այն անձանց, ում իրավունքները ուժնահարվել են:

### **Հետազա ընթեցումներ**

United Nations, Office of the High Commissioner for Human Rights, *Professional Training Series n 7, Training Manual on Human Rights Monitoring*, New York, Geneva, 2001. (Chapter IX: Visits to persons in detention) Giffard, Camille, *The Torture Reporting Handbook- How to document and respond to allegations of torture within the international system for the protection of human rights*, Human Rights Centre, University of Essex, United Kingdom, 2000.

United Nations Office of the High Commissioner for Human Rights, *Professional Training Series no. 8, Istanbul Protocol, Manual on the Effective investigation and Documentation of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment*, New York, Geneva, 2001. APT/OSCE-ODIHR, *Monitoring places of detention: a practical guide for NGOs*, Geneva, 2002.

## Ուշադրության արժանի հարցեր

**Վերաբերմունք**

- Խոշտանգում և դաժան վերաբերմունք
- Մեկոսացում
- Չսպան միջոցներ
- Ֆիզիկական ուժի կիրառում

**Անվտանգության միջոցներ**

- Տեսչական ստուգումներ
- Բողոք ներկայացնելու կանոնակարգեր
- Կարգավահական կանոնակարգեր
- Բանտարկության մատյաններ
- Բանտարկույթի դասակարգում
- Նյութական պայմաններ
- Սնունդ
- Լուսավորություն և օդափոխություն
- Անձնական հիգիենա
- Սանիտարական պայմաններ
- Հագուստ և անկողնային պարագաներ
- Գերբնակեցում և բնակելի պայմաններ

**Ոեժիմ և գործունեություն**

- Ընտանիքի և բարեկամների հետ շփումներ
- Արտաքին աշխարհի հետ շփումներ
- Բացօրյա մարմնամարզություն
- Կրթություն
- Ժամանց
- Կրոն
- Աշխատանք

**Բժշկական ծառայություններ**

- Բուժօգնության մատչելիություն
- Կանանց և երեխաներին անհրաժեշտ հասուլ բուժօգնություն
- Հոգեկան հիվանդ բանտարկույթի համար նախատեսված հասուլ բուժօգնություն
- Վարակիչ հիվանդություններ
- Բուժանձնակազմ

**Բանտի անձնակազմ**

- Ընդհանուր տեղեկություններ
- Անձնակազմի ուսուցում

ՄԱՍ ԶՈՐՌՈՐԴ	Ստուգման ենթակա քանտարկության պայմաններ
-------------	---

- 1** Բանտարկյալների հանդեպ վերաբերմունք,
- 2** Պաշտպանության միջոցներ
- 3** Նյութական պայմաններ
- 4** Ուժիմ և զործունեություն
- 5** Բժշկական սպասարկում
- 6** Անձնակազմ
- 7** Ոստիկանական ձերբակալում

### Գործածված հապավումների ցանկ

- ACHPR** (ՄԺԴՊԱՊ)` Մարդու և ժողովուրդների պաշտպանության աֆրիկյան պայմանագիր: Ընդունվել է 1981թ. հունիսի 27-ին՝ Աֆրիկյան միության կողմից:
- ACPR** (ԲԻԴՊԱՊ)<sup>16</sup> Բանտարկյալների իրավունքների պաշտպանության աֆրիկյան պայմանագիր: Օրինագիծն ընդունվել է Կենտրոնական, Արևելյան և Հյուսիսային Աֆրիկայի Ուղղիչ ծառայությունների ղեկավարների 5-րդ կոնֆերանսում, որն անց է կազմվել Վինդհուկում, Նամիբիա, 2001թ. սեպտեմբերի 4-7:
- BPP** (ՈՉՁԿՍՊՍԺ)` Որևէ ձևով ձերքակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու, ընդունվել է Սիավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի 1998թ. դեկտեմբերի 9-ի թիվ 43/173 որոշմամբ:
- BPTD** (ԿՀՎՀԱ)` Բանտարկյալների համեստ վերաբերմունքի հիմնական սկզբունքներ: Ընդունվել է Սիավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/111 որոշմամբ:
- CPT GR2** (ԽԿԿ-ի 2-րդ ԸԶ)` ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ երկրորդ ընդհանուր գեկույց, որն ընդգրկում է 1992թ. հունիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը CPT/Inf (92) 3, 1992թ. ապրիլի 13:
- CPT GR3** (ԽԿԿ-ի 2-րդ ԸԶ)` ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ երրորդ ընդհանուր գեկույց, որն ընդգրկում է 1992թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված, CPT/Inf (93) 12, 4-ը հունիսի, 1993թ.:
- CPT GR10** (ԽԿԿ-ի 10-րդ ԸԶ)` ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ տասներորդ ընդհանուր գեկույց, որն ընդգրկում է 1999թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, CPT/Inf (2000 թ.) 13-ը, 18-ը օգոստոսի 2000թ.:
- CPT GR11** (ԽԿԿ-ի 11-րդ ԸԶ)` ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ տասնմեկերորդ ընդհանուր գեկույց, որն ընդգրկում է 2000թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, CPT/Inf (2001) 16, 3-ը սեպտեմբերի 2001թ.:
- CPT GR12** (ԽԿԿ-ի 12-րդ ԸԶ)` ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ տասներկուերորդ ընդհանուր գեկույց, որն ընդգրկում է 2001թ.

---

<sup>16</sup> Այդ համաձայնագիրը CESKA-ի պատրաստած նախագիծն է:

	հումկարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, CPT/Inf (2002)15, 3-ը սեպտեմբերի 2002թ.:
<b>EPR</b>	(ԵԲԿ)` Եվրոպական բանտային կանոնների թիվ (87)3 հանձնարարական, ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ 1987թ. փետրվարի 12-ին:
<b>GC</b>	(ՀՍԿ) ՍԱԿ-ի ՍՀՀՁՔԻՊ-ի պայմանների կիրառման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի ընդհանուր մեկնարանություն:
<b>ICCPD</b>	(ՍՀՀՁՔԻՊ) ՍԱԿ-ի Միջազգային դաշնագիր Քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության վերաբերյալ, 1966թ.:
<b>ICPRT</b>	(ԽԿՊՄԴ)` Խոշտանգումների կանխարգելման և պատժման միջամերիկյան պայմանագիր, ընդունվել է Ամերիկյան պետությունների կազմակերպության կողմից՝ 1987թ. փետրվարի 28-ին:
<b>IDRCPD</b>	(ԿԱԻՊԽՄԴ)` Կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության և խնամքի վերաբերյալ միջամերիկյան հոչակագիր նախագիծ <sup>17</sup> :
<b>R(89)12</b>	(Հ (89)12)` Անդամ երկրների բանտային կրթության վերաբերյալ հանձնաժողովի հանձնարարական (ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ 1989թ. հոկտեմբերի 13-ին):
<b>R(98)7</b>	(Հ (98)7)` Նախարարների կոմիտեի հանձնարարական (ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1998թ. ապրիլի 8-ին):
<b>RIG</b>	(ՈԿՀ)` Աֆրիկայում խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատիժների արգելման և կանխարգելման հրահանգներ և միջոցներ (Ոռեն կողու հրահանգներ), 2002թ.:
<b>RPJDL</b>	(ԿԴՊՄ)` Անշափահաս դատապարտյալների պաշտպանության ՍԱԿ-ի կանոններ, 1990թ.:
<b>SMR</b>	(ՄՆԿ) ECOSOC-ի 1957թ. հովիսի 31-ի թիվ 633C (XXIV) և 1977թ. մայիսի 13-ի թիվ 2076 (LXII) որոշումներով հաստատված Բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ Կանոններ:

<sup>17</sup> Այս հոչակագիր նախագիծը մշակվել է «Միջազգային բանտային բարեփոխումնոր» կազմակերպության, և հովանավորվել՝ Կոստա-ՈՒկայի Կառավարության կողմից:

Զեռնարկի այս հատվածում ներկայացված են այցելության ժամանակ ի հայտ եկած և քննության արժանի տարբեր հարցեր: Այն նպատակ ունի ապահովել գործնական միջոցներ, որոնք, իրենց հերթին, կապահովեն արագ անցում բանտարկության պայմանների միջազգային չափանիշներին և կատարվող այցի ընթացքում ուշադրության արժանի հանգամանքների դիտարկման դեկավար սկզբունքներին:

Լուսաբանված են այն ոլորտները, որոնք այցելություն իրականացնող մեխանիզմի համար գործնական դժվարություններ են ներկայացնում, ինչպես նաև դրանց առնչվող որոշ ռազմավարական մոտեցումները: Զեռնարկի յուրաքանչյուր ենթաբաժնի վերջում տրվող «տեղեկանքներ»սպառիչ չեն և ակնկալվում են, որ այցելություն կատարող մեխանիզմները կկատարելագործեն իրենց կից գործող համակարգերի պահանջմունքների վրա հիմնված սեփական հսկողական փաստաթղթերը:

## **ԲԱՆՏԱՐԼՅԱԼՄԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ**

### I

Բանտարկյալմերի՝ որպես մարդ արարածների արժանապատվության հանդեպ հարգանքը պետք է հիմնարար էթիկական նշանակություն ունենա բանտի անձնակազմի, ինչպես նաև այցելություն իրականացնող մարմինների համար: Այս կարևոր սկզբունքը հստակորեն շարադրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության միջազգային դաշնագրում (ICCPR). «Ազատազրկված բոլոր անձանց պետք է ցուցաբերել մարդասիրական մոտեցում՝ հարգելով նրանց արժանապատվությունը<sup>18</sup>: Բայց այդ, խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքն ընդիմանրապես արգելված է և ոչ մի պարագայում չի կարող արդարացվել:

Որոշ միջոցառումներ կարող են խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի համարժեք գործողություն հանդիսանալ, եթե դրանք գործադրվում են ոչ պատշաճ կերպով: Դա հատկապես վերաբերում է մենահացային բանտարկությանը, զսպման միջոցներին և ուժի գործադրմանը: Այդ իսկ պատճառով նման միջոցների կիրառումը պետք է զուգորդվի միշտ երաշխիքներով, իսկ այցելություն կատարող մարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այդ միջոցների կիրառման ձևերի վրա:

#### **Բանտարկյալմերի հանդեպ վերաբերմունք**

- Խոշտանգումներ և դաժան վերաբերմունք,
- Մեկուսացում,
- Զսպման միջոցներ,
- Ուժի գործադրում.

#### **Խոշտանգումներ և դաժան վերաբերմունք**

##### **Չափանիշներ**

«Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արդարացման»: BBP, սկզբունք 6:

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկանության մասին պատճենական վերաբերմունքը կամ պատժի արդարացման»: BBP, սկզբունք 6:

<sup>18</sup> Տես նաև Բանտարկության հիմնական սկզբունքների 1-ին սկզբունքը և սկզբունքների ժողովածուի 1-ին սկզբունքը:

ային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:»: ICCPR, հոդված 7:

«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների, կամ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ պատժի կամ վերաբերմունքի: Մարդու իրավունքների պաշտպանության ամերիկյան կոնվենցիա, հոդված 5, 1978:»

«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»: Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիա, հոդված 3, 1950 թ.:»

«Յուրաքանչյուր քաղաքացի պետք է իր՝ որպես մարդ արարածի արժանապատվության հանդեպ հարգանքի և իր օրինական կարգավիճակի ճանաշման իրավունք ունենա: Մարդու շահագործման և նվաստացման բոլոր՝ ձևերը, հատկապես՝ սորկությունը, սորկավաճառությունը, խոշտանգումները, դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ պատիժները և վերաբերմունքը պետք է արգելվեն:»: ACHPR, հոդված 5:

Սույն Կոնվենցիայի իմաստով «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խորականության վրա հիմնված ցանկացած պատճառով, եթե նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց: Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիա (UNCAT), հոդված 1, 1984 թ.:

«Սույն կոնվենցիայի իմաստով «խոշտանգում» արտահայտությունը նշանակում է ֆիզիկական կամ հոգեկան ցավի կամ տառապանքի կանխամտածված պատճառումը որևէ անձի՝ քրեական գործով նախաքննության, ահարեկման, անձնական պատժի, կանխարգելիչ կամ պատժիչ միջոցներ կիրառելու, տույժի կիրառման կամ մեկ այլ նկատառումներից ելնելով: «Խոշտանգում» արտահայտությունը նաև նշանակում է անձի ֆիզիկական կամ հոգեկան էությունը ոչնչացնելուն, եթե անգամ ֆիզիկական կամ հոգեկան ցավ պատճառելու մերողներ չեն գործադրվել:»

Խոշտանգման հասկացությունը չպետք է ներառի ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը, որը պատճառվել է օրինական միջոցների կիրառման արդյունքում, եթե դրանք չեն ընդգրկում առյուն հողվածում նշված գործողությունների կամ մեթոդների կիրառումը»: ICPRT, հողված 2:

Ցուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավագորության ներք գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձևերը, որոնք չեն դասվում 1-ին հողվածում որպես խոշտանգում սահմանվածների շարքը, եթե այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնական հանդես եկող մեկ այլ անձի կողմից կամ նրանց իրարմամբ, կամ նրանց գիտությամբ կամ լրու համաձայնությամբ: UNCAT, հողված 16:

Պետք է ընդհանրապես արգելվի մարմնական պատիժները, մուք խցում բանտարկելը և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ բոլոր պատիժները որպես կարգապահական տույժ կիրառելը» SMR, Կանոն 31:

### **Անշափահասներ**

«Մասնակից պետություններն ապահովում են, որ.

(ա) ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մահապատիժ, ոչ ցմահ բանտարկություն, որն ազատման հնարավորություն չի նախատեսում, չի սահմանվում տասնուր տարին շրացած անձանց կողմից կատարված հանցագործությունների համար»: Երեխաների իրավունքների մասին ՍԱԿ-ի կոնվենցիա, հողված 37:

### **Մեկնարկանություններ**

Բանտարկյալները խոշտանգումների առումով առավել խոցելի են բանտարկության սկզբնական փուլում, հատկապես՝ հետաքննության և հախարձննության ընթացքում: Եթե անզամ այցելություն կատարող մարմնի մանդատը չի ներառում ձերբակալման կամ կալանավորման ընթացքը, ապա մարմնի անդամները պետք է համոզվեն, որ վերոհիշյալ կալանավորից վերադարձած բանտարկյալները ենթարկվել են արդյոք խոշտանգումների, ունե՞ն արդյոք փաստաթղթեր առողջական վիճակի մասին և արդյո՞ք ներկայացրել են համապատասխան պաշտոնական բողոքներ:

Այցելություն կատարողների համար խոշտանգումներն առավել բարդ ոլորտ են, որը պահանջում է պատշաճ կերպով կազմված արձանագրություններ, համապատասխան պատրաստականություն և ուսուցում: Խոշտանգումների ենթարկված անձի հետ գրույցը բավականին նուրբ խնդիր է:

Խոշտանգումը կարող է դժվար ապացուցվող լինել հատկապես այն դեպքերում, երբ շատ ժամանակ է անցել: Այցելողները պետք է համոզված լինեն, որ պատշաճ կերպով տեղեկացված են տվյալ վայրում ընդունված պրակտիկայի մասին, ներառյալ՝ բռնությունները քողարկելու ուղիների և մեթոդների մասին: Նրանք պետք է գիտենան նաև ազատազրկման վայրում կիրառվող խոշտանգումների կանխարգելման վարչական միջոցների մասին (ինչպես, օրինակ՝ գրանցման մատյաններ):

Այցելություն կատարողները պետք է հաշվի առնեն, որ միջազգային մարմինների օրենսդրությունը հետևյալ գործողությունները համարում է խոշտանգում կամ դաժան, անձարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք:

- Բանտարկության պայմաններ՝ խոշտանգումների առանձին կամ մի շարք տարրերով,
- Մենախցային բանտարկություն (տես սույն մասի «Մեկուսացում» գլուխը),
- համապատասխան բժշկական օգնության մերժում,
- Անձի զգայարանների անգործության մատնում:

### **Խոշտանգումների լիակատար արգելում**

**ԽԴԿ-ի խոշտանգման բնութագրումը պարունակում է երեք հիմնական տարր, որոնք կազմում են «խոշտանգում» կոչված երևույթը:**

- Ուժեղ հոգեկան կամ ֆիզիկական ցավի կամ տառապանքի պատճառում,
- Պետական իշխանությունների համաձայնությամբ կամ զիջմամբ,
- Գործադրման հատուկ նպատակ, օրինակ՝ տեղեկատվության ստացում, պատժում կամ ահարեկում:

Խոշտանգումը կարող է լինել հոգեկան և ֆիզիկական, ներառյալ՝ Էլեկտրաշոկը, կոչիկի ներքաններով ծեծելը, անձին ցավոտ դիրքերով կախելը, ծեծը, բռնաբարությունը, շնչահեղձ անելը, ծխախտով այրվածքներ պատճառելը, սննդից, քնից և շփումից զրկելը, ահարեկումը, կեղծ մահապատիժը և այլն:

Մեռական բռնությունը հանդիսանում է անձին թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես ընկճելու մեթոդ:

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է տեղյակ լինեն բանտարկության՝ գոյություն ունեցող պրակտիկային, ինչը կարող է չհամընկնել խոշտանգման դասական բնորոշմանը, և որը դժվար է բացահայտել: Երկարատև կիրառման դեպքում այդ երևույթները կարող են վնաս

պատճառել ազատազրկվածի հոգեկան հավասարակշռությանը: Այդպիսի գործողությունները շատ ավելի վնասակար են, քանի որ բանտարկյալները կարող են համակերպվել դրան և չկարողանան տարբերակել և հայտնել այդպիսի վերաբերմունքի մասին: Այս փաստերը կարող են հետևյալ դրսերումներն ունենալ.

- Պարբերաբար անտեսել բանտարկյալների խնդրանքները և հարկադրել կրկնել դրանք,
- Բանտարկյալների հետ խոսել հովանավորչական տոնով,
- Խոսելիս չնայել բանտարկյալների աշքերին,
- առանց որևէ պատճառի և հանկարծակի ներխուժում խցեր,
- բանտարկյալների միջև անվստահության մթնողրատի ստեղծում,
- բույլատրել չհետևել այս կամ այն ներքին կանոններին՝ հետագայում պատժելով դրանց չհետևելու համար:

### **Ներքանտային բռնություն**

Այցելություն կատարողները պետք է հիշեն, որ անձնակազմի պարտըն է՝ բանտարկյալներին այլ բանտարկյալներից պաշտպանել: Այլ բանտարկյալների կողմից կատարված բռնարարները, օրինակ՝ ծեծելը կամ մարմնական վնասվածք պատճառելը, բռնարարությունը և նման այլ վարքագիծը չպետք է անտեսվեն: Բռնության այս տեսակի մասին զոհերը հաճախ չեն հայտնում՝ վախենալով ճնշումներից: Անձնակազմը կարող է հանրութել այս՝ հանարելով, որ դա «բանտարկյալների անձնական գործն է»՝ գերադասելով ուշադրություն չդարձնել դրանց և չբնամանալ այն բանտարկյալներին, ում պատճառով հետագայում կարող են խնդիրներ ծագել:

Այցելություն կատարողները պետք է ստեղծեն այնպիսի մթնողրատ և իրադրություն, որ բույլ բանտարկյալները զգան, որ կարող են հայտնել իրենց մտահոգությունները:

Այցելություն կատարողները պետք է տեղյակ լինեն հավանականությունը կրծատելու հարցում անձնակազմի հնարավորություններին և մոնիթորինգի ենթարկել այն պայմանները, որոնց առկայության դեպքում տեղի են ունենում խոշտանգումները.

- տարբեր կատեգորիաների կալանավորների առանձնացում,
- բանտարկյալների համատեղելիության մանրակրկիտ ուսումնասիրություն,
- բողոքներ ներկայացնելու մատչելի և գաղտնիություն ապահովող համակարգ,
- վերապատրաստված անձնակազմի զգալի քանակություն,

- բանտարկյալներին կարգապահական կամ հսկողական գործառությունների վերապահում,
- օրենքով նախատեսված «հակախուլիգանական» ոստիկանական ուժեր:

I

## **Աշխատանք խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների ուղղությամբ**

Անհատական հարցազրույցների ժամանակ այցելություն կատարող խմբի անդամները կարող են հայտարարություններ ստանալ խոշտանգումների մասին: Դրանք կարող են վերաբերել տվյալ ազատազրկման վայր այցելությամբ նախորդած դեպքերին:

Կաևկած չի հարուցում այն փաստը, որ եթե ազատազրկման վայրում խոշտանգումները կիրառվել և շարունակում են կիրառվել, բանտարկյալները, վախենալով ճնշումներից, ցանկություն չեն հայտնի հայտարարել դրանց մասին: Հայտարարությունները կարող են վերաբերել առանձին դեպքերին, ինչպես, օրինակ՝ պահակազորի կողմից իրավունքների չարաշահումը կամ հատուկ իրադրությունը (խոռովությունը կամ կարգապահական տույժերը): Այցելություն կատարողները պետք է հիշեն, որ հաստատությունում տիրող ընդհանուր պայմանները կարող են ևս հանարժեք լինել խոշտանգումներին: Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի ենթարկված անձին հաճախ դժվար է լինում գրուցել այդպիսի նվաստացուցիչ պայմանների մասին: Դաժան վերաբերմունքի մասին տեղեկատվության հավաքումը նուրբ խնդիր է այցելություն կատարողների համար: Այցելություն կատարողները պետք է անցնեն հատուկ ուսուցում հայտարարություններ ընդունելու, գրուցելու համար նպաստավոր նքննորություններու վերաբերյալ: Հատկապես դժվար է անել այնպես, որ այս կամ այն տեղեկատվությունը հայտնելու արդյունքում խոշտանգումներ կրկին չկիրառվեն:

**Բանտարկյալի պաշտպանության համար կարևոր է, որպեսզի այցելություն կատարողը հարց տա ինքն իրեն՝ ինչպես եմ պատրաստվում ընթացք տալ այս հայտարարությանը (կարմ՞ն եմ օգտագործել անձնական տվյալները, տեղեկատվությունը օգտագործեն միայն ընդհանուր առմանը, թե՞ ընդհանրապես չօգտագործեն այն):**

Կարևոր է, որ բուժանձնակազմը կարողանա բժշկական գննման միջոցով (որը կներառի և ֆիզիկական, և հոգեկան երևույթները) հնարավորինս շտապ փաստարդեր կազմել՝ հայտարարությունը ձևակերպելու համար: Հարցազրույց վերցնելու ժամանակ խոշտանգման զոհերից առավել մանրամասն տեղեկատվություն հայրայթելու, ինչպես նաև բժշկական վկայություններ ստանալու մերողների վերաբերյալ տես՝

**I**

Camille Giffard, *The Torture Reporting Handbook - How to document and respond to allegations of torture within the international system for the protection of human rights*, Human Rights Centre, University of Essex, United Kingdom, 2000. Part II - Documenting allegations, pp. 29 to 51;

United Nations Office of the High Commissioner for Human Rights, Professional Training Series no. 8; *Istanbul Protocol, Manual on the Effective Investigation and Documentation of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment*, New York, Geneva, 2001. Chapter IV-General considerations for interviews.

Այցելություն կատարողի խնդիրը չէ որոշելը՝ հայտարարության մեջ նշված վերաբերմունքը խոշտանգո՞ւմ է, թե՝ ոչ:

Բացառությամբ այն դեպքերի, երբ լուրջ կասկածներ կան հայտարարության ճշմարտացիության վերաբերյալ, խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունները պետք է փոխանցվեն (վարչական կամ քրեական) քննության համար պատասխանատու մարմիններին՝ ծերանարկելով վերը նշված նախազգուշական միջոցները, ներառյալ՝ անհատների անունից կատարված հայտարարությունները և պահպանելով այնպիսի ընթացակարգ, որը վտանգի չի ենթարկի հայտարարությունը տված անձին: Ճշմարտության բեռը, այսինքն՝ համապատասխան քննության միջոցով հայտարարության ճշմարտացիության բացահայտումը, ընկած է պատասխանատու մարմինների, այլ ոչ թե հայտարարություն անող անձի վրա:

---

**Տեղեկատվություն, որն այցելություն կատարողները կարող են քաղել դաժան վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունից.**

- անձի լրիվ ինքնությունը,
- հայտարարությունը կազմելու օրը և վայրը,
- կալանավորող մարմինը,
- դաժան վերաբերմունքի օրը և վայրը,
- գործողության վկաները,
- դաժան վերաբերմունքի մանրամասն նկարագրություն (ի՞նչ, ինչպե՞ս, ի՞նչ տևողությամբ և պարբերականությամբ, ո՞ւմ կողմից) և բանտարկյալի վրա այդ ամենի բողած անմիջական ազդեցություն կամ հետքեր;
- բժշկական հավաստագիր կամ այլ ապացույց, ինչպես, օրինակ՝ լուսանկար:

---

**Եթե այցելություն կատարող քիմում բժշկական մասնագիտության**

---

### Վաստարդենք.

- Ֆիզիկական վիճակի մասին տեղեկանք,
- Հոգեբանական վիճակի մասին տեղեկանք,
- Բուժօգնության անհրաժեշտության մասին տեղեկանք:

**Հաճճարարականներով նախատեսված գործողությունների կատարման և դրանց արդյունքների ստուգում**

- Ո՞վ էր տեղյակ այդ հայտարարության մասին և ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել,
- Կա՞ր արդյոք վարչական կամ քրեական բողոք ներկայացնելու հնարավորություն,
- Արդյո՞ք տվյալ անձին բույլատրվել է հայտարարություն ներկայացնել,
- Կատարվածի վերաբերյալ որևէ պաշտոնական արձագանք եղե՞լ է արդյոք (արձագանքի բացակայությունը կամ արձագանքի բացակայությանը համարժեք արձագանքը ևս համարվում է տեղեկատվություն),
- Բողոքն ընդունվելուց հետո ի՞նչ արդյունք է ստացվել (հեղինակի, զոհի համար),
- Այցելողների անհատական դիտարկումները:

I

### ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ

#### Չափանիշներ

«Մենախցային բանտարկությունը որպես պատժամիջոց կիրառելու արգելմանը կամ սահմանափակմանն ուղղված ջանքերը պետք է նախաձեռնվեն և խրախուսվեն»: BTPT, սկզբունք 7:

«Երկարատև մենախցային բանտարկությունը կամ կալանքը կարող է համարվել խոշտանգումներին և արգելված գործողություններին համարժեք գործողություն:» GS, N 20/44 ICCPR հոդված 7:

«ԽԿԿ-ն հատուկ ուշադրություն է դարձնում որևէ պատճառով (վարչական խախտումների, «վլանգավորության» կամ «խնդիրներ հարուցող» վարքի, քրեական գործով նախաքննության պատճառներով կամ սեփական խնդրանքով) մենախցային բանտարկությանը համանման պայմաններին: Համամասնության սկզբունքը պահանջում է, որ տվյալ գործից բխող անհրաժեշտությունը և մենախցային բանտարկությանը համարժեք ռեժիմի կիրառումը համապատասխանեն միմյանց: Սա կարևոր հանգամանք է, որը կարող է շատ վնասակար հետևանքներ ունենալ բանտարկյ-

այի համար: Որոշ դեպքերում մենախցային բանտարկությունը կարող է անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի համարժեք համարվել: Ամեն դեպքում, մենախցային բանտարկության բոլոր ձևերը պետք է լինեն հնարավորին կարճատև:

Խնդրանքի հիման վրա կատարված այցի հիմնական երաշխիքը պետք է լինի այն, որ բանտարկյալ կամ բանտային ծառայողը կարողանաւ անհապաղ կանչել բանտի բժշկին՝ բանտարկյալին բժշկական քննության ենթարկելու նպատակով: Այդ քննության արդյունքները, ներառյալ՝ բանտարկյալ ֆիզիկական և հոգևոր վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև մեկուսացման հետևանքների կանխատեսումը պետք է արձանագրվեն գրավոր հայտարարության ձևով, որը պետք է ուղարկվի իրավասու մարմիններին»: CPT, GR 2, § 56, տես նաև IDRCPDL, հոդված 48:

### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարող թիմը պետք է որոշակի ուշադրություն դարձնի որևէ պատճառով մեկուսացված բանտարկյալներին (այլ բանտարկյալների կամ արտաքին աշխարհի հետ շփման բացակայություն):

Մարդուն մենախցային բանտարկության ենթարկելը լուրջ պատժամիջոց է և տևական կիրառման դեպքում կարող է համարվել անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք, կամ, նույնիսկ, որպես խոշտանգման դրսւորում: Դրա պատճառով դատապարտյալ կարող է առավել խոցելի դառնալ խոշտանգման առումով: Մեկուսացումը պետք է կիրառվի բառառության կարգով և ունենա սահմանափակ տևողություն, այսինքն՝ հնարավորին կարճատև: Մեկուսի բանտարկությունը պետք է ուղեկցվի երաշխիքների ամբողջ շարքով, ինչպես օրինակ՝ պատժի վերացման և բեկման համակարգով: Այցելություն կատարող թիմերը պետք է ներառված լինեն այդ համակարգերի կողմից բանտարկյալն առաջարկվող պաշտպանության համարժեք աստիճանի հսկողության մեջ:

Երբեմն մեկուսացումն անհրաժեշտ է կիրառել որպես անվտանգության միջոց: Այդ դեպքում ոեմինը պետք է շահեկանորեն տարբերվի որպես կարգապահական տույժ կիրառվող մեկուսացումից: Պատժի վերանայման հնարավորությունը մենախցային բանտարկության ընթացքում չպետք է աշքարող արվի:

### Մեկուսի բանտարկությունը չպետք է լինի՝

- անորոշ,
- երկարատև,
- կրկնվող:

I

### Ծագրտման ենթակա հարցեր

- Ո՞րն է մենախցային բանտարկության թույլատրելի առավելագույն ժամկետը,
- Ո՞ր օրն է կիրառվել մեկուսացումը,
- Ո՞վ է կայացնում մենախցային բանտարկություն կիրառելու որոշում,
- Ի՞նչ պատճառներով կարող է կիրառվել մենախցային բանտարկությունը,
- Պատժի բողոքարկման և բեկանման ի՞նչ համակարգ է գործում ազատազրկման վայրում,
- Արդյո՞ք մեկուսացված անձը հնարավորություն ունի մաքուր օդում գոնեն մեկ ժամ տևողությամբ մարմնամարզություն կատարել,
- Մեկուսացման ժամանակ ի՞նչ ռեժիմ է կիրառվում բանտարկյալների հանդեպ,
- Մենախցային բանտարկությունից հետո կատարվո՞ւմ է արդյոք բժշկական հետազոտություն, և արդյո՞ք այն ուղղված է բանտարկյալի առողջությունը պահպանելուն,
- Մեկուսի բանտարկության ընթացքում ի՞նչ հաճախականությամբ են կիրառվում այդպիսի հետազոտությունները,
- Կարո՞ղ է արդյոք մեկուսի բանտարկության տակ գտնվող կալանավորը բժիշկ խնդրել,
- Ո՞վ իրավունք ունի այցելելու մեկուսացված բանտարկյալներին, և ինչպե՞ս է այդ այցելությունը գրանցվում,
- Փոքրամասնությունների հանդեպ մեկուսացումը անկողմնակալ չի եղել:

### Մեկուսացման միջոցներ

#### Չափանիշներ

Մեկուսացման միջոցները, ինչպես, օրինակ՝ ձեռնաշղթաներն ու ոտնաշղթաները, երկարեւ կալանդները և զսպաշապիկները, երբեք չպետք է կիրառվեն որպես տույժի միջոցներ: Ավելին, շղթաները և երկարեւ կալա-

# I

անդները չպետք է գործադրվեն որպես զսպման միջոցներ: Որպես զսպման միջոցներ չեն կարող գործադրվել այլ միջոցներ ևս, բացառությամբ՝ հետևյալ դեպքերի՝

(ա) Կալանավորների փոխադրման ժամանակ փախուստները կանխելու համար, սպայմանով, որ կալանավորները կալանդներից ազատվեն դատական կամ վարչական մարմինների առջև կանգնելուն պես,

(բ) բժշկական նկատառումներով կամ բժշկի ցուցումով,

(գ) Տնօրենի կարգադրությամբ՝ այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է բանտարկյալի կողմից ինքնավճամաման կամ այլոց մարմնական կամ նյութական վնաս պատճառելու հնարավորությունը կանխելու համար, եթե զսպման բոլոր այլ միջոցներն օգուտ չեն տվել: Այդպիսի դեպքերում տնօրենը պարտավոր է խորհրդակցել բժշկի հետ և գեկուցագիր ներկայացնել վերադաս վարչական մարմիններին»: SMR, կանոն 34:

«Նախորդ հոդվածով նախատեսված զսպման միջոցների և մեթոդների կիրառումը կարգավորվում է գործող օրենսդրությամբ կամ կանոններով: Դրանց կիրառման տևողությունը ոչ մի դեպքում չանոք է գերազանցի անհրաժեշտության սահմանները»: EPR, կանոն 40:

«Քացառիկ դեպքերում, երբ ֆիզիկական միջոցների կիրառում է պահանջվում, տվյալ բանտարկյալը պետք է պահպի համապատասխան հսկողության տակ: Հետազայում զսպման միջոցները պետք է հանվեն առաջին իսկ հնարավորության դեպքում: Զսպման միջոցները երբեք չպետք է կիրառվեն որպես պատիժ: Դրանց կիրառումը չպետք է երկարածզվի: Եվ վերջապես, բանտարկյալների հանդեպ ուժի գործադրման ցանկացած դեպք պետք է գրանցվի (CPT, GR2, § 55): Տես նաև ACPR, A-5, IDRCPDL, հոդված 46 և EPR, կանոն 39:

## Անշափահասներ

«Որևէ նպատակով զսպման միջոցների և ուժի գործադրումը պետք է արգելվի, բացառությամբ՝ ներքոհիշյալ 64-րդ կանոնով նախատեսված դեպքերի»: RPJDL, 63

«Զսպման և ուժի միջոցները կարող են գործադրվել միայն բացառիկ դեպքերում, երբ հսկողության այլ միջոցները սպառվել են կամ արդյունավետ չեն: Այդ միջոցների օգտագործման դեպքերն ու պայմանները պետք է հստակ սահմանված լինեն օրենքով կամ կանոններով: Զսպման և ուժի միջոցները չպետք է նվաստացում պատճառեն և պետք է օգտագործվեն զսպման նպատակով՝ հնարավորին կարծ տևողությամբ: Ազատազրկման վայրի տնօրենի հրամանով այդ միջոցները կարող են կիրառվել նաև անշափահասի կողմից ինքնավճաման կամ այլոց մարմնական կամ նյութական լուրջ վնաս պատճառելու հնարավորությունը կանխելու

նպատակով: Այդամբ դեպքերում տնօրենը պետք է անմիջապես խորհրդակցի բժշկական և համապատասխան այլ անձնակազմի հետ և գեկուցի վերադաս մարմիններին»: RPJDL, 64:

## I

### **Մեկնարանություններ**

Չսպման որոշ միջոցներ ընդհանրապես արգելված են: Բոլոր բույլատրելի միջոցները պետք է օգտագործվեն բացառիկ դեպքերում: Դրանք երբեք չպետք է գործադրվեն որպես վարչական տույժի միջոց:

Ավելին, դրանք պետք է զուգորդվեն երաշխիքների մի ամբողջ շարքով.

- Բանտարկյալների նակատմամբ զսպման միջոցները պետք է գործադրվեն հնարավորինս կարճ ժամանակով,
- Չսպման միջոցի կամ ուժի գործադրման դեպքերը պետք է գրանցվեն մատյանում,
- Դրանց գործադրման մասին տնօրենը պետք է տեղեկացվի անմիջապես:

Ուղղիչ միջոցների գործադրման ժամանակ բժշկի դերը հատկապես կարևոր է: SMR-ը և այլ կանոններ նշում են, որ բժիշկը կարող է եզրակացներյուն տալ որոշ զսպամիջոցների վերաբերյալ՝ ենելով բժշկական նկատառումներից:

Ինչպես նշված է ԽԿԿ-ի հատուկ մեկնարանություններում, զսպման միջոցների գործադրման ժամանակ բանտարկյալն իրավունք ունի անմիջապես հետազոտվել բժշկի կողմից: Դա չի կարող համարվել բժշկական եզրակացներյուն «սույժի կրելուն բանտարկյալի ի վիճակի լինելը» գնահատելու մասին: Բժշկի նման դերը հստակ արգելված է միջազգային չափանիշներով և հակասում է բժշկի մասնագիտական երիկային (տես՝ նաև «Բժշկական սպասարկում» բաժինը):

Անհանդուրժելի է, որ կալանավայրերում մարդու արժանապատվության հանդեպ հարգանքը երաշխավորող այցելություն կատարող թիմը բանտարկյալից հարցազրույց վերցնի զսպման միջոցների գործադրման պայմաններում:

### **Շշգրտման ենթակա հարցեր**

- Ո՞ր դեպքերում է զսպման միջոց գործադրվում,
- Ի՞նչ պարբերականությամբ են դրանք օգտագործվում,
- Արդյո՞ք դրանք գրանցվում են մատյանում,
- Արդյո՞ք զսպման միջոցների ենթարկվածները կարող են բժշկի օգնություն ստանալ,
- Ի՞նչ տևողությամբ են գործադրվում զսպամիջոցները,

- Կա՞ն արդյոք տվյալներ այն մասին, որ զսպման միջոցներ գործադրելիս խտրականություն է դրսերվել փոքրամասնությունները ներկայացնող խմբերի հանդեպ:

## I

### **Ուժի գործադրում Չափանիշներ**

1. «1) Բանտարկյալների հետ իրենց հարաբերություններում հիմնարկների անձնակազմները իրավունք ունեն ուժի դիմել միայն ինքնապաշտպանության կամ փախուստի վորձի դեպքում, ինչպես նաև բանտարկյալների կողմից գործող օրենքների կամ կանոնների վրա հիմնված հրամաններին ակտիվորեն կամ պասսիվ կերպով հակադրվելիս: Ուժի դիմող աշխատակիցները պարտավոր են ննալ չափավորության սահմաններում և նմանատիպ միջադեպի մասին անհապաղ տեղեկացնել հիմնարկի տնօրենին:

2) Բանտերի աշխատակիցները պետք է ունենան հատուկ ֆիզիկական պատրաստվածություն, որը նրանց թույլ կտա սանձել հարձակողական նտադրություններ հանդես բերող բանտարկյալներին:

3) Այն աշխատակիցները, ովքեր իրենց պարտականությունները կատարում են բանտարկյալների հետ անմիջական շփման մեջ, պետք է գենք կրեն միայն բացառիկ դեպքերում: Բացի այդ, գենք կրելու իրավունք պետք է ունենան միայն այն աշխատակիցները, ովքեր համապատասխան պատրաստություն են անցել:»: SMR, կանոն 54 (տես նաև EPR կանոն 63):

Իրավապահ մարմինների ծառայողները ուժ կարող են գործադրել միայն «ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում՝ այն չափով, որքանով դա անհրաժեշտ է իրենց պարտականությունների կատարման համար»: Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց կողմից ուժ և հրազեն գործադրելու մասին ՍԱԿ-ի հիմնական սկզբունքների 3-րդ սկզբունքը:

«Իրավապահ մարմինների ծառայողները չպետք է հրազեն գործադրեն բանտարկյալների դեմ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ինքնապաշտպանության կամ այլ անձանց անխուսափելի մահից կամ լուրջ մարմնական վճարված ստանալուց պաշտպանելու, ծանր հանցագործությունը, ներառյալ՝ կյանքին սպառնացող իրական վտանգը կանխելու, այդպիսի վտանգ ներկայացնող անձին ձերքակալելու կամ վտանգը չեզոքացնելու, վերջինիս փախուստը կանխելու համար: Նվազ վտանգավոր հանգանանքներում անհրաժեշտ է գործադրել առավել մեղմ միջոցներ: Ամեն դեպքում մահվան ելքի նպատակառողիված ուժի գործ-

ադրումը կարող է տեղի ունենալ կյանքին սպառնացող անմիջական վտանգի դեպքում:» Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց կողմից ուժ և հրազեն գործադրելու մասին ՄԱԿ-ի հիմնական սկզբունքների 9-րդ սկզբունք:

«Իրավասպահ մարմինների ծառայողները ճերրակալված կամ կալանավորված անձանց հետ շփվելիս ուժ չպետք է գործադրեն՝ բացառությամբ հաստատությունում անվտանգություն և կարգուկանոն հաստատելու խիստ անհրաժեշտության կամ անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում:» Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց կողմից ուժ և հրազեն գործադրելու մասին ՄԱԿ-ի հիմնական սկզբունքների 15-րդ սկզբունք:

«Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձինք, ճերրակալված կամ բանտարկված անձանց հետ իրենց հարաբերությունների ընթացքում հրազեն չեն գործադրում, բացառությամբ՝ ինքնապաշտպանության, այլ անձանց մահվան կամ լուրջ վիրավորվելու անմիջական սպառնալիքից պաշտպանելու դեպքերի, կամ երբ դա խիստ անհրաժեշտ է 9-րդ սկզբունքին համաձայն վտանգ ներկայացնող կալանավորված կամ բանտարկված անձի փախուստը կանխելու համար:»: Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց կողմից ուժ և հրազեն գործադրելու մասին ՄԱԿ-ի հիմնական սկզբունքների 16-րդ սկզբունք:

«Բանտի անձնակազմը երբեմն ստիպված է լինում ուժ գործադրել վտանգավոր հանցագործներին զավելու նպատակով: Բացառիկ դեպքերում կարող է պահանջվել նաև ֆիզիկական զավան միջոցների գործադրում: Այդպիսի իրավիճակները խիստ վտանգավոր են, քանի որ բանտարկյալների հանդեպ դաժան վերաբերմունքը չի բացառվում, ուստի պահանջում են հասուկ երաշխիքներ: Բանտարկյալը, ում հանդեպ գործադրվել է զավան որևէ միջոց, իրավունք ունի հետազոտվել քժշկի կողմից և ցանկացած ժամանակ ստանալ անհրաժեշտ բուժում: Այդ հետազոտությունը պետք է կատարվի ոչ քժշկական անձնակազմի լսողությունից, իսկ հնարավորության դեպքում՝ նաև տեսադաշտից հեռու, իսկ հետազոտության արդյունքները (ներառյալ՝ բանտարկյալի բացատրությունները և քժշկի համապատասխան եզրակացությունները) պետք է պաշտոնապես գրանցվեն և մատշելի լինեն բանտարկյալի համար: Գրանցման ենթակա է բանտարկյալների դեմ ուժի գործադրման ցանկացած դեպք CPT, GR2, §53:

### **Անշափահասներ**

«Անձնակազմի կողմից զենքի գործադրումը պետք է արգելվի այն շինություններում, որտեղ պահպում են անշափահաս բանտարկյալները:» RPJDL, 65:

## Մեկնաբանություններ

I

Այցելություն կատարող թիմը պետք է պարզի՝ արդյո՞ք հաշվի են առնված անհրաժեշտության և համարժեքության սկզբունքները։ Նրանք պետք է հանողվեն՝ արդյո՞ք կիրառման հրահանգները և սահմանափակումներն ընդորլիված են բանտարյահն կանոններում, որքանո՞վ - են դրանք մատչելի բանտարկյալների համար, և որքանով է անձնակազմը պատրաստված վերահսկողության և զսպման տեխնիկայի հարցերում, ինչը նրանց բոլոր կտա վերահսկողությունն իրականացնել առանց իրենց կամ բանտարկյալներին վճար պատճառելու։ Բանտարկյալների հետ շփում ունեցող անձնակազմը չպետք է հրազեն կրի. սա համբողանուր սկզբունք է։ Եթե նրանք կրում են, ասենք՝ ոստիկանական մահակ, ապա դա չպետք է արվի ցուցադրաբար կամ պրովոկացիոն ձևով։ Ուժի կամ հրազենի գործադրման հետ կապված ցանկացած միջադեպի մասին հարկավոր է գրավոր գեկուցել տնօրենին։ Դեպքերը պետք է նաև գրանցվեն։

### Ծագրտման ենթակա հարցեր

- Արդյո՞ք անձնակազմը գենք կրում է,
- Ներպետական կանոնների համաձայն՝ ո՞ր անձնակազմին է բոլոր ստրվում հրազեն կրել,
- Ի՞նչ հաճախականությամբ են տեղի ունենում ուժի գործադրման դեպքերը (բանտարկյալներից, տնօրենից, մատյաններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկություններով):
- Կա՞ն արդյոք տեղեկություններ այս կամ այն փոքրամասնության ներկայացուցիչների հանդեպ ուժ գործադրելու ընթացքում խտրականության դրսորումների վերաբերյալ։

---

*Հետազարման մեջումներ*

Amnesty International, *Combating torture: a manual for action*, London, 2003. (Chapter 5.5: Conditions of detention; Discipline and security pp. 127-132 Camille Giffard,

*The Torture Reporting Handbook, How to document and respond to allegations of torture within the international system for the protection of human rights*, Human Rights Centre, University of Essex, United Kingdom, 2000.

United Nations Office of the High Commissioner for Human Rights, *Professional Training Series no. 8, Istanbul Protocol, Manual on the Effective Investigation and Documentation of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment*, New York, Geneva, 2001.

]Penal Reform International, *Making standards work, an international handbook on good prison practice*. London, 2001, pp.42-51.

Andrew Coyle, *Human Rights Approach to Prison Management. Handbook for prison staff*. International Centre for Prison Studies, 2003, pp. 69-81.

UN OHCHR, *Human Rights and Prisons - A manual on Human Rights Training for Prison Officials*, Geneva, 2003. (Section 2: right to physical and moral integrity, pp. 2133)

---

## ՊԱՌՏՊԱՆՈՒԹՅԱՆ

### ՄԻՋՈՑՆԵՐ

**2**

Այս հատվածի նպատակն է՝ քննության առնել բանտարկյալների իրավունքները և արժանապատվորյունը հարգելու պրակտիկա ձևափրելու զանազան միջոցները, որոնք ապահովում են պատժի համակարգի «հանդարտ» գործունեությունը: Այսպիսով՝ բանտում կարգուկանոն պահպանելն անհրաժեշտություն է, բայց այդ ընթացքում հարկավոր է պահպանել սահմանված կանոնները և ընթացակարգերը: Կարգապահական պատիժները պետք է զուգակցվեն երաշխիքներով, և բանտարկյալները պետք է իրավունք ունենան արդյունավետ և ազատորեն ներկայացնել իրենց բողոքները թե՛ հաստատության ներսում, թե՛ արտարին մարմիններին՝ չվախենալով հալածանքից: Անկախ տեսչական ստուգումների մեխանիզմները ևս նպաստում են ազատազրկված անձանց իրավունքների պահպանման մոնիթորինգին:

Վերջապես, կամ նաև այլ միջոցներ, որոնք նույնակեն հնարավորություն են տալիս երաշխավորել, որ հաստատություններում իրավիճակը բարձիրողի չէ և այն վերահսկելի է: Այդպիսի միջոցներ են՝ բանտարկյալներին ըստ խմբերի դասակարգելը, մատյանների վարումը, մարդկանց տեղեկացվածությունը հաստատության գործողությունների վերաբերյալ:

#### **Պաշտպանության միջոցներ**

- Սատյաններ,
- Բանտարկյալների տեղեկացվածություն,
- Տեսչական ստուգումներ,
- Կարգապահական ընթացակարգեր,
- Բողոք ներկայացնելու ընթացակարգեր,
- Բանտարկյալների դասակարգում ըստ խմբերի:

#### **Պաշտպանության միջոցներ**

##### **Կալանավորման մատյաններ**

##### **Չափանիշներ**

«1. Գրանցման ենթակա են.

- (ա) ձերբակալման (կալանավորման, ազատազրկման) պատճառները,
- (բ) տվյալ հաստատություն անձին թերելու և նրան դատական կամ այլ մարմիններին ներկայացնելու ժամկետները,
- (գ) իրավասահ մարմինների համապատասխան ծառայողների ինքնության պարզումը,

- (դ) ճշգրիտ տեղեկատվություն համապատասխան հաստատության վերաբերյալ:
2. Այսպիսի արձանագրությունը պետք է կալանավորին կամ իր փաստաբանին, եթե այսպիսին կա օրենքով սահմանված ձևով»:
- BPP, սկզբունք 12

2

1. Բոլոր կալանավայրերում պետք է վարվի կազմված և համարակալված գրանցամատյան, որտեղ պետք է գրառվեն հետևյալ տվյալները յուրաքանչյուր բանտարկյալի վերաբերյալ՝
- (ա) անձնական տվյալներ,
- (բ) բանտարկության պատճառները և այդ որոշումը կայացրած մարմինները
- (գ) բերվելու և ազատ արձակվելու օրը և ժամը:
2. Չի կարելի անձին ազատազրկման վայր ընդունել առանց ուժի մեջ մտած փաստաբորբի, որի տվյալները գրանցվում են մատյանում»: SMR, կանոն 6:

1. Անձը չի կարող պատժի հաստատություն ընդունվել առանց ուժի մեջ մտած փաստաբորբի:
2. Բանտարկության և անձին ընդունելու վերաբերյալ հիմնական տվյալները պետք է անմիջապես գրանցվեն մատյանում»: EPR, կանոն 7:

«Բանտարկյալների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար նրանք պետք է պահպեն այնպիսի վայրերում, որոնք պաշտոնապես ճանաչված են որպես կալանավորման վայրեր: Բանտարկյալների անունները և բանտերի անվանումները, ինչպես նաև տվյալ հաստատության պատասխանատու անձանց անունները պետք է գրանցվեն մատյաններում և անհապաղ տրամադրվեն գործին առնչվող անձանց, ներառյալ՝ բանտարկյալի ազգականներին ու ընկերներին»: GC 20, 11-րդ պարբերություն

Պետությունները պետք է «Երաշխավորեն, որ գրանցամատյաններ պետք է լինեն ցանկացած բանտում, որում պետք է գրանցվեն ձերբակալման օրը, ժամը, վայրը և պատճառը»: RIG, դրույթ 30: Տես նաև IDRCPD, հոդված 18:

### Մեկնաբանություններ

Պաշտոնական գրանցումը հիմնական պաշտպանից միջոցներից մեկն է: Այն նաև իշխանությունների թափանցիկությունը երաշխավորելու և բանտարկյալների պաշտպանության կարևոր տարր է: Այցելություն

կատարող թիմերի համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բանտարկյալներին համապատասխան վայր ընդունելու և ազատելու վերաբերյալ մատյանները, ինչպես նաև՝ ուժի և այլ կարգապահական միջոցների գործադրման վերաբերյալ մատյաններ»։ Գրանցման ենթակա են՝

## 2

- բանտարկյալի ինքնությունը,
- կալանավորման օրինական պատճառները,
- ձերբակալման ժամը,
- ձերբակալված անձին կալանավայր ընդունելու ժամը,
- բանտարկյալին դուրս հանելու (ասենք՝ քննության կամ դատական լուսմների մասնակցելու նպատակով) և կալանավայր վերադարձնելու ժամը,
- համապատասխան օրենքների կիրառման համար պատասխանատու անձանց ինքնությունը,
- հատուկ տեղեկատվություն անձի գտնվելու վայրի վերաբերյալ (որևէ բանտարկյալի գտնվելու վայրն անհապաղ պարզելու նպատակով):

Անհրաժեշտ է ունենալ նաև մի մատյան, որում պարբերաբար գրանցվեն տեղի ումեցած բոլոր միջադեպերը (ուժի գործադրում, կարգապահական միջոցներ և այլն)։ Որոշ առումով այցելության ծրագրի նախառակ է հանդիսանում բանտարկյալներին անհայտ կորեկուց պաշտպանելը։ Նման դեպքերում մատյաններում գետեղված տեղեկատվության ստուգումը վճռորոշ դեր ունի։ Այցելության արդյունքների ստուգումը պետք է ներառի բանտարկյալներին այլ վայր փոխադրելու կամ ազատ արձակելու վերաբերյալ տեղեկատվության ստուգումը։ Այդ ստուգումը կարող է տեղի ունենալ այլ կալանավայրեր կատարած այցի ընթացքում կամ բանտարկյալների ընտանիքների և ազատազրկված բանտարկյալների հետ շփման միջոցով։

**Ծագրտման ենթակա հարցեր**

- արդյո՞ք ելումուտի մատյանները խստիվ վարվում են,
- արդյո՞ք նշանակալի միջադեպերը գրանցվում են մատյանում,
- ինչպե՞ս է օգտագործվում մատյաններում գետեղված տեղեկատվությունը,
- Վարփո՞ւմ է արդյոք բանտարկյալների ազատ արձակման ժամանակագրական մատյան։

## Քանտարկյալների իրազեկում

### Չափանիշներ

«Յանկացած անձի ճերբակալման պահին և քանտարկության սկզբում համապատասխան վայրի վարչակազմն անհապաղ տեղեկատվություն է տրամադրում իր իրավունքների մասին, ինչպես նաև խորհրդատվություն՝ այդ իրավունքներից օգտվելու միջոցների մասին:» BPP, սկզբունք 13:

1. Քանտարկյալներն ընդունվելուն պես գրավոր տեղեկացվում են քանտարկյալների համապատասխան կատեգորիայի նկատմամբ վարչեցողության կանոններին, ազատազրկման տվյալ վայրում հաստատված կարգապահական պահանջներին, տեղեկատվություն ստանալու և բողոքներ ներկայացնելու քոյլատրելի միջոցներին, ինչպես նաև քանտարկյալի կողմից իր իրավունքները և պարտականությունները հասկանալուն և տվյալ վայրին հարմարվելուն առնչվող բոլոր հարցերին:

2. Եթե քանտարկյալը չի հասկանում գրավոր ներկայացված տեղեկությունները, ապա նրան բացատրում են քանավոր: EPR, կանոն 41»:

Պետությունը պետք է երաշխավորի, որ բոլոր քանտարկյալներն անհապաղ տեղեկացվեն իրենց կայանավորման պատճառների մասին: RIG, դրույթ 25: Տես՝ նաև ACPR, A-9 և IDRCPDL, հոդված 53:

### Մեկնարանություններ

Այցելություն կատարող թիմը պետք է ուսումնասիրի քանտարկյալների իի՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածության աստիճանը, այդ տեղեկատվության տրամադրման մեթոդների արդյունավետությունը, քանտարկյալների կողմից տեղեկատվությունը հասկանալու և դրանից հետագայում օգտվելու աստիճանը: Առաջին անգամ քանի մուտք գործելիս քանտարկյալները կարող են առավել խոցելի լինել: Տեղեկատվությունը տրամադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ հանգամանքը:

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է ստուգեն՝ արդյո՞ք քանտարկյալների ընտանիքների անդամները հնարավորություն ունեն տեղեկատվություն ստանալ հաստատության գործունեության վերաբերյալ, հատկապես՝ ինչ վերաբերում է այցերին, նամակագրությանը, առերես կամ հեռախոսային շփումներին:

### Շշգործման ենթակա հարցեր

- Ի՞նչ տեղեկատվություն են ստանում քանտարկյալները քանտ ընդունվելիս,

2

- ի՞նչ եղանակով,
  - արդյո՞ք տեղեկատվության լեզուն հասկանալի է (այլազգիների դեպքում կա՞ արդյոք որոշակի կանոն, որը կերպչխափորի նրանց տեղեկացումը) և արդյո՞ք հաշվի են առնված անգրագիտության դեպքերը,
  - արդյո՞ք ներքին կանոնները փակցված են երևացող տեղում և արդյո՞ք դրանք ցանկացած ժամանակ հնարավոր է ընթերցել,
  - արդյո՞ք դրանց բովանդակությունը համապատասխանում է բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի ոգուն,
  - արդյո՞ք դրանք հստակ են ձևակերպված:

## Տեսչական ստուգում

## Չափանիշներ

«1. Կալանավայրերում համապատասխան օրենքների և կանոնների խստիվ պահպանության նպատակով այդ վայրեր պարբերաբար այցելություններ են կատարում համապատասխան որակավորում ունեցող և փորձառու անձինք, որոնք նշանակվում են այդ հաստատությունների համար պատասխանատու մարմինների կողմից և պատասխանատու են, սակայն հաշվետու չեն դրանց:

2. Բանտարկյալը պետք է իրավունք ունենա 1-ին կետով սահմանված կարգով ազատորեն և զաղտնիության պայմաններում շփվել տվյալ վայր այցելող անձանց հետ՝ անվտանգությունն ու կարգուկանոնը պահպանելու պայմանվ։» BPP, սկզբունք 29:

«Պատժի հաստատըրյուններն ու ծառայությունները պետք է կանոնավոր տեսչական ստուգման ենթարկվեն որակյալ և փորձառու տեսուչ-ների կողմից, որոնց նշանակում են իրավասու իշխանությունները։ Տեսուչ-ները մասնավորապես պետք է համոզված լինեն, որ բանտարկության վայրերը դեկավարվում են բատ գործող օրենքների և հրահանգների, և որ նրանց աշխատանքը համապատասխանում է պատժի և ուղղիչ ծառայությունների առջև դրված խնդիրներին։» SMR, կանոն 55։

«Բողքների ներկայացման ընթացակարգը և տեսչական ստուգումները բանտերում դաժան վերաբերմունքի կանխման հիմնարար երաշխիքներից են։ Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան բողոքներ ներկայացնել թե՝ բանտային համակարգի ներսում և թե՝ դրանից դուրս, ներառյալ՝ հաճապատասխան մարմիններին գաղտնիության պայմաններում դիմելու հնարավորությունը։ ԽԿԿ-ն հատուկ կարևորություն է տալիս անկախ մարմնի կողմից բոլոր բանտային հաստատությունների վեհականության պահպանը»։

Եր կատարվող կանոնավոր այցերին (օրինակ՝ Այցելուների խորհրդի կամ հսկող դատավորի կողմից), որոնք իրավասու են քննարկել (անհրաժեշտության դեպքում՝ միջոցներ ձեռնարկել) բանտարկյալների բողոքները և տեսչական ստուգում նախաձեռնել հաստատության տարածքում: Ի դեպ, այդաիսի մարմինները կարող են կարևոր դեր խաղալ բանտերի փարչակազմի և բանտարկյալի կամ բանտարկյալների միջև հնարավոր հակառակությունների հարթման գործում:»: CPT, GR2, §54: Տես՝ նաև ACPR, A-16 և ADRSPDL, 9-րդ և 10-րդ հոդվածներ, 1-ին պարբերություն:

2

### **Մեկնարանություններ**

Ինչպես երևում է 1-ին գլխի բովանդակությունից, լրացուցիչ ներքին և արտաքին տեսչական ստուգումների համակարգերն անհրաժեշտ են բանտարկյալների իրավունքների պահպանումը երաշխավորելու համար: Դուք, որպես այցելություն կատարող մարմին, կազմում եք այդ համակարգերից մեկը: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան ազատորեն և զաղտնիության պայմաններում շփվել տեսչական մեխանիզմների հետ: Այցելություն կատարող մեխանիզմները պետք է մոնիթորինգի ենթարկեն տվյալ հաստատության փարչակազմի կողմից այդ մարմինների դիտողությունները և համձնարարություններին հետևելու աստիճանը:

---

### **Ծագուման ենթակա հարցեր**

- Տեսչական ստուգումների որևէ այլ ներքին մեխանիզմ գոյություն ունի՝ արդյոք,
  - ուղե՞ր են ընդգրկված դրա կազմում,
  - ի՞նչ համախականությամբ են կատարվում տեսչական ստուգումները:
  - արդյո՞ք բանտարկյալները հնարավորություն ունեն զաղտնի դիմել այդ մարմիններին:
  - կարո՞ղ է արդյոք այդ մարմինը ստանալ և քննել բողոքներ,
  - ո՞վ կարող է ծանոթանալ այդ մարմինների գեկույցներին: Արդյո՞ք այդ գեկույցները հրապարակվում են,
  - Ի՞նչ արդյունքներ են տալիս տեսչական ստուգումները:
- 

### **Կարգապահական ընթացակարգեր**

#### **Չափանիշներ**

«1. Զերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի վարվելակերպի

բնույթը, որն իրենից կարգապահական իրավախսախտում էր ներկայացնում ձերբակալման կամ կալանավորման ժամանակ, հնարավոր կարգապահական տույժի տեսակն ու տևողությունը, ինչպես նաև այն իշխանությունները, որոնց իրավասության մեջ է մտնում նման պատիժ նշանակելը, պետք է հստակ սահմանված լինեն պատշաճ կերպով իրավարակված օրենքներով կամ օրենքին համապատասխան հաստատված կանոններով:

## 2

2. Զերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի իր կարծիքն արտահայտել կարգապահական պատժամիջոցը նշանակվելուց առաջ: Նա իրավունք ունի այդ միջոցները գանգատարկել վերադաս նարմներին»: BPP, սկզբունք 30:

«Կարգապահությունը և կարգուկանոնը հարկավոր է պահպանել խստիվ՝ կիրառելով միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են հիմնարկում հսկողության հուսալիությունը և համակեցության պատշաճ կանոնների պահպանումն ապահովելու համար»: SMR, կանոն 27:

«Հետևյալ գործոնները մշտապես պետք է սահմանվեն օրենքով կամ իրավասու վարչական իշխանությունների կարգադրություններով.

ա) կարգապահական զանցանք համարվող վարքագիծը.

բ) այն տույժի տեսակն ու տևողությունը, որին կարող է ենթարկվել բանտարկյալը.

գ) տույժ նշանակելու իրավունք ունեցող մարմինը»: SMR, կանոն 29:

«Հարկավոր է արգելել մարմնական տույժերը, մուր խցում փակելը և դաժան, անմարդկային և մարդկային արժանապատվությունը նսեմացնող պատժատեսակները կարգապահական զանցանքների համար կիրառելը»: SMR, կանոն 31 (տես՝ նաև 28 և 30 կանոններ):

Կարգապահական միջոցների համակարգի և դրա կիրառման պրակտիկայի ներդրումը բխում է թե՛ բանտարկյաների և թե՛ բանտային անձնակազմի շահերից, քանի որ այս բնագավառում ցանկացած անորոշություն կարող է ոչ պաշտոնական (և անվերահսկելի) համակարգերի առաջացման պատճառ դառնալ: Կարգապահական ընթացակարգերը պետք է ներառեն բանտարկյաներին մեղսագրվող խախտման վերաբերյալ կարծիք հայտնելու և կիրառված տույժի վերաբերյալ վերադաս նարմիններին դիմելու՝ բանտարկյան իրավունքը:

Վարչական կարգապահական ընթացակարգերի հետ մեկտեղ գոյություն ունեն այլ ընթացակարգեր ևս, որոնց հիման վրա բանտարկյալը կարող է իր կամքին հակառակ առանձնացվել այլ բանտարկյաներից՝ կարգապահական/անվտանգության նկատառումներից ելնելով (ասենք՝ հաստատության ներսում պատշաճ կարգուկանոն հաստատելու համար): Այդ կանոնները պետք է ուղեկցվեն արդյունավետ երաշխիքներով: Բանտարկյալը պետք է տեղեկացվի իր դեմ նման միջոց կիրառելու պատճառի

մասին, և եթե անվտանգության պահանջները թույլ են տալիս, նրան պետք է հնարավորություն տրվի հայտնելու իր կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ և համապատասխան մարմիններին բողոքարկելու իր դեմ կիրառված միջոցը»: CPT, GR2, §55: Տես՝ նաև ACPR A-3,A-6,A-12 և IDRSPDL, հոդված 47, 1-ին պարբերություն և հոդված 49:

## Մեխանարքություններ

2

Այցելություն կատարող մեխանիզմը պետք է ուսումնասիրի՝ արդյո՞ք տույժերի համակարգը ձևակերպված է որպես բանտարկյալներին և անձնակազմին պարզաբանված կանոնների հստակ ժողովածու, և արդյո՞ք կարգապահական բոլոր խախտումների ցանկը հրապարակված: Մեխանիզմները պետք է հանողվեն, որ կանոնները հստակ սահմանում են, թե ինչն է խախտում հանդիսանում, և ինչ պատիժ է նախատեսված դրա համար. այն մարմինը, որը կարող է կիրառել կարգապահական միջոցները, և այն ընթացակարգը, որի միջոցով տույժի ենթարկված անձը կարող է հայտնել իր կարծիքը կիրառված տույժի վերաբերյալ և բողոքարկել այն:

Մեխանիզմը պետք է հետաքրքրություն ցուցաբերի կանոնների մասին իրազեկելու, և դրանք կիրառելու մեթոդների համեմետ:

Մեխանիզմը պետք է հետաքրքրություն ցուցաբերի նաև կարգապահական կանոնների բնույթի հանդեպ (արդյո՞ք դրանք սահմանված են կարգուկանոնի և հստակ դեկազման անհրաժեշտության և անհատների արժանապատվությունը հարգելու անհրաժեշտության միջև հավաարակշռությունը հաշվի առնելով):

Ընթացակարգերի բնույթը ևս մեխանիզմի համար պետք է ուսումնասիրության առարկա հանդիսանա: Ընթացակարգերը պետք է հնարավորինս համապատասխաննեն դատավարական երաշխիքներին, ասենք՝ ներկայացնության առումով:

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է մտապահեն, որ կարգապահական տույժերը կարող են վերածվել դաժան վերաբերմունքի, եթե դրանք կիրառվում են կատարված զանցանքի ծանրությանը ոչ համաչափ, եթե կամայական են կամ անտեղի հիասքափություն կամ տառապանը են պատճառում:

Մեխանիզմները պետք է հայտնաբերեն կարգապահությունը բանտարկյալների օրինական դասակարգման միջոցի փոխակերպելու բոլոր միտումները: Դա արգելված է:

### **Ծագուման ներակա հարցեր**

- Վարքի ի՞նչ դրսելորումներն են պատժելի համարվում,
- ո՞վ է որոշում ընդունում տույժ կիրառելու վերաբերյալ և ինչի՞ հիման վրա (գրավոր/բանավոր գեկուցագիր),
- արդյո՞ք անձը հնարավորություն ունի պաշտպանել ինքն իրեն,
- արդյո՞ք անձը տեղեկացված է իրեն ներկայացված մեղադրանքի մասին,
- կիրառված տույժերի բնույթը և տևողությունը,
- ինչպես է գործում բողոքարկման մեխանիզմը,
- արդյո՞ք եղել են դեպքեր, երբ բողոքարկումը դրական հետևանք է ունեցել բանտարկյալի համար,
- քանի՞ անձ է պատժվել տրված ժամանակամիջոցի ընթացքում (թիվը համեմատելով բանտարկյալների ընդհանուր թվի հետ),
- եղե՞լ են արդյոք դեպքեր, երբ տույժ կիրառելիս խորականություն է դրսերվել փորբանանության ներկայացուցիչների հանդեպ,
- եղե՞լ են արդյոք դեպքեր, երբ տույժի իրականացման ընթացքում ընդգրկվել են այլ բանտարկյալներ:

### **Բողոքներ ներկայացնելու ընթացակարգը**

#### **Չափանիշներ**

«1. Զերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը կամ նրա դատապաշտպանն իրավունք ունեն ձերբակալման կամ կալանավայրի կառավարման համար պատասխանատու մարմին և ավելի բարձր ատյաններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գանգատները քննարկելու կամ պաշտպանության միջոցներ տրամադրելու լիազորված հանապատասխան մարմիններ ուղարկել խնդրագիր կամ գանգատ տվյալ անձի նկատմամբ վարվեցողության վերաբերյալ, մասնավորապես խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող այլ վարվելաձևի դեպքում:

2. Այն դեպքերում, երբ ո՞չ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը, ո՞չ նրա դատապաշտպանը հնարավորություն չունեն իրականացնել նրա իրավունքները 1-ին կետին համապատասխան, նման իրավունք կարող է իրականացնել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի ընթանիքի անդամը կամ որևէ այլ անձ, որն իրազեկ է այդ գործին:

3. Ապահովում է խնդրագրի կամ գանգատի գաղտնիությունը, եթե այդ մասին խնդրում է խնդրագիր կամ գանգատ տվյալը:

4. Ցուրաքանչյուր խնդրագիր կամ գանգատ անհապաղ քննարկվում է,

և պատասխանը տրվում է առանց անտեղի ճգճգման: Այդ խնդրագրի կամ գանգատի մերժման կամ չարդարացված ճգճգման դեպքում խնդրագիր կամ գանգատ տվողը կարող է այն ուղարկել դատական կամ այլ մարմին: Ինչպես ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը, այնպես էլ ցանկացած խնդրագիր կամ գանգատ տվող, 1 կետին համապատասխան, չեն կարող հալածանքների ենթարկվել խնդրագիր կամ գանգատ տալու համար::»: ВРР, սկզբունք 33:

2

«36.1. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է աշխատանքային օրերին հիմնարկի տնօրենին կամ նրա կողմից լիազորած աշխատակցին դիմումներով կամ բողոքներով դիմելու հնարավորություն ունենա:

2. Տեսչական ստուգումների ժամանակ, հնարավորության դեպքում, բանտարկյալները պետք է ի վիճակի լինեն դիմումներով ու բողոքներով ներկայանալու բանտարյին տեսուչներին: Նրանք պետք է իրավունք ունենան խստելու տեսուչի կամ տեսչական խմբի մեկ այլ աշխատողի հետ՝ հիմնարկի տնօրենի կամ մյուս աշխատողների բացակայությամբ:

3. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է հնարավորություն ունենա դիմումներով ու բողոքներով դիմելու կենտրոնական բանտարյին վարչության մարմիններին, դատական իշխանություններին կամ իրավասու այլ մարմինների. դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն բովանդակային տեսակետից, սակայն պետք է կազմված լինեն պատշաճ ձևով և փոխանցվեն դրա համար նախատեսված ուղիներով:

4. Բացի այն դեպքերից, երբ նման դիմումներն ունեն մակերեսային կամ վերացական բնույթ, դրանք ենթակա են անհապաղ ըննության և դրանց հարկավոր է պատասխանել առանց ավելորդ ճգճգումների: SMR, կանոն 36: Տես նաև ACPR, A-7-a), b) և c), IDRCPDL, հոդված 50, 1-ին պարբերություն և հոդված 54:

### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարող մեխանիզմը պետք է ուսումնասիրի՝ բանտարկյալները տեղյա՞կ են եղել արդյոք ամենօրյա բանտարյին կյանքի տարբեր հարցերը վիճարկելու միջոցներին: Բողոքներ ներկայացնելու ընթացակարգի ձևը և բովանդակությունը կամ դրանց բացակայությունը կարող է կարևոր ցուցանիշ հանդիսանալ բանտարկյալների հանդեպ կիրավող վերաբերմունքի մակարդակի առումով:

Բողոք ներկայացնելու ի՞նչ աստիճաններ կարող են գոյություն ունենալ: Առաջին աստիճանում բողոքը կարող է հասցեագրված լինել անմիջապես հաստատության տնօրենին: Բանտարկյալը հնարավորություն ունի՝ արդյոք առանց գրաքննության և գաղտնի բողոք ներկայացնել վերադ-

աս մարմնին:

Սեխանիզմը պետք է ուսումնասիրի՝ բանտարկյալները հնարավորություն ունե՞ն արդյոք առանց գրաքննության դիմելու արտաքին՝ բանտային փարչակազմից անկախ մարմիններին:

**2**

### Այցելություն կատարող մեխանիզմը պետք է մոնիթորինգի ենթարկի բողոքներ ներկայացնելու համակարգը:

- արդյո՞ք ընթացակարգը հանապատասխանում է արդարության և օրինականության պահանջներին,
- որքանո՞վ են դրանք մատչելի բանտարկյալների համար,
- արդյո՞ք ընթացակարգը թափանցիկ է,
- արդյո՞ք նրանք, ովքեր հանձն են առել բողոքների քննումը, օբյեկտիվ և անկողմնակալ են,
- արդյո՞ք համակարգը հարմարեցված է բանտարկյալի և իրավիճակի պահանջներին (ձկունություն),
- արդյո՞ք բողոք ներկայացնողը ժամանակին արձագանք է ստանում իր բողոքի Էության վերաբերյալ (արդյունավետություն),
- վիճակագրություն վարվո՞ւմ է արդյոք բողոքներին տրված արձագանքների վերաբերյալ, արդյո՞ք այն վերլուծվում և դրա հետ կապված աշխատանք է տարվում:

Բողոք ներկայացնելու մեխանիզմները պետք է քննվեն տեսչական ստուգումներին ներկայացվող պահանջներին համապատասխան, քանի որ տեսչական ստուգումներ իրականացնող մարմինները պետք է ունենան բողոքներ ստանալու և քննելու հնարավորություն (տես՝ «Տեսչական ստուգում» բաժինը):

### Ցագրուման ենթակա հարցեր

- Բողոք ներկայացնելու ի՞նչ միջոցներ կարող են օգտագործել բանտարկյալները,
- բաղոքարկման բնույթը (փարչական/դատական),
- ինչպե՞ս է իրականացվում բաղոքարկման ընթացակարգը. ո՞ւմ է ուղղված և ինչպե՞ս,
- արդյո՞ք ընթացակարգը մատչելի է ցանկացած բանտարկյալի համար (ներառյալ՝ օտարերկրացի, անգրագետ կամ կիսագրագետ անձանց),
- այլ անձինք հնարավորություն ունե՞ն արդյոք բանտարկյալների փոխարեն բողոք ներկայացնել տվյալ հաստատության վարչակազմին,
- վերջին վեց ամսվա ընթացքում քանի՞ բողոք է ներկայացվել (համ-

- 
- եմատել բանտում պահվող անձանց միջին թվի հետ),
- ընթացիկ բողոքների բնույթը,
  - առավել հաճախ ի՞նչ հետևանք կամ արդյունք են ունենում բողոքները,
  - բողոքներից քանի՞ն է վճռվել բողոքը ներկայացնողի օգտին,
  - բողոք ներկայացնելու կապակցությամբ ճնշումների դեպքեր արձանագրվել են արդյոք:
- 

2

### **Բանտարկյալների դասակարգում՝ ըստ խմբերի**

#### **Չափանիշներ**

«2. (ա) Մեղադրյալները պետք է պահվեն դատապարտյալներից անջատ. նրանց հանդեպ կիրապվում է նրանց կարգավիճակին համապատասխան ռեժիմ, բացառությամբ՝ առանձին դեպքերի,

(բ) Մեղադրյալ անչափահասները պետք է չափահասներից անջատ պահվեն և հնարավորին կարճ ժամանակամիջոցում նրանք պետք է կանգնեն դատարանի առջև»: ICCPR, հոդված 10.2:

10-րդ հոդվածի 2 (ա) պարբերությունը սահմանում է մեղադրյալներին դատապարտյալներից անջատ պահելու պահանջ՝ առանձին դեպքերում բույլարվող բացառություններով հանդերձ: Այդ առանձնացումն անհրաժեշտ է այդ անձանց չդատապարտվածի կարգավիճակն ընդգծելու համար, քանի որ նրանք օգտվում են անմեղության կանխավարկածից՝ 14-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանված կարգով:» GC 21, 9-րդ պարբերություն:

«Բանտարկյալների տարբեր խմբերը պահվում են առանձին հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի առանձին մասերում՝ հաշվի առնելով նրանց սեռը, տարիքը, նախկին դատվածությունը, բանտարկության իրավական պատճառները և դրանցից բխող վերաբերմունքը: Այսպիսով՝

ա) հնարավորության դեպքում կանանց և տղամարդկանց պետք է պահել առանձին հիմնարկներում. եթե կանայք և տղամարդիկ պահվում են միևնույն հիմնարկում, ապա կանանց պետք է տեղավորել բացարձակապես անջատ մասնաշենքերում.

բ) չդատապարտված բանտարկյալներին պետք է տեղավորել դատապարտյալներից անջատ.

գ) այն անձանց, ովքեր դատապարտվել են պարտքի հանձնառությունը չկատարելու համար, ինչպես նաև քաղաքացիական գործերով մյուս

բանտարկյալներին պետք է տեղափորել քրեական հանցագործություն կատարած անձանցից անջատ.

դ) մանկահասակ իրավախախտներին պետք է պահել մեծահասակներից անջատ:»: SMR, կանոն 8:

**2**

«1. Բանտարկյալներին ըստ տարբեր հիմնարկների բաշխելիս և ռեժիմի տեսակն ընտրելիս հաշվի է առնվում դատարանի կողմից սահմանված նրանց իրավական կարգավիճակը (մեղադրյալ է, թե դատապարտյալ, առաջին անգամ է դատապարտված, թե առկա է ռեցիլիվ, ազատազրկման է դատապարտվել կարճատև, թե երկարատև ժամկետով), ուղղիչ ներգործության առանձնահատուկ պահանջները, առողջական վիճակը, սեղը և տարիքը:

2. Կանայք և տղամարդիկ, որպես կանոն, պետք է պահվեն անջատ, սակայն նրանք կարող են համատեղ մասնակցել ուղղիչ ներգործության ծրագրային միջոցառումներին:

3. Մեղադրյալները, որպես կանոն, պետք է անջատ պահվեն դատապարտյալներից, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք փոխադարձ համաձայնությամբ համատեղ մասնակցում են իրենց համար կազմակերպված օգտակար միջոցառումներին:

4. Անչափահաս բանտարկյալները պետք է պահվեն այնպիսի պայմաններում, որոնք նրանց առավելագույնս կպաշտպանեն վտանգավոր ազդեցությունից և հաշվի կառնեն նրանց տարիքային պահանջմունքները:»: EPR, կանոն 11:

«Սկզբունքքային իմաստ ունի այն, որ կին բանտարկյալները պետք է պահվեն այնպիսի խցերում, որոնք առանձնացված են նույն հաստատությունում պահպող տղամարդկանց խցերից: Որոշ երկրներ սկսել են խցեր կառուցել զույգերի համար (ազատազրկված) և/կամ որոշակի պայմաններ ստեղծել բանտում խառնասեն խցեր հիմնելու համար: ԽԿԿ-ն ողջունում է այդպիսի առաջադեմ նախաձեռնությունը, պայմանով, որ դա արվի բանտարկյալների համաձայնությամբ, և որ նրանց համատեղելիությունն ուսումնասիրվի ամենայն խնամքով: CPT, GR10, § 24: Տես՝ նաև SMR, կանոն 85, EPR 12 և 13 կանոններ, ACPR, B-1-b ) և IDRCPDЛ, հոդված 16:

### Անչափահասներ

«10-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն անչափահաս իրավախախտները պետք է առանձնացվեն չափահասներից, և նրանց պետք է

վերաբերվել իրենց տարիքին և իրավաբանական կարգավիճակին համապատասխանող բանտարկության պայմաններին համապատասխան»:

GC 20, 13-րդ պարբերություն:

«Կալանավորման բոլոր վայրերում անշափահասները պետք է պահպեն չափահասներից առանձին, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք նոյն ընտանիքի անդամներ են: Անշափահասները հսկողության պայմաններում կարող են պահպել համատեղելիության առումով ընտրված չափահասների հետ՝ որպես չափահասների համար օգտակար հատուկ ծրագրի մաս»» RPJDL, կանոն 29:

2

### Մեկնաբանություններ

Բանտարկյալներին անջատ պահելու դեկավար սկզբունքը հանդիսանում է տարբեր խմբերի բանտարկյալների հատուկ պահանջների և կարգավիճակի ճանաչում և պաշտպանություն: Բանտարկյալները չպետք է միմյանցից առանձնացվեն այս սկզբունքներում չամրագրված հիմքերով:

- Որպես կանոն՝ բանտարկյալներն անջատ են պահպում ըստ՝
  - սեփի, տարիքի. տղամարդիկ՝ կանանցից, անշափահասները՝ չափահասներից,
  - դատական կամ իրավական կարգավիճակի պատճառով. մեղադրյալները՝ դատապարտյալներից:

Այցելություն կատարող մեխանիզմը բանտարկության պայմանները պետք է դիտարկի հատուկ կարիքների պաշտպանության տեսակետից: Առանձնացումը պետք է հիմնված լինի բանտարկյալներին սպառնացող իրական վտանգի օբյեկտիվ գնահատման վրա: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան պահանջելու առանձնացնել իրենց՝ պաշտպանվածության նկատառումներից ելնելով: Որոշ բանտարկյալների կարող է հարկ լինել առանձնացնել այլ բանտարկյալների կողմից սպառնացող տարաբնույթ պատճառներով, օրինակ՝ ազգային, կրոնական, սեռական կողմնորոշման: Մեխանիզմները պետք է տեղյակ լինեն բանտարկյալների որոշ խմբերի վրա առանձնացնան բացասական հետևանքների մասին: Օրինակ, հայտնի է, որ բանտում պահպողների թվից կանայք և անշափահասները կազմում են փոքրամասնություն, ուստի նրանց առանձին խցերում պահելու արդյունքում վերջիններս հաճախ խզում են կապն ընտանիքի և ընկերների հետ: Դատարանի որոշմանը սպասող բանտարկյալները, չնայած անմեղության կանխավարկածին, պահպում են առավել վատրար պայմաններում և արտաքին աշխարհի հետ շփման ավելի նվազ հնարավորություններով, քան արդեն իսկ դատապարտվածները:

Չկա որևէ բժշկական հիմնավորում բանտարկյալների մոտ ՄԻԱՎ հայտնաբերելու դեպքում վերջիններիս մյուսներից անջատ պահելու համար:

Այցելուրյուն կատարող մեխանիզմները պետք է համոզվեն՝ արդյո՞ք բանտարկության սկայմանները բավարարում են անգործունակ և զառամայլ բանտարկյալների հատուկ կարիքները, երբ նրանք պահվում են նույն բանտում պատիժ կրող առողջ բանտարկյալների հետ:

Մեխանիզմները չպետք է մոռանան փոխադրումների ժամանակ անձանց պաշտպանության մասին:

Անշափահաս բանտարկյալները պետք է պահվեն այնպիսի շինություններում և պայմաններում, որոնք հատուկ հարմարեցված են նրանց պահանջներին:

## **Ծագրտման ենթակա հարցեր**

- Անշափահասներն օրվա բոլոր ժամերին հուսալիորեն պաշտպանված են արդյոք չափահաս բանտարկյալների ազդեցությունից:
- Բուկ այն կալանավայրերում, որտեղ պահվում են բանտարկյալների տարրեր խմբեր՝
- Կին բանտարկյալները 24 ժամ շարունակ հուսալիորեն առանձնացված են արդյոք արական սեղի բանտարկյալներից,
- արդյո՞ք նրանք գտնվում են հիմնականում կանանցից բաղկացած անձնակազմի ենթակայության տակ,
- արդյո՞ք խոցելի բանտարկյալներին տրամադրվում են առանձին խոցեր՝ նրանց անվտանգությանը սպառնացող վտանգ առաջանալուն պես:

Այն վայրերում, որտեղ բանտարկյալները պահվում են հանրակացարաններում՝

- ո՞վ է որոշում շենքային պայմանների բնույթը և ինչի՞ հիման վրա,
- կարո՞ղ է արդյոք բանտարկյալը խնդրել, որ իրեն փոխադրեն մեկ այլ խուց,
- եթե այս՝ ինչի՞ հիման վրա,
- ինչպե՞ս է անձնակազմը կանխարգելվում և հետաքննում բռնությունների, հատկապես՝ միևնույն սեղին պատկանող բանտարկյալների կողմից միմյանց հանդեպ սեռական բռնության սպառնալիքը,
- եղե՞լ են արդյոք դեպքեր, երբ փոքրամասնության ներկայացուցիչները պահվել են այլ բանտարկյալներից անջատ՝ անվտանգ-

---

ուրյան նկատառումներից բացի այլ պատճառներից ելնելով:

---

**Հետազա ընթերցումներ**

PRI, *Making standards work*, London 2001. (Section II Due process and complaints, pp. 29-54; Section VIII, Inspections, pp. 167-174)

UN HCHR, *Human Rights and Prisons*, Geneva 2003 (Section 5 Making prisons safe places, pp. 72-75)

Andrew Coyle, *A Human Rights Approach to Prison Management*, 2003. (Chapter 6: Disciplinary procedures and punishments, pp.75-82; Chapter 9 Requests and complaints pp.105-110, Chapter 10: Inspection procedures, pp.111-116)

AI, *Combating torture*, London 2003. (Chapter 5 Conditions of detention, pp. 133; 139-143)

---

## ՆՅՈՒԹԱԿԱՆ

---

### ՊԱՅՄԱՆՆԵՐ

Այցելություն կատարող մեխանիզմներն իրենց ժամանակի զգալի մասը տրամադրում են բանտարկության նյութական պայմանների ուսումնասիրմանը:

**3**

Անձին ազատությունից զրկելով իշխանությունները պարտավորություն են ստանձնում՝ ապահովելու այդ մարդկանց հանապազօրյա կարիքները: Ազատազրկումն ինքնին պատիժ է: Պետությունն իրավունք չունի օրենսդրությամբ չնախատեաված պայմաններով էլ ավելի վատքարացնել բանտարկյալների դրությունը:

Բանտերում տանելի կենսապայմանների առկայությունը կարևոր է բանտարկյալի մարդկային արժանապատվությունը պահպանելու համար: Կենցաղային տարածությունը, սնունդը և հիգիենան հանդիսանում են այն բոլոր գործոնները, որոնք նպաստում են բանտարկյալների արժանապատվության զգացումը պահպանելուն:

Այցելողները պետք է քննության առնեն կարանավայրի պայմաններն ամբողջությամբ. Էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը, աղբահանությունը և մաքրությունը մարդկային արժանապատվության կարևոր խնդիրներ են:

Այցելողները չպետք է մոռանան բանտարկյալների բնակելի, ինչպես նաև՝ ծառայողների աշխատանքային պայմանների մասին:

Կալանավորնան պայմաններից բացի, ամենակարևոր խնդիրներից է հանդիսանում գերբնակեցումը, քանի որ այն բացասական ազրեցություն է ունենում բանտարկության բոլոր ասպեկտների և հաստատությունում տիրող ընդհանուր մքննորսի վրա: Եթե գերբնակեցումը հասնում է որոշակի նակարդակի կամ զուգորդվում է այլ բացասական գործոնների հետ, այն կարող է դիտվել որպես անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք:

### Նյութական պայմաններ

- Սնունդ.
- Լուսավորություն և օդափոխություն.
- Անձնական հիգիենա.
- Սանիտարական պայմաններ.
- Հագուստ և անկողնային պարագաներ.
- Գերբնակեցում և շենքային պայմաններ:

3

### Սնունդ

#### Չափանիշներ

«1. Բանտային վարչակազմը պետք է ստվորական ժամերին յուրաքանչյուր բանտարկյալի ապահովի նրա առողջությունն ու ուժերը պահպանելու համար բավականաչափ սննդարար, լավորակ, լավ պատրաստված և մատուցված սննդով:

2. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է խմելու ջուր ունենա ցանկած ժամանակ, եթե ունենա դրա անհրաժեշտությունը»: SMR, կանոն 20:

«1. Առողջապահական մարմինների կողմից սահմանված պահանջներին համապատասխան, դրա համար նախատեսված ժամերին վարչակազմը բանտարկյալներին ապահովում է սննդի որակային և բանակային նորմաներին և ժամանակակից հիգիենայի կանոններին համապատասխանող սննդով՝ հաշվի առնելով բանտարկյալների տարիքը, առողջական վիճակը, աշխատանքի բնույթը և, հնարավորին սահմաններում բանտարկյալների կրոնական և մշակութային ստվորույթները:

2. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է ցանկացած ժամանակ խմելու ջրից օգտվելու հնարավորություն տրվի»: EPR, կանոն 25: Տես՝ նաև ACPR, A-11 և IDRCPDL, հոդված 32:

#### Անշափահասներ

«Կերակրացանկի կրծատումը և ընտանիքի անդամների հետ շփվելու թույլտվության մերժումը պետք է բացառվի»: RPJDL, կանոն 67:

#### Մեկնարանություններ

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է մշակեն այնպիսի մերժութանություն, որը նրանց բույլ կտա կանոնավորապես ստուգել՝ բանտարկյալների կերակրացանկը լիարժե՞ք է արդյոք սննդի բանակի,

որակի, բազմազանության առումով, և բանտարկյալները չե՞ն տառապում արդյոք թերանմաճը: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան մշտապես օգտվելու խմելու ջրից:

Որոշ երկրներում սնունդը լրացվում է բանտարկյալի ընտանիքի բերած սննդով: Նման դեպքերում այցելողները պետք է մոնիթորինգի ենթարկեն այն անձանց վիճակը, ովքեր դրսից սնունդ չեն ստանում. արդյո՞ք անձնակազմն առանձնակի ուշադրություն է դարձնում նրանց և բավարարում է նրանց կարիքները:

Այցելություն կատարողները պետք է նաև ուշադրություն դարձնեն հիգիենայի և բանտարկյալի արժանապատվության հետ կապված այլ հարցերին, ինչպես, օրինակ՝ կերակրի մատուցման ժամեր և ձև, ուտելու համար հատկացված ժամանակ:

### 3

#### **Ծագրտման ենթակա հարցեր**

- Կերակրի քանակի, որակի և բազմազանության ի՞նչ չափանիշներ գոյություն ունեն: Ո՞վ է սահմանում ճաշացանկը: Ի՞նչ դեր ունի բուժանձնակազմն այդ գործում,
- պետական բյուջեից տարեկան որքա՞ն է հատկացվում բանտարկյալների համար (օրվա ընթացքում յուրաքանչյուր բանտարկյալն հատկացվող գումարի չափը),
- Ե՞րբ են սնունդը ընդունելու ժամերը: Արդյո՞ք սնունդը ընդունելու ժամերի միջև ընկած ժամանակահատվածը բավարար է,
- արդյո՞ք բանտարկյալներին սնունդը մատուցվում է պատշաճ հարգանքով: Արդյո՞ք բացասական խտրականություն գոյություն ունի կերակրի բաշխման ձևի և բանտարկյալներին ճաշարանում աշխատանքի տեղավորելու միջև,
- արդյո՞ք բանտարկյալները կարող են ջուր օգտագործել սնունդը ընդունելու ժամերից դուրս,
- ջրամատակարարման ո՞ր տեսակն է հասանելի: Արդյո՞ք ջուրը մաքուր է և հասանելի տարվա բոլոր եղանակներին,
- կա՞ն արդյոք հատուկ ճաշարաններ հիվանդների, զառամյալների և երեխա ունեցող ճայրերի համար,
- արդյո՞ք հարգվում է կրոնական նկատառումներով ճաշացանկը սահմանափակելու վերաբերյալ կանոնը,
- արդյո՞ք կերակրացանկը կազմելիս հաշվի է առնվել բանտարկյալների ազգային պատկանելությունը,
- բանտի ներսում կա՞ արդյոք որևէ խանոթ կամ ճաշարան, որտեղից բանտարկյալները կարող են սնունդ գնել: Եթե այս՝ ինչ կարգով: Ո՞վ է սահմանում խանութի տեսականին,

- ի՞նչ պրակտիկա և կանոններ են գործում սնունդ բերող ընտանիքների համար,
- ի՞նչ վիճակում է այն խոհանոցը, որտեղ սնունդը պատրաստվում է: Արդյո՞ք խոհանոցում կանոնավորապես գործում են առողջապահության և անվտանգության կանոնները:

## Լուսավորություն և օդափոխություն

3

### Չափանիշներ

«Այն շինություններում, որտեղ ապրում և աշխատում են բանտարկյալները.

ա) լուսամուտները պետք է ունենան բավարար չափեր, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ և աշխատել ցերեկային լույսի ներքո, և պետք է նախագծված լինեն այնպես, որպեսզի ապահովվի թարմ օդի մուտքը՝ անկախ այն բանից՝ գոյություն ունի՝ օդափոխման արհեստական համակարգ, թե՝ ոչ.

բ) արհեստական լուսավորությունը պետք է բավարար լինի, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ կամ աշխատել՝ առանց տեսդուրյունը վտանգելու::» SMR, կանոն 11 (տես՝ նաև EPR, կանոն 16):

«1. Բժիշկը պարտավոր է կանոնավորապես իրականացնել տեսչական ստուգումներ և տնօրենին զեկուցել հետևյալ հարցերի մասին.

գ) սանիտարական պայմանները, ջեռուցումը, հիմնարկի լուսավորությունն ու օդափոխությունը::» SMR, կանոն 26:

**ԽԿԿ-Ն** համախ դիտողություններ է ներկայացնում այնպիսի պարագաների վերաբերյալ, ինչպիսիք են՝ մետաղյա ճաղերը, խցերի պատուհանների շերտավարագույրները, ինչը բանտարկյալներին զրկում է խուզ բնական լույսի և մաքուր օդի մուտքից: Դա հատկապես հանդիպում է մինչդատական կալանքի հաստատություններում: **ԽԿԿ-Ն** միանշանակորեն ընդունում է, որ անվտանգության միջոցները, որոնք անհրաժեշտ են դավադրությունները և/կամ քրեական հանցագործությունների վտանգը կանխելու համար, կարող են անհրաժեշտ լինել որոշ բանտարկյալների առումով:

Այդուհանդերձ, այդպիսի միջոցների կիրառումը մեծամասամբ պետք է լինի բացառության կարգով, քան որպես կանոն: Դա նշանակում է, որ համապատասխան մարմինները պետք է քննության առնեն յուրաքանչյուր բանտարկյալի գործ՝ որոշելու համար, թե որքանո՞վ են արդարացված անվտանգության հատուկ միջոցներն այս կամ այն բանտարկյալի առումով: Եվ եթե անգամ այսպիսի միջոցներն անհրաժեշտ են, անձնակազմը

Երբեք չպետք է տույժի ենթարկված բանտարկյալին զրկի բնական լույսից և մաքուր օդից:

Դրանք բանտարկության պայմանների կարևորագույն գործոններից և բանտարկյալների կարևորագույն իրավունքներից են, իսկ դրանց բացակայությունը նաև ստում է հիվանդությունների, հատկապես՝ բորբախատի զարգացման համար:

**ԽԿԿ-ն** ընդունում է, որ պատմիչ հաստատություններում պատշաճ կենսապայմանների ապահովումը կարող է շատ բանկ լինել, և շատ երկրներում բարեփոխումների իրականացումը դժվարանում է անբավարար արգելափակող պարագաների հեռացումը (բացառիկ անհրաժեշտության դեպքերում դրանց փոխարեն անվտանգության այլընտրանքային միջոցների կիրառմամբ) զգալի ներդրումներ հազիվ թե պահանջի և օգտակար կլինի բոլորի համար»: CPT, GR 11, § 30:

### Սեկնարանություններ

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է մոնիթորինգի ենթարկեն այն, թե ինչ չափով են բանտարկյալները ստանում բնական լույս, մաքուր օդ և համապատասխան ջերմաստիճամբ ջեռուցում. դա կարող է կատարվել այցելողների կողմից դիտարկումներ կատարելու և բանտարկյալներին ու անձնակազմին հարցեր ուղղելու միջոցով:

Այցելություն կատարողներն օդափոխությունը պետք է գնահատեն՝ բնակելի տարածության չափից և պայմաններից ելնելով: Պատուհանները չպետք է փակված լինեն այնպես, որ դրանք հնարավոր չլինի բացել: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան ինքնուրույն անշատել ու միացնել խցի լուսավորությունը:

Սովորական խցերի ներկայացվող հիմնական պահանջները պետք է կիրառվեն պատժախցերի համար:

### Ծագրուման ենթակա հարցեր

- Արդյո՞ք համարժեք է խցերի օդափոխությունը,
- արդյո՞ք համարժեք է խցերի ջերմաստիճանը,
- ի՞նչ չափի են պատուհանները: Բացվլո՞ւմ են արդյո՞ք դրանք,
- կարո՞ղ են արդյոք բանտարկյալները կարգավորել իրենց խցերի լուսավորությունը, օդափոխությունը և ջերմաստիճանը,
- ինչպես է ապահովվում ջեռուցումը և արդյո՞ք այն անվտանգ է,
- արդյո՞ք լուսավորությունը բավարար է ընթերցանության համար:

## Սանիտարական հնարավորություններ Չափանիշներ

«Սանիտարական հարմարությունները պետք է բավականաչափ լինեն, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ մաքրության և բարեկեցության պայմաններում անհրաժեշտության դեպքում կարողանա բավարարել իր բնական պահանջները:» SMR, կանոն 12 (տես նաև EPR, կանոն 17):

«Չուզարանների մատչելիությունը և բարվոր հիգիենիկ պայմանները կարենք բաղադրիչներ են մարդասիրական միջավայրի ամրապնդման գործում: Դա հաշվի առնելով՝ ԽՎԿ-ն հայտարարում է, որ հավանության չի արժանացնում այն պրակտիկան, որը կիրառվում է որոշ երկներում, որտեղ բանտարկյալներն իրենց բնական կարիքները հոգում են խցերում գտնվող դույլերում (որոնք հետազայում դատարկվում են որոշակի ժամերի): Անհրաժեշտ է, որպեսզի կա՞մ խցի ներսում գուգարան լինի (ցանկալի է՝ սանհանգույցում), կա՞մ պետք է մշակված լինի համակարգ, որը կարիք ունեցող բանտարկյալներին թույլ կտա գուգարանից անհապաղ օգտվել ցանկացած ժամանակ (ներառյալ՝ գիշերը՝ դուրս գալով խցից):» CPT, GR2, § 49:

### Մեկնարանություններ

Այցելություն կատարողները պետք է այցելեն սանիտարական համակարգեր՝ ստուգելու համար, թե արդյո՞ք դրանք պատշաճ կերպով գործում են, համապատասխան ձևով մեկուսացված են արդյոք կամ ապահովված են արդյոք հիգիենիկ պայմաններով: Այցելություն կատարողները կարող են գրուցել բանտարկյալների հետ պարզելու համար, թե արդյո՞ք գոյություն ունեն անհիմն սահմանափակումներ այդ համակարգերից օգտվելու վերաբերյալ:

Այցելություն կատարողները պետք է ստուգեն՝ արդյո՞ք խցի գուգարանը բաժանված է պատով կամ միջնորմով: Չլվացվող գուգարանների առկայության դեպքում այցելություն կատարողները պետք է ստուգեն դրանց պարունակության դատարկման հաճախականությունը: Եթե գուգարանները տեղավորված են խցերից դուրս, ապա պետք է ստուգվի դրանցից անհապաղ օգտվելու հնարավորությունը:

Այցելություն կատարողները պետք է ստուգեն բանտարային վարչակազմի կողմից տրամադրվող գուգարանների վիճակը:

### Ծագուման ենթակա հարցեր

- Չուզարանների թիվը բանտարկյալների թվի համեմատ և դրանց համապատասխանությունը նվազագույնը չափանիշներին,
- արդյո՞ք բոլոր բանտարկյալները կարող են մեկուսի պայմաններ-ում օգտվել դրանցից,
- եթե խցերում զուզարաններ չկան.
- որքա՞ն պետք է սպասեն բանտարկյալները՝ դրսի զուզարանից օգտվելու համար,
- ինչպես են փակի տակ գտնվող մարդիկ գիշերը հոգում իրենց բնական կարիքները.
- խնդրելով հսկիչ անձնակազմին.
- օգտագործելով կափարիչներ ունեցող կեղտաջրի դույլեր:
- որքանո՞վ է մաքուր հիգիենայի սանհտարական համակարգը: Ի՞նչ կանոններով են կարգավորվում սանհտարական համակարգերը գործուն և մաքուր վիճակում պահելու համար,
- վիրքրամասնության ներկայացուցիչների նկատմամբ զուզարանից օգտվելու հետ կապված խտրականությունների դեպքեր արձանագրվե՞լ են արդյոք:

3

### Անձնական հիգիենա

#### Չափանիշներ

«Քաղնիքի սարքավորումները և ցնցուղների քանակը պետք է բավարար լինի, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա և պարտավոր լինի լողանալ կամ ցնցուղ ընդունել տվյալ կլիմային համապատասխանող ջերմաստիճանում և ընդհանուր հիգիենայի պայմաններով պահանջվող, տարվա եղանակին և աշխարհագրական շրջանին համապատափանող հաճախականությամբ, այսինքն՝ չափավոր կլիմայի դեպում՝ շաբաթական առնվազն մեկ անգամ:»: SMR, կանոն 13: (Նման դրույթ կա նաև EPR-ի կանոն 18-ում):

«Բանտարկյալներից պետք է պահանջել, որպեսզի նրանք իրենց մարդու պահեն: Դրա համար նրանց պետք է մատակարարել ջուր և մաքրությունն ու առողջությունը պահպանելու համար անհրաժեշտ պարագաներ:»: SMR, կանոն 15:

«Որպեսզի բանտարկյալները կարողանան պահպանել մարդկային արժանապատվությանը հարիր տեսք, նրանց պետք է սանրվածքի և մոռությունի մասին հոգալու, տղամարդկանց՝ կանոնավորապես սափրվելու հնարավորություն տրվի:»: SMR, կանոն 16:

«Քացի այդ, բանտարկյալները պետք է լոգարանից օգտվելու համապատասխան հնարավորություն ունենան: Ցանկալի է նաև, որպեսզի խցերում հոսող ջուր լինի: CPT, RG2, § 49:

«Կանանց հասուն հիգիենիկ պահանջները պետք է համապատասխան լուծում գտնեն: Հատկապես կարևոր է անարգել մուտքը սանիտարական և լոգանքի համակարգեր, արյունոտ իրերի շտապ հեռացում, ինչպես նաև հիգիենիկ պարագաներով ապահովում, ինչպես, օրինակ՝ սանիտարական տաճարներ և միջադիրներ: Այս հիմնական կարիքների նկատմամբ ամստարբեր ճնշեցումը կարող է ինքնին դիտվել որպես նվաստացուցիչ վերաբերմունք: CPT, GR 10, § 31: Տես նաև ACPR, A-11ն IDRCPDL հոդված 31:»

### 3

## Մեկնաբանություններ

Անձնական հիգիենայի պահպանումից է կախված սեփական առողջության, ինչպես նաև՝ շրջապատողների և ինքն իր հանդեպ հարգանքը: Անձնական հիգիենան կարող է կապված լինել կրոնի հետ և ենթակա է հարգանքի:

Բանտարկյալների և անձնակազմի միջև հիվանդությունների հնարավոր տարածումը կամխելու համար կարևոր է սանիտարական պատշաճ պայմանների, ինչպես նաև ցնցության և բաղնիքային համակարգերի հասանելիություն ապահովելը: Դա հատկապես կարևոր է, եթե բանտարկյալները երկար ժամանակ պահվում են գերբնակեցված խցերում: Անձնական, ինչպես նաև բանտարյան շինությունների հիգիենան ևս պետք է ուշադրության արժանանա բանտերի վարչակազմի կողմից՝ բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի շրջանակներում: Վատքար հիգիենիկ պայմաններում հարկադրաբար պահելը նվաստացուցիչ է:

Բանտարյան վարչակազմը պետք է բանտարկյալներին ապահովվի մարմնի հիգիենայի համար անհրաժեշտ պարագաներով:

Կարևոր է, որ ազատազրկման վայրում առկա հիգիենիկ հարմարությունները չնվաստացնեն բանտարկյալներին, ասենք՝ նրանց հարկադրելով ցնցուղ ընդունել բոլորի աշքի առաջ: Կանայք պետք է կանոնավոր և պատշաճ հարգանքով ստանան դաշտանի համար նախատեսված հիգիենիկ պարագաներ: Եթե կանանց հետ կան մանկահասակ երեխաներ, ապա նրանց պետք է տրամադրվեն երեխաների համար նախատեսված պարագաներ:

Ցնցուղ ընդունելու հաճախականությունը պետք է կախված լինի կլիմայից և բանտարկյալի գրադադարությունից:

### **Ծագումնան ենթակա հարցեր**

- Արդյո՞ք բանտարկյալներն ազատորեն կարող են օգտվել լվացվելու համար նախատեսված ջրից,
- ի՞նչ հաճախականությամբ բանտարկյալները (աշխատող և շաշխատող) հնարավորություն ունեն օգտվելու բաղմիքային համակարգերից,
- արդյո՞ք բաղնիքային համակարգերի թիվը բավարար է,
- ի՞նչ վիճակում է դրանց աշխատանքը և մաքրությունը,
- հիգիենայի ի՞նչ պարագաներ են տրամադրվում վարչակազմի կողմից և ի՞նչ հաճախականությամբ,
- արդյո՞ք բավարարվում են բանտարկյալների կրոնական և մշակութային պահանջները,
- փորբանասնության ներկայացուցիչների նկատմամբ բաղնիքային համակարգերից օգտվելու հետ կապված խորականությունների դեպքեր արձանագրվել են արդյոք,
- արդյո՞ք բավարարվում են դաշտանային շրջանում գտնվող կանանց պահանջները (անհրաժեշտ հիգիենիկ և լոգանքի պարագաների տրամադրման առումով):

**3**

### **Հազուստ և անկողնային պարագաներ**

#### **Չափանիշներ**

«1. Քաղաքացիական հազուստ կրելու իրավունք չունեցող բանտարկյալներին պետք է հատկացվի տվյալ կիմային համապատասխանող և իրենց առողջությունը բավարար վիճակում պահելու հնարավորություն տվող համազգեստ: Այն վիրավորող կամ նվաստացնող բնույթ չպետք է կրի:

2. Հազուստը պետք է պահի մաքուր և կարգին վիճակում: Մաքուր սպիտակեղենի լվացումը և բաշխումը պետք է ապահովել հիգիենայի պահանջներին համապատասխան:

3. Բացառիկ դեպքերում, եթե բանտարկյալը դեկավարության բույլտվորյամբ լրում է հիմնարկը, նրան պետք է բույլատրել հազմել սեփական հազուստը կամ աշքի չզարնող այլ հազուստ:»: SMR, կանոն 17 (տես՝ նաև EPR կանոն 22):

«Եթե բանտարկյալներին բույլատրվում է քաղաքացիական հազուստ կրել, պետք է միջոցներ ծեռը առնել, որպեսզի այն մաքուր և կրելու համար հարմար լինի:»: SMR, կանոն 18:

«Յուրաքանչյուր բանտարկյալի պետք է ապահովել ազգային և տե-

դական նորմերին համապատասխանող, քննելու առանձին պարագաներ ունեցող առանձին մահճակալով, որոնք տրվելու պահին պետք է լինեն մարուր, սարքին և փոխվեն բավականին հաճախ՝ դրանց մաքրությունն ապահովելու համար»: SMR, կանոն 19:

«Բոլոր բանտարկյալներն ապահովվում են առանձին մահճակալով և առանձին սպիտակեղենով, որոնք պահպանվում են լավ վհճակում և նորացվում այն հաճախականությամբ, որն անհրաժեշտ է հիգիենայի պահպանման համար»: EPR, կանոն 24: Stu' նաև ACPR,A-11ն B-1-ը), և IDRCPDL հոդված 31:

3

### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարողները պետք է ստուգեն պահեատները և զրուցեն անձնակազմի և բանտարկյալների հետ՝ համոզվելու համար, որ բանտարկյալներն ապահովված են կիմայական պայմաններին համապատասխան և արժանապատվությունը չնվաստացնող հագուստով: Ωչ մի դեպքում չի կարելի որպես տույժի միջոց տրամադրել նվաստացնող հագուստ: Գերադասելի է, որ բանտարկյալները կրեն իրենց սեփական կամ հագնեն քաղաքացիական այլ հազուստ, ինչն անհատականության զգացում կձևափորի:

Ցանկացած բանտարկյալի պետք է թույլատրվի օգտվել լվացքատան ծառայություններից՝ բոլոր զգեստները, հատկապես՝ ներքնազգեստը ընդհանուր լվացքի հետ կամ անհատապես լվանալու համար:

Բանտարկյալները պետք է ունենան անհատական մահճակալ և մարուր, բարփոր վիճակում գտնվող անկողնային պարագաները: Անկողինը կիսելը կամ հերթով քննելը թույլատրելի չէ: Եթե գերբնակեցումը հասնում է շատ բարձր մակարդակի, բանտարկյան իշխանությունները պետք է անմիջապես համապատասխան միջոցներ ձեռնարկեն իրավիճակը շտկելու ուղղությամբ:

Սավանները պետք է պարբերաբար փոխվեն:

---

### **Ճշգրտման ենթակա հարցեր**

- Ի՞նչ հազուստ են կրում բանտարկյալները,
  - արդյո՞ք զգեստը (կոչիկները և այլ հազուստը) համապատասխանում է տարբա եղանակին,
  - արդյո՞ք աշխատող բանտարկյալները կրում են համապատասխան հագուստ,
  - բանտարկյալներն ինչպես են օգտվում լվացքատնից և չորանոցներից,
  - արդյո՞ք ցանկացած բանտարկյալ ունի առանձին մահճակալ և
-

- 
- անկողնային պարագաներ,
- ի՞նչ հաճախականությամբ են դրանք լվացվում: Կա՞ն արդյոք հազուստի և անկողնային պարագաների պահեստներ,
  - ի՞նչ վիճակում է հագուստը,
  - դատական լուսների համար բանտարկյալներին տրամադրվո՞ւմ է արդյոք նրանց անձնական հազուստը,
  - արդյո՞ք հազուստի և անկողնային պարագաների տրամադրումը կատարվում է արդարացի և առանց խորականության:
- 

**3****Գերբնակեցում և շենքային պայմաններ****Չափամիջներ**

«1. Այնտեղ, որ բանտարկյալները գիշերում են խցերում կամ սենյակներում, նրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին խորհրդական սենյակ: Եթե հասուն պատճառներով, ինչպես օրինակ՝ բանտի ժամանակավոր ծանրաբեռնվածությունը, կենտրոնական բանտային վարչությունը ստիպված է հրաժարվել այդ կանոնի գործածությունից. միևնույն խցում կամ սենյակում երկու բանտարկյալների տեղափորելը ցանկալի չէ:

2. Այնտեղ, որ կան ընդհանուր բանտախցեր, պետք է իրականացնել հետագայում միասին պահվող բանտարկյալների մանրակրկիտ ընտրություն՝ համոզվելու համար, որ նրանք կարող են գոյակցել նման պայմաններում: Գիշերները պետք է իրականացնել հիմնարկի բնույթին համապատասխանող մշտական հսկողություն»: SMR, կանոն 9:

«Գերբնակեցումը ուղղակիորեն կապված է ԽԿԿ-ի մանդատի հետ: Եթե հաստատությունում բանտարկյալների թիվը նախատեսվածից ավելի է, ապա այդ հանգամանքը բացասական ազդեցություն կունենա տվյալ հաստատությունում կյանքի որակի վրա. այն կնվազի և, հնարավոր է՝ զգալիորեն: Ավելին, բանտի կամ դրա մի մասի ընդհանուր պայմանները կարող են անմարդկային կամ նվաստացուցիչ համարվել մարդու ֆիզիկական գոյության տեսանկյունից»: CPT, GR2, § 46:

Բանտերի գերբնակեցման խնդիրը շարունակում է բացասական կերպով ազդել ամբողջ Եվրոպայի ուղղի համակարգի վրա և լրջազույն կերպով ճախողում է բանտարկության պայմանները բարելավելու փորձերը:

Բանտերի գերբնակեցման բացասական ազդեցությունն արդեմ իսկ քննարկվել է նախորդ ընդհանուր գեկույցներում: Ամբողջ Եվրոպական մայրամաքում ԽԿԿ ազդեցության ոլորտի մեծացման հետ մեկտեղ Կոմ-

իտեն բախվում է բանտային գերբնակեցման տոկոսի կտրուկ աճին ու դրա ծանր հետևանքներին: Այն փաստը, որ պետությունը բանտարկում է մեծ թվով քաղաքացիների՝ չի կարող բացադրվել միայն հանցագործության մակարդակի կտրուկ աճով. այդ իրավիճակի պատճառը մասսամբ իրավապահ մարմինների և դատական իշխանության ընդիւնուր մոտեցումն է:

Տվյալ հանգամանքներում բանտային շինությունների կառուցման համար մեծ գումարների շռայլումը հարցի լուծման միջոց չէ: Դրա փոխարեն պետք է վերանայվեն զործող օրենսդրությունը և դատական քննության ժամանակ կիրառվող ազատազրկման պրակտիկան, ինչպես նաև հնարավոր այլնութրանքային պատժամիջոցները: Հենց այդ մոտեցումն է հստակ որդեգրված բանտերի գերբնակեցման և բանտերում պահվող անձանց թվի աճի հարցերով Նախարարների կոմիտեի թիվ R (99) 22 հանձնարարականը: ԽԿԿ-ն հուսով է, որ այդ կարևոր փաստաթղթում շարադրված սկզբունքները կիրառվեն անդամ երկրների կողմից, իսկ այդ հանձնարարականի կիրառումը արժանի է Եվրոպական Խորհրդի ավելի զգալի ուշադրությանը»: CPT, GR II, § 28:

«1. Սովորաբար բանտարկյալները տեղափորվում են առանձին խցերում, բացառությամբ այն դեպքերի, եթե նախընտրելի է նրանց պահել այլ բանտարկյալների հետ միասին:

2. Այն դեպքերում, եթե բանտարկյալները պահվում են միասին, ապա նրանք պետք է համապատասխանեն միմյանց՝ նման պայմաններում շփվելու տեսանկյունից: Գիշերային ժամերին նրանք գտնվում են ուղղիչ հիմնարկի տեսակին համապատասխանող հսկողության տակ:»: EPR, կանոն 14:

ԽԿԿ-ի այցելած երկրներում, հատկապես՝ կենտրոնական և արևելյան Եվրոպայում, բանտային շինությունները հաճախ բաղկացած են մեծ տարողություն ունեցող հանրակացարաններից, որտեղ տեղակայված են օրվա ընթացքում բանտարկյալների կողմից օգտագործվող բոլոր կամ գորեք բոլոր շինությունները, ինչպիսիք են՝ բնելու և բնակելի տարածքները, առողջապահական հանգույցները: ԽԿԿ-ն առարկում է փակ բանտերում այդպիսի շենքային պայմանների առկայության վերաբերյալ, և այդ առարկությունները առավել սրբում են, եթե հաճախ պարզվում է, որ բանտարկյալներն այդ վայրերում պահվում են չափազանց ճնշված և անառողջ պայմաններում:

Անկասկած, որոշ երկրներում բազմաթիվ նկատառումներից ելնելով, ներառյալ՝ մշակութային, նախապատվորյունը տրվում է բազմատեղ խցերին, այլ ոչ թե մենախցերին: Այնուամենայնիվ, դժվար է հավանությունն տալ և հեշտ՝ քննադատել այնպիսի պայմաններին, որոնց ներքո տասնյակ բանտարկյալներ ապրում և քնում են միևնույն տարածքում:

Մեծ տարողունակության խցերն անխուսափելիորեն հանգեցնում են բանտարկյալների մեկուսացման հետ կապված բարդությունների: Ավելին՝ բարձր է ահարեկման և բռնությունների վտանգը: Այդպիսի շենքային պայմանները նպաստում են հանցավորության մքնոլորտի զարգացմանը և քրեսկան կազմավորումների ազդեցության սկահանանմանը: Շենքային պայմանները կարող են նաև հսկիչ անձնակազմի համար ստեղծել անշափ ծանր, եթե ոչ ծառայության համար անհնար պայմաններ: Հատկապես բանտարյան խոռվությունների դեպքում անհնար է լինում խուսափելու ժիր կիրառման գործին արտաքին միջամտությունից: Նման պայմաններում անհնար է դառնում բանտարկյալներին տեղաբաշխել ըստ վտանգավորության աստիճանի, և յուրաքանչյուր դեպքում դա դժվարին խնդրի է վերածվում: Բոլոր այս խնդիրներն ահազնանում են, եթե բանտարկյալների թիվն անցնում է ողջամտության սահմանները: Ավելին, նման իրավիճակում կոմունալ համակարգերի, ինչպես, օրինակ՝ լվացարանների կամ զուգարանների չափազանց ծանրաբեռնվածությունը և բանտարկյալների նման թվի համար անբավարար օրավիճակունը կարող է հանգեցնել բանտում պահելու անհանդուրժելի պայմանների:

Այդուհանդեռձ, ԽԿԿ-ն ընդգծում է, որ մեծ տարողունակություն ունեցող խցերից հրաժարվելը հոգուտ ավելի փոքրերի պետք է ուղեկցվի որոշակի միջոցառումներով, որոնք կերաշխավորեն, որ բանտարկյալներն օրվա զգայի մասն անց են կացնելու տարաբնույթ բնակելի հատվածից դուրս գործունեությամբ զբաղվելով::»: CPT, GR 11, § 29:

«Բանտարկյալների օգտագործած բոլոր շինությունները պետք է մշտապես մաքուր պահպեն: Որպես կանոն, ենոյն իրենք բանտարկյալներն են հոգ տանում շինությունների վիճակի մասին: Նրանց պետք է տրամադրվեն դրա համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ու նյութերը::»: Արձանագրություն 99: Նախարարների կոմիտե: Steu՝ նաև ACPR, A-11, և IDRCPDL, հոդված 11, պարագրաֆ 1 և 2 և հոդված 31:

### **Մեկնարանություններ**

Բանտերի գերբնակեցումն ինքնին լուրջ խնդիր է և առաջացնում է տարաբնույթ երկրորդական խնդիրներ՝ կապված վերաբերմունքի, առողջապահության և վերականգնման հետ:

Ընդհանրապես, միջազգային չափանիշները հստակ չեն սահմանում մեկ բանտարկյալին հասանելի տարածության չափանիշները՝ բնակելի տարածության հատակի նակերեսը քառակուսի կամ ծավալը՝ խորանարդ մետրերով: Վերջին տարիներին ԽԿԿ-ն սկսեց զարգացնել այդ ուղղությունը: Հանձնարարելի է, որ մենախցերի չափը չպետք է պակաս լինի 7 քառակուսի մետրից: Ընդհանուր խցերի համար ԽԿԿ-ն հանձնարարելի է

համարում հետևյալ չափանիշները՝ 10 քառակուսի մետր՝ 2 քանտարկյալի, 21 քառակուսի մետր՝ 5 քանտարկյալի, 35 քառակուսի մետր՝ 7 քանտարկյալի և 60 քառակուսի մետր՝ 12 քանտարկյալի համար:

Այցելություն կատարողները պետք է տեղյակ լինեն բանտի տարբեր հատվածների առավելագույն տարրողունակությանը և նրան, թե ինչի հիման վրա է կատարվել հաշվարկը: Սովորաբար դա արվում է խցի հատակի մակերեսի (քառակուսի մետրերով) և խցում պահպող քանտարկյալների թվի հարաբերակցությունը հաշվարկելու միջոցով:

Այդուհանդեռձ, այցելություն կատարողները չպետք է վստահեն միմիայն մարեճատիկական բանաձևերին. այցելության ընթացքում ամենայն հավանականությամբ ի հայտ կգան այլ նկատառումներ ևս, ինչպես, օրինակ՝ 24 ժամվա ընթացքում այդ շինության ներսում անցկացրած ժամարքաները և տվյալ հաստատության կառուցվածքը: Ցուրաքանչյուր քանտարկյալ պետք է ունենա առանձին մահճակալ: Այցելություն կատարող թիմի մոտ հավանաբար անհրաժեշտություն կառաջանա գերբնակեցման վերաբերյալ դիտողություններով և առաջարկություններով դիմելու տարբեր մարմինների, որոնք կկարողանան հանարժեք միջոցներ կիրառել: Հնարավոր է, որ քանտում գտնվի չօգտագործված տարածություն, որը հնարավոր կլինի ծառայեցնել ծանրաբեռնված պայմանները քարելավելուն: Չը քացանվում նաև, որ այցելություն կատարող մեխանիզմները առաջարկեն դատարիրավական բարեփոխումներ իրականացնել կամ դիմել այլնտրանքային միջոցների օգնությանը: Այցելություններ կատարող մարմինները պետք է հիշեն, որ նոր քանտեր կառուցելը հազիվ թե տևական լուծում տա խնդրին: Միջազգային չափանիշներով հանձնարարելի են համարում, որ նախապատվությունը տրվի մենախցերին: Քանտարկյալները կարող են նախապատվությունը տալ համապատասխան ձևով նախագծված հանրակացարաններին՝ կապված որոշակի մշակութային առանձնահատկությունների հետ: Ընդհանուր խցերի օգտագործումը պետք է սահմանափակվի՝ կախված այդ խցերում պահպող քանտարկյալների թվից: Միայն պահպող անձանց համատեղեկությունը որոշելը կարևոր է. այն բոլոր կտա սահմանափակել քանտարկյալների միջև հնարավոր չարաշահումների սպառնալիքը:

Այցելություն կատարողները պետք է ուշադրություն դարձնեն խցերի մաքրությանը:

**3**

### **Ծագուման ենթակա հարցեր**

- Արդյո՞ք բնակելի խցերը համապատասխանում են՝
- մեկ անձին հասանելի մակերեսի,
- խցերում անձանց անցկացրած ժամարքաների (24 ժամվա ընթացքում խցում քանտարկված լինելու ժամերի քանակության),

**3**

- օդափոխության և փակ խցեր բափանցող օդի քանակի,
- բանտարկության նշանակված տևողության առումներով:
- Արդյո՞ք բոլոր բանտարկյալներն ունեն իրենց սեփական մահճակալը,
- արդյո՞ք խցերը պարբերաբար մաքրվում են և արդյո՞ք տրամադրվում են մաքրող նյութեր,
- ընդհանուր խցերում ինչպե՞ս է որոշվում միասին պահպող բանտարկյալների համատեղելիությունը, և ի՞նչ չափանիշներ են գործում բանտարկյալներին խցերում տեղափոխելու վերաբերյալ,
- արդյո՞ք ընդհանուր խցերում տարածքը բաշխված է արդարացիորեն և առանց խտրականության,
- գերբնակեցման դեպքում խցերից և ընդհանուր ննջարաններից դուրս որևէ չօգտագործված տարածք կա՞ արդյոք, որը կարող է ձառայել որպես խուց կամ ընդհանուր ննջարան:

**Հետազա ընթերցումներ**

PRI, Making standards work, London 2001. (Section III Phusical conditions- Basic necessities, pp. 55-68)

Բանտային իշխանությունների գործառույթներն ավելին են, քան սույն ֆիզիկական միջավայրի ապահովություն երաշխավորելը: Իշխանությունները պետք է խթանեն բանտարկյալների անձնական զարգացումը և հեշտացնեն ազատ արձակվելուց հետո հասարակության մեջ վերաբերներելը: Սա բխում է բանտարկյալի և ընդհանրապես՝ հասարակության շահերից: Ընտանեկան այցելությունները, կրթության մատչելիությունը, արհեստագործական ուսուցումը և աշխատանքը, ինչպես նաև ժամանցային միջոցառումներն ամբողջությամբ պետք է դիտվեն այս տեսանկյունից: Այդ միջոցառումները ոչ թե պարզապես բարեհանդության դրսերում են, այլ բանտարկյալների իրավունքը:

Քաղաքացիական հասարակության և (որպես կանոն) տեղական համայնքի, այցելություն կատարող մարմինների դիտողությունները, հանձնարարականները և անգամ համապատասխան գործնական օժանդակությունը կարող է իշխանությունների հանար արժեքավոր լինել այս նշանակալի խնդիրը հաղթահարելու գործում:

Ազատագրկման որևէ տեսակի, այդ թվում՝ ձերբակալության կամ մինչդատական կալանքի տակ գտնվողների ենթարկված անձանց ֆիզիկական և մտավոր առողջության համար կարևոր է, որպեսզի նրանք ներգրավվեն խցերից դուրս իրականացվող տարաբնույթ օգտակար գործունեության:

Այցելություն կատարողները կարող են ստուգել՝ արդյո՞ք բանտային իշխանությունները կարևորում են տարբերակված համապատասխան ռեժիմի ապահովումը, և դրա համար հատկացվո՞ւմ են անհրաժեշտ ռեսուրսներ: Հնարավոր է, որ այցելողները ցանկանան համոզվել, որ ընտանեկան այցերի, կրթության մատչելիության, արհեստագործական ուսուցման և աշխատանքի (վերջինը պետք է պարտադիր չինի դեռևս չդատապարտված բանտարկյաների համար) համար առկա են համարժեք պայմաններ:

Կարևոր է հաշվի առնել՝ արդյո՞ք բանտում իրականացվող գործունեությունը համապատասխանում է հաստատության պատերից դուրս ընդունված չափանիշներին, օրինակ՝ արդյո՞ք արհեստագործական ուսուցմը և աշխատանքը համապատասխանում են աշխատանքի շուկայի պահանջներին, և արդյո՞ք կրթական չափանիշները համարժեք են բանտի պատերից դուրս ընդունված չափանիշներին:

## ՈԵԺԻՄ ԵՎ

### ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

4

#### **ՈԵԺԻՄ և միջոցառումներ**

- Ընտանիքի և ընկերների հետ շփումներ,
- արտաքին աշխարհի հետ շփումներ,
- կրություն,
- մարմնամարզություն մաքուր օդում,
- ժամանց,
- կլոն,
- աշխատանք:

#### **Ընտանիքի և ընկերների հետ շփումներ**

##### **Չափանիշներ**

«Չնայած այն բացառություններին, որ բովանդակում են 16 սկզբունքի կետը և 18 սկզբունքի 3 կետը, ձերքակալված կամ կալանավորված անձին կարող են մերժել կապ ունենալու արտաքին աշխարհի և մասնավորապես իր ընտանիքի կամ դատապահութանի հետ մի քանի օրից ոչ ավելի ժամանակատվածում»: BPP, սկզբունք 15:

«Ձերքակալված կամ կալանքի տակ գտնվող անձին մասնավորապես իրավունք է տրվում ընտանիքի անդամների այցելության և նրանց հետ նամակագրության, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ հարաբերություն ունենալ՝ օրենքի բովանդակած և օրենքին համապատասխան կանոններով սահմանված խելամիտ պայմանների ու սահմանափակումների համաձայն»: BPP, սկզբունք 19:

«Բանտարկյալներին պետք է հնարավորություն ընձեռել պարբերական ընդիշումներով, պատշաճ հսկողության ներքո, ինչպես նամակագրության միջոցով, այնպես էլ այցելությունների ընթացքում շփվելու իրենց ընտանիքների կամ անբասիր հեղինակություն վայելող բարեկամների հետ»: SMR, կանոն 37:

«Քննության տակ գտնվող բանտարկյալները պետք է իրենց բանտարկության փաստի մասին իրենց ընտանիքներին տեղյակ պահելու, ազգականների և բարեկամների հետ շփվելու, նրանց բանտում ընդունելու խելամիտ հնարավորություն ունենան՝ ենթարկվելով միայն այնպիսի սահմանափակումների և վերահսկողության, որոնք անհրաժեշտ են արդարադատության պատշաճ իրականացման, անվտանգության պահանջները պահպանելու և հաստատության նորմալ աշխատանքն ապահովելու

համար:»: SMR, կանոն 92:

«Բանտարկյալների համար կարևոր է նաև պահպանել շփումներն արտաքին աշխարհի հետ: Բացի այդ, բանտարկյալին պետք է տրվեն ընտանիքի և մտերիմ ընկերների հետ հարաբերությունները պահպանելու հնարավորություն: Դեկավարող սկզբունքները պետք է խրախուսեն արտաքին աշխարհի հետ շփումները. այդ շփման ցանկացած սահմանափակում պետք է եղի միայն անվտանգության էական նկատառումներից կամ պայմանավորված միջոցների սահմանափակությամբ:

ԽԿԿ-Ը այս առնչությամբ ցանկանում է շեշտել, որ անհրաժեշտ է որոշ ճկունություն դրսենորել հեռավոր շրջաններում բնակվող ընտանիքների հետ բանտարկյալների տեսակցությունների և հեռախոսազրույցի վերաբերյալ կանոնների առումով (այն դեպքերում, եթե կանոնավոր այցերն անհնար է): Օրինակ, այսպիսի բանտարկյալներին պետք է թույլատրվի կուտակել հասանելիք այցելությունների ժամկետը, և/կամ նրանց պետք է առաջարկվեն ընտանիքների հետ հեռախոսով գրութելու առավել լայն հնարավորություններ»: CPT, GR2, § 51:

«Երկրները պետք է ապահովեն, որ ազատազրկված անձանց թույլ տրվի (...) հանդիպել ընտանիքի անդամներին և նրանց հետ նամակագրություն վարել»: RIG, դրույթ 31:

Տես՝ նաև CDD, A-8-b), B-1-f և B-3-b) և IDRCPDL, հոդված 36, 1-ին և 2-րդ պարբերություններ և հոդված 38:

### Անշափահասներ

«Անշափահասներին պետք է թույլատրվի շփվել իրենց ընտանիքների, ընկերների և այլ անձանց կամ հասարակություննում հեղինակություն վայելող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ընտանիքին այցելելու, ինչպես նաև կրթական, արհեստագործական ուսուցում ստանալու կամ այլ կարևոր պատճառով ստանալ բանտից դուրս գալու թույլտվություն» (...): RPJDL, կանոն 59:

«10-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն անշափահաս իրավահսանության հանդեպ պետք է ցուցաբերվի նրանց տարիքին և իրավական կարգավիճակին համապատասխան վերաբերմունք՝ ելեկով բանտարկության պայմաններից, ինչպես, օրինակ՝ (...) շփում ազգականների հետ՝ անշափահասների ուղղման և վերապատրաստման նպատակով»: GC 21, 13-րդ պարբերություն: Տես՝ նաև RPJDL 60 և 62 և IDRCPDL, հոդված 39:

## Մեկնարանություններ

4

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է քաջատեղյակ լինեն ընտանիքների համար բանտարկյալներին այցելելու հնարավորության կարևորությանը: Բանտարկյալների մեծ մասն օրերից մի օր ազատ է արձակվելու: Ընտանիքների և ընկերների հետ կապը պահպանելու հնարավորինս ընդգրկուն միջոցներ ապահովելը կերաշչավորի նրանց բարեհաջող վերահնտեղումն ազատ արձակվելուց հետո: Այցելողները պետք է վերահսկեն՝ արդյո՞ք ողջամիտ է հավասարակշռությունն անվտանգության և նարդասիրական պահանջների միջև: Ընտանիքի և ընկերների հետ շփոմը պետք է ոչ թե լինի որոշ բանտարկյալների արտոնությունը, այլ բոլորի իրավունքը: Բանտարկյալները պետք է կարգավահական պատասխանատվության կարգով չգրկեն այցելությունների և շփոմներ պահպանելու իրավունքից: Զննությունները և անձնական խուզարկությունները պետք է կատարվեն հարգալից, հավոր պատշաճի և նրբանկատորնեն: Այս բնագավառում ընտանիքի անդամների և ընկերների իրավունքները ևս պետք է այցելություն կատարող մեխանիզմի մտահոգության առարկա դառնան: Ընտանեկան և ընկերական կապերը պահպանելու լավագույն միջոցն այցելություններն են: Այցելություն կատարող մեխանիզմները պետք է վերահսկեն, թե ինչ պայմաններում են անցնում տեսակցությունները, քանի որ դա բանտային վարչակազմի կողմից բանտարկյալների և նրանց ընտանիքների հանդեպ ցուցաբերվող վստահության չափանիշ է: Որպես կանոն՝ տեսակցողներին պետք է բույլատրովի ֆիզիկապես շփվել բանտարկյալի հետ: Ըփումների հնարավոր անմիջականությամբ անհատական կամ ընտանեկան տեսակցությունները պետք է խրախուսվեն: Այդ այցերի տևողությունը պետք է երկար լինի՝ գուգրներոց հետ ինտիմ (կամ ամուսնական) մերձեցման հնարավորություն ընձեռնելու համար:

Ընտանեկան այցերը հեշտացնելու նպատակով բանտարկյալները պետք է պահին այն բանում, որն առավել մոտ է գտնվում նրանց ընտանիքների բնակության վայրերին: Այցելություն կատարողները պետք է բանտարկյալների հետ միասին ստուգեն՝ արդյո՞ք ապահովված է հեռախոսային շփման հնարավորություն (հատկապես օտարերկրացիների համար) և արդյո՞ք բանտարկյալները նամակները ստանում են շրացված վիճակում և ժամանակին: Այցելություն կատարողները պետք է տեղում պարզեն՝ գրաքննության կամ վերահսկման ի՞նչ համակարգ է գործում հաստատությունում, և արդյո՞ք այն համարժեք է այս կամ այն անձից սպասվող հավանական վտանգին: Օտարերկրյա բանտարկյալների դրությունը հաշվի առնելով՝ պահանջվում է անընդհատ ուշադրություն: Այցելություն կատարողները պետք է վերահսկեն, թե ինչպես են հաղա-

արվում ընտանիքի և ընկերների հետ նրանց շփոմների, ինչպես նաև ազատ արձակվելու և հայրենիք վերադառնալու հետ կապված խնդիրները:

Անշափահասները և կանայք ևս առանձնակի ուշադրության են արժանի այցելություն կատարողների կողմից: Անշափահասների խոցելի կարգավիճակն առավել կարևոր է դարձնում այն հանգամանքը, որ վերահնտեղորման համար նրանք պետք է պահպանեն և զարգացնեն իրենց ընտանիքների և, հատկապես, ծնողների հետ կապերը: Բազմաթիվ հասարակություններում կանայք անմիջական պատասխանատվություն են կրում երեխամների խնամքի համար և, հետևաբար, մոր բանտարկությունը կանդրադառնա երեխայի վրա: Այցելություն կատարողները պետք է վերահսկեն, թե ինչ միջոցառումներ են իրականացվում անշափահասների ընտանիքների և բանտարկյալ կանանց առումով, քանի որ հեռավորության պատճառով նրանք այցելություն կատարելու համար ստիպված են ճանապարհորդել (անշափահասների և կանանց համար նախատեսված բանտերը սակավարիվ են և, հետևաբար, տեղակայված են նրանց բնակավայրից հեռու): Այցելություն կատարողները պետք է ստուգեն, թե ի՞նչ քայլեր է ձեռնարկում բանտն այն բանտարկյալների նկատմամբ, ովքեր ուզմական բախումների կամ բնական աղետների պատճառով կորցրել են կապն իրենց ընտանիքների հետ՝ նրանց՝ իրենց ընտանիքների հետ միավորելու ուղղությամբ: Բանտը պետք է կապեր հաստատի ԿԽՄԿ կենտրոնական որոնողական գործակալության հետ, լինեն դրանք ուղղակի կամ Կարմիր Խաչի տեղական ներկայացուցության կամ Կարմիր Մահիկի կազմակերպության միջոցով:

4

## Ծագուման ենթակա հարցեր

### Այցելություններ

- Ի՞նչ հաճախականությամբ են բույլատրվում տեսակցությունները բանտարկյալների հետ:
- Որքա՞ն է այդ այցերի տևողությունը: Կա՞ն արդյոք սահմանափակումներ որոշ կատեգորիայի բանտարկյալների առնչությամբ:
- Եթե այս, ինչի՞ հիման վրա են կիրառվում այդ սահմանափակումները: Ինչպես՞ս են ընտանիքներն ընդունվում բանտում: Ի՞նչ տեղեկատվություն է տրամադրվում ընտանիքներին՝ բանտարկյալի հետ շփումը և նրա հետ տեսակցությունը հնարավոր դարձնելու համար:
- Արդյո՞ք անվտանգության հաստուկ միջոցառումներ են կիրառվում երեխաներին այցելելու ժամանակ:
- Արդյո՞ք բանտը կամ որևէ այլ գործակալություն տրամադրում է

- կացարաններ, որտեղ ընտանիքները կարող են սպասել տեսակցությանը:
- Նյութական ի՞նչ պայմաններում է տեղի ունենում տեսակցությունը:
  - Ինչպե՞ս է իրականացվում հսկողությունը:
  - Արդյո՞ք բանտը ծեռնարկում է որևէ այլնտրանքային միջոցառում այն բանտարկյալների համար, ում որևէ այցելություն չի կատարվել:
  - Գործո՞ւմ են արդյոք հատուկ միջոցառումներ օտարերկրացի բանտարկյալների ընտանեկան շփոմներն ապահովելու համար (մասնավորապես՝ հեռախոսազրույցներ):

**4****Նամակագրություն**

- Արդյո՞ք անձնական նամակագրությունը ենթակա է գրաքննության:
- Եթե այս, ապա գրաքննության ի՞նչ չափանիշներ են գործում, և արդյոք անձնակազմը և բանտարկյալները տեղյա՞կ են դրանց:
- Ինչպե՞ս են ստացվում ծանրոցները: Ի՞նչ հաճախականությամբ դրանք կարելի է ստանալ:

**Հեռախոս**

- Բանտարկյալներն ունե՞ն արդյոք զանգահարելու հնարավորություն:
- Ի՞նչ հաճախականությամբ: Ինչպե՞ս են կատարվում վճարումները:
- Արդյո՞ք տեսակցություններ ունենալու, նամակագրություն վարելու և հեռախոսազնության կատարելու հնարավորությունը տրամադրվում է արդարացի, թափանցիկ և ոչ խտրական ձևով:

**Շփումներ արտաքին աշխարհի հետ****Չափանիշներ**

- «1. Զերբակալված կամ բանտարկված անձն իրավունք ունի կապվելու և խորհրդակցելու դատապաշտպանի հետ:
2. Զերբակալված կամ բանտարկված անձին անհրաժեշտ ժամանակ

ու պայմաններ են տրամադրվում իր դատապաշտպանի հետ խորհրդակցելու համար:

3. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի՝ դատապաշտպանի այցելության, առանց հապաղման կամ գրաբննության և լիակատար գաղտնիության պայմաններում նրա հետ խորհրդակցելու և կապի մեջ լինելու նրա իրավունքը չի կարող առժամանակ չեղյալ հայտարարվել կամ սահմանափակվել, բացի բացառիկ հանգամանքներից, որոնք սահմանվում են օրենքով կամ նախատեսված են օրենքին համապատասխան կանոններով, եթե դատական կամ այլ մարմնի կարծիքով, դա անհրաժեշտ է անվտանգությունը և կարգուկանոնը պահպանելու համար:

4. Իր դատապաշտպանի հետ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի տեսակցությունները կարող են տեղի ունենալ այնպիսի պայմաններում, որոնք իրավապահ մարմինների պաշտոնատար անձին բույլ են տալիս տեսնել նրանց, բայց չսել:»: BPP, սկզբունք 18 (տես՝ նաև SMR, կանոն 39):

**4**

«Բանտարկյալներին հարկավոր է պարբերաբար տեղեկացնել առավել կարևոր տեղեկություններին՝ նրանց թույլատրելով ընթերցել լրագրեր, ամսագրեր կամ հատուկ բանտային հրատարակություններ, ուստի ունկնդրել և ներկա գտնվել դասախոսությունների, ինչպես նաև վարչակազմի մարմինների կողմից թույլատրվող և վերահսկվող այլ միջոցների օգնությամբ:»: SMR, կանոն 39:

### Անշափահասներ

«Պետք է ձեռնարկել բոլոր միջոցները՝ արտաքին աշխարհի հետ անշափահասների համապատասխան շփումն ապահովելու համար, ինչն արդարացի և մարդկային վերաբերմունքի բաղադրիչներից է և կարևոր գործոն անշափահասներին հասարակություն վերադարձնելուն նախապատրաստելու համար:»: RPJDL, կանոն 56:

### Օտարերկրացիներ

«1. Բանտարկված օտարերկրյա քաղաքացիներին պետք է իրենց պետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների հետ կապ պահպանելու խելամիտ հնարավորություն ընձեռվի:

2. Տվյալ երկրում դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցություն չունեցող երկրի քաղաքացի հանդիսացող բանտարկյալները, ինչպես նաև վախսատականները և քաղաքացիություն չունեցող անձինք, պետք է հնարավորություն ունենան կապ պահպանելու այն երկրի դիվանագիտական ներկայացուցության, ինչպես նաև տեղական կամ

միջազգային կազմակերպության հետ, որը գրադաւում է նրանց պաշտպանությամբ»:SMR, կանոն 38:

«1. Հավատարմագրող պետության քաղաքացիների վերաբերմամբ հյուպատոսական ֆունկցիաների կատարումը դյուրացնելու նպատակով.

ա) հյուպատոսական սլաշտոնատար անձինք կարող են ազատորեն հաղորդակցվել հավատարմագրող պետության քաղաքացիների հետ և ունենալ նրանց հանդիպելու ազատ մուտք: Հավատարմագրող պետության քաղաքացիները նման ազատություն ունեն այն բանում, ինչ վերաբերում է նրանց կավերին հյուպատոսական պաշտոնատար անձանց հետ հանդիպելու հնարավորությանը.

4

թ) նստավայր պետության իրավասու մարմինները պետք է անհապաղ ծանուցեն հավատարմագրող պետության հյուպատոսական հիմնարկին այն մասին, որ նրա հյուպատոսական տարածաշրջանի սահմաններում այդ պետության որևէ քաղաքացի ձերբակալված է, նստած է բանտում կամ կալանքի տակ է մինչև դատավարությունը կամ բռնված է որևէ այլ կարգով, եթե այդ քաղաքացին դա պահանջի: Ձերբակալված, կալանավորված կամ դատապարտված անձի բոլոր հաղորդումները նույնպես այդ մարմինների կողմից անհապաղ հանձնվում են հյուպատոսական հիմնարկին: Նշված մարմինները պետք է անհապաղ այդ անձին հայտնեն այն իրավունքների մասին, որոնք նա ունի սույն կետին համապատասխան.

զ) հյուպատոսական պաշտոնատար անձինք իրավունք ունեն այցելելու հավատարմագրող պետության այն քաղաքացուն՝ նրա հետ գրույցի համար, որը գտնվում է բանտում, կալանքի տակ կամ բռնված է, ինչպես նաև իրավունք ունեն գրագրություն հաստատել նրա հետ և միջոցներ ձեռնարկել նրա համար ապահովելու իրավաբանական ներկայացուցություն: Նրանք նաև իրավունք ունեն այցելելու հավատարմագրող պետության ցանկացած քաղաքացու, որը գտնվում է բանտում, կալանքի տակ է կամ բռնված նրանց տարածաշրջանում՝ ի կատարումն դատական վճռի: Բայց և այնպես հյուպատոսական պաշտոնատար անձինք պետք է ձեռնպահ մնան այն քաղաքացու անունից հանդես գալու, որը գտնվում է բանտում, կալանքի տակ կամ բռնված է, եթե նա որոշակիորեն առարկում է դրա դեմ:

2. Այն իրավունքները, որոնց մասին ասվում է սույն հոդվածի 1-ին կետում, պետք է իրականացվեն նստավայր պետության օրենքներին և կանոններին համապատասխան՝ պայմանով, սակայն, որ այդ օրենքներն ու կանոնները պետք է ծառայեն այն նպատակների լրիվ իրականացմանը, որոնց համար սահմանված են սույն հոդվածին համապատասխան արվող իրավունքները:»: Հյուպատոսական կավերի մասին Վիեննայի կոնվենցիա, հոդված 36:

## Մեկնարանություններ

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է ցանկություն հայտնի բանտարկյալների հետ գրուցել թույլատրելի տեսակցությունների ընթացքում ծագող դժվարությունների մասին։ Բոլոր բանտարկյալների համար կարևոր է, որպեսզի օրինական փաստաբանի հետ շփումը լինի գաղտնի և անմիջական։ Բանտարկյալները պետք է նաև հնարավորություն ունենան իրենց ընտրությամբ շփվելու կրոնի ներկայացուցիչների հետ (տես՝ կրոնի վերաբերյալ հատվածը)։ Օտարերկրյա բանտարկյալները պետք է իրավունք ունենան շփումներ պահպանել իրենց երկրների դիվանագիտական ներկայացուցչության հետ, իսկ դրա բացակայության դեպքում՝ այն երկրի կամ կազմակերպության հետ, որը ստանձնում է նրանց պաշտպանությունը։ Եթե օտարերկրացին չի ցանկանում իր մասին տեղեկություններ հայտնել դիվանագիտական ներկայացուցչությանը, ապա այդ ցանկությունը պետք է հարգվի։ Այն բանտարկյալները, ովքեր փորձում են փախստականի կարգավիճակ ձեռք բերել, պետք է իրավունք ունենան տեսակցել փախստականների գործերով ՍԱԿ-ի գերազույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչ հետ։ Արտարին աշխարհի հետ շփումը ներառում է նաև այն, որ բանտարկյալները պետք է կարողանան հետևել իրենց հասարակությունում տեղի ունեցող զարգացումներին։ Այցելություն կատարող մեխանիզմները պետք է հսկեն, թե արդյո՞ք բանտարկյալները, հատկապես նրանք, ովքեր բանտարկված են երկար ժամկետով, հնարավորություն ունեն օգտվելու զանգվածային լրատվության տարբեր միջոցներից, ներառյալ՝ թերթերից, ամսագրերից, ռադիոյից և հեռուստատեսությունից։ Այցելություն իրականացնող մեխանիզմները պետք է տեղյակ լինեն ազգային օրենսդրությամբ սահմանված բանտարկյալների իրավունքների մասին, ներառյալ՝ ընտրելու իրավունքը, և ստուգել՝ արդյո՞ք նրանք կարող են օգտվել դրանցից։

4

### Ծագուման ենթակա հարցեր

#### Օրինական փաստաբանի հետ գրույցի հնարավորություն

- Արդյո՞ք բանտարկյալները հնարավորություն ունեն ազատորեն և մեկուսի պայմաններում շփվելու իրենց օրինական փաստաբանների հետ։
- Ի՞նչ պայմաններում է անցնում տեսակցությունն օրինական փաստաբանի հետ։ Ինչպե՞ս են օտարերկրացիները շփում արտարին աշխարհի հետ։
- Արդյո՞ք բոլոր օտարերկրացիները շփումներ են պահպանում իրենց երկրների դիվանագիտական հաստատությունների հետ։

- Ի՞նչ ընթացակարգ է գործում շփոմներից հրաժարվող բանտարկյալների համար:
- Ի՞նչ է տեղի ունենում, եթե դիվանագիտական հաստատությունը չի արձագանքում օտարերկրյա բանտարկյալի դիմումներին (սա հատկապես կարևոր է անձնական փաստաթղթերի կորատի կամ դրանց ժամկետը լրանալու դեպքում):

## 4

### **Արտաքին տեղեկատվության մատչելիություն**

- Բանտարկյալների համար որքանո՞վ են մատչելի զանգվածային լրատվության միջոցները (թերթերը, հեռուստատեսությունը):
- Այդ առումով կա՞ն արդյոք սահմանափակումներ, եթե այն՝ ինչպիսի:
- Արդյո՞ք բանտարկյալներն ապահովում են ռադիորնդունիչներով և հեռուստացույցներով, եթե ոչ՝ ի՞նչ ընթացակարգով են բանտարկյալներն ինքնուրույն ձեռք թերում դրանք:
- Արդյո՞ք բանտարկյան իշխանությունները բանտարկյալներին անվճար ապահովում են թերթերով, ամսագրերով և պարբերական մամուկի այլ տեսակներով: Եթե ոչ՝ արդյո՞ք բանտարկյալները ինարավորություն ունեն զնալու և ստանալու դրանք:

### **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

#### **Չափանիշներ**

«1. Այն բանտարկյալներին, ովքեր ընդունակ են դրանից օգուտ քաղել, պետք է ընձեռել կրթության հնարավորություն՝ ներառյալ կրոնական դաստիարակությունն այն երկրներում, որտեղ դա բույլատրվում է: Անզրագետների և երիտասարդների ուսուցումը հարկավոր է պարտադիր համարել, և բանտերի դեկավարման մարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն դրան:

2. Բանտարկյալների ուսուցումը հնարավորին չափով պետք է կապակցել երկրում գործող կրթական համակարգին, որպեսզի ազատվող բանտարկյալները կարողանան հետազայում նույնպես սովորել՝ առանց բարդությունների::»: SMR, կանոն 77:

«Քոլոր բանտարկյալները պետք է իրավունք ունենան մասնակցելու մշակութային միջոցառումներին և ստանալու կրթություն՝ ուղղված մարդկային անհատի զարգացմանը::»:BPTD, սկզբունք 6:

«Ազատագրկման բոլոր վայրերում մշակվում և իրականացվում է բազմակողմանի կրթական ծրագիր, որը բանտարկյալներին հնարավորություն է տալիս բավարարելու իրենց գոնե որոշ պահանջներն ու նախասիրությունները: Նման ծրագրերի նպատակը պետք է լինի բանտարկյալների սոցիալական վերականգնման հեռանկարների բարելավումը, նրանց հոգեկան ուժերի պահպանումը, շրջակա միջավայրի նկատմամբ նրանց վերաբերմունքի բարելավումը և արժանապատվության զգացման բարձրացումը:»: EPR, կանոն 77:

«Ուսուցումը պետք է դիտվի որպես ռեժիմային գործունեության տեսակ, որը ունի նույն կարգավիճակը և վարձատրվում է հիմնականում նույն կերպ, ինչպես աշխատանքը՝ պայմանով, որ այն իրականացվի տվորական աշխատանքային օրվա ընթացքում և ներառվի հաստատված անհատական ուղղիչ ծրագրերում:»: EPR, կանոն 78:

«Բոլոր բանտարկյալներին պետք է բույլատրվի ստանալ կրթություն, որը պետք է սահմանված կարգով ներառի հանրակրթական առարկաներ, արհեստագործական կրթություն, ստեղծագործական և մշակութային գործունեություն, ֆիզիկական կրթություն և սպորտ, սոցիալական ուսուցում և գրադարանային ծառայություններ:»: R (89) 12, § 1:

«ը) Հնարավոր բոլոր դեպքերում բանտարկյալներին պետք է բույլատրվի բանտից դուրս մասնակցելու կրթական գործընթացին,

թ) Այն դեպքերում, եթե կրթական գործընթացը կազմակերպվում է բանտից դուրս, հասարակությունը պետք է հնարավորին լայնորեն ընդգրկվի այդ գործում:»: ՍՍԿ-ի բանտերում կրթության հարցերով տնտեսական և սոցիալական խորհրդի 1990թ. 20-րդ բանաձև: Տես՝ նաև R (89) 12-ի հանձնարարականների ամբողջ տեքստը, ECOSOC-ի 1990/20 բանաձևի 1-ին պարբերություն SMR, Կանոն 82, EPR 79-ից 82-րդ կանոններ, ինչպես նաև՝ բանտերում կրթության մասին UNESCO-ի հանձնարարականներ:

### **Մինչդատական կալանք**

«Միջոցառումների հագեցած ծրագրի առկայությունը (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն) մեծ կարևորություն ունի բանտարկյալների բարեկեցության համար: Խոսքը գնում է բոլոր բանտարկյալների մասին, ներառյալ՝ դատապարտվածներին և մինչդատական կալանք կրողներին: ԽԿԿ-ն նկատել էր, որ մինչդատական կալանքի համար նախատեսված բանտերում միջոցառումներն անշափ սահմանափակ են: Բանտարկյալների կազմի հաճախակի փոփոխությունների ենթարկվող այդպիսի հաստատություններում ռեժիմային միջոցառումներն ել ավելի նպաստավոր պետք է լինեն:»

Խոսք անգամ չի կարող լինել բանտարկյալների հանդեպ անհատական վերաբերմունքի մասին: Ամեն դեպքում բանտարկյալները չեն կարող պարզապես անգործության և ձանձրությի մատնվել՝ շարաբներով, երբեմն նույնիսկ ամիսներով փակված լինելով իրենց խցերում: Նման դեպքերում արդեն կարևոր չեն խցերի կենցաղային սլայմանները: ԽԿԿ-ն որոշել է, որ առաջադրվող նպատակը պետք է լինի այն, որ մինչդատական կալանքի համար նախատեսված հաստատություններում պահպող բանտարկյալների համար երաշխավորվի օրվա մի զգալի (8 ժամ և ավելի) մասի անցկացում խցերից դրւու՝ տարաբնույթ օգտակար գործունեության մեջ ներգրավելով: Անշոշտ, դատապարտված բանտարկյալների համար նախատեսված հաստատություններում ռեժիմները պետք է առավել նպաստավոր լինեն:»: CPT, GR2, § 47:

## 4

### **Կանայք**

«Ազատազրկված կանայք պետք է տարբեր միջոցառումների մասնակցելու հնարավորությունից (աշխատանք, ուսուցում, կրթություն, սպորտ) օգտվեն տղամարդ բանտարկյալներին հավասար (...): ԽԿԿ-ի պատվիրակությունները հաճախ հանդիպում են դեպքերի, երբ բանտարկյալ կանանց առաջարկվում են գործունեության տեսակներ, որոնք համարվում են «հարմար կամ պատշաճ» (ինչպես, օրինակ՝ կարուծելը կամ այլ ձեռքի աշխատանքը), մինչեւ տղամարդ բանտարկյալներին առաջարկվում է առավելապես արիեստագործական բնույթի ուսուցում: ԽԿԿ-ի տեսակետից այդպիսի խորականությունը կարող է ծառայել միայն կանանց սոցիալական դերի մասին հնացած մոտեցումների աճրապնդմանը: Ավելին, կախված հանգանակներից՝ ռեժիմային միջոցառումներին հավասար մասնակցության հարցում կանանց մերժելը կարող է որակվել որպես նվաստացուցիչ վերաբերմունք:»: CPT, GR 10, § 25: Տես՝ նաև ACPR, A-14-a) և IDRCPDL:

### **Անչափահասներ**

«Դպրոցական պարտադիր կրթության տարիքից դրւու եկած և իրենց կրթությունները շարունակել ցանկացող անչափահասներին պետք է հատկացվի այդպիսի հնարավորություն և խրախուսանք՝ միաժամանակ հնարավոր ամեն ինչ անելով՝ ապահովելու ուսուցման համապատասխան ծրագրերին մասնակցելու հնարավորությունը:»: RPJDL, կանոն 38:

«Ուղղից հաստատություններում գտնվող անչափահասներին տրվող դիպլոմներում կամ կրթության վկայականներում չպետք է անել որևէ նշում այն մասին, որ տվյալ անչափահասը գտնվել է ուղղից հաստատությունում:»: RPJDL, կանոն 39:

### Մեկնարանություններ

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է ստուգեն, թե ինչ կրթություն է ապահովում բանտային համակարգում, ինչպես նաև պարզեն դրա տարածմանը հատկացվող ուշադրությունը:

Կրթությունը բանտարկյալին հասարակություն վերահստեղելու և նրա անձնական զարգացումն ապահովելու կարևոր գործոններից է: Այն պետք է համապատասխանի բանտում բանտարկյալների հատուկ պահանջներին, ինչպես, օրինակ՝ լեզվի ուսուցումը կամ կարդալ, գրել և հաշվել սովորելը: Միջազգային չափանիշները կրթությունը համարում են անհատական վերականգնողական ծրագրին ինտեգրված մոտեցման տարրերից մեկը, որը բանտարկյալներին պատրաստվում է ազատ արձակման՝ նրանց կարիքներին և ներուժին համապատասխան:

Հասարակության մեջ վերահստեղումն և արտաքին աշխարհի հետ շփման տեսանկյունից մեծ առավելություն է հանդիսանում այն հանգանանքը, որ կրթությունը կատարվում է հասարակության ներկայացուցիչների կրողմից (օրինակ՝ տեղական դպրոցներ կամ քոլեջներ, տեղաբնակ ուսուցիչներ): Ուսուցումը նույնիսկ կարող է կազմակերպվել հասարակությունից չմեկուսացված պայմաններում՝ բանտից դուրս: Ստացված գիտելիքները պետք է համարժեն լինեն արտաքին աշխարհում ընդունված չափանիշներին: Կրթությունը պետք է խրախուսվի այնպես, ինչպես աշխատանքը:

### **Ծագուման ենթակա հարցեր**

- Ի՞նչ տեսակի կրթություն է առաջարկվում:
- Ինչպե՞ս են խրախուսվում կրթական գործունեությանը մասնակցող բանտարկյալները:
- Կարո՞ղ են արդյոք բոլոր ցանկացող բանտարկյալները մասնակցել կրթական գործունեությանը:
- Ինչպիսի՞ վիճակագրություն է կազմվում կրթական գործընթացին ներգրավելու և ձեռք բերված հաջողությունների վերաբերյալ:
- Արդյո՞ք տրամադրվող կրթությունը համապատասխանում է կրթության նպատակին: Արդյո՞ք կրթական միջոցառումները համապատասխանում են որոշակի կատեգորիաների բանտարկյալների (օրինակ՝ օտարերկրացիների) կարիքներին:
- Արդյո՞ք կրթությունը խրախուսվում է:
- Արդյո՞ք ուսուցումը և կրթությունը ենթադրում է նաև հաստառությունից դուրս աշխատող ուսուցիչների և հրահանգիչների ներգրավում:
- Որտե՞ղ են իրականացվում կրթական միջոցառումները:
- Ինչպե՞ս են բանտարկյալներն օգտվում գրադարանից:
- Գրադարանում կա՞ արդյոք բանտարկյալների մայրենի լեզուներով գրականություն:
- Արդյո՞ք կանայք կրթությունը ստանում են նույն որակով և նույն պայմաններում, ինչ տղամարդ բանտարկյալները:
- Արդյո՞ք բանտարկյալների կրթական հնարավորությունները համեմատելի են արտաքին աշխարհում գործող կրթական համակարգին:
- Արդյո՞ք կրթությունը տրամադրվում է արդարացի և ոչ խտրական պայմաններում:

### **Մարմնամարզություն մաքուր օրում**

#### **Չափանիշներ**

«1. Բացօթյա աշխատանքներում չներգրավված բոլոր բանտարկյալները բակում ամեն օր գոնե մեկժամյա համապատասխան մարմնական վարժանքներ անցկացնելու իրավունք ունեն, եթե եղանակը տալիս է դրա հնարավորությունը:»

2. Մանկահասակ և ֆիզիկական համապատասխան վիճակում գտնվող, համապատասխան տարիքի մյուս բանտարկյալներին պետք է

մարզանքի և խաղերի հնարավորություն տրամադրել՝ վարժությունների համար հատկացված ժամանակահատվածում: Դրա համար պետք է ունենալ անհրաժեշտ հրապարակներ, սարքավորում և հարմարանք:»:SMR, կանոն 21:

«Յուրաքանչյուր բանտարկյալի, ով չի աշխատում ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս կամ չի գտնվում բաց տիպի հիմնարկում, եթե եղանակը թույլ է տալիս, թույլատրվում են զրուանքներ կամ հանապատասխան ֆիզիկական վարժություններ մարուր օդում, կամ, որքանով դա հնարավոր է՝ վատ եղանակից պաշտպանված շինությունում՝ օրական մեկ ժամից ոչ պակաս:»: EPR, կանոն 86:

«Հասուն պետք է ընդգծել մարուր օդում կատարվող մարմնամարզության կարևորությունը: Լայն ընդունելության արժանացավ պահանջն առ այն, որ ազատազրկվածներին ամեն օր առնվազն մեկ ժամ թույլատրվում է մարուր օդում զրադիկել մարմնամարզությամբ՝ որպես իրավունքների հիմնական երաշխիքներից մեկը (ցանկալի է, որ այդ պահանջն ընդգրկվեր գործունեության ծրագրում): ԽԿԿ-ն ցանկանում է նշել, որ բոլոր բանտարկյալներին առանց բացառության (ներառյալ նրանց, ովքեր կարգապահական տույժի կարգով փոխսադրվել են պատժախուց) պետք է հնարավորություն տրվի ամեն օր մարուր օդում մարմնամարզություն կատարել: Ինքնին հասկանալի է, որ մարուր օդում կատարվող մարմնամարզությանը ծառայող շինությունները պետք է լինեն բավականաշափ ընդարձակ և հնարավորության դեպքում՝ պաշտպանված անբարենապատ եղանակից:»: CPT, GR2, § 48: Տես՝ նաև ACPR, A-11և IDRCPD, հոդված 33:

### **Անշափահասներ**

«Յուրաքանչյուր անշափահաս պետք է ունենա բավականաշափ ազատ ժամանակի իրավունք ամենօրյա ֆիզիկական վարժությունների համար. ընդ որում, եթե թույլ են տալիս եղանակային պայմանները, դրանք պետք է լինեն բացօրյա: Այդ ժամանակի ընթացքում հարկավոր է ապահովել համապատասխան առողջարար կամ ֆիզիկական վարժությունների կատարում: Այդ միջոցառումների համար պետք է ապահովել համապատասխան շենք, պարագաներ ու սարքավորումներ:»: RPJDL, կանոն 47:

### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարողները պետք է հետաքրքրված լինեն զրուցելու բանտարկյալների և անձնակազմի հետ՝ ստուգելու համար՝ արդյո՞ք բոլոր բանտարկյալներն անխտիր ամեն օր կանոնավորապես ապահովում են առնվազն մեկժամյա ֆիզիկական մարմնամարզությամբ: Դրանով հանդերձ՝ խցից կամ ընդհանուր ննջարանից դուրս անցկացվող ժաման-

ակը չպետք է սահմանափակվի մեկ ժամով, հատկապես, եթե կալանքը շարունակվում է մեկ օրից ավելի: Մարմնամարզության ժամանակ բանտարկյալները պետք է օգտվեն համեմատաբար ընդարձակ տարածությունից, իսկ բնական խոտածածկի և բուսականության առկայությունն իդեալական պայմաններ կհանդիսանային: Փոքր, ցանկապատված, տանիք չունեցող շինությունների բակերը չեն կարող բավարարել բաց երկնքի տակ մարմնամարզություն կատարելուն ներկայացվող պահանջները:

Այցելություն կատարողները պետք է հնարավորություն ունենան ականատես լինել բացօրյա մարմնամարզության ձևերին, այցելել այդ մարմնամարզության համար նախատեսված տարածք և ուսումնասիրել թե մարմնամարզության ժամանակ ինչո՞վ են գրաղվում բանտարկյալները:

## 4

### **Ծզբուժնան ենթակա հարցեր**

- Արդյո՞ք օրվա ընթացքում մեկժամյա մաքուր օդում մարմնամարզություն կատարելու նվազագույն պայմաններով բոլոր բանտարկյալներն են ապահովված:
- Որքա՞ն է մարմնամարզության համար նախատեսված տարածքի մակերեսը:
- Մաքուր օդում կատարվող մարմնամարզության ընթացքում ինչո՞վ են գրաղվում բանտարկյալները (մարզական խաղեր, քայլք):
- Որքա՞ն ժամանակ է անցկացվում խցերից դուրս:
- Ո՞ր դեպքերում է սահմանափակվում խցից կամ ընդհանուր նենարանից դուրս գտնվելու ժամանակը և ի՞նչ հիմքով՝ բանտարկության խիստ ռեժիմո՞վ, անվտանգության անթավարար ենթակառուցվածքներո՞վ, անձնակազմի անթավարար քվո՞վ, ճարտարապետական և տարածքային առկա պայմանների անթավարարությա՞մբ, առանձին դեպքերի համար սահմանված կարծատև սահմանափակումներո՞վ, թե՞ այլ պատճառաբանությամբ:

### **Հանգիստ և մշակութային միջոցառումներ**

#### **Չափանիշներ**

«Քոլոր հաստատություններում բանտարկյալների համար հարկավոր է ապահովել հանգստի և մշակութային գործունեության հնարավորություն՝ ելնելով նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության շահերից:»: SMR, կանոն 78 (տես՝ նաև կանոն 82):

«Զերբարկալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրավունք ունի, եթե դա պետական աղյուրներից է, առկա միջոցների սահմաններում ստանալ խելամիտ քանակությամբ ուսումնական, գեղարվեստական և լրատվական նյութեր՝ ձերբարկալության կամ կալանքի վայրերում անվտանգությունն ու կարգուկանոնն ապահովող տրամարանական պայմանների պահպանմամբ»: BPP, սկզբունք 28:

«Յուրաքանչյուր հիմնարկ պետք է գրադարան ունենա, որը մատչելի կլինի բանտարկյալների բոլոր խճերի համար և կպարունակի ինչպես զվարճակի, այնպես էլ կրթական բովանդակությամբ գործեր: Պետք է խրախուսել բոլոր բանտարկյալներին՝ գրադարանից օգտվելու համար: SMR, կանոն 40:

«Բանտարկյան ռեժիմներն ընդունում են ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման գործում համապատասխան ձևով կազմակերպված գործունեության կարեռությունը, որն ուղղված է լավ ֆիզիկական վիճակի, սպորտով զրադարձելու և հանգստի կազմակերպումն ապահովելուն»: EPR, կանոն 83:

«Համապատասխանարար պետք է մշակվեն և իրականացվեն ֆիզիկական դաստիարակության, սպորտով զրադարձելու ծրագրեր՝ ուղղիչ ներգործության և կրթության համակարգերի նպատակների շրջանակներում և դրանց համապատասխան:Այս նպատակների համար պետք է տրամադրվի համապատասխան տարածք, համակարգեր և պիտույքներ»: EPR, կանոն 84 և ACPR, A-11:

### Անշափահասներ

Անշափահասների համար նախատեսված ուղղիչ հաստատությունները և դրանց պայմանները պետք է համապատասխանեն այնտեղ եկող անշափահասների դաստիարակության նպատակներին՝ պատշաճ ուշադրություն դարձնելով նրանց՝ մենակ մնալու, զգացմունքային ազդակների, հասակակիցների հետ շփման, սպորտային պարապմունքներին, ֆիզկուլտուրային և ժամանցի անցկացմանը մասնակցելու պահանջներին: (...»:RPJDL, կանոն 32:

«Յուրաքանչյուր անշափահաս պետք է ունենա լրացուցիչ ժամանակ՝ ամենօրյա ժամանցի համար, որի մի մասը անշափահասի ցանկությամբ հարկավոր է տրամադրել արվեստների ու արհեստների պարապմունքներին: Ուղղիչ հաստատությունը պետք է ապահովի, որ յուրաքանչյուր անշափահաս լինի ֆիզիկապես ունակ մասնակցելու նրան ներկայացվող ֆիզիկական պատրաստության ծրագրերին: Բուժական ֆիզկուլտուրայի և թերապիայի կարիքը զգացող անշափահասների համար ապահովվում է համապատասխան կուրս՝ բժշկի հսկողությամբ»: RJPDL, կանոն 47:

### **Մեկնարանություններ**

Ինչպես հասարակությունում, կալանավայրում ևս, այնտեղ պահվող անձինք պետք է օգտվեն հանգստի միջոցառումներից: Բանտարկյալների բարփոր վիճակին կարող է հատկապես նպաստել սպորտը, քանի որ այն նրանց բոյլ է տալիս ծախսել կուտակված ֆիզիկական էներգիան: Այն կարող է նաև նպաստել բանտարկյալների և անձնակազմի միջև լավ հարաբերությունների հաստատմանը: Այցելություն կատարողները պետք է վերահսկեն այն ջանքերը, որոնք վարչակազմը գործադրում է նրանց համար ժամանցային տարբեր միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, ինչի արդյունքում բանտարկյալները բավարարվածություն և ինքնազնահատման զգացում կստանան: Կարևոր է իմանալ, թե ինչ շինություններ են հատկացված այդ նպատակների համար, և արդյո՞ք դրանք ամբողջ ծավալով են օգտագործվում բանտարկյալների բարեկեցության համար:

4

### **Ճշգրտման ենթակա հարցեր**

- Ինչպիսի՞ սպորտային միջոցառումներից կարող են օգտվել բանտարկյալները, ի՞նչ հաճախականությամբ և տևողությամբ:
- Եթե բանտարկյալներին առաջարկվող միջոցառումների շարքը սահմանափակված է, ապա ի՞նչ պատճառաբանությամբ: Այցելություններ կատարողների կարծիքը սահմանափակելու իրական պատճառների մասին:
- Կա՞ արդյոք գրադարան: Ինչպիսի՞ն են դրանից օգտվելու պայմանները: Արդյո՞ք օտարակեզու բանտարկյալների համար գրքեր կան:
- Կա՞ արդյոք հանգստի միջոցառումների համար նախատեսված սենյակ կամ տարածք:
- Հանգստի ի՞նչ տեսակներից են օգտվում բանտարկյալները:
- Արդյո՞ք հանգստի միջոցառումները բոլորի համար հավասարային մատչելի են՝ առանց խորականության:

### **Կրոն**

#### **Չափանիշներ**

«1. Այն հիմնարկներում, որտեղ պահվում են միենույն դավանանքին պատկանող բավական թվով բանտարկյալներ, պետք է նշանակել տվյալ

պաշտամունքի համապատասխան որակավորում ունեցող սպասավոր կամ բույլատրել այնտեղ կատարելու համապատասխան կրոնական ծեսեր: Եթե այդպիսի բանտարկյալների թիվը բավականաշափ մեծ է և կան համապատասխան հնարավորություններ, այդպիսի սպասավոր պետք է ունենալ մշտական հիմունքներով:

2. 1-ին կետի հիման վրա հիմնարկում նշանակված կամ այնտեղ մտնելու բույլատրյուն ստացած պաշտամունքի սպասավորը պետք է հնարավորություն ունենա կանոնավորապես կատարելու կրոնական արարողություններ և դրա համար հատկացված ժամանակ միայնակ այցելել իր դավանանքին պատկանող բանտարկյալներին՝ կրոնական թեմաներով գրուցելու նպատակով:

3. Բանտարկյալներին չի կարելի գրկել ցանկացած դավանանքի համապատասխան որակավորում ունեցող ներկայացուցիչների հետ հանդիպելու հնարավորությունից: Մյուս կողմից, եթե բանտարկյալը բողոքում է պաշտամունքի սպասավորի այցելությունների դեմ, նրա ցանկությանը պետք է վերաբերվել լիակատար հարգանքով»:SMR, կանոն 41:

«Իրագործելիության սահմաններում յուրաքանչյուր բանտարկյալ պետք է հնարավորություն ունենա բավարարելու իր կրոնական պահանջմունքները՝ տվյալ հիմնարկի ներսում մասնակցելով կրոնական արարողությունների և իր տրամադրության տակ ունենալով տվյալ դավանանքին վերաբերող կրոնական գրականություն»:SMR, կանոն 42:

«Յանկալի է, որպեսզի հարգվի այն խմբի կրոնական հավատքը և մշակութային առանձնահատկությունները, որին պատկանում են բանտարկյալները, եթե դա բույլ են տալիս տեղի պայմանները»:BPTD, Սկզբունք 3:

«Յուրաքանչյուր բանտարկյալի հնարավորության սահմաններում բույլատրվում է բավարարել իր հոգևոր, կրոնական պահանջմունքները, այդ նպատակով ազատազրկման ընթացքում մասնակցել պատարագների և հավաքույթների, իրենց տրամադրության տակ ունենալ համապատասխան գրականություն և հրատարակություններ»: EPR, կանոն 46 (տես նաև EPR, կանոն 47): Տես նաև ACPR, A-11 և IDRCPDL, հոդված 43:

### **Մեկնարանություններ**

Կրոնի ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է, և բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան օգտվելու դրանից, ներառյալ՝ կրոնական ծիսակատարություններին խմբովի մասնակցելու իրավունքից: Սա, այդոհանդերձ, պարտադիր պահանջ չէ: Այն բանտարկյալները, ովքեր որևէ հավատքի չեն դավանում կամ արեխատ են, կարող են հարկադրվել դավանել այս կամ այն կրոնին: Այցելություն կատարողները

պետք է համոզվեն, որ կրոնի ընտրության իրավունքը պետական կրոնի մեծամասնություն կազմող անդամների կողմից չի սահմանափակվում, և որ կրոնական փոքրամասնությունը կազմող խմբերի իրավունքները մոռագված չեն: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան տեսակցելու կրոնի ներկայացուցիչ հետ, և այդ շփոմը պետք է անցկացվի անհատական կարգով, բանտարկյան անձնակազմի առնվազն լսողությունից հեռու:

### **Ծագրտման ենթակա հարցեր**

**4**

- Ո՞ր դեպքերում է բանտում նշանակվում կրոնի սպասավոր (օրինակ՝ հավատացյալների որոշակի թվի առկայություն):
- Ի՞նչ կրոնի ներկայացուցիչ սպասավորներ են գործում, ի՞նչ ծխականարություններ կամ հավաքույթներ են կազմակերպվում: Արդյո՞ք այս բնագավառում գործում են ինչ-որ չափանիշներ:
- Ե՞րբ և ի՞նչ հաճախականությամբ են կատարվում կրոնական ծեսերը: Արդյո՞ք հաստատությունում գործող համապատասխան կարգը բոլոր ցանկացողներին թույլ է տալիս մասնակցել ծեսերի: Ի՞նչ թիվ են կազմում ծեսերի մասնակիցները:
- Արդյո՞ք հաստատությունում առկա են պայմաններ, որոնք բանտարկյալներին թույլ կտան պահպանել կրոնական պահանջնունները սննդի, հագուստի, հիգիենայի և անհատական աղորքի առումներով:

### **Աշխատանք**

#### **Չափանիշներ**

«Պետք է ստուգվեն այն պայմանները, որոնք թույլ կտան բանտարկյալներին նախաձեռնել իմաստալից, վարձատրվող աշխատանք, ինչը կհեշտացնի բանտարկյալների վերահնտեղումը երկրի աշխատանքային շուկայում, և նրանց թույլ կտան հոգալ իրենց և իրենց ընտանիքների ֆինանսական ծախսերը»: ВРТР, սկզբունք 8:

«1. Բանտարկյալների աշխատանքը չպետք է տառապանք պատճառի նրանց:

2. Բոլոր դատապարտյալ բանտարկյալները պարտավոր են աշխատել բժշկի կողմից հավաստված ֆիզիկական և հոգեկան ընդունակություններին համապատասխան:

3. Բանտարկյալներին պետք է հանձնարարել նորմալ աշխատանքայ-

ին օրվա համար բավարար օգտակար աշխատանք:

4. Քանտարկյալներին տրամադրվող աշխատանքը հնարավորության սահմաններում պետք է լինի այնպիսին, որպեսզի բարձրացնի նրանց որակավորումը կամ որակավորում շնորհի նրանց, ինչը բույլ կտա ազատվելուց հետո գրադարձել ազնիվ աշխատանքով:

5. Այն բանտարկյալներին, ովքեր ունակ են օգուտ քաղել դրանից, պետք է սովորեցնել օգտակար արհեստներ, հատկապես՝ փոքրահասակներին:

6. Քանտարկյալները պետք է իրենց հայեցողությամբ աշխատելու հնարավորություն ունենան, եթե դա համապատասխանում է արհեստների ճիշտ ընտրությանը, դեկավարման պահանջներին և հիմնարկի կարգուկանոնին:::SMR, կանոն 71 (նմանատիպ ձևակերպում առկա է EPR, կանոն 71):

«Ոչ որ չպետք է հարկադրվի կատարելու բռնի կամ հարկադիր աշխատանք»::ICCP, հոդված 8.3 (ա):

«1. Հիմնարկներում աշխատանքի կազմակերպումն ու մեթոդները պետք է առավելագույնս նմանվեն հիմնարկի պատերից դուրս ընդունված մեթոդներին, որպեսզի բանտարկյալները կարժվեն ազատության մեջ ընդունված աշխատանքային պայմաններին:

2. Սակայն բանտարկյալների շահերն ու նրանց մասնագիտական պատրաստումը չպետք է ստորադասվեն բանտային արտադրությունից շահույթ ստանալու նկատառումներին::: SMR, կանոն 72 (նմանատիպ ձևակերպումը առկա է EPR, կանոն 72):

«1. Աշխատանքային օրվա կամ շաբաթվա առավելագույն տևողությունը սահմանվում է օրենքով կամ վարչական որոշումների հիման վրա՝ հաշվի առնելով ազատության մեջ գտնվող բանվորների աշխատանքային պայմանների բնագավառում գործող տեղական կանոններն ու սովորությունները:

2. Աշխատաժամանակը պետք է բաշխվի այնպես, որպեսզի բանտարկյալները շաբաթվա մեջ ունենան առնվազն մեկ հանգստյան օր և նրանց վերադաստիարակման համար անհրաժեշտ ուսման և գործունեության այլ տեսակների համար բավականաչափ ժամանակ»:::SMR, կանոն 75:

«1. Իրենց աշխատանքի դիմաց բանտարկյալները պետք է ստանան արդարացի վարձատրություն՝ որոշակի համակարգի շրջանակներում:

2. Ըստ այդ համակարգի՝ բանտարկյալները պետք է իրենց վաստակած գումարի մի մասն անձնական օգտագործման բույլատրվող առարկաներ ծեռք բերելու համար ծախսելու, ինչպես նաև աշխատավարձի մի մասն ընտանիքին ուղարկելու հնարավորություն ունենան:

3. Այդ համակարգով պետք է նախատեսվի նաև, որ բանտարկյալների

վաստակած փողի մի մասը պետք է հանձնվի վարչակազմի պահպանությանը և ազատվելու պահին կվերադարձվի նրանց»: SMR, կանոն 76 (նմանատիպ ձևակերպում առկա է EPR, կանոն 76-ում): Տես՝ նաև SMR, կանոններ 73, 74, ACPR, A-15, և IDRCPD, հոդված 34 1-ին պարբերություն:

#### **Անշափահասներ**

«Հստ 10-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ անշափահաս իրավախախտների հանդեպ հարկավոր է դրսերել նրանց տարիքին և իրավական կարգավիճակին համապատասխան վերաբերմունք և, դրանից ելնելով, հաշվի առնելով բանտարկության պայմանների հնարավորությունները, նրանց աշխատանքների հարկավոր է ներգրավել համեմատաբար կարճ տևողությամբ (...), որի նպատակը նրանց հետագա ուղղումն ու վերականգնումն է:»: GS 21, 13-րդ պարբերություն:

«Մասնագիտության ընտրություն կատարելու իրական հնարավորության սահմաններում և հաշվի առնելով ուղղիչ հաստատության վարչության պահանջները՝ անշափահասին պետք է տրվի հնարավորություն՝ իր ցանկությամբ ընտրելու աշխատանքի տեսակը:»: RPJDL, կանոն 43:

«Միշտ, երբ դա իրագործելի է, անշափահասներին պետք է տրվի վճարովի աշխատանքի իրավունք, հնարավորին չափ տեղական համայնքի շրջանակներում, որպես հավելում նաևնագիտական պատրաստությանը, որը իրականացվում է հետազայում աշխատանքի տեղավորման հեռանկարի բարելավման նպատակով: Այդ աշխատանքի տեսակը պետք է բույլ տա ազատվելուց հետո իրականացնելու անշափահասի մասնագիտական պատրաստվածության բարեկավում: Ուղղիչ հաստատություններում ընդունված աշխատանքի մեթոդներն ու կազմակերպումը պետք է, որքան հնարավոր է, համապատասխանեն համայնքում աշխատանքի համանման մեթոդներին ու կազմակերպմանը, որպեսզի անշափահասները կարողանան նախապատրաստվել նորմալ պայմաններում աշխատանքային գործունեության:»: RPJDL, կանոն 45:

#### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարողները պետք է փորձեն երաշխավորել, որ բանտային վարչակազմն առաջնությունը տա ուսմանը՝ բանտային աշխատուժի վճարովի շահագործման փոխարեն: Բանտարկյալների աշխատանքի վերաբերյալ չափանիշները նպատակ ունեն երաշխավորել յուրաքանչյուր բանտարկյալի հնարավորությունը՝ ընդգրկվելու իմաստալից, վճարվող գործունեության մեջ՝ որպես էժան աշխատուժ չդառնալով շահագործման առարկա: Կանոնավոր և իմաստալից աշխատանքը բանտարկյալներին հասարակություն վերադարձնելու և բանտից դուրս աշխ-

ատանք ապահովելու կարևոր գործոններից է: Վերահնտեղման տեսանկյունից բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան ստանալու հմտություններ, որոնք կմեծացնեն հետազայտմ աշխատանք գտնելու նրանց հնարավորությունները: Արհեստագործական հմտությունների ուսուցման հարմարեցումը բանտից դուրս գործող աշխատանքի շուկայի պահանջներին կարևոր դեր ունի այդ գործում: Դատապարտված բանտարկյալների աշխատանքը պարտադիր կարող է լինել միայն որոշակի պայմանների ներքո: Պարտադիր կամ բռնի աշխատանքն արգելված է, սակայն բանտարկյալների կողմից կատարվող ոչ բոլոր պարտադիր աշխատանքներն են, որ համարվում են այդպիսիք: Որոշ երկրներում տաժանակիր աշխատանքը շարունակում է կիրառվել որպես դատարանների կողմից սահմանված պատիժ, ինչը հակասում է Աշխատանքի միջազգային կազմակերպության Տաժանակիր աշխատանքի վերաբերյալ կոնվենցիային: Մինչդատական կալանք կրող գտնվող անձանց չի կարելի ստիպել աշխատել, բայց նրանց այդպիսի հնարավորություն պետք է տրվի բանտարկյալի ցանկության դեպքում: Պետք է աշխատեն միայն այն բանտարկյալները, ովքեր ի վիճակի են աշխատել: Հիվանդության դեպքում աշխատողը պետք է քննվի բժշկի կողմից՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով տեղեկանք, որը բանտարկյալին հնարավորություն կտա պահպանելու աշխատավարձը: Կիմ բանտարկյալներին պետք է հնարավորություն տրվի օգտվելու հավասար աշխատանքային հնարավորություններից, ինչը նրանց բույլ կտա ազատ արձակելուց հետո հոգալ իրենց կարիքները: Չպետք է սահմանափակվեն նրանց՝ կարուծնով կամ ձեռքի այլ աշխատանքով զբաղվելու հնարավորությունները:

4

### **Առավել կարևոր պայմաններն են՝**

- Աշխատանքը չպետք է կրի պատժի բնույթ:
- Այն պետք է վարձատրվի (որոշ երկրներում բանտարկյալների պատժաչափը կրճատվում է աշխատած յուրաքանչյուր օրվա շաբաթ):
- Աշխատանքային օրվա տևողությունը չպետք է գերազանցի բանտից դուրս ընդունված ժամկետներին:
- Առողջության և անվտանգության ազգային չափանիշները պետք է գործեն նաև բանտի աշխատավայրում:

### **Ճշգրտման ենթակա հարցեր**

- Աշխատանքի ինչպիսի՞ հնարավորություններ կամ բանտում, և

որքանո՞վ է այն համեմատելի կալանավայրից դուրս առկա հնարավորություններին:

- Բանտից դուրս աշխատելու հնարավորություն կա՞ արդյոք (հատկապես՝ երիտասարդների և նրանց համար, ում ազատվելու ժամկետը մոտ է):
- Եթե աշխատանքը բավարար չէ բոլոր բանտարկյալների համար, ինչպե՞ս է կատարվում աշխատողների ընտրությունը: Արդյո՞ք - աշխատանք տրամադրելու գործընթացը արդարացի է, թափանցիկ և ոչ խտրական:
- Ի՞նչ տեսակի արհեստագործական ուսուցում է առաջարկվում կալանավայրում:
- Արդյո՞ք աշխատանքը կամավոր է:
- Ինչպիսի՞ն են աշխատանքային պայմանները և որքանո՞վ են դրանք համապատասխանում կալանավայրից դուրս ընդունված պայմաններին:
- Արդյո՞ք կալանավայրից դուրս աշխատողների իրավունքները պաշտպանված են:
- Արդյո՞ք ստացված եկամուտը բաշխվում է ազատազրկված անձին, բանտի վարչակազմի և պետության միջև: Եթե այն, ապա ինչպե՞ս է բաժանվում եկամուտը, և արդյո՞ք այդ գործընթացը թափանցիկ է:
- Վաստակ ծախսելու և կուտակելու ի՞նչ հնարավորություններ ունի բանտարկյալը:

## 4

### **Հետազա ընթերցումներ**

Andrew Coyle, *A Human Rights Approach to Prison Management*, 2003. (Chapter 7 constructive activities and social reintegration; Chapter 8: Contacts with the Outside World, pp.83-104) PRI, *Making standards work*, London 2001. (Section Vprisoners contacts with the outside world, pp.101-115; Section VI – Programmes for prisoners, pp. 7-149) UN HCHR, *Human Rights and Prisons*, Geneva 2003. (Section 6: Making the best use of prisons; Section 7: Prisoner's contact with the outside world, pp.76-102) Peter Sutton, (ed.) *Basic Education in Prisons: Final Report*, United Nation/ UNESCO Institute for Education (UIE) joint publication.

## ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Բանտարկյալների ֆիզիկական և հոգեոր առողջությունը հատկապես կարևոր է, քանի որ բանտարկությունը նրանց զրկում է իրենց մասին հոգ տանելու հնարավորությունից և ինքնին բացասական ազդեցություն է ունենում բանտարկյալների ֆիզիկական և հոգեոր առողջության վրա: Բանտային վարչակազմը պատասխանատվություն է կրում բանտարկյալների բավարար առողջական վիճակի, առողջ ապրելակերպի, աշխատանքային պայմանների և պատշաճ բժշկական սպասարկման համար: Բանտում տրամադրվող բուժսպասարկումը պետք է համարժեք լինի կալանավայրից դուրս ընդունված սպասարկմանը: Այցելություն կատարողների հատուկ ուշադրության կենտրոնում պետք է լինեն բանտարկյալի համաձայնության և բժշկական գաղտնիքի հետ կապված հարցերը: Հիվանդի և բուժող բժշկի միջև վստահության վրա հիմնված հարաբերությունները կարևոր են: Ավելին, միջազգային կանոններն առանձնացնում են այն հանգամանքը, որ բանտարկյալը չի կարող դառնալ բժշկական այնպիսի գիտափորձների առարկա, որոնք կարող են ազդել նրա ֆիզիկական կամ հոգեկան առողջության վրա: Այցելությունները կատարողները պետք է տեղյակ լինեն այն հիմնական առողջական խնդիրներին, որոնց բանտարկյալները բախվում են իրենց երկրում և տարածաշրջանում: Դրանք կարող են ներառել բռքախտը, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ը և բունավորումները: Հիվանդները պետք է հնարավորություն ունենան օգտվելու բուժական հատուկ ծրագրերից, այդ թվում՝ ազատ արձակվելուց հետո:

### **Բժշկական ծառայություն**

- Բժշկական խնամքի հասանելիություն
- Հատուկ բժշկական խնամք կանաց (և երեխաների) համար
- Հատուկ բժշկական խնամք հոգեկան հիվանդների համար
- Բժշկական անձնակազմ

### **Բժշկական խնամքի մատչելիություն**

#### **Չափանիշներ**

5

«Քանի ընդունելիս և այդրուելու՝ ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր բանարկյալի պետք է ենթարկել բժշկական զննության՝ նրա մարմնական և հոգեկան առողջությունը պարզելու համար, եթե ենթադրվում է, որ բանարկյալները տառապում են որևէ վարակիչ հիվանդությամբ՝ անհրաժեշտ միջոցներ ծեռնարկել նրանց մեկուսացնելու ուղղությամբ, բացահայտել բանարկյալների վերադաստիհարակմանը խոչընդոտող մարմնական կամ մտավոր արատները և որոշել աշխատելու ֆիզիկական ունակությունը»:SMR, կանոն 24 (նմանատիպ ձևակերպում առկա է EPR, կանոն 29-ում):

«Զերբարկալված կամ կալանքի տակ գտնվող անձին հնարավորություն է ընձեռվում պատշաճ բուժզննում անցնել ծերբակալության կամ բանարկության վայր ժամանելուց հետո ամենակարճ ժամկետում, հետագայում նրան բուժապասարկում և բուժում է տրամադրվում ամեն անգամ, եթե դրա անհրաժեշտությունը ծագում է: Բուժապասարկումն ու բուժումը տրամադրվում են անվճար:»: BPP, սկզբունք 24:

Քանի ընդունվող բոլոր բանարկյալներն անհապաղ պետք է զննվեն բժշկական անձնակազմի կողմից: Իր մինչ այժմ ներկայացրած գեկույցներում ԽԿԿ-ն հանձնարարում է, որ նոր բերված ցանկացած բանարկյալի հետ պետք է գրույց վարվի, և քանի փոխադրելուց հետո անհրաժեշտության դեպքում հնարավորինս արագ զննվի բուժող բժշկի կողմից՝ առողջական վիճակը պարզելու համար: Պետք է ավելացնել, որ որոշ երկրներում բանի ընդունվելուն պես կատարվող բժշկական դասակարգումն ըստ առողջական վիճակի կատարվում է բարձրակարգ բուժքոջ կողմից: Վերջինս արդյունքների մասին գեկուցում է բժշկին: Այս մոտեցումը համարվում է առկա միջոցներից առավել արդյունավետը: Ցանկայի է նաև, որ քանի ընդունվելիս բանարկյալներին հանձնվեն հուշաթերթիկներ կամ տեղեկագրեր, որոնցում տեղեկություններ գետեղված կլինիկ բուժառայության գործունեության և հիգիենայի տարրական պայմանների մասին»: CPT, GR 3, § 33:

«2. Մասնագետի ծառայությունների կարիք ունեցող հիվանդ բանտարկյալներին պետք է տեղափոխել հասուլ բժշկական հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ: Բանտային հիվանդանոցները պետք է ունենան հիվանդների պատշաճ խնամքի և նրանց բուժման համար անհրաժեշտ սարքավորում, հարմարանք և դեղամիջոցներ, ինչպես նաև բավականաչափ որակյալ անձնակազմ:»

3. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է որակյալ ատամնաբույժի ծառայություններից օգտվելու հնարավորություն ունենա:»:

SMR, կանոն 22:

«1. Բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջության մասին պարտավոր է հոգ տանել բժիշկը, որը պետք է ամեն օր ընդունի կամ այցելի բոլոր հիվանդներին, նրանց, ովքեր գանգատվում են հիվանդությունից, ինչպես նաև նրանց, ում հանդեպ հատուկ ուշադրություն է անհրաժեշտ:»: SMR, կանոն 25 (նմանատիպ ձևակերպում առկա է EPR, կանոն 30-ում):

«Իրավապահ մարմինների ծառայողները պետք է երաշխավորեն բանտարկյալների առողջության լիարժեք պաշտպանություն և անհապաղ միջոցներ ձեռնարկեն, որ ապահովի ըստ անհրաժեշտության բժշկի դիմելու հնարավորություն:»: Իրավապահ մարմինների ծառայողների վարքի կանոնագիրք, հոդված 6:

«Բանտարկության ընթացքում բանտարկյալները պետք է ցանկացած ժամանակ բժշկի ծառայություններից օգտվելու հնարավորություն ունենան՝ անկախ բանտարկության ռեժիմից: Մենախցային բանտարկության ընթացքում բժշկի ծառայությունների մասին առավել մանրամասն տես՝ ԽԿԿ 2-րդ ընդհանուր գեկույցի 56-րդ պարբերություն, CPT/Inf (92)3):

«Առողջապահական համակարգը պետք է կազմակերպված լինի այնպես, որ բժշկին տեսակցելու կարիք ունեցողների խնդրանքը բավարարվի առանց անհարկի ճգճգումների: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան առողջապահական ծառայությանը դիմել գաղտնիության պայմաններում, օրինակ՝ նամակի կամ կնքված ծրարի միջոցով: Բացի այդ, բանտային ծառայողները չպետք է աչքի անցկացնեն դրանք:»: CPT, GR 3, § 34 Տես՝ նաև ACPR, A-4 և IDRCPD, հոդված 25:

### **Մենարանություններ**

Այցելություն կատարողը պետք է ունենա տեղեկատվություն, որը նրան բույլ կտա համեմատել բանտային և «քաղաքացիական» առողջապահական ծառայությունները: Ազատազրկված անձանց առաջարկվող բժշկական խնամքի որակը պետք է հանարժեք լինի քրեակատարողական համակարգի դուրս ընդունված չափանիշներին (համարժեքության

սկզբունք): Նոր բերված բանտարկյալը պետք է զննվի բժշկի կամ որակավորում ունեցող բուժքրոջ կողմից: Զննությունը բժշկական անձնակազմին հնարավորություն է տալիս հիվանդություններն ի հայտ բերել նախնական փոլում, ինչպես նաև բացահայտել մինչև տվյալ հաստատություն բերվելը բանտարկյալին պատճառված վնասվածքները:

Բժշկական գննության գործընթացը կարևոր է նաև բանտարկյալներին և անձնակազմին տարափոխիկ հիվանդություններից պաշտպանելու տեսանկյունից: Բժշկի ծառայություններից օգտվելու հնարավորություն պետք է երաշխավորվի բոլոր բանտարկյալների համար՝ առանց անհարկի ճգճգումների (եթե դեպքն անհետաձգելի չէ, ապա՝ մեկ օրվա ընթացքում): Զննությունները պետք է կատարվեն բանտարկյալների արժանապատվությունը հարցելու պայմաններում: Բժշկական խորհրդատվությունը պետք է կատարվի առանձին կամ առնվազն բանտային անձնակազմի և այլ բանտարկյալների լսողությունից հեռու:

Բանտի վարչակազմը պետք է բույլ տա օգտվելու բժշկի ծառայությունից՝ առանց բանտարկյալներից բժշկական խորհրդատվության պատճառների մասին բացատրություն պահանջելու: Հատուկ բուժում պահանջող բանտարկյալները պետք է բուժումը ստանան անգամ այն դեպքում, եթե անհրաժեշտ է բանտարկյալին փոխադրել բանտից դուրս գտնվող բժշկական հաստատություն: Ցանկացած բանտ պետք է ունենա բանտարկյալներին այլ հիվանդանոց անհապաղ փոխադրելու հետ կապված հարցերը կանոնակարգող դրույթներ: Բժշկական խնամքից օգտվելու արգելվը կարող է համարվել դաժան վերաբերմունք: Բանտարկյալները չեն պահանջություն ունենալու համար: Եթե այցելություններ կատարող թիմն իր կազմում համապատասխան որակավորում ունեցող բժիշկ չունի, ապա թիմի անդամները պետք է համապատասխան բանտարկյալների առողջական վիճակի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ պահանջեն, օրինակ՝ առավել հաճախակի հանդիպող հիվանդությունների, վարակիչ և տարափոխիկ հիվանդությունների, մահվան դեպքերի մասին: Նրանք պետք է հետազոտեն նաև բուժօգնություն ստանալու գործող համակարգը:

### **Ծագրտման ենթակա հարցեր**

- Առավելապես բժշկական ի՞նչ պայմաններ են գործում:
- Արդյո՞ք բանտում գործում է դրանք իրագործելու ռազմավարություն:
- Արդյո՞ք բանտն ընդգրկված է բորբախտի, ՍԻԱՎ/ԶԲԱՀ-ի և այլ տարածված հիվանդությունների դեմ պայքարելու ազգային ռազմավարության ծրագրերում:
- Որտե՞ղ է կատարվում բժշկական խորհրդատվությունը և ի՞նչ պ-

**այմաններում:**

- Ինչպե՞ս են բանտարկյալներն օգտվում բժշկական ծառայություններից (որքա՞ն են սպասում բժշկին կամ դրսից հրավիրված մասնագետի հետ հանդիպելուն)։
- բանտարկյալի պահանջով, ի՞նչ կարգով։
- բուժանձնակազմի միջոցով, ի՞նչ հաճախականությամբ են նրանք այցելում բանտ։
- հսկողություն իրականացնող անձնակազմի միջոցով, ինչպե՞ս։
- Արդյո՞ք բժշկական անձնակազմը հերթապահում է շուրջօրյա։
- Սահմանվա՞ծ է արդյոք ցերեկվա/գիշերվա ընթացքում անհապաղ բժշկական նկատառումներից ենթակա փոխադրում իրականացնելու ընթացակարգ։
- Ինչպե՞ս են բանտարկյալներն օգտվում հոգեբանի ծառայություններից։
- Կա՞ն արդյոք բողոքներ բժիշկների ծառայություններից օգտվելու կամ կարգապահական միջոցների կիրառման ընթացքում խորականության վերաբերյալ։
- Անձնակազմը հետևո՞ւմ է արդյոք դեղորայքի պահպանման կանոններին։
- Ինչպե՞ս են նշանակվում դեղերը։
- Ինչպե՞ս է իրականացվում հսկողությունը դեղերի պահեստների վրա։

**5****Բժշկական անձնակազմ****Չափանիշներ**

«1. Բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջության մասին պարտավոր է հոգ տանել բժիշկը, որը պետք է ամեն օր ընդունի կամ այցելի բոլոր հիվանդներին, նրանց, ովքեր գանգատվում են հիվանդությունից, ինչպես նաև նրանց, ում հանդիպ հատուկ ուշադրություն է անհրաժեշտ։

2. Յուրաքանչյուր անգամ, երբ բժիշկը գտնում է, որ բանտարկյալի մարմնական կամ մտավոր հավասարակշռությունը բանտարկության արդյունքում կամ բանտարկության պայմաններից որևէ մեկի հետևանքով խախտվել է կամ խախտվելու վտանգի տակ է, այդ մասին գեկուցում է տնօրենին։»: SMR, կանոն 25 (նմանատիպ ձևակերպում առկա է EPR, կանոն 30-ում)։

«1. Յուրաքանչյուր հիմնարկ իր տրամադրության տակ պետք է ուն-

ենա համապատասխան որակափորում ունեցող, հոգեբուժության բնագավառին գիտակ առնվազն մեկ բուժաշխատող: Բժշկական սպասարկումը հարկավոր է կազմակերպել առողջապահության տեղական կամ պետական մարմինների հետ սերտ կապի մեջ: Այն պետք է ներառի հոգեբուժական ախտորոշման ծառայությունները, իսկ այն վայրերում, որ անհրաժեշտ է հոգեպես ոչ նորմալ բանտարկյալների բուժումը:

2. Մասնագետի ծառայությունների կարիք ունեցող հիվանդ բանտարկյալներին պետք է տեղափոխել հասուլ բժշկական հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ: Բանտային հիվանդանոցները պետք է ունենան հիվանդների պատշաճ խնամքի և նրանց բուժման համար անհրաժեշտ սարքավորում, հարմարանք և դեղամիջոցներ, ինչպես նաև բավականաչափ որակյալ անձնակազմ:»:SMR, կանոն 22 (նմանատիպ ձևակերպում առկա է EPR, կանոն 26-ում):

«Բանտային առողջապահական ծառայությունն առնվազն պետք է ապահովի կանոնավոր ամբողջատոր խորհրդատվություն և անհապաղ բուժում (իհարկե, ի հավելումն դրա, կարող է լինել նաև հիվանդանոցային շինություն՝ մահճակալներով): Բարձրակարգ ատամնաբույժի ծառայությունները պետք մատչելի լինեն ցանկացած բանտարկյալ համար:»

Բացի այդ, բանտային բժիշկները պետք է հնարավորություն ունենան ներգրավելու բժշկական մասնագետների՝ համապատասխան ծառայություններ մատուցելու համար: Ինչ վերաբերում է անհապաղ բուժմանը, ապա բժիշկը պետք է միշտ պատրաստ լինի դրան: Բացի այդ, շինությունում պետք է մշտապես ներկա լինի առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ունեցող մեկը, ցանկալի է՝ բուժքորչ որակավորմանը: Ամբողջատոր բուժումը պետք է վերահսկվի բժշկական անձնակազմի կողմից. շատ դեպքերում այն արդյունավետ չէ հետքուժական խնամք ապահովելու առումով, և դրա կատարման նախաձեռնությունը կախված է բանտարկյալից:»:CPT, GR3, § 35:

«Բուժանձնակազմի, բերապետների բժշկական երիկայի խախտում է համարվում. (թ) բանտարկյալների վերաբերյալ տեղեկանքների կազմումը կամ դրա կազմմանը մասնակցելը՝ այնպիսի պատիժ կրելուն բանտարկյալների առողջական վիճակի առումով պատրաստ լինելը հավաստելու նպատակով, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Դա հակասում է համապատասխան միջազգային փաստարդերին:»: ՍՍԿ-ի բժշկական երիկայի սկզբունքներ՝ խոշտանգումներից և այլ դաժան կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից բանտարկյալների պաշտպանության գործում բժշկական անձնակազմի, հատկապես՝ բերապետների դերի վերաբերյալ, սկզբունք 4:

«Բժշկական ծառայության անձնակազմը բոլոր բանտերում գործում է

պոտենցիալ սպառնալիքի ներքո: Հիվանդներին խնամելու նրանց պարտականությունը կարող է հակասության մեջ լինել բանտային վարչակազմի և բանտի անվտանգության անձնակազմի տեսակետների հետ: Այդ հանգամանքը կարող է դժվարին էթիկական խնդիրներ հարուցել: Առողջապահության հարցերում բուժաշխատողների անկախությունը երաշխավորելու համար ԽՎԿ-ն կարևոր է համարում այն հանգամանքը, որ այդ անձնակազմը հնարավորինս հետևողականորեն պետք է առաջնորդվի տեղական համայնքի առողջապահական գլխավոր գերատեսչության դրույթմերով»: CPT, GR 3, § 71: Տես՝ նաև SMR, 23-25 կանոններ և IDRCPD, հոդված 29:

### **Մեկնարանություններ**

5

Բանտում բուժառայության մակարդակն ուսումնասիրելիս այցելություն կատարող մեխանիզմներից պահանջվում է հատուկ ուշադրություն հատկացնել քժկական անձնակազմի դերի և քժկական որոշումներ իրականացնելիս նրանց անկախության վրա: Նրանք սովորաբար ունենում են հետևյալ խնդիրները՝

- ապահովել, որ բանտարկության ընդհանուր պայմանները նպաստեն առողջ միջավայր ձևափրելուն՝ համապատասխան վարչակազմին գեկուցելով առողջության վրա բուժման և բանտարկության պայմանների ունեցած ազդեցության մասին,
- հայտնաբերել տարափոխիկ հիվանդությունները և միջոցներ առաջարկել դրանց հետագա տարածումը կանխելու վերաբերյալ,
- բանտարկյալների համար երաշխավորել անհատական քժկական խորհրդատվության և բուժման հնարավորություն,
- որոշակի հիվանդությունների ի հայտ գալու դեպքում դիմել համապատասխան մասնագետներին:

Նշանակում է, որ կալանավայրի համատեքստում բուժող բժիշկը և բանտարկյալի անհատական բժիշկն է, և բանտի վարչակազմի խորհրդատուն: Դա կարող է հանգեցնել շահերի բախնան: Բանտի վարչակազմի համար բժշկի դերը՝ որպես խորհրդատու, պետք է սահմանափակվի հետևյալ հարցերով. ինչպես բարելավել ընդհանուր և անհատական առողջապահական պայմանները: Ոչ մի դեպքում բուժող բժշկին կամ բուժքողը չի կարելի խնդրել մասնակցել կարգապահական տույժերի կիրառմանը: Մրանում է հակասությունը քժկական էթիկայի և SMR-ի արդիական մեկնարանության միջև:

Բժշկական բնույթի որոշումներ կայացնելիս բժշկական անձնականը պետք է առավելագույնս օգտվի իրեն ընձեռված անկախությունից: Դրան կարելի է հասնել, եթե անձնակազմը երկրի ընդհանուր առողջապահական համակարգի մասն է, այլ ոչ թե գործում է բանտերի համար պատասխանատու իշխանությունների ենթակայությամբ:

Բժշկական անձնակազմը սահմանափակված է գաղտնիության սովորական նորմերով: Բժշկական անձնակազմի որակավորումը, անկախությունը և մասնագիտական էթիկան և նրանց մատուցած բժշկական ծառայության որակը կարող է գնահատվել առողջապահության ոլորտի մասնագետների կողմից: Այցելություն կատարողների համար նաև ցանկալի է իրենց կազմում ընդգրկել կամ որակավորում ունեցող բուժող բժիշկների կամ դիմել նրանց ծառայություններին:

## 5

### **Ծագրտման ենթակա հարցեր**

- Ովքե՞՞ր են ընդգրկված բժշկական թիմում (բժիշկներ, բուժքույրեր, հոգեբաններ, հոգեբույժներ և այլն):
- Արդյո՞ք նրանք ունեն համապատասխան մասնագիտական որակավորում:
- Որքանո՞վ են նրանք ինտեգրված հանրային առողջապահական համակարգին, մասնավորապես՝ ապրանքներից, ծառայություններից և տեղեկատվությունից օգտվելու և ուսուցման հարցերում:
- Արդյո՞ք նրանց աշխատաժամերը համապատասխանում են բանտի պահանջներին:
- Ո՞րն է նրանց խնդիրը:

### **Հատուկ բուժօգնություն կանանց և երեխաների համար**

#### **Չափանիշներ**

«(...) Ազատազրկված կանանց համար առողջապահության հավասարության սկզբունքը պահանջում է, որ նրանց առողջության պահպանմամբ զրադարձ այն բժիշկներն ու բուժքույրերը, ովքեր ունեն հատուկ բժշկական պատրաստվածություն, ներառյալ՝ գինեկոլոգիական հիվանդությունների բնագավառում: Ավելին, հատուկ կանանց առողջության պահպանմանն ուղղված կանոնադեմքի միջոցառումները, ինչպիսիք են՝ կոծքի և արգանդի վզիկի քաղցկեղի ախտորոշումը, պետք է իրականացվեն այն շափով, որքանով հասարակության մեջ:»: CPT, GR 10, § 32:

«1. Կանանց համար նախատեսված հիմնարկները պետք է ունենան հղի կանանց և ծննդկաններին խնամելու հատուկ մասնաշենքեր: Հնարավոր բոլոր վայրերում պետք է հոգ տանել, որպեսզի ծննդաբերությունն անցնի ոչ թե բանտային, այլ սովորական հիվանդանոցում: Եթե երեխան ծնվում է բանտում, ծննդյան վկայականում այդ մասին նշում չպետք է կատարվի:»

2. Այն վայրերում, որը բանտարկյալ մայրերին բույլատրվում է երեխաներին իրենց մոտ պահել, հարկավոր է նախատեսել համապատասխան որակադրմանը ամձնակազմ ունեցող մսումների ստեղծում, որտեղ երեխաներին պետք է տեղափորել մայրական խնամքից չօգտվելու ժամանակամիջոցում::»: SMR, կանոն 23:

«Ինքնին հասկանալի է, որ երեխաները չպետք է ծնվեն բանտում, և Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներում կիրառվող պրակտիկան հիմք դրեց հղի բանտարկյալ կանանց սովորական հիվանդանոցներ փոխադրելու պրակտիկային: Չնայած դրան, ԽԿԿ-ն երբեմն բախվում է այնպիսի դեպքերի, երբ գինեկորոգիական հետազոտման կամ ծննդաբերության ժամանակ կին բանտարկյալներին ճեռնաշղթաներ են հազցնում կամ նրանց կապում են մահճակալներին կամ այլ առարկաների: Այսպիսի մոտեցումը միանգամայն անընդունելի է և վստահորեն կարելի է ասել, որ դա անմարդկային և մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք է: Անվտանգության պահպանման համար կարող են կիրառվել և պետք է կիրառվեն այլ միջոցներ: CPT, GR 10, §27:

5

### **Մեկնաբանություններ**

Այցելություն իրականացնող մեխանիզմները պետք է տեղյակ լինեն, որ բանտերը հաճախ բավարար չափով հարմարեցված չեն կանանց կարիքներին, և որ այդ վիճակն ազդում է կանանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Բացի այդ, կանայք կարող են նախքան բանտարկությունը ենթարկված լինել չարաշահումների, ներառյալ՝ բռնաբարության: Շատ երկրներում կանայք մինչ օրս խոցելի վիճակում են մնում անգամ բանտարկությունից հետո: Գինեկորոգիական օգնությունը պետք է երաշխավորված լինի: Պետք է բավարարել հատկապես հղի և կերակրող մայրերի կարիքները:

### **ճշգրտման ենթակա հարցեր**

- Քուժանենակազմում գինեկորոգ ընդգրկված է արդյոք, և որո՞նք են նրա աշխատանքային ժամերը:
- Ինչպիսի՞ն են գինեկորոգի ծառայությունից օգտվելու պայմանները:
- Արդյո՞ք բավարարվում են հղի կանանց հատուկ կարիքները:

- Որտե՞ղ են ծննդաբերում կանայք:
- Եթե կին բանտարկյալների հետ մանկահասակ երեխաներ են ապրում, արդյո՞ք բանտում կա մանկաբույժի հաստիք:
- Արդյո՞ք կանայք ստանում են նույնափիսի բուժօգնություն, ինչ սոլանարդիկ:

### **Հասուկ բուժօգնություն հոգեկան հիվանդ բանտարկյալների համար**

#### **Չափանիշներ**

**5**

«1. Հոգեկան հիվանդ համարվող անձանց չափոր է բանտարկել: Ուստի հարկավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել նրանց հոգեբուժարան տեղափոխելու համար:

2. Այլ հոգեկան հիվանդություններով կամ արատներով տառապող բանտարկյալներին պետք է հսկողության վերցնել և բուժել հատուկ հիմնարկներում բժիշկների գիտավորությամբ:

3. Բանտում գտնվելու ընթացքում նման բանտարկյալները պետք է թժշկական հատուկ հսկողության տակ գտնվեն:

4. Քրեակատարողական հիմնարկներին կից գործող թժշկական և հոգեբուժական ծառայությունները պետք է ապահովեն դրա կարիքն ունեցող բոլոր բանտարկյալների հոգեկան բուժումը::»: SMR, կանոն 82 (նմանատիպ ձևակերպում առկա է EPR, 100-րդ կանոնում):

«Հոգեկան խանգարումներով տառապող բանտարկյալները պետք է պահպեն և խնամվեն համապատասխանաբար սարքավորված և համապատասխան որակավորմամբ բուժանձնակազմ ունեցող հիվանդանոցային շինություններում: Բանտարկյալն հանրային հիվանդանոց փոխադրելու որոշում կարող է կայացնել հոգեբույժը, որը պետք է վավերացնի իրավասու մարմինը::»:R(98)7, 55-րդ պարբերություն:

«Մասնագետները հաճախ հանգում են հետևողաբար կամ ելով՝ հոգեկան հիվանդներին առավել նպատակահարմար է տեղավորել բանտային հանակարգից դուրս գործող հիվանդանոցներում և առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող այլ հաստատություններում: Մյուս կողմից, կարող է վեճի առարկա դառնալ այն հանգամանքը, որ բուժումը բանտային համակարգում գործող հոգեբուժական հաստատությունում կազմակերպելու դեպքում հնարավոր կլինի բուժումն իրականացնել անվտանգության բավարար պայմաններում՝ բուժումը գուգակցելով այդ համակարգի ներսում գործող թժշկական և սոցիալական ծառայություններով::»:CPT, GR 3, § 43: Տես նաև ACPR, B-5-b), c) և d) և IDRCPDL, հոդված 17:

### Մեկնարանություններ

Հոգեկան խանգարումներով տառապողների տոկոսային թիվը, որպես կանոն, ավելի մեծ է, քան հասարակության մեջ ընդհանրապես, ուստի այցելություն կատարողներից ակնկալվում է մոնիթորինգի ենթարկել՝ արդյո՞ք հոգեկան հիվանդությամբ տառապողները ստանում են համարժեք բուժում և խնամք: Բուժումը և խնամքը պետք է նշանակվի, և դրա կիրառումը պետք է վերահսկվի միայն հոգեբույժ-մասնագետի կողմից: Անհրաժեշտության դեպքում բժշկական խնամքը կարող է ցուցաբերվել համապատասխան շինությունում: Միջազգային չափանիշների մեծամասնության հիմքում ընկած է այն համոզմունքը, որ հոգեբուժական հիվանդանոցները լավագույն վայրն են այդպիսի մասնագիտացված բուժում տրամադրելու համար, ուստի հանձնադրարկում է լուրջ հոգեկան հիվանդություններ ունեցող բանտարկյալներին փոխադրել հոգեբուժարաններ: Մյուս կողմից, ինչպես ԽԿԿ-ն առաջարկում է իր 3-րդ ընդհանուր գեկույցում, բանտարկին համակարգում մասնագիտական հաստատությունների ստեղծումը կարող է առավելություն հանդիսանալ: ԽԿԿ-ն հույս է հայտնում, որ այդ հանգամանքը կարող է բարձրացնել հոգեկան հիվանդությամբ տառապող կամ խանգարումներ ունեցող մարդկանց տրամադրվող բուժօգնության արհեստավարժության մակարդակը: Բանտում մատուցվող հոգեբուժական ծառայությունների արդյունավետության մասին դատողություններ անելու համար այցելություններ կատարող թիմին անհրաժեշտ կլինի իր կազմում թեկուզ ժամանակավորապես ներգրավել բարձրակարգ հոգեբույժի: Նման մասնագետ չգտնելու դեպքում այցելություն կատարող մարմինը կարող է պարզել, թե հոգեկան առողջության պահպաննաև ի՞նչ բաղաքանություն է գործում և արդյո՞ք այն հիմնավոր է և համակարգված բանտից դուրս գործող համապատասխան առողջապահական ծառայությունների հետ: Նման, սակայն ըստ եռթյան տարրեր խնդիր է հոգեկան խանգարումներ ունեցող բանտարկյալներին հոգեբուժարանում պարտադիր տեղավորելը: ԽԿԿ-ի կարգի կամ ԽԴԿՈՍ ներքո գործող այցելություն կատարող մեխանիզմներն իրենց մանդատում կարող են ներառել այդ անձանց բանտարկության պայմանների մոնիթորինգը: Այս թեման սույն ձեռնարկում չի լուսաբանվում, սակայն համապատասխան գրականության մեջ այդ մասին կան նշումներ:

### **Ծագուման ենթակա հարցեր**

- Արդյո՞ք վերջին 12 ամիսների ընթացքում հաստատություն ընդունվածների մոտ ախտորոշվել է հոգեկան հիվանդություն կամ խանգարում:
- Ախտորոշումը հաստատելուց հետո ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում (փոխադրում բանտից դուրս գործող հոգեբուժական հիվանդանց, փոխադրում բանտի առանձին բաժին: Եթե ոչինչ չի ձեռնարկվում՝ նշում այդ մասին):
- Ո՞վ է պատասխանատու այս բանտարկյալների բուժման համար (հոգեբույժ, թերապևտ):
- Քանի՞ հոգեբույժ է աշխատում հաստատությունում և ի՞նչ հաճախականությամբ են նրանք ներկայանում աշխատանքի:

5

### **Հետազա ընթերցումներ**

PRI, *Making standards work*, London 2001. (Section IV Prisoners' mental and physical health, pp.69 to 98. Andrew Coyle, *A Human Rights Approach to Prison Management*, 2003. (Prisoners and Health care, pp.49 –58) PRI, *Making standards work*, London 2001. (Section Vprisoners contacts with the outside world, pp. 101-115; Section VI – Programmes for prisoners, pp.17-149) UN HCHR, *Human Rights and Prisons*, Geneva 2003. (Section 4: Health Care of prisoners, pp.46-63).

### **Հատուկ չափանիշներ**

CPT 3rd General report on activities, *Health care services in prisons*, CPT/Inf(93)12pp 30-77. CPT 10th General report on activities, *Women deprived of their liberty*, CPT/Inf(2000)13, pp26-33) CPT 8th General report on activities, *Involuntary Placement in psychiatric establishments*, CPT/Inf (98)12,pp25-58) International Council of Prison Medical services, *Oath of Athens for prison physicians*, 1979. [www.icpms.interfree.it/atheus](http://www.icpms.interfree.it/atheus) UN Principles for the protection of persons with mental illness, 1991.

## ԱՆՁՆԱԿԱԶՄ

---

Քանտարկության պայմանների մոնիթորինգի ժամանակ քանտարկյալների համար պատասխանատու անձնակազմը այցելություն կատարող մեխանիզմների կողմից չպետք է բերագնահատվի, քանի որ մեծամասամբ նրանցից է կախված, թե ինչ վերաբերմունք է դրսևորվելու բանտարկյալների հանդեպ:

Սարդաշիրության սկզբունքներով առաջնորդվող բանտ ունենալու հիմքն անձնակազմի և բանտարկյալների փոխհարաբերությունների պատշաճ մակարդակն է: Անձնակազմի տեսակը որոշելու համար հետևյալ դերն ունեն այս գործոնները՝

- Կազմակերպման ձևը (աշխատողների թիվը, կին աշխատողների թիվը, բանտարկյալների հետ անմիջական շփման մեջ գտնվող անձնակազմի թիվը, աշխատաժամանակը և պայմանները):
- Անձնակազմի հավաքագրում և հիմնական ուսուցում:
- Մասնագիտական հմտություններ և վերաբերմունք:
- Ծառայության պայմաններ և կարգավիճակ:
- Մասնագիտացում:
- Ուժի գործադրում:
- Գենդերային և բազմամշակութային պատշաճ վերաբերմունք:
- Տնօրեն: Անձնակազմը կարող է դասակարգվել հետևյալ կատեգորիաների (թեև դրանք կարող են դրականորեն միավորվել):  
“Լեկավարություն”:
- Ներքին հսկողություն:
- Արտաքին հսկողություն/անվտանգություն (ոչ միշտ է գտնվում բանտի պետի ուղղակի ենթակայության ներքո):
- Բժշկական անձնակազմ:

6

### **ԱՆՁՆԱԿԱԶՄ**

- սոցիալական անձնակազմ (նրանք, ովքեր պատասխանատու են բանտարկյալների առօրյայի համար),
  - փոխադրող անձնակազմ,
  - ուսուցանող անձնակազմ (կրթություն, միջոցառումներ, աշխատանք),
  - մատակարարող անձնակազմ:
-

Մեխանիզմի կողմից մոնիթորինգի ենթակա անձնակազմի շրջանակը կարող է տարբեր լինել: Այդուհանդերձ, այցելողների համար անձնակազմի հետ զրոյցներ վարելը կարևոր է: Բանտարկության պայմանները ևս հանդիսանում են անձնակազմի աշխատանքային խնդիրը, և անհրաժեշտ բարեփոխումների վերաբերյալ նրա առաջարկությունները շատ կարևոր են:

### **Անձնակազմ**

- Ընդհանուր հարցեր
- Բանտարյան անձնակազմի ուսուցում

### **Ընդհանուր հարցեր**

## **6**

### **Չափանիշներ**

«1. Բանտերի դեկավար մարմինները պետք է հոգ տանեն բոլոր կատեգորիաների անձնակազմերի մանրակրկիտ ընտրության մասին, քանի որ բանտարյան հաստատությունների լավ աշխատանքը կախված է այդ աշխատողների բարեխսղճությունից, մարդասիրությունից, իրազեկությունից և անձնական հատկանիշներից:

2. Բանտարյան վարչակազմն իր աշխատողներին և ողջ հասարակության անընդհատ պետք է համոզվածություն ներարկի, որ նրանք կատարում են հասարակական մեծ նշանակություն ունեցող գործ: Այդ համոզմունքն ամրապնդելու համար վարչակազմը պետք է օգտագործի հասարակական տեղեկատվության հնարավորությունները:

3. Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար բանտարյան վարչակազմի աշխատողներին պետք է նշանակել աշխատանքային լրիվ դրույքով՝ որպես բանտի դեկավարման մասնագիտացված աշխատակիցներ, ովքեր պետք է օգտվեն պետական ծառայողի կարգավիճակից և համոզված լինեն, որ լավ վարքի, աշխատանքի արդյունավետության և իրենց վրա դրված խնդիրներն իրականացնելու ֆիզիկական ընդունակության դեպքում իրենց պաշտոնները կապահպանվեն: Նրանց աշխատավարձը հարկավոր է սահմանել այն հաշվարկով, որպեսզի այդ աշխատանքում ներգրավվեն ու պահպեն այդ գործով զբաղվելու հնարավորություն ունեցող կանայք և տղամարդիկ: Նկատի ունենալով տվյալ աշխատանքի բացառիկ բարդությունները, այդ մարդկանց պետք է ապահովել աշխատանքի համապատասխան պայմաններով և արտոնություններով:»: SMR, կանոն 46 (տես նաև կանոն 54):

«Ուշադրության առնելով քրեակատարողական համակարգի անձնակազմի կարևոր դերը հիմնարկների դեկավարումն ապահովելու, կազմակերպչական և դաստիարակչական բնույթի նպատակներին հասնելու գործում, քրեակատարողական վարչակազմն իր առաջնային խնդիրը պետք է համարի անձնակազմի կողմից սույն կանոնների անշեղ կատարումը»: EPR, կանոն 51:

«Խառնասեն անձնակազմի առկայությունը կարևոր երաշխիք է առատագրկման վայրերում դաժան վերաբերմունքի դեմ: Արական և իգական անձնակազմի առկայությունը կարող է դրական կերպով անդրադառնալ բանտում բարոյական ոգին աճրապնդելու վրա»: CPT,GR 10, § 23:

«Մարդասիրության սկզբունքներով առաջնորդվող բանտային համակարգի անլյունաքարը պատշաճ կերպով ընտրված և ուսուցում ստացած անձնակազմն է, որը գիտե, թե ինչպես է պետք ճիշտ կառուցել հարաբերությունները բանտարկյալների հետ և որն իր աշխատանքը համարում է մասնագիտություն, այլ ոչ թե ծառայություն: Բանտարկյալների հետ դրական հարաբերությունների կառուցումը պետք է համարվի այդ մասնագիտության գլխավոր հատկանիշը»:

Ցավոք, ԽԿԿ-ն հաճախ գտնում է որ անձնակազմի և բանտարկյալների միջև հարաբերությունները կրում են ձևական և անտարբեր բնույթ, անձնակազմը բանտարկյալների համեմատ որդեգրում է կոշտ, կանոնակարգված վերաբերմունք՝ նրանց հետ խոսակցական շփումը համարելով որպես աշխատանքի անհարի ասպեկտ: ԽԿԿ-ի կողմից հաճախ նկատվել են պրակտիկայից վերցված հետևյալ օրինակները. բանտարկյալներին ստիպում են դեմքով կանգնել դեպի պատը և սպասել, թե երբ կզբաղվեն իրենցով, կամ երբ այցելուները կհասնեն իրենց. բանտարկյալներին հրամայում են հաստատության ներում տեղաշարժվելիս կախել գույխները և ծեռքերը պահել մեջքի ետևում. բանտային անձնակազմն իր մահակները կրում է ցուցադրաբար և անգամ հրահրող ձևով: Այսպիսի պրակտիկան չի բխում անհրաժեշտ անվտանգության խնդիրներից և չի նպաստում անձնակազմի ու բանտարկյալների միջև դրական հարաբերությունների կայացմանը:

Բանտային ծառայողների իրական արիեստավարժությունը պահանջում է, որ նրանք կարողանան բանտարկյալների հետ վարվել մարդասիրաբար և պատշաճ կերպով՝ միաժամանակ ուշադրություն դարձնելով անվտանգության ու կարգուկանոնի հարցերին: Այս հարցում բանտային իշխանությունները պետք է անձնակազմի մոտ խրախուսեն ողջամտության սահմաններում վստահություն ցուցաբերել բանտարկյալների հանդեպ, եթե կա համոզմունք առ այն, որ բանտարկյալները պատրաստ են իրենց պահել հավոր պատշաճի: Անձնակազմի և բանտարկյալների միջև կառուցողական և դրական հարաբերությունների զարգացումը ոչ միայն

կնվազեցնի բռնության վտանգը, այլև կնպաստի հսկողության և անվտանգության ուժեղացմանը և կավելացնի անձնակազմի բավարարվածությունն աշխատանքից:

Անձնակազմի և բանտարկյալների միջև դրական հարաբերությունների կառուցումը զգային կախված է բանտի տարրեր հատվածներում և շինություններում ծառայողների համապատասխան թվի մշտական ներկայությունից: ԽՎԿ պատվիրակությունները հաճախ պարզուն են, որ անձնակազմի թիվը բավարար չէ: Կադրերի ընդհանուր պակասը և/կամ անձնակազմի աշխատանքի այնպիսի գրաֆիկը, որը նպաստում է բանտարկյալների հետ անմիջական շփումների հնարավորության նվազեցմանը, եականորեն խանգարում են դրական հարաբերությունների զարգացմանը և ստեղծում անբարենպաստ միջավայր թե՛ անձնակազմի և թե՛ բանտարկյալների համար: Անհրաժեշտ է նշել, որ այն վայրերում, որտեղ ծառայողների թիվը բավարար չէ պատշաճ անվտանգություն և աշխատանքային ռեժիմ ապահովելու համար, կարող է անհրաժեշտություն ծագել աշխատողներին հաճախակի ներգրավելու արտաժամյա աշխատանքի: Գործերի նման ընթացքը կարող է ծառայողներին հասցնել սրբեակ և գերհոգնածության: «Դրանով ցանկացած պատժի հաստատությանը ընորոշ լարումն ընդամենը կմեծանա:»: CPT, GR 11, §: 26 Տես՝ նաև IDRCPDL, հոդված 7, 1-ին պարբերություն:

## 6

### **Անշափահասներ**

«Անձնակազմը պետք է համապատասխան որակավորում ունենա և նրա կազմի մեջ պետք է մտնեն բավարար թվով այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են՝ մանկավարժները, արտադրության ուսուցման իրահանգիչները, սոցիալական ծառայությունների աշխատակիցները, հոգեբաններն ու հոգեբույժները: Այդ և մյուս մասնագետները պետք է վարձվեն մշտական աշխատանքի:»: RPJDL, կանոն 81.1:

«Վարչակազմը պետք է ապահովի բոլոր մակարդակների ու մասնագիտությունների աշխատողների մանրակրկիտ ընտրությունը և վարձումը, քանի որ ուղղիչ հաստատությունների պատշաճ կառավարումը կախված է նրանց ազնվությունից, մարդասիրությունից, անշափահասների հետ աշխատելու ունակությունից, մասնագիտական հմտությունից, ինչպես նաև այդպիսի աշխատանքի համար անհատական պիտանիությունից:»: RPJDL, կանոն 82.3:

### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն անձնակազմի վարքագծին, քանի որ բանտում տիրող ընդհ-

անուր մքնոլորտի գործում նրանց ունեցած դերը նշանակալի է: Այդ իսկ պատճառով հատկապես կարևոր է, որ անձնակազմը հավաքագրվի հմտությունների ու անձնական բնութագրի հատուկ չափանիշների հիման վրա: Աշխատողների թիվը պետք է բավարար լինի ֆիզիկական անվտանգության պահանջները բավարարելու համար, սակայն ոչ ավելի, քան անհրաժեշտ է անձնակազմի և բանտարկյալների միջև մարդկային շփումների համար: Տղամարդ և կին աշխատողների թիվը պետք է համապատասխանի հասարակության մեջ առկա հաշվեկշռին: Ազատազրկման պայմանները և անձնակազմի կարգավիճակն ուղարկիրեն ազդում են նրանց կողմից բանտարկյալների հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի վրա: Վարձատրությունը, կարիերան և առաջիսաղացման հնարավորությունները ուշադրության արժանի որորտներ են: Բանտարյան անձնակազմը պետք է կարգապահ լինի և ունենա կատարողական հատակ համակարգ: Դա չի նշանակում, որ կարիք չկա բանտարյան ծառայությունը վերածել ուղամականացված համակարգի՝ գինվորական կոչումներով: Բանտարկյալների հանդեպ անձնակազմի վերաբերմունքը կախված է նրանց տրվող պաշտոնական և ոչ պաշտոնական հրահանգների բնույթից: Անձնակազմն առաջնորդվում է իր վերաբասի կարգադրություններով և վարքով, բանտարկյալների հարցերով քաղաքական գործիչների և համարաշրջանների հայտարարություններով: Յանկացած բանտում տնօրենի ազդեցությունը կարևոր է: Այցելություն կատարողը պետք է մանրամասն ուսումնասիրի անձնակազմի և բանտարկյալների միջև հարաբերությունների որակը, ինչն արտահայտվում է լեզվի ընտրության, ձայնի տոնի, մեստերի լեզվի միջոցով, ինչպես նաև որոշակի իրավիճակներին նրանց արձագանքով:

6

### **Ծագուման ենթակա հարցեր**

Այցելություն կատարող թիմը պետք է տիրապետի հետևյալ տեղեկատվությանը.

- բանտարկյալների հետ անմիջական շփման մեջ գտնվող անձնակազմի թիվը:
- անձնակազմի հավաքագրման չափանիշները. կրթություն և անձնական տվյալները.
- հիմնական և ընթացիկ ուսուցում.
- միջին աշխատավարձ.
- իզական անձնակազմի թիվը և նրանց լիազորությունների շրջանակը.
- ինչպես են անձնակազմը և բանտարկյալները դիմում միմյանց.
- անձնակազմի և բանտարկյալների միջև շփումները.
- անձնակազմի վերաբերմունքը բանտարկյալների, նրանց կար-

- 
- իրների և աշխատանքի հանդեպ.  
▪ տնօրենին դիմելու բանտարկյալների հնարավորությունները:
- 

## **Անձնակազմի ուսուցում**

### **Չափանիշներ**

«1. Այդ անձնակազմը պետք է բավականաչափ կրթված ու զարգացած լինի:

2. Աշխատանքի ընդունվելուց առաջ անձնակազմի յուրաքանչյուր անդամի պետք է նախապատրաստել իր ընդհանուր և որոշակի պարտականությունների կատարմանը, որից հետո նրանց պետք է պետական և գործնական ծրագրերի քննությունները ընդունվել:

3. Աշխատանքի ընդունվելուց հետո և հետագա գործունեության ամբողջ ընթացքում այդ աշխատակիցները պետք է պահպանեն ու բարձրացնեն իրենց որակավորումը՝ համապատասխան պարբերականությամբ անցնելով աշխատանքից չկտրված վերապատրաստման դասընթացներ:»: SMR, կանոն 47:

«Իրավապահ և բժշկական անձնակազմերը, ոստիկանության աշխատողները և ցանկացած այլ անձ, ով առնչվում է որևէ ձևով անձին ձերքակալված, կալանավորված կամ ազատազրկված անձանց պահելու պայմաններին կամ բուժմանը, պետք է համապատասխան հրահանգավորում և ուսուցում ստանա:»: GC 20, 10-րդ պարբերություն:

«Եվ վերջապես, ԽԿԿ-ն ցանկանում է նշել այն մեծ կարևորությունը, որ տախու է իրավապահ անձնակազմի վերապատրաստմանը (ներառյալ՝ մարդու իրավունքների մասին տեղեկացվածությանը, տես նաև ՍՍԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածը): Ազատազրկված անձի հանդեպ դաժան վերաբերմունքի կիրառման դեմ չկա ավելի լավ միջոց, քան պատշաճ կերպով պատրաստված ոստիկանական կամ բանտարկի աշխատողներ պատրաստելը: Բարձրակարգ ծառայողները կկարողանան հաջողությամբ կատարել իրենց պարտականությունները՝ առանց դաժան վերաբերմունքի կիրառման՝ բանտարկյալների հիմնական իրավունքների երաշխավորման պայմաններում:»: CPT, GR 2, § 59:

«Այդ կապակցությամբ ԽԿԿ-ն կարծում է, որ իրավապահ անձնակազմի ընտրության հիմնական չափանիշը պետք է հանդիսանա մարդկանց հետ շփվելու կարողությունը, իսկ ուսուցման գործընթացում մեծապես պետք է կարևորվի միջանձնային հարաբերությունների զարգացման հմտությունների ձեռքբերումը: Այդպիսի հմտությունները ոստիկանական

կամ բանտային ծառայողներին հաճախ թույլ են տալիս վերացնել լարվածությունը, որը հակառակ դեպքում կարող է վերաճել բռնության: Այդ կարգի որակավորումն ընդհանրապես կհանգեցնի ոստիկանական և բանտային հաստատություններում լարվածության նվազման և կյանքի որակի բարձրացնան, ինչն օգտակար է շահագրգիռ բոլոր կողմերի համար»: CPT, GR 2, § 60: Տես՝ նաև IDRCPDL, հոդված 7, 2-րդ պարբերություն:

### **Անշափահասներ**

«Անձնակազմը պետք է այնպես ուսուցանվի, որ հնարավորություն ստեղծվի արդյունավետ կատարելու պարտականությունները, ներառյալ՝ հատուկ պատրաստությունը մանկական հոգեբանության, երեխայի բարօրության, մարդու իրավունքների ոլորտում՝ միջազգային նորմերի, նաև սույն կանոնների ոգուն հանապատասխան: Անձնակազմը պետք է պահպանի ու կատարելագործի իր գիտելիքները և մասնագիտական հմտությունները՝ այցելելով մասնագիտական պատրաստության դասընթացների՝ առանց աշխատանքից կտրվելու: Դրանք պետք է կանոնավորապես կազմակերպվեն նրանց մասնագիտական գործունեության ողջ ընթացքում»: RPJDL, կանոն 85:

**6**

### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է տեղյակ լինեն, որ ուսուցման բարձր մակարդակ ունեցող անձնակազմը մարդասիրության սկզբունքներով առաջնորդվող բանտային համակարգի հիմքն է: Ուսուցման ընթացքում շեշտը պետք է դնել այլ անձանց հետ մարդասիրության ոգով աշխատելու հիմնական էրիկական արժեքների վրա, և միայն դրանից հետո կենտրոնանալ տեխնիկական հմտությունների վրա (ինչպես, օրինակ՝ անվտանգությունը և ուժի գործադրությունը): Ուսուցումը պետք է ներառի այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ միջանձնային շփումը, անկարգությունների կանխումը, անկարգություններն առանց բռնության հարթելու ձևերը, սրբեսի կառավարումը: Ուսուցումը շարունակելու հնարավորություն պետք է արվի ամբողջ անձնակազմին՝ անկախ անձնակազմի անդամների սերիից, տարիքից, գրադեցրած պաշտոնից և անխտիր: Անձնակազմը պետք է օգտվի հոգեբանական վերահսկողության, օժանդակության և հարցազրույցի մեթոդներից, հատկապես՝ բռնության դեպքերից հետո:

---

## Ծագուման ենթակա հարցեր

### Ինչպիսի՞ն են ընթացիկ անձնակազմի հավաքագրման չափանիշներ

- Հիմնական ինչպիսի՞ն ուսուցում են ստանում աշխատանքի նոր ընդունված ծառայողները (քնույթը, տևողությունը, ոլորտները, ծանրաբեռնվածությունը): Կա՞ արդյոք շարունակական ուսուցման հնարավորություն: Արդյո՞ք այն իրականացվում է:
- Արդյո՞ք բանտարկյալների որոշակի խմբերի, օրինակ՝ անչափահասների հետ աշխատող անձնակազմը ստանում է հատուկ ուսուցում:
- Արդյո՞ք անձնակազմի ուսուցումը ներառում է դասընթացներ բողոքների, տեսչական ստուգումների և մոնիթորինգի վերաբերյալ (ներառյալ՝ այցելություններ կատարող մարմնի կողմից իրականացվող մոնիթորինգը):

**6**

---

### Հետազա ընթերցումներ

PRI, *Making standards work*, London 2001. (Section VII- Prison staff pp.151 – 166) Andrew Coyle, *A Human Rights Approach to Prison Management*, 2003. (Prison staff and the administration of prisons, pp.13- 30) UN HCHR, *Human Rights and Prisons*, Geneva 2003. (Section12, The administration of prisons and prison staff, pp.162-171)

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Այցելություն կատարող որոշ մեխանիզմների կարգավիճակը թույլ է տալիս այցելել բոլոր կալանավայրերը, մյուսներինը՝ այս կամ այն հաստատությունը: Անգամ նրանք, ում կարգավիճակը թույլ է տալիս մոնիթորինգի ենթարկել բանտարկության որոշ տեսակներ միայն, կարող են գանգատներ ստանալ այն մասին, որ իրենց իրավասության շրջանակից դուրս գտնվող հաստատությունում իրենց հանդեպ տեղի են ունեցել խոշտանգումներ և դաժան վերաբերմունք: Հնարավոր է, որ այս կամ այն բանտարկյալն առաջին անգամ է հայտարարություն ներկայացնում, քանի որ նրանք հաճախ խուսափում են բողոքելուց, քանի դեռ գտնվում են այդ հաստատությունում: Այդպիսի հայտարարություններ անկասկած պետք է արտացոլվեն այցելություն կատարող մեխանիզմի գործունեության վերաբերյալ զեկույցներում՝ անկախ դրանց կարգավիճակից: Այն վայրերում, ուր գործում է բանտարկության պայմանների մոնիթորինգի առանձին մարմին, այցելություն կատարող մեխանիզմները պետք է մտածեն այդ մարմնի հետ կապեր հաստատելու մասին: Ոստիկանատներ կատարվող այցելությունները տարբերվում են այլ հաստատություն կատարված այցելությունից: Արտաքին աշխարհի հետ շփոմը տվյալներու սահմանափակված է, ուստի պատվիրակության հետ զրուցելիս բանտարկյալները կարող են իրենց կաշկանդված զգալ: Տարբեր են նաև բանտարկության տեսակը. դրանց մի մասը երկարատև է, մյուսը՝ կարճատև: Բանտարկյալներին տրամադրվող երաշխիքները, ներառյալ՝ ընթացակարգայինները, հատկապես կարևոր են, և այցելություն կատարողները պետք է երաշխավորեն, որ բանտարկյալները լավ տեղեկացված են սահմանված ընթացակարգերին: Այցելություններ կատարող մարմինը պետք է լավ տեղեկացված լինի տեղական օրենսդրության, բանտարկության տևողության վոփոխման և բանտարկության ժամկետի ավելացման հարցում դատավորի դերի մասին:

Ոստիկանական ձերբակալումը պետք է կարճատև լինի: Հստակ սահմանված կարծ ժամանակամիջոցում (տվյալքար՝ 24-ից 72 ժամ), ոստիկանության կողմից ձերբակալված անձը պետք է կամ ազատ արձակվի կամ ներկայացվի դատարան՝ հետագա կալանավորման կամ ազատազրկման հարցը լուծելու համար: Այդուհանդերձ, որոշ դեպքերում այս չափանիշները չեն պահպանվում, և/կամ դատավորը կարող է վճիռը կայացնել առաջ բանտարկյալին տեսնելու: Արհասարակ, ձերբակալությունից անմիջապես հետո դաժան վերաբերմունքի կիրառման վտանգն ավելի մեծ է: Տես՝ «Վերաբերմունք» գլուխը:

Խոշտանգումը և դաժան վերաբերմունքը հատկապես բնորոշ է այս տեսակի բանտարկությանը:

## Պատիկանական ձերբակալություն

### Հիմնական երաշխիքներ

#### Չափանիշներ

«Բանտարկյալների պաշտպանությունը պահանջում է բժիշկների և փաստաբանների անհապաղ և պարբերական մատչելիություն համապատասխան հսկողության ներքո, և եթե դա չի հակառակ քննության շահերին՝ նաև ընտանիքի անդամների ներկայություն»: GS 20, 11-րդ պարբերություն (կրծատ):

«ԽԿԿ-ն հասուկ կարևորություն է տալիս ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքներին՝ ձերբակալման մասին երրորդ կողմին (ընտանիքի անդամներ, ընկերոջը, հյուպատոսությանը) իր հայեցողությամբ տեղեկացնելու իրավունք, փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքը և իր հայեցողությամբ բժշկի կողմից բժշկական քննություն պահանջելու իրավունք (ոստիկանական իշխանությունների տրամադրած բժշկի կատարած բժշկական քննությունից զատ): ԽԿԿ-ի կարծիքով, այս իրավունքները ձերբակալված անձանց հանդեպ դաժան վերաբերմունքի կիրառման դեմ ուղղված այն երեք հիմնական երաշխիքներն են, որոնք պետք է տրամադրվեն ազատությունից զրկելու ամենասկզբից՝ անկախ տվյալ օրենսդրական համակարգում ազատությունից զրկելու այդ տեսակի անվանումից (կալանավորում, ձերբակալություն):»: CPT, GR 2, § 36:

ԽԿԿ-ն բազմից նշել է, որ իր փորձը ցույց է տալիս, որ ահաբեկման և ֆիզիկական բռնության վտանգն առավելագույնի է հասնում բանտարկությանն անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում: Հետևաբար, ոստիկանության կողմից ձերբակալված անձանց համար այդ ժամանակաշրջանի ընթացքում փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորությունը բռնության բացառման հիմնական երաշխիքն է: Այդպիսի հնարավորության առկայությունը զապող գործոն է ձերբակալված անձանց հանդեպ բռնություն կիրառելու հակված ոստիկանների համար: Բացի այդ, փաստաբանը կարող է համապատասխան բայլեր կատարել բռնության կիրառման դեպքում: ԽԿԿ-ն ընդունում է, որ ոստիկանական քննության օրինական շահերից ելնելով՝ բացառիկ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել ձերբակալվածի հանդիպումն իր ընտրած փաստաբանի հետ: Սակայն դա չափություն է հանգեցնի ողջ այդ ժամանակամիջոցում փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքի լիակատար արգելման: Նման դեպքերում պետք է ապահովի այլ անկախ փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունք:

Փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքը ենթադրում է նրա հետ առանձին զրուցելու իրավունք: Ընդհանրապես, անձը պետք է

իրավունք ունենա փաստաբանի ներկայություն պահանջել ոստիկանության կողմից կատարվող ցանկացած հարցաքննության ժամանակ: Բնականաբար, դա չի նշանակում, որ ոստիկանությունը չի կարող որոշ բացառիկ դեպքերում առանց փաստաբանի ներկայության հարցաքննել ձերքակալված անձանց (որը չի կարող անմիջապես ժամանել) կամ փոխել փաստաբանին, որը խոչընդոտում է հարցաքննության պատշաճ ընթացքին:

ԽԿԿ-ն նաև նշում է, որ փաստաբանից օգտվելու իրավունքը պետք է տրվի ոչ միայն հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց, այլև ցանկացած անձի, ով համաձայն օրենքի՝ պարտավոր է այցելել ոստիկանատուն կամ գտնվել այնտեղ, ասենք՝ «վկայի» կարգավիճակով:

Ավելին, որպեսզի փաստաբանից օգտվելու իրավունքը լինի, այդպիսի հնարավորություն պետք է տրվի բոլոր այն անձանց, ովքեր ի վիճակի չեն վճարել փաստաբանի ծառայությունների դիմաց»: CPT, GR 12, § 41:

«Զերբարակաված բոլոր անձինք պետք է ունենան բժշկի ծառայություններից օգտվելու՝ պաշտոնապես ճանաչված իրավունք: Այլ խոսքով, բժիշկը պետք է անհապաղ կանչվի, եթե անձը պահանջում է բժշկական զննություն. ոստիկանությունը չպետք է փորձի «զտել» այդ պահանջները: Բայց այդ, բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքը պետք է ներառի իր ընտրած բժշկի կողմից զննվելու՝ անձի իրավունքը, եթե անձը հայտնում է նման ցանկություն (ոստիկանության կողմից իրավիրված բժշկի կատարած բժշկական զննությունից զատ):

Ոստիկանության կալանքի տակ գտնվող անձանց բոլոր բժշկական զննությունները պետք է կատարվեն իրավապահ մարմինների աշխատողների լսողությունից հետու, իսկ բժշկի պահանջով՝ նաև այդ անձանց տեսողությունից հետու:

Կարևոր է նաև, որպեսզի ազատ արձակված և դատարանի առջև չկանգնած անձինք իրավունք ունենան պահանջելու բժշկական զննություն իրավասու դատարժշկի մոտ:»: CPT, GR 12, § 42:

«Զերբարակալման պահից պետք է երաշխավորվի անձի իրավունքը՝ իր ձերբակալության փաստի մասին հայտնելու երրորդ անձի: Իհարկե, ԽԿԿ-ն ընդունում է, որ այդ իրավունքը կարող է սահմանափակվել որոշ բացառիկ դեպքերում՝ քննության օրինական շահերից ելնելով: Սակայն բացառությունները պետք է լինեն խիստ հիմնավոր և կարճատե, իսկ դրանց կիրառումը պետք է ողեկցվի համապատասխան երաշխիքներով (օրինակ՝ ձերբակալության ժամկետի երկարածզման վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն պետք է գրավոր կերպով գրանցվի՝ նշելով պատճառները: Ցանկացած այդպիսի որոշում պետք է հաստատվի գործին չառնչվող վերադաս ոստիկանական պաշտոնյայի կամ դատախազի

կողմից»: CPT, GR 12, § 43:

«Ոստիկանության կողմից ձերբակալված անձինք պետք է իրավունք ունենան առաջին իսկ հնարավորության դեպքում ձերբակալման մասին իրենց ընտրությամբ տեղեկացնել երրորդ անձի, իրենց ընտրությամբ օգտվել իրավաբանական օգնությունից և բժշկի կողմից ենթարկվել բժշկական զննություն:»: Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնագիրը, 2001, հոդված 57: Տես նաև ACPR, A-17-b) և B-1 h)և g) և IDRCPDLO հոդված 36 1-ին պարբերություն:

### **Անշափահասներ**

Տես IDRCPDLO, հոդված 36, 4-րդ պարբերություն:

#### **Մեկնարանություններ**

Ձերբակալությանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում բանտարկյալները հատկապես խոցելի են և համապատասխան պաշտոնյաների կողմից լիազորությունների գերազանցման վտանգը մեծ է:

Այսպիսով՝ կարևոր է, որ մարդկանց ձերբակալելու ոստիկանական լիազորությունները պետք է միաժամանակ ուղեկցվեն համապատասխան երաշխիքներով: ԽԿԿ-ն առանձնացնում է հետևյալ երաշխիքները, որոնք հատկապես կարևոր են ձերբակալման պահին.

- Երրորդ անձի տեղեկացում,
- Փաստաբանի ծառայություններից օգտվելու երաշխիք,
- Բժշկի ծառայություններից օգտվելու երաշխիք:

Այցելություն կատարող մեխանիզմները պետք է տան հետևյալ հարցերը՝

#### **Շշգրտման ենթակա հարցեր**

- Արդյո՞ք բանտարկյալը հնարավորություն ունի տեղեկացնելու իր ընտանիքին կամ երրորդ անձի:
- Արդյո՞ք նա շփվել է փաստաբանի հետ:
- Արդյո՞ք բժիշկը զննել է նրան:
- Արդյո՞ք պահպանվել է ձերբակալման առավելագույն օրինական ժամկետը:
- Արդյո՞ք բանտարկյալն ներկայացրել են դատավորին (բանում):
- Արդյո՞ք բանտարկյալը որևէ պաշտոնական հայտարարություն արել է խոշտանգումների վերաբերյալ. եթե այն՝ ի՞նչ արձագանք է գտել:
- Տղամարդիկ և կանայք, ինչպես նաև անշափահասների և շափ-

- 
- ահասների տարանջատում կա՞ արդյոք:
  - Որևէ միջոց կիրառվո՞ւմ է արդյոք այլ բանտարկյալների համար վտանգավոր բանտարկյալից մյուսներին պաշտպանելու ուղղությամբ:
  - Արդյո՞ք տարանջատված են անշափահասների և կանանց հետ աշխատող ծառայողները:
- 

## Գրանցում

### Չափանիշներ

«ԽԿԿ-ն գտնում է, որ ոստիկանության կողմից ձերբակալված անձն իմնական իրավունքների երաշխիքները ավելի կամրապնդվեն (իսկ ոստիկանների աշխատանքը համեմատարար կրեթևանար), եթե գոյություն ունենար բանտարկյալների հաշվառման միասնական և բազմակողմ համակարգ, որում տեղեկություններ կզետեղվեին բանտային կյանքի բոլոր ասպեկտները և բանտարկյալների նկատմամբ կիրառված բոլոր գործողությունները (եթե են ձերբակալվել, ի՞նչ պատճառով, եթե են նրանք տեղեկացել իրենց իրավունքների մասին, մարմնական վճասվածքների հետքեր, հոգեկան հիվանդությունների նախանշաններ, եթե է վերջին անգամ շփվել մերձավոր ազգականների/հյուպատոսության և փաստաբանի հետ, եթե են նրանք այցելել բանտարկյալին, եթե է բանտարկյալին սնունդ առաջարկվել, եթե է տեղափոխվել այլ հաստատություն կամ ազատազրկվել և այլն): Որոշ հարցերի կապակցությամբ (օրինակ՝ ձերբակալվածի մոտ առկա առարկաների առգրավում, իրավունքների մասին տեղեկացում, այդ իրավունքների իրացում կամ դրանցից հրաժարումը) հարկավոր է ստանալ բանտարկյալների ստորագրությունը կամ նշում ստորագրելուց հրաժարվելու մասին: Բացի այդ, ձերբակալվածի փաստաբանը պետք է հնարավորություն ունենա օգնվելու հաշվառման այդ համակարգից::»: CPT,GR 2, § 40:

7

### Մեկնարանություն

Հաշվառումը կարևոր երաշխիք է, քանի որ այն գրավոր ամփոփում է ազատազրկված անձի հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի և կիրառվող լընթացակարգերի վերաբերյալ ամբողջ կարևոր տեղեկատվությունը: Հաշվառման ենթարկվում է ամենաստարբեր բնույթի տեղեկատվություն, որը ստվորաբար գրանցվում է տարբեր մատյաններում: Այցելություն

կատարող մեխանիզմներից պահանջվում է ծանր լինել այդ մատյաններին և կարողանալ առանձնացնել այն դեպքերը, երբ փաստաթղթերը լրացված են ոչ պատշաճ կերպով: Կարևոր տեղեկատվությունը ներառում է բանտարկյալ անունը, ձերբակալման պատճառը, ձերբակալման ժամը, հարցաքննությունը, փոխադրումը և երրորդ անձանց՝ բանտարկյալ մասին տեղեկատվության փոխանցումը: Կարևոր է ուսումնասիրել՝ արդյո՞ք ձերբակալվածը հնարավորություն ունեցել է ձերբակալման ընթացքում բողոքարկել այն, արդյո՞ք գրանցվում է այդ տեղեկատվությունը, ի՞նչ կարգով:

### **Ծագրտման ենթակա հարցեր**

- Արդյո՞ք գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը. ե՞րբ է ձերբակալվել անձը, ե՞րբ է հարցաքննվել, ե՞րբ է փոխադրվել կամ ազատ արձակվել, ե՞րբ է տեղեկացրել երրորդ անձին, երբ և ինչպես է տեղեկացվել իր իրավունքների մասին, ե՞րբ է տեղի ունեցել բժշկի կամ այլ անձանց այցելությունը, սենյի մատակարարումը, մատուցված սննդի տեսակը և ժամը:
- Արդյո՞ք տեղեկատվությունը գրանցվում է համակարգված և մանրակրկիտ ձևով:
- Արդյո՞ք գրանցված տեղեկատվությունից երևում է՝ պահպանվե՞լ է արդյոր ձերբակալման առավելագույն տևողությունը:
- Արդյո՞ք եղել է որևէ հայտարարություն ֆիզիկական վճառվածքի կամ խոշտանգման, դաժան վերաբերունքի վերաբերյալ:

7

### **Հարցաքննություն**

#### **Չափանիշներ**

«1. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի հարցաքննության կամ հարցաքննությունների միջև ընկած ընդմիջումների տևողությունը, ինչպես նաև հարցաքննությունն անցկացնող պաշտոնատար անձանց և մյուս ներկաների ազգանունները գրանցվում են և հաստատվում այն ձևով, որպիսին կարող է սահմանված լինել օրենքով:

2. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը կամ նրա դատապաշտպանը, երբ դա նախատեսված է օրենքով, բույլտվություն ունենալու ամենալավ այն տեղեկություններին, որոնց մասին ասվում է սույն սկզբունքի 1-ին կետում»: BPP, սկզբունք 23:

«Հարցաքննության ընթացակարգի վերաբերյալ ԽԿԿ-ն գտնում է, որ

ոստիկանության աշխատողների համար պետք է գոյություն ունենան հատուկ կանոններ կամ հրահանգներ՝ հարցաքննություն անցկացնելու վերաբերյալ: Այլ հարցերից զատ դրանք պետք է արտացոլեն հետևյալ խնդիրները. բանտարկյալներին տեղեկացնել հարցաքննությանը ներկա մարդկանց ինքնության մասին (անուն և/կամ ծառայողական համար), հարցաքննության բույլատրելի տևողություն, հարցաքննությունների միջև հանգստի և ընդմիջման տևողություն, հարցաքննության անցկացման բույլատրելի վայրեր, հարցաքննության ժամանակ ուրիշ կանգնելու պահանջի հնարավորություն, բնրադեղերի, ակոնիի ազդեցության տակ գտնվող անձանց հարցաքննություն և այլն: Անհրաժեշտ է պահանջել, որպեսզի պարտադիր գրանցվի հարցաքննության սկիզբը և ավարտը, հարցաքննության ժամանակ բանտարկյալի ներկայացրած բոլոր պահանջներն ու խնդրանքները, տեղեկատվություն հարցաքննությանը ներկա գտնված անձանց մասին»: CPT, GR2, § 39:

«Ոստիկանության հարցաքննությունների էլեկտրոնային (տեսանկարահանում և/կամ ծայնագրում) գրառումը բանտարկյալների նկատմամբ դաժան վերաբերմունքի բացառման լրացուցիչ երաշխիք է: ԽՎԿ-ն գոհունակությամբ նշում է, որ նկատվում է նման համակարգեր ներդնող երկրների թվի աճ: Նման սարքավորումներով հնարավոր կինի ապահովել հարցաքննության գործմթացի լրիվ և իրական գրառում՝ այդպիսով նշանակալիրեն նպաստելով դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքների քննությանը: Այսպիսի ծայնագրությունների առկայությունը բխում է թե՝ ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի ենթարկված անձանց և թե՝ ոստիկանների շահերից, քանի որ վերջիններս կկարողանան պնդել, որ անհիմն են մեղադրվում փիզիկական բռնություն կամ հոգեբանական ճնշում գործադրելու մեջ:

Ոստիկանությունում հարցաքննությունների էլեկտրոնային գրառումը ևս նվազեցնում է մեղադրյալների հնարավորությունները՝ կեղծ ցուցմունք տալ այն մասին, որ նախկինում ոստիկաններն իրենցից խոստովանություն են կորզել:»: CPT, GR 12, § 36:

«Հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց հարցաքննությունը մասնագիտական խնդիր է, որը պահանջում է հատուկ պատրաստականություն՝ հարցաքննությունը պատշաճ ձևով կատարելու համար: Ամենից առաջ անհրաժեշտ է ամբողջովին և հատակ որոշակիացնել այդ հարցաքննության նպատակը, այն է՝ քննվող գործի վերաբերյալ ճշմարտությունը պարզելու համար անհրաժեշտ ճշգրիտ ու պարզ տեղեկատվության ստացում, ոչ թե հարցաքննությունների կարծիքով մեղավոր համարվողից խոստովանության կրգում: Համապատասխան պատրաստվածությունից բացի, հանցագործություններ կատարելու մեջ կասկածվող անձանց հարցաքննության հարցերը կարգավորող կանոնագրքի

կազմումը մեծապես կնպաստի իրավապահ գերատեսչությունների աշխատողների կողմից վերոհիշյալ պահանջի կատարմանը»: CPT, GR12, § 34:

«Պետք է նշե, որ ձերբակալության որևէ տեսակի ենթարկված անձանց հարցաքննության, պահելու պայմանների և բուժմանն ուղղված միջոցառումները, կանոնները, իրահանգները, մերողները և պրակտիկան պարբերաբար վերանայելը խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ միջոց է:»: GC 20, 11-րդ պարբերություն:

«Զերբակալված անձանց արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար (...) պետք է գրանցել բոլոր հարցաքննությունների ժամանակը և վայրը, հարցաքննություններին ներկա բոլոր անձանց անունները: Այդ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի դատական և վարչական գործերով վարույթի ընթացքում:»: GC 20, 11-րդ պարբերություն:

«Պետք է հիմնադրվեն ոստիկանական հարցաքննությունների հետ կապված խնդիրները կարգավորող համապատասխան վարքագծի կանոններ և սկզբունքներ (...):

Դրանք, մասնավորապես, պետք է ապահովեն հարցաքննության արդարացիություն, որի ընթացքում հարցաքննությունը տեղեկանում են հարցաքննության նպատակներին և գործով այլ տեղեկատվության: Անհրաժեշտ է համակարգված գրառումներ կատարել ոստիկանական հարցաքննությունների վերաբերյալ:»: Ոստիկանական էքիվայի եվրոպական կանոնագիրը, § 50:

## 7

### **Մեկնաբանություններ**

Հարցաքննությունը հատկապես վտանգավոր է այն առումով, որ բանտարկյալ հատկապես խոցելի է խոշտանգումների և դաժան վերաբերմունքի հարցում: Ըննության այնպիսի համակարգի պայմաններում, եթե շեշտն ավելի շատ դրվում է խոստվանության, այլ ոչ թե ապացույցների հավաքման վրա, ոստիկանության աշխատողների կողմից դաժան վերաբերմունք կամ խոշտանգում կիրառելու վտանգը շատ բարձր է: Վտանգը աճում է, եթե ոստիկանական աշխատողների պաշտոնական առաջխաղացումը կախված է մեղադրված բանտարկյալների թվից: Հարցաքննող բանտարկյալներին այցելելով՝ այցելություն կատարող թիմը պետք է տեսյակ լինի, որ գործ ունի չափազանց նրբին իրադրության հետ: Թիմի անդամները պետք է նրբանկատ լինեն բանտարկյալի հուգական վիճակի և անվտանգության հարցերում: Կարենք է կշռադատել տեղեկատվություն հավաքելու թիմի ցանկության և բանտարկյալի կարիքների և մտահոգությունների համապատասխանությունը: Եթե ոստիկանությունում եղած ժամանակ բանտարկյալը ցանկանում է այցելություն կատարող մեխանիզմին հայտարարություն ներկայացնել իր նկատմամբ

կիրառված ֆիզիկական կամ բանափոր չարաշահման մասին (լիովին գիտակցելով իրեն սպառնացող վտանգը) այցելություն կատարողները չվետք է մոռանան հավաքել նաև այսպես կոչված «չեզոք» տեղեկատվություն (կապված հարցաքննության ժամանակի, տևողության և վայրի, ներկա գտնվողների ինքնությունը կամ արտաքին նկարագրությունը), որը կօգնի այս կամ այն հայտարարությունը հաստատելուն կամ հերքելուն:

### **Ծագուման ենթակա հարցեր**

- Արդյո՞ք անձը հայտարարություն է արել ֆիզիկական բռնության մասին:
- Ձերբակալությա՞ն ժամանակ: Հարցաքննությա՞ն ժամանակ:
- Արդյո՞ք անձի նկատմամբ գործադրվում կամ գործադրվել է հոգեբանական բռնության, չարաշահման, սպառնալիքի:
- Ի՞նչ պայմաններում էր անցնում հարցաքննությունը:
- Արդյո՞ք մատյանում գրառված է հարցաքննությունը կատարող անձի անունը, հարցաքննության տևողությունը, դադարները (տես՝ նաև մաս չորրորդ, Վերաբերմունք/Խոշտանգում և դաժան վերաբերմունք):

7

### **Տեղեկատվություն**

#### **Չափանիշներ**

«Կալանավորման ժամանակ յուրաքանչյուր կալանավորվածի հաղորդվում են նրա կալանավորման պատճառներն ու անհապաղ հաղորդվում է նրան ներկայացվող ցանկացած մեղադրանք:»: ВРР, սկզբունք 10:

«Յանկացած անձի ծերբակալման պահին և կալանքի սկզբից կամ դրանից հետո ոչ կարծ ժամկետում կալանավորման ծերբակալման կամ բանտարկման համար պատասխանատու մարմինը իրազեկումէ նրա իրավունքները և պարզաբանում, թե ինչպես կարող են օգտվել այդ իրավունքներից:»: ВРР, սկզբունք 13:

«Ազատազրկված անձանց իրավունքները արժեզրկվում են, եթե տվյալ անձինք չգիտեն դրանց գոյության մասին: Հետևաբար, անհրաժեշտ է, որ ոստիկանության կողմից ծերբակալված անձինք անհապաղ և իրենց հասկանալի լեզվով տեղեկացվեն իրենց իրավունքների մասին: Դա երաշխավորելու համար անձանց ծերբակալության սկզբնական փուլում պետք է տրամադրվի տեղեկատվություն իրենց իրավունքների մասին: Այնուհետ նշված անձինք պետք է ստորագրեն հայտարարություն այն մասին, որ նրանք տեղեկացվել են իրենց իրավունքների մասին:»: СРТ, GR 12, § 44:

«Ոստիկանությունը պետք է տեղական օրենսդրությամբ սահմանված կարգով ձերբակալվածներին հնարավորինս անհապաղ տեղեկացնի ձերբակալման պատճառների, առաջադրված մեղադրանքի, ինչպես նաև տվյալ դեպքին բնորոշ ընթացակարգերի մասին»: Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնագիրը, § 55:

### **Մեկնարանություններ**

Այցելություն կատարողները պետք է իմանան, թե ինչ տեղեկատվություն իրավունք ունի ստանալ ձերբակալվածը, ինչպես նաև ստուգեմ՝ արդյո՞ք նրանք ստացել են դա: Բանտարկյալները պետք է տեղեկացված լինեն իրենց ձերբակալության պատճառների մասին: Նրանք իրավունք ունեն նաև տեղեկացվել իրենց իրավունքների մասին (օրինակ՝ փաստաբանի կամ այլ անձանց հետ շփում և այլն): Տեղեկատվությունը պետք է հաղորդվի մատչելի լեզվով: Դա կարող է արվել հատուկ ձևաբղբի միջոցով, իսկ եթե անձն անգրագետ է՝ բանավոր:

### **7**

#### **ճշգրտման ենթակա հարցեր**

- Արդյո՞ք անձն անհապաղ տեղեկացվել է իր ձերբակալության պատճառների մասին:
- Արդյո՞ք անձը տեղեկացել է իր իրավունքներին: Բանավո՞ր, թե՞ գրավոր կերպով:
- Արդյո՞ք դա կատարվել է անձին հասկանալի լեզվով կամ արդյո՞ք դա կատարվել է քարգմանչի միջոցով:
- Որքանո՞վ են խոցելի ձերբակալվածները:

### **Նյութական դրություն**

#### **Չափանիշներ**

«Քոլոր ոստիկանական խցերը պետք է լինեն մաքոր և համապատասխանեն բանտարկյալների նախատեսված թվի համար անհրաժեշտ չափերին և ունենան համապատասխան լուսավորություն (որը բավարար կլինի ընթերցանության համար և կանցատվի քննելիս): Նախընտրելի է, որ լուսավորությունը բնական լինի: Բացի այդ, խցերը պետք է կահավորված լինեն հանգստի միջոցներով (օրինակ՝ հատակին ամրացված աթոռ կամ նստարան): Խցում գիշերելու դեպքուն բանտարկյալները պետք է ապահովեն մաքոր ներքնակով և բրդյա ծածկոցով: Ձերբակալվածները պետք է պատշաճ պայմաններում օգտվեն զրկարանից և ապահովվեն լվացվելու

պարագաներով: Նրանք պետք է ապահովեն խմելու ջրով և ամեն օր համայստասիան ժամի մատուցվող սննդով, այդ թվում՝ առնվազն լիարժեք ճաշով (այսինքն՝ ավելին, քան հացոլկարագը): 24 և ավելի ժամ ձերբակալում կրող անձանց հնարավորության դեպքում ամեն օր պետք է բույլատրվի մաքուր օդում մարմնամարզություն կատարել::»: CPT, GR12, § 47:

«Ոստիկանական խցերի (կամ բանտարկության այլ հաստատության) ողջամիտ չափ որոշելը բարդ խնդիր է:

Այդպիսի գնահատական տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ գործոններ: Սակայն ԽՎԿ պատվիրակությունները գտնում են, որ այս հարցի վերաբերյալ հարկավոր է հստակ հանձնարարականներ: Ներկայումս մի քանի ժամ պահելու համար նախատեսված ոստիկանատների մենախցերի համար գործում են հետևյալ չափանիշները (որոնք ավելի շուտ կիրառվում են որպես ցանկալի, քան անհրաժեշտ նվազագույն չափանիշ): Խուզը պետք է լինի 7մ<sup>2</sup> պատից պատ տարածությունը պետք է կազմի 2 և ավելի մետր, առաստաղի բարձրությունը՝ 2.5 մետր::»: CPT, GR2, § 43:

«Ոստիկանական կալանքի ժամանակ անձանց պետք է ապահովվել անվտանգությամբ, առողջ պայմաններով, հիգիենայով և համապատասիան սննդով: Ոստիկանական խցերը պետք է ունենան խելամիտ չափեր, համարժեք լուսավորություն և օդափոխություն, և կահավորված լինեն հանգստի համար պիտանի միջոցներով::»: Ոստիկանական երիկայի Եվրոպական օրենսգիրք, հոդված 56:

### **Մեկնաբանություններ**

Ոստիկանական ձերբակալումը բույլատրվում է կիրառել կարճ ժամկետով, այդ իսկ պատճառով նյութական պայմանները պետք է ավելի նպաստավոր լինեն: Ոստիկանական խցերը պետք է ունենան բնական լուսավորություն և օդափոխություն և կիմային ու տարվա եղանակին համապատասխանող ջերմաստիճան: Խցում գիշերելու դեպքում պետք է տրամադրվի ներքնակ և ծածկոց: Չուգարանից օգտվելու հնարավորությունը չպետք է ձգձգվի: Այցելություն կատարող մեխանիզմները պետք է գիտենան, որ խցերը երբեմն օգտագործվում են ավելի երկար ժամանակով, քան նախատեսված է: Որքան փոքր է խուզը, այնքան ավելի քիչ ժամանակ պետք է անցկացնել այնտեղ: ԽՎԿ-ն կիրառում է հետևյալ չափանիշներն այն ոստիկանական մենախցերի համար, որտեղ մարդիկ պահպում են մի քանի ժամ տևողությամբ: հատակի ընդհանուր մակերեսը 7մ<sup>2</sup> (պատից պատ տարածությունը պետք է կազմի 2 և ավելի մետր, առաստաղի բարձրությունը՝ 2.5 մետր):

### Ճշգրտման ենթակա հարցեր

- Որքա՞ն է խցի մակերեսը, դրա նախատեսված տարողունակությունը և խցում փաստացի պահպող մարդկանց թիվը: Արդյո՞ք դրանք գերբնակեցված են:
- Արդյո՞ք խցերն ապահովված են բնական լույսով:
- Արդյո՞ք խցերի ջերմաստիճանը համարժեք է տարվա եղանակին:
- Արդյո՞ք խցերում կան արռողջեր, նստարաններ և ներքնակներ:
- Արդյո՞ք անձին սնունդ տրվել է: Տրվե՞լ է արդյոք տաք կերակուր:
- Արդյո՞ք անձը կարող է օգտվել խմելու ջրից:
- Ի՞նչ պայմաններ են գործում զուգարանից օգտվելու համար:

### Հետագա լճիքեցումներ

AI, *Combating torture*, London 2003. (Chapter 4 Safeguards in custody, pp. 89-109)

#### Հատուկ չափանիշ

ԽՎԿ գործունեության վերաբերյալ երկրորդ ընդհանուր գեկույց. Ոստիկանական ձերբակալում, CPT/Inf 92) 3, 36- 41 էջեր:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
1.	Ցանկ
2.	Ներքին այցելությունների գրանցման օրինակ
3.	ՍԱԿ-ի ոչ պարտադիր արձա- նագրություն
4.	Խոշտանգումների դեմ կոնվե- նցիա
5.	Համապատասխան շափան- իշների ցուցակ
6.	Հավելյալ գրականություն
7.	Օգտակար հասցեներ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

### ՎԵՐԱՀՍԿԻՉ ՑՈՒՑԱԿ

#### Վերաբերմունք

- Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերաբերյալ հայտարարություններ.
- Ուժի և զսպման այլ միջոցների կիրառում.
- Սենախցային բանտարկության կիրառում:

#### Պաշտպանիչ միջոցներ

#### Բանտարկյալների տեղեկացում

- Տեղեկացում ազատազրկման վայրում հայտնվելուն պես.
- Երրորդ անձին տեղեկացնելու հնարավորություն.
- Ներքին կանոնների և ընթացակարգերի մատչելիություն և բահանցիկություն:

#### Կարգապահական ընթացակարգեր և պատժամիջոցներ

- Ընթացակարգերի հակիրճ բացատրություն.
- Կարգապահական միջոցներ կիրառող մարմնի կազմը.
- Բողոքարկելու հնարավորություններ, ներառյալ՝ բողոքը ներկայացնող բանտարկյալի մասնակցությամբ.
- Պատժամիջոցների տեսակները և հաճախականությունը.
- Ձերբակալվելուց հետո հետազոտություն բժշկի կողմից.
- Պատժամիջոցների վիճակագրությունն ըստ տեսակի և պատճառների.
- Կարգապահական խցեր:

## Հավելված 1.

### Վերահսկիչ ցուցակ

Բողոք ներկայացնելու և տեսչական ստուգում անցկացնելու ընթացակարգեր

- Բողոքների և տեսչական ընթացակարգերի առկայություն.
- Ընթացակարգերի անկախություն.
- Ընթացակարգերի մատչելիություն (ընթացակարգերից օգտվելու հեշտ և արդյունավետ պայմաններ):

Բանտարկյալներին ըստ կատեգորիաների առանձնացում

### Մատյաններ

#### Նյութական պայմաններ

Հաստատության տարողունակությունը և բնակեցվածությունը (այցելության պահին)

- Բանտարկյալների թիվը ըստ կատեգորիաների.
- Օտարերկրացիների թիվը՝ տոկոսներով.
- Դասակարգում ըստ սեռի և տարիքի:

#### Խցեր (ըստ աշխարհագրական տարածքների)

- Խցերի չափը և բնակեցվածության մակարդակը/բանտարկյալների միջին թիվը խցերի թվի համեմատությամբ.
- Նյութական պայմաններ՝ լուսավորություն, օդափոխություն, կավորում, սանիտարական հանգույցներ.
- Հիգիենայի պայմաններ:

### Մնունյական պայմաններ

- Մնունյական պայմաններ (որակը, քանակը, բազմազանությունը, մատուցման հաճախականությունը).
- Հատուկ սննդակարգեր (քժկական, մշակութային կամ կրոնական պատճառներով):

### **Անձնական հիգիենա**

- Ցնցուղներ (քանակը, մաքրությունը, աշխատո՞ւմ է, թե՞ ոչ, աշխատող և չաշխատող բանտարկյալների կողմից ցնցուղ ընդունելու հաճախականությունը.
- Լվացքատնից օգտվելու հնարավորություն:

### **Ոեժիմ և գործունեություններ**

Ժամանակի տևորինում

- Օրական խցում անցկացվող ժամանակը.
- Ֆիզիկական մարմնամարզությանն օրական տրամադրվող ժամանակը.
- Աշխատանքին օրական տրամադրվող ժամանակը.
- Խցից դրւու օրական անցկացվող ժամանակը.
- Շարարթա ընթացքում սպորտին տրամադրվող ժամանակ.
- Այլ գործունեությանը տրամադրվող ժամանակ:

### **Գործունեության առաջարկվող տեսակներ**

- Աշխատանք. աշխատելու հնարավորություն, աշխատանքի տեսակը, աշխատող բանտարկյալների թիվը տոկոսներով, աշխատելու պարտականություն. պարզաւորում (վարձատրություն), սոցիալական ընդգրկվածություն. աշխատանքային շինությունների նկարագրություն.
- Կրթություն. դասընթացներից օգտվելու հնարավորություն. առաջարկվող դասընթացների տեսակներ (գրելու, կարդալու և հաշվելու դասընթացներ, դասընթացներ միջնակարգ դպրոցի ծրագրերով. դասընթացներ արհեստագործական ուսումնարանի ծրագրերով. համալսարանական ծրագրերով դասընթացներ), դասընթացների հաճախականությունը, դասընթացների կազմակերպիչները, ուսումնական անձնակազմը, սովորող բանտարկյալների թիվը՝ տոկոսներով, դպրոցական սենյակների (դասարանների) նկարագրությունը.
- Հանգիստ. հանգստյան միջոցառումների տեսակները, հանգստյան միջոցառումներից օգտվելու հնարավորությունը, հանգստի սենյակների և սպորտով գրադարձելու համար նախատեսված շինությունների նկարագրությունը. գրադարանը.
- Կրոնական միջոցառումներ. կրոնի ներկայացուցիչներ (քանտարկյալների կողմից դավանվող կրոնները, կրոն դավանելու հնարավորությունը, կրոնի ներկայացուցիչների այցերի հաճախականությունը և տևողությունը). կրոնական ծառայություններ, կրոնական ծեսերին

շինություններ). կրոնական ավանդույթներին՝ լվացումները, պաս և այլն, հետևելու հնարավորություն:

#### **Արտաքին աշխարհի հետ շփումներ**

- Այցել. այցերից օգտվելու հնարավորություն, այցերի հաճախականությունը, այցելություն ստանալու պայմանները, այցերի տևղությունը և պարբերականությունը, ազգականների/երեխաների/ամուսնու այցելություն, այցելությունների համար նախատեսված սեմյակների նկարագրություն.
- Նամակագրություն և ծանրոցների ստացում. նամակագրության և ծանրոցների ստացման հաճախականությունը, գրաքննությունը.
- Հեռախոսագրույցներ. հեռախոսագրույցների հաճախականությունը, պայմանները, հեռախոսից օգտվելու՝ օտարերկրացիների պայմանները:

#### **Բժշկական ծառայություններ**

##### **Բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորություն**

- Անձի բժշկական քննություն՝ բանու ընդունվելուն պես.
- Բժշկական խնամքից օգտվելու հնարավորություն.
- Բանտային հիվանդանոց. մահճականների թիվ, սարքավորումների ու դեղորայքի առկայություն.
- Բուժում ստացող բանտարկյալների թիվը: Բժշկական անձնակազմ. բժիշկների, բուժքույրերի, հոգեբույժների, հոգեբանների, ինչպես նաև այլ անձնակազմի թիվը և նրանց ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

#### **Բանտային անձնակազմ**

- Անձնակազմի թիվը (ըստ կատեգորիաների).
- Պահակախմբի անդամների և բանտարկյալների միջև փոխհարաբերությունները. բանտարկյալների և հաստատության դեկավարության միջև փոխհարաբերությունները.
- Անձնակազմի ուսուցում (ինմանական և վարքագծային):

#### **Բանտային հաստատության մասին ընդհանուր տեղեկատվություն**

- Հաստատության անվանումը.
- Հաստատության տեսակը.
- Հաստատության հասցեն:

**Հաստատության գործունեության համար պատասխանատու մարմինները**

- Պատասխանատու անձի անունը.
- Այդ անձի տեղակալի կամ տեղակալների անունները:

**Այցելության մասին լիդիանուր տեղեկատվություն**

- Այցելության ամսաթիվը.
- Այցելության տեսակը և/կամ նպատակը:
- Նախորդ այցելության ամսաթիվը.
- Այցելություն կատարող բիմի անդամների անունները:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

### Ներքին այցելության գրանցման օրինակ

**Տեղեկատվություն այցելության մասին**

**Հաստատության տարրողունակությունը**

- Պաշտոնական տարրողունակությունը.
- Սիզին տարրողունակությունը.
- Այցելության առաջին օրը հաստատությունում առկա բանտարկյալների թիվը (բառ կատեգորիայի/սեռի/ազգության).
- Բանում պահվող օտարերկրացի բանտարկյալների թիվը՝ տոկոսներով.
- Օտարերկրյա բանտարկյալների ծագումը.
- Բանտարկյալների դասակարգումն ըստ սեռի.
- Անշափահաս բանտարկյալներ.
- Չառամյալ բանտարկյալներ:

**Հաստատության կառուցվածքը**

- Հաստատության շինությունների նկարագրությունը (շինությունների թիվը, կառուցման տարեթիվը, վիճակը, պահպանման և անվտանգության պայմանները).
- Խցերի և ընդհանուր օգտագործման շինությունների նկարագրությունը:

**Տեղեկատվություն այցելության վերաբերյալ**

**Զրույց այցելության սկզբում. քննարկվելիք հարցերը**

- Բանտարկության ասպեկտներ և հանձնարարականներ
- բանտարկյալների ներկայացրած փաստերի հիման վրա.
- հաստատության տնօրենի և անձնակազմի ներկայացրած փաստերի վերաբերյալ.
- այցելություն կատարող թիմի ստացած փաստերի հիման վրա:

### **Զրույց այցելության վերջում**

- քննարկված հարցերը.
  - ստացված պատասխաները:
- Զեռնարկվելիք գործողություններ**
- կարճաժամկետ գործողություններ.
  - միջնաժամկետ գործողություններ:

### **Հաստատվելիք շիռմներ**

**Այցելությունների հաճախականություն**

**Հաջորդ այցելության ժամանակ ստուգման կարիք ունեցող հարցեր**

## ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ՄՆՍՄՐԴԿԱՅԻՆ ԿԱՄԱՐ-ԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱ-ՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Արձանագրության Կողմ պետությունները՝

Վերահաստատելով, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկա-յին կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պա-տիժը արգելվում են և իրենցից ներկայացնում են մարդու իրավունքների լուրջ ուժնահարում.

հավաստիացնելով, որ հետագա միջոցառումներն անհրաժեշտ են «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատ-վությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նպատակներին հասնելու և ազա-տագրկած անձանց պաշտպանության, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմուն-քի կամ պատժի դեմ պայքարի ուժեղացման համար.

Վկայակոչելով Կոնվենցիայի 2-րդ և 16-րդ հոդվածները, որոնք յուրա-քանչյուր Կողմ պետությանը պարտավորեցնում են արդյունավետ միջոց-ներ ձեռնարկել իր իրավասության տակ գտնվող ցանկացած տարածքում խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվութ-յունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատժի կանխարգելելու հա-մար.

Գիտակցելով, որ պետությունների առաջնային պարտավորությունն է կատարել ազատագրկած անձանց պաշտպանությունն ուժեղացնող հոդվածները, և որ նրանց իրավունքները լիարժեք հարգելը բոլորի հա-մընդիանոր պարտականությունն է, ինչպես նաև այն հանգամանքը, որ միջազգային իրավակիրառող մարմինները լրացնում և աջակցում են ազ-գային միջոցառումներին.

Վկայակոչելով այն իրողությունը, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմուն-քի կամ պատժի արդյունավետ կանխարգելումը պահանջում է ուսուցում և տարրեր օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցների համադ-րում.

Վկայակոչելով նաև Մարդու իրավունքների համաշխարհային կոնֆե-րանսի վճռական հայտարարությունը, ըստ որի խոշտանգումներն արմա-

տախիլ անելու համար ջանքերը պետք է առաջնահերթորեն և գլխավորապես կենտրոնացվեն կանխարգելման ուղղությամբ և Կոնվենցիայի կամրժությունը ընդունելու մասին կոչը, որը նպատակ ունի կալանավայրեր կատարվելիք կանոնավոր այցելությունների միջոցով ստեղծել կանխարգելման համակարգ.

հավատիանալով, որ ազատազրկված անձանց պաշտպանությունը խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից կարող է ամրապնդվել կանխարգելիչ բնույթի ոչ դատական միջոցներով՝ կալանավայրեր կատարվելիք կանոնավոր այցելությունների հիման վրա.

համաձայնվում են հետևյալ մասին.

## ՍԱՍ I ՀԻՄՆԱԼՈՒ ԱԿԳՐՈՒՆՔՆԵՐ

### Հոդված 1

Սույն Արձանագրության նպատակն է ստեղծել միջազգային և ազգային անկախ մարմինների կողմից նախաձեռնված կանոնավոր այցելությունների համակարգ՝ այն վայրերը, որտեղ մարդիկ զրկված են ազատությունից՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը և պատիժը կանխարգելելու համար:

### Հոդված 2

1. Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման հարցերով ենթակոմիտեն (այսուհետ՝ Կանխարգելման հարցերով ենթակոմիտե) պետք է ստեղծվի և իրականացնի սույն Արձանագրությամբ սահմանված գործառույթները:
2. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն պետք է իր աշխատանքներն իրականացնի Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության շրջանակներում և պետք է դեկավարվի դրա նպատակներով և սկզբունքներով, ինչպես նաև ազատազրկված մարդկանց նկատմամբ վերաբերմունքին առնչվող Միավորված ազգերի կազմակերպության նորմերով:
3. Սիևնույն ժամանակ Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն պետք է դեկավարվի գաղտնիության, անկողմնակալության, միաս-

- նականության, համընդիանրության և օբյեկտիվության սկզբունք-ներով:
4. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն և Կողմ պետությունները կհամագործակցեն սույն Արձանագրության կատարման համար:

### Հոդված 3

Յուրաքանչյուր Կողմ պետություն տեղական մակարդակով պետք է ստեղծի, նշանակի կամ հաստատի այցելության մեկ կամ մի քանի մարմիններ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ այ աստի կանխարգելման համար (այսուհետ՝ ազգային կանխարգելման մարմին):

### Հոդված 4

1. Սույն Արձանագրության համաձայն յուրաքանչյուր Կողմ պետություն պետք է ըստ 2-րդ և 3-րդ հոդվածներում ներկայացված մեխանիզմների՝ քույլատրի այցելություններ կատարել իր իրավասության և հսկողության տակ գտնվող ցանկացած վայր՝ որտեղ կամ կարող են լինել ազատազրկված անձինք (այսուհետ՝ կալանավայրեր), ինչպես պաշտոնատար անձի կողմից տրված իրամանով, այնպես էլ նրա համաձայնությամբ կամ քույլսկիրյամբ: Անհրաժեշտության դեպքում, այս այցելությունները պետք է նախաձեռնվեն այդ անձանց խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվություններից նվաստացնող վերաբերմունքից կամ այտմից պաշտպանությունն ուժինացնելու նպատակով:
2. Սույն Արձանագրության նպատակների համար ազատազրկում՝ նշանակում է կալանավորման կամ բանտարկության ցանկացած ձև կամ անձի տեղափորում հսկողության տակ պահվող հանրային կամ մասնավոր վայրում, որն անձին որևէ դատական, վարչական կամ այլ նարմնի որոշմամբ չի քույլատրվում:

## ՄԱՍ II

### Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն

#### Հոդված 5

1. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն պետք է կազմված լինի տասը անդամներից: Սույն Արձանագրության հիսուներորդ վավերագիրը ստանալուց կան դրան միանալուց հետո Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամների թիվը կավելանա մինչև քսանիինգը:
2. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամները պետք է ընտրվեն բարձր բարոյական հատկանիշներ ունեցող անձանցից, որոնք արդարադատության իրականացման բնագավառում մասնագիտական փորձ ունեն, մասնավորապես՝ քրեական իրավունքի բնագավառում, բանտարկության և ոստիկանության վարչակազմում կամ ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքին առնչվող տարրեր բնագավառուներում:
3. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի կազմավորման համար պատշաճ ուշադրություն պետք է դարձվի աշխարհագրական հավասարաչափ բաշխմանը և Կողմ պետությունների քաղաքակրթության տարրեր ծերերի ու իրավական համակարգերի հավասարաչափ ներկայացնանը:
4. Կազմավորման ժամանակ պետք է ուշադրություն դարձվի գենդերային հավասարաշափ ներկայացմանը՝ հիմնվելով հավասարության և խտրականության բացառման սկզբունքների վրա:
5. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամ կարող են լինել նույն պետության ոչ ավելի, քան երկու քաղաքացիներ:
6. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամները պետք է աշխատեն իրենց անձնական հնարավորությունների սահմաններում, լինեն անկախ և անկողմնակալ, ընդունակ լինեն աշխատել Կանխարգելման հարցերով ենթակոմիտեում:

#### Հոդված 6

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն կարող է սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն առաջարկել համապատասխան որակավորում ունեցող և 5-րդ հոդվածում նշված պահանջներին բավարարող մինչև երկու թեկնածուների և ապահովել թեկնածուների որակավորման վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:
2. ա) Թեկնածուները պետք է ունենան սույն Արձանագրության Կողմ պետության քաղաքացիություն.  
բ) Երկու թեկնածուներից առնվազն մեկը պետք է ունենա առաջադր-

- վող պետության քաղաքացիություն.
- գ) պետք է առաջադրվեն Կողմ պետության ոչ ավելի քան երկու քաղաքացիներ.
- դ) Կողմ պետություններից մեկի կողմից մեկ այլ պետության քաղաքացուն առաջադրելուց հետո, այն պետք է դիմի և ստանա տվյալ Կողմ պետության համաձայնությունը:
3. Կողմ պետությունների հանդիպման օրվանից (որի ընթացքում կանցկացվեն ընտրությունները) առնվազն հինգ ամիս առաջ, Սիակորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Կողմ պետություններին կուղարկի մի գրություն, որով կիրավիրի նրանց՝ երեք ամսվա ընթացքում ներկայացնելու իրենց թեկնածուներին: Գլխավոր քարտուղարը այբբենական կարգով կներկայացնի առաջադրված բոլոր թեկնածուների ցանկը՝ նշելով նրանց առաջադրող Կողմ պետություններին:

### Հոդված 7

1. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամները պետք է ընտրվեն հետևյալ կարգով՝
  - ա) առաջնահերթ ուշադրություն կդարձվի սույն Արձանագրության 5-րդ հոդվածի չափորոշիչների և պահանջների բավարարմանը.
  - բ) նախնական ընտրությունը պետք է անցկացվի ոչ ուշ, քան սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս հետո.
  - գ) Կողմ պետությունները պետք է Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամներին ընտրեն գաղտնի քվեարկությամբ.
  - դ) Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամների ընտրությունները պետք է անցկացվեն Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից հրավիրած Կողմ պետությունների երկու տարին մեկ անգամ անցկացվող հանդիպումների ժամանակ: Այդ հանդիպումներին, որոնցում Կողմ պետությունների երկու երրորդը կազմում են քվեում, Կանխարգելման հարցերով ենթակոմիտեում ընտրված կիամարվեն այն անձինք, ովքեր կհավաքեն ճայների մեծամասնությունը և ներկա գտնվող ու քվեարկությանը մասնակցող Կողմ պետությունների ներկայացուցիչների ճայների բացարձակ մեծամասնությունը:
2. Եթե ընտրությունների ընթացքում Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամ դառնալու իրավունք են ստանում մեկ Կողմ պետության երկու քաղաքացիներ, ապա Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամ կարող է աշխատել ճայների առավել

քանակություն ստացած թեկնածուն: Եթե քաղաքացիները ստացել են ձայների նույն քանակությունը, կիրառվում է հետևյալ ընթացակարգը՝

- ա) այն դեպքում, եթե Կողմ պետության կողմից առաջադրված թեկնածուներից միայն մեկն է տվյալ պետության քաղաքացի, ապա տվյալ քաղաքացին պետք է աշխատի որպես Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամ.
- բ) այն դեպքում, եթե Կողմ պետության կողմից առաջադրված երկու թեկնածուներն ել տվյալ պետության քաղաքացիներ են, ապա պետք է անցկացվի առանձին գաղտնի քվեարկություն, որի արդյունքում կորոշվի, թե քաղաքացիներից որը պետք է դառնա ենթակոմիտեի անդամ:
- գ) այն դեպքում, եթե Կողմ պետության կողմից առաջադրված ոչ մի թեկնածու նրա քաղաքացին չէ, ապա պետք է անցկացվի առանձին գաղտնի քվեարկություն, որի արդյունքում կորոշվի, թե թեկնածուներից որը պետք է դառնա ենթակոմիտեի անդամ:

### **Հոդված 8**

Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամի մահվան կամ հրաժարական տալու կամ որևէ այլ պատճառով իր պարտականությունների հետագա կատարման անհնարինության դեպքում այդ անդամին առաջադրող Կողմ պետությունը՝ մինչև Կողմ պետությունների հաջորդ հանդիպումը աշխատելու համար, հաշվի առնելով իրավասության տարբեր ոլորտների միջև պատշաճ հավասարության անհրաժեշտությունը, կառաջադրի մեկ ուրիշ անձի, որն ունի անհրաժեշտ որակավորում և համապատասխանում է 5-րդ հոդվածում նշված պահանջներին՝ Կողմ պետությունների մեծամասնության կողմից նրա թեկնածությունը հաստատելու պայմանով: Թեկնածությունը կհամարվի հավանության արժանացած, եթե Կողմ պետությունների կեսը կամ ավելին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից տեղեկացվելուց հետո վեց ամսվա ընթացքում բացասական չարտահայտվեն առաջադրված թեկնածուի նշանակման վերաբերյալ:

### **Հոդված 9**

Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի անդամները կընտրվեն չորս տարի ժամկետով: Կրկին առաջադրվելու դեպքում նրանք կարող են վերընտրվել մեկ անգամ: Առաջին ընտրություններում ընտրված անդամների կեսի պաշտոնավարման ժամկետը պետք է լրանա երկու տարի

անց՝ համաձայն 7-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի՝ առաջին ընտրություններից հետո անմիջապես այդ անդամների անունները կորոշվեն վիճակահանությամբ՝ հանդիպումը նախագահողի կողմից:

### Հոդված 10

1. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն պետք է երկու տարի ժամկետով ընտրի իր պաշտոնատար անձանց: Նրանք կարող են վերընտրվել:
2. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն պետք է ստեղծի իր սեփական ընթացակարգը: Այս ընթացակարգը, ի թիվս այլոց, պետք է նախատեսի նաև, որ՝
  - ա) անդամների կենը և գործարած մեկ հոգի՝ կվազմեն քվորում.
  - բ) Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի որոշումները պետք է ընդունվեն ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ.
  - գ) Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն իր հանդիպումներն անցկացնելու է դրնվակ:

### ՄԱՍ III

#### Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի մանդատը

### Հոդված 11

- Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն պետք է՝
- ա) այցելի 4-րդ հոդվածում նշված վայրերը և Կողմ պետությունների համար կազմի խորհրդատվություններ՝ խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատազրկված անձան պաշտպանության համար.
  - բ) ազգային կանխարգելման մարմինների առնչությամբ՝
    - i. ապահովի խորհրդատվություն և անհրաժեշտության դեպքում Կողմ պետություններին աջակցի այդ մարմինների ստեղծման գործում.
    - ii. պահպանի անմիջական և անհրաժեշտության դեպքում գաղտնի կապ ազգային կանխարգելման մարմինների հետ և նրանց հնարավորություններն ընդլայնելու նպատակով առաջարկի ուսուցողական և տեխնիկական աջակցություն.
    - iii. ապահովի խորհրդատվություն և օգնի նրանց իրենց կարիքների և անհրաժեշտ միջոցների գնահատման ուղղությամբ՝ ազատազրկված անձան խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ

պատժից պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով.

- iv. կազմի խորհրդատվություններ և դիտողություններ, ելնելով Կողմ պետությունների հնարավորությունների ընդայնման տեսանկյունից և ազգային կանխարգելման մարմինների մանդատից՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման համար.
- q) խոշտանգումներն ընդհանուր առմանը կանխարգելելու նպատակով համագործակցի Միավորական ազգերի կազմակերպության համապատասխան կառույցների և մարմինների հետ, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային և ազգային ինստիտուտների և կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից բոլոր մարդկանց պաշտպանության ուժեղացման ուղղությամբ:

## Հոդված 12

Կանխարգելման հարցերով ենթակոմիտեին 11-րդ հոդվածով սահմանված կարգով իր մանդատն իրականացնելու հնարավորություն ընձեռնելու համար Կողմ պետությունները պարտավորվում են՝

- ա) ընդունել Կանխարգելման հարցերով ենթակոմիտեին իրենց տարածքում և բոլոր տալ նրան մուտք գործել կալանավայրեր՝ սույն Արձանագործության 4-րդ հոդվածում սահմանված կարգով.
- բ) ապահովել անհրամեշտ ամբողջ տեղեկատվությամբ, որը կարող է պահանջել Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն՝ այն կարիքներն ու միջոցները գնահատելու համար, որոնք պետք է ընդունվեն ազատազրկված անձանց խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանությունը ուժեղացնելու համար.
- գ) խրախուսել և նպաստել Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի և ազգային կանխարգելման մարմինների միջև կապերին.
- դ) ուսումնասիրել Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի խորհրդատվությունները և բանակցել դրանց իրականացման հնարավոր միջոցների մասին:

## Հոդված 13

1. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն 11-րդ հոդվածով սահմանված կարգով իր մանդատի իրականացման համար կհաստատի (սկզբում՝ վիճակահանության միջոցով) Կողմ պետությունների կատարվելիք կանոնավոր այցելությունների ծրագիրը:

2. Խորհրդատվություններից հետո Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն Կողմ պետություններին կծանուցի ծրագրի մասին, որպեսզի նրանք կարողանան առանց հետաձգումների կատարել այցելությունների համար անհրաժեշտ գործնական նախապատրաստությունները:
3. Այցելությունները պետք է իրականացվեն Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի ոչ պակաս, քան երկու անդամների կողմից: Անհրաժեշտության դեպքում այդ անդամներին կարող են ընկերակցել սույն Արձանագրությամբ կարգավորվող բնագավառներում գիտելիքներ և մասնագիտական փորձ ունեցող փորձագետներ, ովքեր կընտրվեն Կողմ պետությունների, Սիավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերազույն հանձնակատարի Սիավորված ազգերի կազմակերպության Միջազգային հանցագործությունների կանխարգելման կենտրոնի կողմից մշակված առաջարկությունների հիման վրա կազմած փորձագետների ցուցակից: Ցուցակը պատրաստելիս Կողմ պետությունները պետք է առաջարկեն ոչ ավելի, քան հինգ ազգային փորձագետների: Կողմ պետությունը կարող է դեմ արտահայտվել այցելության համար հատուկ փորձագետի ներգրավմանը, որի հիման վրա Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն պետք է առաջադրի այլ փորձագետի:
4. Երբ Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն նպատակահարմար է գտնում, կարող է առաջարկել, որ կանոնավոր այցելությունից հետո կատարվի կարճատև լրացուցիչ այցելություն:

#### Հոդված 14

1. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեին իր մանդատը իրականացնելու հնարավորություն տալու համար սույն Արձանագրության Կողմ պետությունները միջոցներ են ձեռնարկում տրամադրելու՝
  - ա) անսահմանափակ մատչելիություն՝ կալանավայրերում գտնվող ազատազրկված անձանց, ինչպես նաև կալանավայրերի քանակի և դրանց գտնվելու վայրերի մասին ողջ տեղեկատվության նկատմամբ՝ 4-րդ հոդվածով սահմանված կարգով.
  - բ) անսահմանափակ մատչելիություն՝ այդ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև կալանավայրերում նրանց պայմանների մասին ամբողջ տեղեկատվության առնչությամբ.
  - գ) անսահմանափակ մուտքի իրավունք՝ բոլոր կալանավայրերը և դրանց կառույցներն ու շինությունները՝ ներքոնշյալ 2-րդ կետով սահմանված պայմաններն առկա չլինելու դեպքում.
  - դ) հնարավորություն՝ առանց վկաների ազատազրկման անձանց հետ

առանձնազրույցներ անցկացնելու, ինչպես անձամբ, այնպես էլ՝ անհրաժեշտության դեպքում, թարգմանչի միջոցով, ինչպես նաև ցանկացած այլ անձի հետ, ով Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի կարծիքով կարող է համապատասխան տեղեկատվություն տրամադրել.

- ե) ազատություն՝ ընտրելու այն վայրերը և այն մարդկանց, որը ենթակոմիտեն ցանկանում է այցելել և ում հետ ցանկանում է առանձնազրույց անցկացնել:
2. Որևէ առանձին կալանավայր այցելություն կատարելուն կարելի է առարկել միայն անհետաձգելի և ծայրահեղ անհրաժեշտության հիմքերով՝ պետական պաշտպանության, հասարակական անվտանգության, բնական աղետի կամ այցելության վայրում լուրջ անկարգության դեպքում, որը կարող է ժամանակավորապես խոչնորութել այցելության իրականացնանք: Կողմ պետության կողմից հայտարարված արտակարգ իրավիճակի առկայությունը չի կարող դիմում որպես այցելությունը մերժելու պատճառ:

### **Հոդված 15**

Ոչ մի մարմին կամ պատուատար անձ չպետք է իրահանգի, կիրառի, բույլատրի կամ հանդուրժի որևէ պատժամիջոց որևէ անձի կամ կազմակերպության նկատմամբ և ոչ մի այդպիսի անձ կամ կազմակերպություն չպետք է որևէ այլ ձևով վնասվի՝ Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի հետ հաղորդակցվելու կամ իր պատվիրակներին որևէ տեղեկատվություն հաղորդելու համար՝ անկախ դրա ճիշտ կամ սխալ լինելոց:

### **Հոդված 16**

1. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն իր խորհրդատվություններն ու դիմությունները պետք է գաղտնի կերպով հաղորդի Կողմ պետությանը և անհրաժեշտության դեպքում՝ ազգային կանխարգելման մարմնին:
2. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն իր հաշվետվությունը պետք է հրապարակի շահագրգիռ Կողմ պետության ցանկացած մեկնաբանություններով հանդերձ, երբ դա կապահանջի տվյալ Կողմ պետությունը: Եթե Կողմ պետությունը հաշվետվության մի մասը դարձնում է հրապարակային, ապա Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն կարող է հրապարակել հաշվետվությունն ամբողջությամբ կամ մասամբ: Ամեն դեպքում, ոչ մի անձնական տվյալ չպետք է հրապարակվի առանց շահագրգիռ անձի համաձայնության:

3. Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն իր գործունեության վերաբերյալ պետք է տարեկան հաշվետվություն ներկայացնի Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեին:
4. Եթե Կողմ պետությունը հրաժարվում է 12-րդ և 14-րդ հոդվածների համաձայն համագործակցել Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի հետ կամ Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի խորհրդատվություններին համապատասխան քայլեր ձեռնարկել իրավիճակը բարելավելու ուղղությամբ, ապա Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի դիմումի հիման վրա՝ այն բանից հետո, եթե Կողմ պետությունը հնարավորություն է ունեցել հայտնել իր դիրքորոշման մասին, իր անդամների ձայների մեծամասնությամբ կարող է որոշել այդ հարցի առնչությամբ հրապարակային հայտարարություններ անել կամ հրապարակել Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի հաշվետվությունը:

## ՍԱՍ Խ Ազգային կանխարգելման նարմիններ

### Հոդված 17

Յուրաքանչյուր Կողմ պետություն սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո կամ դրա վավերացումից կամ դրան միանալուց առնվազն մեկ տարի հետո պետք է հաստատի, նշանակի կամ ստեղծի մեկ կամ մի քանի անկախ ազգային կանխարգելման մարմիններ՝ տեղական մակարդակով խոշտանգումների կանխարգելման համար: Ազակենտրոնացված միավորումների կողմից ստեղծված մարմինները նույնպես կարող են նշանակվել որպես ազգային կանխարգելման մարմիններ՝ սույն Արձանագրության նպատակների իրականացման համար, եթե դրանք համապատասխանում են Արձանագրության դրույթներին:

### Հոդված 18

1. Կողմ պետությունները պետք է երաշխավորեն ազգային կանխարգելման մարմինների գործնական անկախությունը, ինչպես նաև դրանց անձնակազմերի անկախությունը:
2. Կողմ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար ազգային կանխարգելման մարմինների փորձագետների պահանջվող ընդունակություններն ու մասնագիտական գիտելիքները: Նրանք պետք է ապահովեն գենդերային հավասարությունը, երկրի էքսիկ խմբերի և ազգային փոքրամասնությունների բավարար ներկայացվածությունը:

3. Կողմ պետությունները միջոցներ են ծեռնարկում ազգային կանխարգելման մարմինների գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները մատչելի դարձնելու համար:
4. Ազգային կանխարգելման մարմիններ ստեղծելիս Կողմ պետությունները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն զարգացման ազգային ինստիտուտների կարգավիճակին և մարդու իրավունքներին պիտի պաշտպանությանն առնչվող սկզբունքներին:

### **Հոդված 19**

Ազգային կանխարգելման մարմիններին պետք է տրվեն առնվազն հետևյալ լիազորությունները՝

- ա) 4-րդ հոդվածում սահմանված կարգով պարբերաբար ուսումնասիրելու կալանավայրերում գտնվող ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը՝ անհրաժեշտության դեպքում խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից նրանց պաշտպանությունն ուժեղացնելու համար.
- բ) Խորհրդատվություններ տալու համապատասխան մարմիններին՝ ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը և նրանց պայմանները բարեկավելու, ինչպես նաև նրանց նկատմամբ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատժից կանխարգելելու նպատակով՝ հաշվի առնելով Սիավորված ազգերի կազմակերպության համապատասխան նորմերը.
- գ) ներկայացնելու գործող կամ նախագծային փուլում գտնվող օրենսդրությանը վերաբերող առաջարկությունները և դիտողությունները:

### **Հոդված 20**

Ազգային կանխարգելման մարմինների կողմից իրենց մանդատը իրականացնելու համար հնարավորություն տալու նպատակով, սույն Արձանագրության Կողմ պետությունները միջոցներ են ծեռնարկում տրամադրելու՝

- ա) մատչելիություն՝ կալանավայրերում գտնվող ազատազրկված անձանց, ինչպես նաև կալանավայրերի քանակի և դրանց գտնվելու վայրերի մասին ողջ տեղեկատվության նկատմամբ՝ 4-րդ հոդվածում սահմանված կարգով.
- բ) մատչելիություն՝ այդ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև կալանավայրերում նրանց պայմանների մասին ողջ տեղեկատվության առնչությամբ.

- գ) մուտքի իրավունք՝ բոլոր կալանավայրերը և դրանց կառույցներն ու շինությունները.
- դ) հնարավորություն՝ առանց վկաների ազատազրկված անձանց հետ առանձնազրույցներ անցկացնելու, ինչպես անձանք, այնպես էլ անհրաժեշտության դեսպում բարգմանչի միջոցով, ինչպես նաև ցանկացած այլ անձի հետ, ով ազգային կանխարգելման մարմնի կարծիքով կարող է համապատասխան տեղեկատվություն տրամադրել.
- ե) ազատություն՝ ընտրելով այն վայրերը և այն մարդկանց, որը ազգային կանխարգելման մարմինը ցանկանում է այցելել և ում հետ ցանկանում է առանձնազրույց անցկացնել.
- զ) իրավունք՝ կապեր հաստատելու Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի հետ՝ նրանց տեղեկատվություն հաղորդելու և հանդիպելու համար:

### Հոդված 21

1. Ոչ մի մարմին կամ պաշտոնատար անձ չպետք է իրահանգի, կիրառի, թույլատրի կամ հանդուրժի որևէ պատժամիջոց որևէ անձի կամ կազմակերպության նկատմամբ և ոչ մի այդպիսի անձ կամ կազմակերպություն չպետք է որևէ այլ ձևով վնասվի՝ ազգային կանխարգելման մարմիններին որևէ տեղեկատվություն հաղորդելու համար՝ անկախ դրա ճիշտ կամ սխալ լինելուց:
2. Թույլատրվում է ազգային կանխարգելման մարմնի կողմից գաղտնի տեղեկատվություն հավաքելը: Ոչ մի անձնական տվյալ չպետք է հրապարակվի առանց շահագրգիռ անձի համաձայնության:

### Հոդված 22

Ծահագրիում Կողմ պետության իրավասու մարմինները պետք է ուսումնասիրեն ազգային կանխարգելման մարմնի խորհրդատվությունները և բանակցեն դրանց հնարավոր իրականացման միջոցների վերաբերյալ:

### Հոդված 23

Սույն Արձանագրության Կողմ պետությունները միջոցներ են ձեռնարկում Ազգային կանխարգելման մարմինների տարեկան հաշվետվությունները հրապարակելու և տարածելու համար:

## ՍԱՍ V Հայտարարություն

### Հոդված 24

1. Վավերացման ժամանակ Կողմ պետությունները կարող են հայտարարություն անել՝ հետաձգելով սույն Արձանագրության III կամ IV մասերով սահմանված իրենց պարտավորությունների կատարումը:
2. Այդպիսի հետաձգումը պետք է տևի առավելագույնը երեք տարի: Կողմ պետության կողմից պատշաճ պատճառաբանություն ներկայացնելուց և Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի հետ խորհրդակցելուց հետո Խոշտանգումների դեմ պայքարի Կոմիտեն կարող է այդ ժամանակահատվածը երկարացնել լրացուցիչ երկու տարի ժամկետով:

## ՍԱՍ VI Ֆիճանսական դրույթներ

### Հոդված 25

1. Սույն Արձանագրության կատարման համար Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի կողմից կատարված ծախսերը կը դիմումական կազմակերպությունը:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կապահովի անհրաժեշտ աշխատակազմ և հնարավորություններ սույն Արձանագրությամբ սահմանված Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի գործառույթների արդյունավետ իրականացման համար:

### Հոդված 26

1. Գլխավոր Ասամբլեայի ընթացակարգերին համապատասխան կստեղծվի Հատուկ Հիմնադրամ, որը կղեկավարվի Միավորված ազգերի կազմակերպության ֆինանսական կանոնակարգերով և կանոններով՝ Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի Կողմ պետության կատարած այցելությունից հետո տրված խորհրդատվությունների, ինչպես նաև ազգային կանխարգելման մարմինների ուսումնական ծրագրերի իրականացման նպատակով ֆինանսական օժանդակություն տրամադրելու համար:
2. Հատուկ հիմնադրամը կարող է ֆինանսավորվել նաև կառավարությունների, միջկառավարական և հասարակական կազմակեր-

պությունների և այլ մասնավոր կամ հանրային անձանց կողմից տրվող ֆինանսական ներդրումների միջոցով:

## ՄԱՍ VII Եզրափակիչ դրույթներ

### Հոդված 27

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման համար Կոնվենցիան ստորագրած ցանկացած պետության կողմից:
2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման ցանկացած պետության կողմից, որը վավերացրել կամ միացել է Կոնվենցիային: Վավերագրերը պետք է ի պահ հանձնվեն Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
3. Սույն Արձանագրությունը բաց կլինի միանալու համար ցանկացած պետության կողմից, որը վավերացրել կամ միացել է Կոնվենցիային:
4. Միանալն ուժի մեջ կմտնի միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից:
5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրությունը ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին կծանուցի յուրաքանչյուր նոր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին:

### Հոդված 28

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին քսաներորդ վավերագիրը կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ երեսուներորդ օրը:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին քսաներորդ վավերագիրը կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո սույն Արձանագրությունը վավերացնող կամ դրան միացող յուրաքանչյուր պետության համար սույն Արձանագրությունը ուժի մեջ կմտնի իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

### Հոդված 29

Սույն Արձանագրության դրույթներն առանց սահմանափակումների

կամ բացառությունների տարածվելու են դաշնային պետությունների բոլոր սուբյեկտների վրա:

### **Հոդված 30**

Սույն Արձանագրության առնչությամբ որևէ վերապահում չպետք է արվի:

### **Հոդված 31**

Սույն Արձանագրության դրույթները չեն ազդի Կողմ պետությունների՝ կալանավայրեր այցելության համակարգ սահմանող որևէ տարածաշրջանային կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների վրա: Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի և այդպիսի տարածաշրջանային կոնվենցիաներով հիմնված մարմինների միջև խրախուսվում է խորհրդատվությունն ու համագործակցությունը՝ նպատակ ունենալով խուսափել կրկնօրինակումից և արդյունավետորեն նպաստել սույն Արձանագրության նպատակների իրականացմանը:

### **Հոդված 32**

Սույն Արձանագրության դրույթները չեն ազդի 1949թ. օգոստոսի 12-ի ժնկի շրս Կոնվենցիաներով և 1977թ. հունիսի 8-ի Լրացուցիչ արձանագրություններով ստանձնած Կողմ պետությունների պարտավորությունների իրականացման, ինչպես նաև որևէ Կողմ պետության հնարավորություն վրա՝ լիազորելով Կարմիր Խաչի միջազգային կոմիտեին՝ այցելելու կալանավայրերը, այն դեպքերում, որոնց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքը չի կիրառվում:

### **Հոդված 33**

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը՝ Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով, որը հետագայում այդ մասին կտեղեկացնի սույն Արձանագրության և Կոնվենցիայի մյուս Կողմ պետություններին: Գործողության դադարեցումն ուժի մեջ կմտնի ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից մեկ տարի անց:
2. Այդպիսի դադարեցումը չի նշանակի Կողմ պետությունների՝ սույն Արձանագրությամբ նախատեսված պարտավորությունների կատարումից ազատում՝ մինչև գործողության դադարեցումն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած ցանկացած գործողության կամ իրավիճակի նկատմամբ կամ այն գործողությունների նկատմամբ, որոնք Կան-

խարգելման հարցերով ենթակոմիտեն որոշել էր կամ կարող էր որոշել ձեռնարկել շահագրգիռ Կողմ պետության նկատմամբ, ոչ էլ դադարեցումը որևէ կերպ կխոչընդոտի մինչև գործողության դադարեցման ուժի մեջ մտնելը Կանխարգելման հարցերով ենթակոմիտեի կողմից արդեն իսկ սկսած որևէ գործի քննարկման շարունակման:

3. Կողմ պետության համար գործողության դադարեցումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո Կանխարգելման հարցերով ենթակոմիտեն չի սկսի որևէ գործի քննարկում այդ պետության առնչությամբ:

### Հոդված 34

1. Սույն Արձանագրության յուրաքանչյուր Կողմ պետություն կարող է առաջարկել փոփոխություն և այն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը այնուհետ առաջարկված փոփոխությունը կուղարկի սույն Արձանագրության Կողմ պետություններին՝ խնդրելով նրանց ծանուցել, թե նրանք ցանկանո՞ւմ են արդյոք հրավիրել Կողմ պետությունների կոնֆերանս՝ առաջարկված փոփոխության քննարկման և դրա վերաբերյալ քվեարկության անցկացման համար: Այն դեպքում, եթե հաղորդելուց հետո չորս ամսվա ընթացքում Կողմ պետությունների ոչ պակաս քան մեկ երրորդը հավանություն է տալիս նման կոնֆերանս հրավիրելուն, Գլխավոր քարտուղարը հրավիրում է կոնֆերանս՝ Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Կոնֆերանսին ներկա և քվեարկությանը մասնակցած Կողմ պետությունների երկու երրորդի կողմից ընդունված ցանկացած փոփոխություն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից կներկայացվի բոլոր Կողմ պետություններին՝ ընդունման համար:
2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված փոփոխությունը ուժի մեջ մտնելու սույն Արձանագրության Կողմ պետությունների երկու երրորդի կողմից վերջիններիս սահմանադրական համապատասխան ընթացակարգերին համաձայն ընդունվելու դեպքում:
3. Փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո դրանք պարտադիր ուժ կստանան ընդունած Կողմ պետությունների համար, մյուս Կողմ պետությունների համար պարտադիր ուժ կունենան սույն Արձանագրության դրույթները և նրանց կողմից առավել վաղ ընդունված ցանկացած փոփոխություն:

### **Հոդված 35**

Կանխարգելման հարցերով ենքակոմիտեի և ազգային կանխարգելման մարմինների անդամներին կտրվեն այնպիսի արտոնություններ և անձեռնմխելություններ, որոնք անհրաժեշտ են իրենց գործառույթների անկախ իրականացման համար: Կանխարգելման հարցերով ենքակոմիտեի անդամներին կտրվեն Միավորված ազգերի կազմակերպության 1946թ. փետրվարի 13-ի Արտոնությունների և անձեռնմխելությունների մասին Կոնվենցիայի 22-րդ բաժնով նախատեսված արտոնությունները և անձեռնմխելությունները:

### **Հոդված 36**

Կողմ պետություն այցելելու դեպքում, Կանխարգելման հարցերով ենքակոմիտեի անդամները առանց սույն Արձանագրության դրույթներին և նպատակներին վճասելու և նրանց տրված արտոնություններն ու անձեռնմխելությունները սահմանափակելու, պետք է՝

- ա) հարգեն այցելած պետության օրենքներն ու կանոնները.
- բ) ձեռնապահ մնան ցանկացած գործողություններ կամ գործունեություններ, որոնք անհամատեղելի են անկողմնակալ և միջազգային բնույթի նրանց պարտավորությունների հետ:

### **Հոդված 37**

1. Սույն Արձանագրությունը, որի արարերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը հավասարագոր են, ի պահ կհանձննվի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության հաստատված պատճենները կփոխանցի բոլոր պետություններին:

#### **1. Միավորված ազգերի կազմակերպություն ՍԱԿ-ի կոնվենցիաներ և պայմանագրերով ստեղծված մարմիններ**

Տես՝ [www.unhchr.ch/fi/Treaties\\_and\\_Treaty\\_monitoring\\_bodies.html](http://www.unhchr.ch/fi/Treaties_and_Treaty_monitoring_bodies.html) ինտերնետ կայքում

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության միջազգային դաշնագիր, 1966թ. պայմանագրով ստեղծված մարմինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտե:
- Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա, 1984թ. պայմա-

նագրով ստեղծված մարմին՝ Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտե:

- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատմի ձևերի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, 2002, *Liaisoning the Optional Protocol on Information on the Optional Protocol* ինստերնետ կայքէջը:
- Կոնվենցիա Երեխայի իրավունքների մասին, 1989թ. պայմանագրով ստեղծված մարմին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության կոմիտե:
- Հյուպատոսական հարաբերությունների վերաբերյալ Վիեննայի կոնվենցիա, 1967թ.: Տես՝ [www.umn.edu/humanrts](http://www.umn.edu/humanrts) կայքէջը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 4

### Համապատասխան չափանիշների ցանկ

#### 1. Միավորված ազգերի կազմակերպություն

##### ՍԱԿ-ի չպարտավորեցնող փաստաթղթեր.

տես [www.unhchr.ch](http://www.unhchr.ch) և Treaties կայքէջը:

- Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու, ընդունվել է ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 43/173 որոշմամբ՝ 1988թ. դեկտեմբերի 9-ին:
- Բանտարկյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքներ, ընդունված ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/111 որոշմամբ:
- Ազատազրկված անչափահասների պաշտպանության Միավորված ազգերի կազմակերպության կանոններ, ընդունվել են ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/113 որոշմամբ:
- Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոններ («Պեկինյան կանոններ»), ընդունվել է ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/33 որոշմամբ:
- Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ, ընդունվել են ECOSOC-ի 633 C(XXIV) 1957թ. հուլիսի 31-ի և 2076 (LXII) 1977թ. մայիսի 13-ի որոշումներով:
- ՍԱԿ-ի բժշկական երիկայի սկզբունքներ՝ խոշտանգումներից և այլ դաժան կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից բանտարկյալների պաշտպանության գործում բժշկական անձնակազմի, հատկապես՝ թերապևտների դերի վերաբերյալ, ընդունվել է ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1982թ. դեկտեմբերի 18-ի 37/194 որոշմամբ:
- Իրավապահ մարմինների աշխատողների կողմից ուժ և հրազեն գործադրելու հիմնական սկզբունքներ, ընդունվել են Հանցավորության կանխարգելման և օրինախախտների հանդեպ վերաբերմունքին նվիրված ՍԱԿ-ի Ուժուներորդ Կոնգրեսում, որը տեղի է ունեցել 1990 թ. Օգոստոսի 27-ից Սեպտեմբերի 7-ը, Կուրայի մայրաքաղաք Հավանայում:

- Իրավապահ մարմինների աշխատողների վարքագծի կանոնագիրը, ընդունվել է ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1979թ. դեկտեմբերի 17-ի թիվ 34/169 որոշմամբ:
- Հոգեկան հիվանդություններով տառապող անձանց խնամքի բարեսավան ՍԱԿ-ի սկզբունքներ: ընդունվել են ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից՝ 1991թ. դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 որոշմամբ:
- UNHCR վերանայված իրահանգները նյութապես կարիքավոր անձանց համար նախատեսված ապաստարաններում պահելու ընդունելի պայմանների ու չափանիշների վերաբերյալ, 1999թ.: Տես նաև՝ [www.unhcr.ch](http://www.unhcr.ch) կայքէջը:
- Բանտարկյալներին խուզարկող մարմնի վերաբերյալ կատարված գեկույց, ընդունվել է 1993թ. հոկտեմբերին՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում՝ 45-րդ Համաշխարհային բժշկական համաժողովի կողմից:
- Ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների կիրառման նվազագույն ստանդարտ կանոններ (Տուխոյի կանոններ), ընդունվել են գլխավոր ասամբլեայի 1990 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/110 որոշմամբ:

## 2. Աֆրիկյան Միություն

- Մարդկանց և ժողովուրդների իրավունքների պաշտպանության աֆրիկյան խարտիա, ընդունվել է Աֆրիկյան միասնության կազմակերպության կողմից՝ 1981թ. հունիսի 27-ին: Տես նաև՝ [www.africa-union.org](http://www.africa-union.org) fi Official Documents fi Treaties, Conventions & Protocols կայքէջը:
- Բանտարկյալների իրավունքների պաշտպանության աֆրիկյան խարտիայի նախագիծ, ընդունվել է Կենտրոնական, Արևելյան և Հարավային Աֆրիկայի ուղղի հաստատությունների դեկավարների կողմից՝ 2001թ. սեպտեմբերի 4-ից 7-ը՝ Նամիբիայի Ուխնդիոք քաղաքում և քննարկվել Աֆրիկայում քրեական և բանտային բարեփոխումներին նվիրված համագրիկյան կոնֆերանսում, որը տեղի է ունեցել 2002թ. սեպտեմբերի 18-20-ը՝ Ուազադուզույում: Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ [www.penalreform.org](http://www.penalreform.org) կայքէջը:
- Աֆրիկայում խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատճի արգելման իրահանգներ և միջոցներ (Ողբեն կղզու իրահանգներ), 2002թ.: Տես՝ [www.apt.ch](http://www.apt.ch) fi Africa կայքէջը:

- Աֆրիկայի բանտային պայմանների վերաբերյալ Կամպալայի Հռչակագիր, պատրաստվել է բանտային պայմանների հարցերի վերաբերյալ աֆրիկյան Կոնֆերանսի ժամանակ՝ 1986թ.: Տես [www.penalreform.org/english/pana\\_declarationkampala.htm](http://www.penalreform.org/english/pana_declarationkampala.htm) կայքէջը:

### **3. Ամերիկյան պետությունների կազմակերպություն**

Տես [www.cidh.oas.org](http://www.cidh.oas.org) և Basic Documents կայքէջը:

- Մարդու իրավունքների պաշտպանության ամերիկյան կոնվենցիա (Սամ Խոստի դաշնագիր), ընդունվել է Ամերիկյան պետությունների կազմակերպության՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով մասնագիտացված միջամերիկյան կոնֆերանսում՝ 1969թ. նոյեմբերի 22-ին՝ Կոստա Ռիկայի Սամ Խոստի քաղաքում:
- Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հոչակագիր. ընդունվել է Ամերիկյան պետությունների իններորդ միջազգային կոնֆերանսում՝ 1948թ. մայիսի 2-ին:
- Խոշտանգումների կանխարգելման և պատժման միջամերիկյան կոնվենցիա, ընդունվել է ամերիկյան պետությունների կազմակերպության գլխավոր ասամբլեայի 15-րդ հերթական նիստում՝ 1985թ. դեկտեմբերի 9-ին:
- Ազատազրկված անձանց իրավունքների և խնամքի վերաբերյալ միջամերիկյան հոչակագրի նախագիծ. հովանափորվել է Կոստա Ռիկայի կառավարության կողմից և պատրաստվել Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպության կողմից՝ 2001թ. Ամերիկյան պետությունների կազմակերպության գլխավոր ասամբլեային հաճանելու նպատակով:  
Տես՝ [www.penalreform.org](http://www.penalreform.org) ինտերնետ կայքէջում:

### **4. Եվրոպայի Խորհուրդ Եվրոպայի խորհրդի Կոնվենցիաներ**

- Մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական կոնվենցիա, ETS No. 005, 1950թ.: Տես՝ [www.coe.int](http://www.coe.int) և Human Rights ինտերնետային կայքէջը:
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիա, ETS, No 126, 1987թ.: Տես՝ [www.cpt.coe.int](http://www.cpt.coe.int) և Documents և Reference ինտերնետային կայքէջը:

ԽԿԿ չափանիշների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը  
տես՝ [www.cpt.coe.com](http://www.cpt.coe.com) ինտերնետային կայքէջում:

### Եվրոպայի խորհրդի ոչ պարտադիր փաստաթղթեր

Տես՝ [www.coe.int](http://www.coe.int) fi Committee of Ministers fi Advanced Search ինտերնետային կայքէջը (մուտքագրելով տարեթիվը, ամսաթիվը և աղյուրը):

- Եվրոպական բանտային կանոններ R (87)3 հանձնարարականը՝ ընդունված Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ 1987թ. փետրվարի 12-ին, աղյուրը՝ Rec (87)3:
- Բանտերում կրորոյան վերաբերյալ հանձնարարական թիվ R (89)12, ընդունված Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ 1989թ.՝ հոկտեմբերի 13-ին, աղյուրը՝ Rec (89)12:
- Բանտում առողջապահության եթիկական և կազմակերպչական ասալեկտների վերաբերյալ R (98)7 հանձնարարություն. ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ 1999թ. ապրիլի 8-ին, աղյուրը՝ Rec (98)7:
- Մինչդատական կայանքի վերաբերյալ թիվ R (80)11 հանձնարարական. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1980թ. հունիսի 27-ին, աղյուրը՝ Rec (80)11:
- Բանտից ազատվելու վերաբերյալ թիվ R (82)16 հանձնարարական. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1982թ. սեպտեմբերի 24-ին, աղյուրը՝ Rec (82)16:
- Վտանգավոր հանցագործների ազատազրկման և վերաբերմունքի վերաբերյալ թիվ R (82)17 հանձնարարական. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1982թ. սեպտեմբերի 24-ին, աղյուրը՝ Rec (82)17:
- Օտարերկրացի բանտարկյանների վերաբերյալ հանձնարարական թիվ R (84)12. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1984թ. հունիսի 21-ին, աղյուրը՝ Rec (84)12:
- Բուժառայության պրակտիկայում և սոցիալական միջավայրում գրանցված ՄԻԱՎ դեպքերի բարոյագիտական հարցերի վերաբերյալ թիվ R (89)14 հանձնարարական. ընդունվել է ԵԽ նախարարների կոմիտեի կողմից՝ 1989թ. հոկտեմբերի 24-ին, աղյուրը՝ Rec (89)14:
- Հանրային պատժամիջոցների և միջոցների վերաբերյալ Եվրոպական կանոններ, թիվ R (92)16 հանձնարարական. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1992թ. հոկտեմբերի 19-ին, աղյուրը՝ Rec (92)16:
- Բանտում տարափոխիկ հիվանդությունների, ներառյալ՝ ԶԻԱՀ-ի և դրան առնչվող խնդիրների բանտային և քրեագիտական ասպեկտների վերաբերյալ թիվ R (93)6 հանձնարարական. ընդուն-

վել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1993թ. հոկտեմբերի 18-ին, աղբյուրը՝ Rec (93)6:

- Բանտերում առողջապահության էքիկական և կազմակերպչական ասպեկտների վերաբերյալ հանձնարարական թիվ R (98)7. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1998թ. ապրիլի 8-ին, աղբյուրը՝ Rec (98)7:
- Բանտերում առողջապահության էքիկական և կազմակերպչական ասպեկտների վերաբերյալ հանձնարարական թիվ R (98)8. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1998թ. ապրիլի 8-ին, աղբյուրը՝ Rec (98)8:
- Բանտային գերբնակեցման և բանտում բանտարկյալների քանակի աճի վերաբերյալ հանձնարարական թիվ R (99)22. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 1999թ. սեպտեմբերի 30-ին, աղբյուրը՝ Rec(99)22:
- Ոստիկանական էքիկայի եվրոպական կանոնագրքի հանձնարարական թիվ Rec(2001)10. ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ 2001թ. սեպտեմբերի 19-ին, աղբյուրը՝ Rec(2001)10:

### **1. Նյութեր բանտերի մոնիթորինգի վերաբերյալ**

APT/OSCE-ODHIR, *Monitoring places of detention: a practical guide for NGOs*, Geneva, December 2002: [www.apt.ch](http://www.apt.ch) կայքէջում՝ անգլերենով և ռուսերենով: Penal Reform International, *Monitoring prison conditions in Europe: Report of a European Seminar held in Marly-le-Roi, France, Paris, 1997.*

### **2. Նյութեր ԽԴԿՈՍ վերաբերյալ**

APT, *The Optional Protocol to the UN Convention against Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment: A Manual for Prevention*, Geneva, 2004, հասանելի է անգլերեն լեզվով (կհետևեն ֆրանսերեն, իսպաներեն և պորտուգալերեն հրատարակությունները): APT, *Implementation of the Optional Protocol to the UN Convention against Torture. The Establishment and Designation of National Preventive Mechanisms*, Geneva, April 2003, հասանելի է [www.apt.ch](http://www.apt.ch) ինտերնետային կայքէջում՝ անգլերենով, ֆրանսերենով, իսպաներենով և ռուսերենով:

### **3. Նյութեր խոշտանգումների վերաբերյալ**

Camille Giffard, *The Torture Reporting Handbook, How to document and*

*respond to allegations of torture within the international system for the protection of human rights, Human Rights Centre, University of Essex, 2000:* Հասանելի է արարերեն, անզերեն, ֆրանսերեն, իսպաներեն և ռուսերեն լեզուներով:

## ՀԱՎԵԼՎԱԾ 5

### Լրացուցիչ գրականություն

United Nations Office of the High Commissioner for Human Rights, *Istanbul Protocol, Manual on the Effective investigation and Documentation of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment*, Professional Training Series no. 8, New York, Geneva, 2001. Amnesty International, *Combating torture: A manual for action*, London, 2003, սեռ [www.amnesty.org](http://www.amnesty.org) կայքէջում՝ անզերեն լեզվով OSCE/ODIHR, *Preventing Torture – A Handbook for OSCE Field staff*, Warsaw 1999, սեռ [www.osce.org](http://www.osce.org) կայքէջում՝ անզերեն և ռուսերեն լեզուներով:

#### 4. Նյութեր բանտային ստանդարտների կիրառման վերաբերյալ

Andrew Coyle, *A Human Rights Approach to Prison Management. Handbook for prison staff*. International Centre for Prison Studies, 2003, սեռ [www.prisonstudies.org](http://www.prisonstudies.org) կայքէջում՝ արարերեն, պորտուգալերեն, չինարեն, անգլերեն, ռուսերեն, խաղաներեն և բուրբերեն լեզուներով: Penal Reform International, *Making standards work, an international handbook on good prison practice*. London, 2001. հասանելի է անզերեն, ֆրանսերեն, ռուսերեն և խաղաներեն լեզուներով. սեռ՝ [www.penalreform.org](http://www.penalreform.org) ինտերնետ կայքէջը: United Nations Office of the High Commissioner for Human Rights, *Human Rights and Prisons - A manual on Human Rights Training for Prisons Officials*, Professional Training Series No.9, Geneva, 2003. Nigel S. Rodley, *The treatment of prisoners under international law*, Second Edition, Oxford, 1999.

Vivien Stern, *A sin against the future – Imprisonment in the world*. Penguin Books, 1998 Peter Sutton, (ed.), *Basic Education in Prisons: Final Report*, United Nation/ UNESCO Institute for Education (UIE) joint publication: Անգլերեն տարրերակն ամվճար բաշխվում է ամվճար UIE-ում, ֆրանսերեն և խաղաներեն տարրերակները տես UIE կայքէջում. <http://www.unesco.org/education/uie/online/prfr/prfr.pdfOthers>

#### 5. Ընդհանուր նյութեր մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ

Helsinki Foundation for Human Rights, *Human Rights Monitoring*, Warsaw, 2001. United Nations Office of the High Commissioner for Human Rights, *Professional Training Series n/7, Training Manual on Human Rights Monitoring*, New York, Geneva, 2001.

#### 6. Նյութեր բանտեր այցելող մարմինների վերաբերյալ

APT, *Visiting places of detention: Practices and Lessons learned by selected domestic institutions, Seminar Report*, Geneva, 2004. APT, *The Impact of External Visiting of Police Stations on Prevention of Torture and Ill-Treatment, Study*, Geneva, 1999. APT, *Standard Operating Procedures of International Mechanisms Carrying Out Visits to places of detention, Seminar Report*, Geneva, 1997. International Committee of Red Cross, *Deprived of freedom*, Geneva 2002.

Malcolm D. Evans and Morgan Rod, *Preventing Torture, A study of the European Convention for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or punishment*, Oxford, 1998. Rod Morgan and Malcolm D. Evans, *Protecting prisoners, The Standards of the European Committee for the Prevention of Torture in context*, Oxford, 1999. Rod Morgan and Malcolm D. Evans, *Combating Torture in Europe*, Council of Europe Publishing, 2001. APT Series on *Prevention of Torture in Europe* (in French and English) Brochure no3 – Barbara Bernath, *CPT history, mandate, composition*, Geneva, December 1999. Brochure no4 – Ursula Kriebbaum, *CPT Modus Operandi*, Geneva, May 2002. APT/Council of Europe, *A visit by the CPT – What's it all about? 15 questions and answers for the police*, May 1999.

## ԼՐԱՑՈՒՄ

### Օգտակար հասցեներ

#### *Lրացում 6*

##### 1. INTERNATIONAL ORGANISATIONS

**Սիօզզային կազմակերպություններ**

**International Committee of the Red Cross**

Կարմիր խաչի միջազգային կազմակերպություն

19 Avenue de la Paix, 1211 Geneva, Switzerland

Հեռախոս. +41 (0)22 734 60 01 Ֆաք. +41 (0)22 733 20 57

Էլ-փոստ. webmaster.gva@icrc.org

Վեբկայք. www.icrc.org

**United Nations Office of the High Commissioner for Human Rights**

Մարդու իրավունքների հարցերով Միավորված ազգերի կազմակերպության գերազույն հանձնակատարի գրասենյակ

Palais des Nations, 8-14 Avenue de la Paix, 1211 Geneva 10, Switzerland

Հեռախոս. +41 (0)22 917 90 00 Ֆաք. +41 (0)22 917 90 12

Էլ-փոստ. webadmin.hchr@unog.ch

Վեբկայք. www.unhchr.ch

United Nations Office on Drugs and Crime

**Միավորված ազգերի կազմակերպության քմբադեղերի և հանցավորության հարցերով գրասենյակ**

Vienna International Centre

Վիեննայի միջազգային կենտրոն

Wagramerstr. 5 P.O. Box 500, 1400 Vienna, Austria

Հեռախոս. +43 1 260 60 0 Ֆաք. +43 1 260 60 58 66

Էլ-փոստ. unodcnode.org

Վեբկայք. www.unvienna.org

United Nations High Commissioner for Refugees

Միացյալ ազգերի կազմակերպության փախստականների հարցերով  
Գերազույն հանձնակատար

Department of International Protection

Սիօզզային պաշտպանության գերատեսչություն

P.O Box 2500, 1211 Geneva 2, Switzerland

Հեռախոս. +41 (0)22 739 84 77 Ֆաք. +41 (0)22 739 73 54

Վեբկայք www.unhcr.ch

Commonwealth Secretariat

**Հանրապետական քարտուղարություն**

Human Rights Unit Marlborough House, Pall Mall, London SW1Y

5HX, United Kingdom

Հեռախոս. +44 207 747 64 08 Ֆաք. +44 207 747 64 18  
Վեբկայք [www.thecommonwealth.org](http://www.thecommonwealth.org)

## 2. REGIONAL ORGANISATIONS

**Տարածաշրջանային կազմակերպություններ**

EUROPE

**Եվրոպա**

Council of Europe

**Եվրոպայի խորհուրդ**

67075 Strasbourg Cedex, France

Վեբկայք. [www.coe.int](http://www.coe.int)

European Court of Human Rights

**Սարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական դատարան**

Հեռախոս. +33 3 88 41 20 32 Ֆաք. +33 3 88 41 27 91

Վեբկայք. [www.echr.coe.int](http://www.echr.coe.int)

European Committee for the Prevention of Torture (CPT)

**Խոշտանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտե (ԽԿԿ)**

Հեռախոս. +33 3 88 41 23 88 Ֆաք. +33 3 88 41 27 72

Էլ-փոստ. [cpt.doc@coe.int](mailto:cpt.doc@coe.int)

Վեբկայք. [www.cpt.coe.int](http://www.cpt.coe.int)

European Parliament

**Եվրոպական խորհրդարան**

L-2929, Luxembourg

Հեռախոս. +352 4300-1 Ֆաք. +352 43 70 09

Վեբկայք. [www.europa.eu.int](http://www.europa.eu.int)

Organization for Security and Cooperation in Europe

**Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն**

Office for Democratic Institutions and Human Rights

Ժողովրդական Հաստատությունների և Սարդու Իրավունքների

Պաշտպանության Գրասենյակ

Aleje Ujazdowskie 19, 00557 Warsaw, Poland

Հեռախոս. +48 22 520 06 00 Ֆաք. +48 22 520 06 05

Էլ-փոստ. [office@odhir.pl](mailto:office@odhir.pl)

Վեբկայք. [www.osce.org/inst/odihr](http://www.osce.org/inst/odihr)

**European Institute for Crime Prevention and Control, affiliated with the United Nations (HEUNI) Միացյալ Ազգերի Կազմակերպությանը միացած Հանգավորության Կանխարգելման և Վերահսկողության Ինստիտուտ (ՍԱԿՀԿԻ)**

POB 157 Uudenmaankatu 37, 00121 Helsinki, Finland  
Հեռախոս. +358 9 1606 78 80 Ֆաք. +358 9 16 06 78 90  
Էլ-փոստ. heuni@om.fi  
Վեբկայք. www.heuni.fi

AFRICA

**Աֆրիկա**

African Commission on Human and Peoples' Rights

**Մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանության աֆրիկական համաժողով**

90 Kairaba Avenue, P.O. Box 673, Banjul, The Gambia

Հեռախոս. +220 392962; Ֆաք. +220 390764

Վեբկայք. www.achpr.org

Organization of African Unity

**Աֆրիկյան միասնականության կազմակերպություն**

P.O. Box 3234, Roosevelt Street, W21K19 Addis Ababa, Ethiopia

Հեռախոս. (251-1) 51 77 00, Ֆաք. (251-1) 51 78 44

Վեբկայք. www.africa-union.org

**United Nations African Institute for the Prevention of Crime and the Treatment of Offenders**

**Հանցավորության կանխարգելման և իրավախախտ անձանց ցուցաբերվող իրավունքի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության աֆրիկյան ինստիտուտ**

P.O. Box 10590, Kampala, Uganda

Հեռախոս. (256) 41 22 11 19, Ֆաք. (256) 41 22 26 23

Էլ-փոստ. unafri@unafri.or.ug

Վեբկայք. www.unafri.or.ug

AMERICAS

**Ամերիկայի երկու մայլցամաքներ**

Inter-American Commission on Human Rights

**Մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան համաժողով**  
Organization of American States (OAS)

**Ամերիկյան պետությունների կազմակերպություն**

1889 F Street, N.W., Washington D.C: 2006, USA

Հեռախոս. (1 202) 458-6002 Ֆաք. (1 202) 458-3992

Վեբկայք. www.cidh.org

**United Nations Latin American Institute for the Prevention of Crime and the Treatment of Offenders (ILANUD)**

**Միավորված ազգերի կազմակերպության հանցավորության կանխարգելման և իրավախախտ անձանց հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի**

**հարցերով Լատինամերիկյան ինստիտուտ**

Edificio Plaza de la Justicia, 3er piso, Apartado Postal 10071-1000  
San Jose Costa Rica  
Հեռախոս. +506.257.5826 Ֆաք. +506. 233.7175  
Էլ-փոստ. ilanud@ilanud.or.cr  
Վեբկայք. [www.ilanud.or.cr](http://www.ilanud.or.cr)

ASIA

Ասիա

**United Nations Asia and Far East Institute for the Prevention of Crime and the Treatment of Offenders (UNAFEI)**

Միավորված ազգերի կազմակերպության հանգավորության կանխարգելման և իրավախախտ անձանց հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի հարցերով Ասիայի և Հեռավոր Արևելքի հնատիտուտ  
1-26 Harumi-cho, Fuchu-shi, Tokyo 183-0057, Japan  
Հեռախոս. +81.42.333.7021, Ֆաք. +81.42.333.7024  
Էլ-փոստ. unafei@moj.go.jp  
Վեբկայք. [www.unafei.or.jp](http://www.unafei.or.jp)

**3. NON-GOVERNMENTAL ORGANISATIONS INTERNATIONAL NGOs**

**Հասարակական կազմակերպություններ, միջազգային ՀԿ-ներ**  
Amnesty International (International Secretariat)

**Միջազգային համամերում (Միջազգային քարոզուղարություն)**

1 Easton Street, London WCIX 8 DJ, United Kingdom

Հեռախոս. +44 171 413 55 00 Ֆաք. +44 171 956 11 57

Էլ-փոստ. amnestyis@amnesty.org

Վեբկայք. [www.amnesty.org](http://www.amnesty.org)

Association for the Prevention of Torture (APT)

**Խոշտանգումների կանխարգելման միություն (ԽԿՄ)**

10 Route de Ferney, P.O. Box 2267, 1211 Geneva 2, Switzerland

Հեռախոս. +41 22 919 21 70 Ֆաք. +41 22 919 21 80

Էլ-փոստ. apt@apt.ch

Վեբկայք. [www.apth](http://www.apth)

Human Rights Watch (HRW)

**Հյուման Ռայս Ռուք (ՀՌՌ)**

485 Fifth Avenue, 3rd Floor, New York, NY 10017, USA

Հեռախոս. +1 212 290 47 00 Ֆաք. +1 212 736 13 00

Էլ-փոստ. hrwny@hrw.org

Website: [www.hrw.org](http://www.hrw.org)

International Centre for Prison Studies (ICPS)

**Քանտային հետազոտությունների միջազգային կենտրոն (ՔՀՍԿ)**

King's College London School of Law 3rd Floor

26-29 Drury Lane London WC2B 5RL United Kingdom

Հեռախոս. +44 (0) 207 848 1922 Ֆաքս. +44 (0) 207 848 1901

Էլ-փոստ. [icps@kcl.ac.uk](mailto:icps@kcl.ac.uk)

Վեբկայք. [www.prisonstudies.org](http://www.prisonstudies.org)

International Commission of Jurists (ICJ)

**Իրավաբանների միջազգային համաժողով (ԻՄՀ)**

26 Chemin de Joinville, P.O Box 160, 1216 Geneva, Switzerland

Հեռախոս. +41 22 979 38 00 Ֆաքս. +41 22 979 38 01

Էլ-փոստ. [info@icj.org](mailto:info@icj.org)

Վեբկայք. [www.icj.org](http://www.icj.org)

International Federation of the League of Human Rights (FIDH)

**Սարդու իրավունքների պաշտպանության Միջազգային ֆեդերացիա**

17 Passage de la Main d'Or, 75011 Paris, France

Հեռախոս. +33 1 43 55 25 18 Ֆաքս. +33 1 43 55 18 80

Էլ-փոստ. [fidh@csi.com](mailto:fidh@csi.com)

Վեբկայք. [www.fidh.imaginet.fr](http://www.fidh.imaginet.fr)

International Federation of Action by Christians for the Abolition of Torture (FI.ACAT)

**Համոմ խոշտանգումների վերացման քրիստոնեական գործունեության միջազգային ֆեդերացիա**

27 Rue de Maubeuge, 75009 Paris, France

Հեռախոս. (33) 1 42 80 01 60 Ֆաքս. (33) 1 42 80 20 89

Էլ-փոստ. [fi.acat@wanadoo.fr](mailto:fi.acat@wanadoo.fr)

**Inter-Parliamentary Union (IPU)**

**Միջազգային սրբազնական միություն (ՄՍ)**

Place du Petit-Saconnex, P.O. Box 438

1211 Geneva 19, Switzerland

Հեռախոս. +41 (0)22 734 41 50 Ֆաքս. +41 (0)22 733 31 41

Էլ-փոստ. [postbox@mail.ipu.org](mailto:postbox@mail.ipu.org)

Վեբկայք. [www.ipu.org](http://www.ipu.org)

International Rehabilitation Council for Torture Victims

**Խոշտանգումների զնիերի միջազգային ռեարիլիտացիայի խորհուրդ**

Borgergade 13, P.O. Box 2107, 1014 Copenhagen, Denmark

Հեռախոս. +45 33 76 06 00 Ֆաքս. +45 33 76 05 00

Էլ-փոստ. [irct@irct.org](mailto:irct@irct.org)

Վեբկայք. [www.irct.org](http://www.irct.org)

International Service for Human Rights

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ծառայություն

1 rue de Varembe, P.O. Box 16, 1211 Geneva 20, Switzerland

Հեռախոս. +41 (0)22 733 51 23 Ֆաք. +41 (0)22 733 08 26

Էլ-փոստ. [dir@ishr-sidh.ch](mailto:dir@ishr-sidh.ch)

Վեբկայք. [www.ishr.ch](http://www.ishr.ch)

World Organisation against Torture (OMCT-SOS Torture)

**Համաշխարհային  
կանխարգելման դեմ**

կազմակերպություն

խոշտանգումների

8, rue du Vieux-Billard, P.O. Box 21, 1211 Geneva 8, Switzerland

Հեռախոս. +41 (0)22 809 49 39 Ֆաք. +41 (0)22 809 49 29

Էլ-փոստ. [omct@omct.org](mailto:omct@omct.org)

Վեբկայք. [www.omct.org](http://www.omct.org)

**Penal Reform International**

Միջազգային բանսային բարեփոխումներ

The Bon Marche Centre 241-251 Ferndale Road London SW9 8BJ

Հեռախոս. +44 207 721 76 78 Ֆաք. +44 207 721 87 85

Էլ-փոստ. Headofsecretariat@penalreform.org

Վեբկայք. [www.penalreform.org](http://www.penalreform.org)

The Redress Trust

**Փոխառուցման պարտավորություն**

6 Queen Square, London WC1N 3AR, United Kingdom

Հեռախոս. +44 171 278 9502 Ֆաք. +44 171 278 9410

Էլ-փոստ. redresstrust@gm.apc.org

Վեբկայք. [www.redress.org](http://www.redress.org)

#### **REGIONAL NGOs**

**Տարածաշրջանային ՀԿ-ներ**

African Centre for Democracy and Human Rights Studies

**Ժողովրդավարության և մարդու իրավունքների ուսումնասիրման  
աֆրիկյան կենտրոն**

P. O. Box 2728, Serrekunda, Zoe Tembo Building, Kerr Sereign, The Gambia

Հեռախոս. +220 462341/2 Ֆաք. +220 462338/9

Վեբկայք. [www.acdhrs.org](http://www.acdhrs.org)

**Asia-Pacific Human Rights Network**

**Ասիա-Խաղաղօվկիանոսյան մարդու իրավունքների պաշտպանության ցանց**

B - 6/6 Safdarjung Enclave Extension, 110029 New Delhi, India

Հեռախոս. +91 11 619 2717/06 Ֆաքս. +91 11 619 11 20

Վեբկայք. [www.hrdc.net/sahrdc](http://www.hrdc.net/sahrdc)

Inter-American Center for Justice and International Law (CEJIL)

**Արդարադատության և միջազգային իրավունքի միջամերիկյան կենտրոն**

1630 Connecticut Ave. N.W. Suite 555, Washington D.C. 20009-1053,  
USA

Հեռախոս. +1 202 319-3000 Ֆաքս. +1 202 319-3019

Վեբկայք. [www.cejil.org](http://www.cejil.org)

Inter-American Institute on Human Rights (IIDH)

**Մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան ինստիտուտ**

P.O. Box 10.081-1000, San Jose, Costa Rica

Հեռախոս. +506 234-0404 Ֆաքս. +506 234-0955

Վեբկայք. [www.iidh.ed.cr](http://www.iidh.ed.cr)

**International Helsinki Federation for Human Rights**

**Մարդու իրավունքներ պաշտպանության հելսինկյան միջազգային ֆեդերացիա**

Wickenburggasse 14/7, 1080 Vienna, Austria

Հեռախոս. +43 1 408 88 22 Ֆաքս. +43 1 408 88 22 50

Էլ-փոստ. [office@ihf-hr.org](mailto:office@ihf-hr.org)

Վեբկայք. [www.ihf-hr.org](http://www.ihf-hr.org)

Հասուկ շնորհակալություն ենք հայտնում Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի փաստաթղթային կենտրոնին՝ գործի շապիկի վրա պատկերված լուսանկարի համար: Բուժումը բանտ: CICR / Gassmann, Thierry.

**Ազատագրկման վայրերի վերահսկողություն.**

**գործնական ձեռնարկ**

Հրատարակչատան տնօրեն՝

**ՎԻՏԱԼԻ ԱՍԼԱՆՅԱՆ**

Համակարրգչային ձևավորումը՝

**ԿԱՐԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տեխնիկական խմբագիր՝

**ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Պուշկինի 46

Դեռ.՝ (37410) 53 96 47, (37491) 42 51 63

E-mail:lusabats@gmail.com, lusabats@mail.ru

Տպագոված է «Լուսաբաց հրատարակչատան» տպարանում  
500 օրինակ տպաքանակով

